ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐՈՎ
սովորող ուսանողների համար

(Առկա ուսուցում)

ԻՋԵՎԱՆ-2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ----------3

ԲԱԺԻՆ I.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ---------- 5

ԲԱԺԻՆ II.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ---------- 18

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»----------20

«ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ---------- 146

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ---------- 264

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ---------- 364

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ(Անգլերեն)» ---------- 475

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ(Ֆրանսերեն)» ---------- 576

«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ---------- 679

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետագծերի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի

բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաստատված է
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի
2017 թ. հունիսի 10-ի թիվ 24 նիստում

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 .Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպմանկանոնները։

1.2 .Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն։

1.3 .Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը համապատասխան։

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

2.1 .ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակա ուսուցման համար՝ 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի։ 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի։

2.2 .Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ։

2.3 .Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 2 տարի (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հե- տևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթա- ցիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգարքներ և 3 շաբաթ եզրափակիչքննություններ:

2.4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 4 շաբաթ լսարանային պարապմունքներ[1], 1 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրա- փակիչ քննություններ:

2.5 .Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 3 շաբաթ լսարանային պարապ-

[1] Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և տնօրենի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով։

մունքներ, 2 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:

2.6. Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:

2.7. Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը: Մագիստրոսի կրթական ծրագրում այդ քննությունների թիվը սահմանվում է ըստ օրինակելի ուսումնական պլանի:

2.8. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը

3.1. Համակարգի հիմնադրույթները

3.1.1. ԵՊՀ ԻՄ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնա- հատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,

բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

3.1.2. Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),

բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3.1.3. Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

ա) եզրափակիչ գնահատումով,
բ) *առանց եզրափակիչ գնահատման,*
գ) *առանց ընթացիկ գնահատման,*
դ) *ստուգարքային*:

3.2. Դասընթացների գնահատումը

3.2.1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* դեպքում, քննաշրջանի ընթացքումանցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամբանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրիմասնագրում:

3.2.2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից (∑Քընթ.), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից (Քեզր.), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$Գարդ. = ∑Քընթ. + Քեզր.:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[2]).

Աղյուսակ 1.

Գնահատման բաղադրամասը	$Քընթ.1$	$Քընթ.2$	$Քեզր.$	$Գարդ.$
Առավելագույն միավորը	5	5	10	20

3.2.3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

3.2.4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննու-

[2] Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5:
Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

թյունների արդյունքներից ($\sum Ք_{\text{ընթ.}}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր,

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$Գ_{\text{արդ.}} = \sum Ք_{\text{ընթ.}}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով[3]).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	$Ք_{\text{ընթ 1}}$	$Ք_{\text{ընթ 2}}$	$Գ_{\text{արդ.}}$
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

3.2.5. Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:

3.2.6. Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:

3.2.7. *Առանցընթացիկգնահատման* (միայն եզրափակիչքննությամբ) և *առանցեզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթացները:

3.2.8. *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:

3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը

3.3.1. Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:

3.3.2. Ֆակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնամեթոդական վարչության պետը: Հաստատված ժամանակացույցվարը ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:

[3] Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

3.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 6÷7-րդ և 11÷12-րդ շաբաթներում (այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):

3.3.4. Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 13÷16-րդ շաբաթներում:

3.3.5. Բանավոր քննության և ստուգարքի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սքանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սքանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:

3.3.6. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգարքների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:

3.3.7. Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տետրերում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տետրում ներկայացված պահանջները:

3.3.8. Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունարար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան սյունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:

3.3.9. Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ԵՊՀ ԻՄ տնօրենի թույլտվությամբ:

3.3.10. Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն տնօրենի հրամանով:

3.4. Գնահատման սանդղակը

3.4.1. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կի- րառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված էստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	*«Գերազանց»*
13-17	*«Լավ»*
8-12	*«Բավարար»*
0-7	*«Անբավարար»*

3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:

3.5.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

– *գումարային կրեդիտներ,*

– *գնահատված կրեդիտներ*,

– *վարկանիշային միավորներ*,

–*միջին որակական գնահատական*:

3.5.4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

3.5.5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԿ=\sum Կրեդիտ:$$

3.5.6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումարն է.

$$ՎՄ=\sum Կրեդիտ_i \times Գարդi$$

որտեղ $Գ_{արդյ}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝
ՎՄ = 5 x 12 + 4 x 16 + 6 x 19 = 238՝ 300 հնարավորից (5 x 20 + 4 x 20 + 6 x 20):

3.5.7. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$ՄՈԳ=ՎՄ/ԳԿ$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջինորակականգնահատականը կլինի՝ $ՄՈԳ=\frac{238}{15}=15,87$՝ 20 հնարավորից:

3.5.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

4.1. Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում:

4.2. Ընթացիկ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե չներկայանալու պատճառի մասին ուսանողը (կամ որևէ մեկը նրա անունից) նախօրոք կամ քննության օրը գրավոր իրազեկում է դեկանատին: Դիմումը վավերացնում է ֆակուլտետի դեկանը կամ դեկանի տեղակալը, և նույն օրը դեկանատի աշխատակիցը սքանավորման եղանակով այն ամրագրում է ԵՊՀ ԻՄ SuperVision ծրագրում: Հիվանդության պատճառով բացակայած ուսանողը բժշկական տեղեկանքը բուժման շրջանի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ներառյալ (պոլիկլինիկայի կողմից վավերացնելուց հետո) ներկայացնում է դեկանատ: Այլ պատճառներով բացակայելու դեպքում ուսանողը ներկայացնում է բացակայության հարգելիությունը հավաստող համապատասխան փաստաթուղթ:

4.3. Ընթացիկ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել դասերին հաճախման օրվանից սկսած 5 աշխատանքային օրվա ընթացքում, դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցով:

4.4. Ստուգարքին և/կամ քննությանը հարգելի պատճառով չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է հանձնել համապատասխան ստուգարքը և/կամ քննությունը, որը չի համարվի լուծարք, եթե բավարարվել են 4.2

ենթակետի բոլոր պահանջները: Այդ մասին ֆակուլտետի դեկանը համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ուսումնամեթոդական վարչության պետին:

4.5. Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ԻՄ տնօրենության կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են տնօրենի հրամանով:

4.6. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատման արդյունարար դրականն ավագույն միավորի՝ 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Գ_{արդ.}=1+3+3=7$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարմանշրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7:

4.7. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ՝ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելիմիավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Գ_{արդ.}=2+3=5$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե ուսանողը պարտքերիմարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:

4.8. *Առանց ընթացիկ գնահատման դասընթացի* գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

4.9. Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:

4.10. Բակալավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով այդ առարկաների դասընթացները:

4.11. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո մագիստրոսի կրթական ծրագրում թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5-7 տիրույթում է, իսկ 4 և ցածր արդյունարար միավորի դեպքում ուսանողը հեռացվում էհամալսարանից:

4.12. Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ԻՄ տնօրենության սահմանած չափանիշների:

4.13. Մագիստրոսի կրթական ծրագրում մագիստրոսական թեզի պատրաստման կատարողականը ատեստավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից՝ համաձայն ԵՊՀ ԻՄ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնա- հատման կարգի պահանջների:

4.14. Մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով: Հեռացված ուսանողը վերականգնումից հետո շարունակում է կատարել նախկինում հաստատված թեմայով մագիստրոսական թեզը:

5. Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը

5.1. Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:

5.2. Բակալավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում դեկանատը պետք էներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,
- ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին

շաբաթվա ընթացքում:

5.3. Մագիստրատուրայի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները: Նշվածներից բացի՝ ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները:

5.4. Համալսարանն ավարտվելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ ԻՄ արխիվ:

5.5. Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի դեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Դասընթացների տեղեկագիրքը

6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագիրք,* որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:

6.2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները

(ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

7. Առցանց դասընթացի կազմակերպումը

7.1. ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և մասնաճյուղի տնօրենի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:

7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեննույնը:

7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:

7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:

7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոսներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:

7.6. Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:

7.7. Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

8. Պրակտիկայի կազմակերպումը

8.1. Պրակտիկան ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:

8.2. Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն) և մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական, մանկավարժական), իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:

8.3. Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:

8.4. Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:

8.5. Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:

8.6. Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:

8.7. Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:

8.8. Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:

8.9. Պրակտիկան գնահատվում է ստուգարքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:

9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը

9.1. Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասընթացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

9.2. Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:

9.3. Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:

9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնումուսանողներին:

9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:

9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:

9.7. Պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:

9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

10. Կամընտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

10.1. Բակալավրի կրթական ծրագրի կամընտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական* և *մասնագիտական* կառուցամասերում:

10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամընտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երեքը:

10.3. Մագիստրոսի կրթական ծրագրի կամընտրական դասընթացները նախատեսվում են մասնագիտացման դասընթացների կրթամասում, որոնցից ուսանողն ընտրում է հինգը:

10.4. Կամընտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:

10.5. Կամընտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապրիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:

10.6. Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամընտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

11. Կրթական ծրագրի ղեկավարը

11.1. Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:

11.2. Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:

11.3. Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

11.4. Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցների:

11.5. Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:

11.6. Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում էհավատարմագրման:

11.7. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

12. Ուսումնական խորհրդատուն (կուրատորը)

12.1. Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:

12.2. Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:

12.3. Ուսումնական խորհրդատուն ուսանողների ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական, ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:

12.4. Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:

12.5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուներիհաշվետվությունները:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1.Ուսանողն իրավունք ունի՝

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ ԻՄ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությանարդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտածրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ ԻՄ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ ԻՄ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնականառաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ ԻՄ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:

II ԲԱԺԻՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բնական գիտությունների ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

«Հայոց լեզու և գրականություն»
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
«Հոգեբանություն»
«Պատմություն»
«Օտար լեզու և գրականություն(Անգլերեն)»
« Օտար լեզու և գրականություն(Ֆրանսերեն)»
«Ռուսաց լեզու և գրականություն»

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

«Հայոց լեզու և գրականություն»

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	023101.00.6 Հայոց լեզու և գրականություն
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	բանասիրության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	**2019/2020**
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները (ըստ մասնագիտական գործունեության տեսակների), ծրագրի առարկան (գրել համահունչ բուհի առաքելությանը և նպատակներին)

Ծրագիրը նպատակ ունի նախապատրաստելու բանասիրության բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով զինված մասնագետներ, գիտության, կրթության, ինչպես նաև հասարակական կյանքի տարբեր բնագավառներում աշխատանքային գործունեության համար, որոնք ունակ կլինեն՝

1. Համադրելու տեսական և կիրառական լեզվաբանության և գրականագիտության գիտելիքները բանասիրական ուսումնասիրություններ կատարելու, դասավանդելու, խմբագրական աշխատանքներ կատարելու համար:
2. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր, մանկավարժական աշխատանք իրականացնելիս:
3. Կազմակերպելու և ուղղորդելու գրական երկերի վերլուծման, տեքստերի խմբագրման, թարգմանության, հրատարակության պատրաստելու, լեզվական ու գրականագիտական առարկաներ ուսուցանելու աշխատանքներ:

Ծրագրի խնդիրն է պատկերացում տալ կրթության ոլորտի զարգացման ընդհանուր միտումների, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, համակարգչային իմացության վերաբերյալ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:
2. Ճանաչելու լեզվաբանական և գրականագիտական մեթոդաբանական ուղղությունները:
3. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

4. Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:
5. Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:
2. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:
3. Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:
4. Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:
5. Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

1. Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
3. Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
4. Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
6. Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը /ռազմավարությունը/

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Բանավոր հարցում
- Գործնական աճշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Հետազոտական աշխատանք/մասնագիտական գրականության վերաբերյալ
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում

- Տարաբնույթ առաջադրանքներ
- Զեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Ստուգարքներ
- Քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն։

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց ուսումը շարունակել ԵՊՀ, ինչպես նաև ուսումնական տարբեր հաստատությունների մագիստրատուրայում:

«Հայոց լեզու և գրականություն« ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել՝

1. գիտահետազոտական հիմնարկություններում՝ բանասեր- կրտսեր գիտաշխատող,
2. հանրակրթական դպրոցներում՝ որպես մեթոդիստ,
3. տուն-թանգարաններում,
4. խմբագիր, լրագրող, սրբագրիչ,
5. հայոց լեզվի և գրական խմբակների ղեկավար,
6. գրադարանավար:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները. գրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

ԵՊՀ-ի հայոց լեզվի և գրականության կրթական ծրագիր
ՀՊՄՀ-ի կրթական ծրագիր
ՎՊՄՀ-ի կրթական ծրագիր

17. **Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

-

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**	
Ա1	Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:	**Բ1**	Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:
Ա2	Ճանաչելու լեզվաբանական և գրականագիտական մեթոդաբանական ուղղությունները:	**Բ2**	Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքս-տերի նկատմամբ:
Ա3	Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծութ-յուններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնե-լիս:	**Բ3**	Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:
Ա4	Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:	**Բ4**	Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:
Ա5	Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:	**Բ5**	Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:
Գ. Ընդհանրական փոխանցելի կարողություններ			
Գ1	Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:	**Գ4**	Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
Գ2	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:	**Գ5**	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Գ3	Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:	**Գ6**	Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /Պարտադիր դասընթացներ/																	
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B01													+	+		+
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B05													+	+		+
Անգլերեն-1	0305/B15												+		+		
Ֆրանսերեն-1	0305/B15												+		+		
Անգլերեն-2	0305/B16												+		+		
Ֆրանսերեն-2	0305/B16												+		+		
Ռուսերեն-1	0305/B04												+		+		
Ռուսերեն-2	0305/B08												+		+		
Ֆիզդաստիարակություն	0001/B02															+	
Ֆիզդաստիարակություն	0001/B06															+	
Ֆիզդաստիարակություն	0001/B11															+	
Ֆիզդաստիարակություն	0001/B14															+	
Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգնություն	0001/B03															+	
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B09													+	+		+
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B07													+	+		
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0104/B12													+	+		
Իրավունքի հիմունքներ	0304/B13													+	+		
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B10													+	+		+
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /Կամընտրական դասընթացներ/																	
Տնտեսագիտության հիմունքներ	0201/B17													+	+		+
Գործարարության հիմունքներ	0201/B17													+	+		+
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B17													+	+		+
Մշակութաբանության հիմունքներ	0202/B17											+		+	+		+
Կրոնագիտության հիմունքներ	0304/B17													+	+		+
Բարոյագիտության հիմունքներ	0303/B17												+	+	+		
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/B17												+	+	+		
Տրամաբանության հիմունքներ	0304/B17											+		+	+		+
Հոգեբանության հիմունքներ	0303/B17											+		+	+		+
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B17												+	+	+		
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /Պարտադիր դասընթացներ/																	
Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն – 1	0302/B18	+		+	+	+	+	+	+	+		+	+		+		+
Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն – 2	0302/B23	+		+	+	+	+	+	+	+		+	+		+		+
Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 1	0302/B27	+		+	+	+	+	+	+	+		+	+		+		+

Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն – 2	0302/B33	+		+	+	+	+	+	+	+		+	+		+		+
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն – 1	0302/B38	+		+	+		+	+	+		+	+		+			+
Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն – 2	0302/B43	+		+	+		+	+	+		+	+		+			+
Արևմտահայերեն	0302/B42	+			+			+	+	+		+			+		
Հայոց լեզվի ոճագիտություն	0302/B47	+		+	+		+	+	+		+	+		+			+
Գրաբար -1	0302/B19	+	+	+	+		+	+		+	+		+	+		+	+
Գրաբար -2	0302/B24	+	+	+	+		+	+		+	+		+	+		+	+
Գրաբար -3	0302/B30	+	+	+	+		+	+		+	+		+	+		+	+
Հայոց լեզվի պատմություն	0302/B46	+		+	+		+	+	+	+	+			+	+	+	+
Բարբառագիտության հիմունքներ	0302/B29	+		+	+		+	+	+			+			+		+
Լեզվաբանության հիմունքներ	0302/B26	+	+	+			+	+	+			+		+	+		
Ընդհանուր լեզվաբանություն	0302/B36	+	+	+	+		+	+	+			+		+			
Խոսքային էթիկետ և գործնական հաղորդակցման հիմունքներ	0302/B22	+	+	+	+		+	+		+	+		+	+		+	+
Լեզվական վերլուծության հիմունքներ	0302/B31	+		+			+	+			+	+		+			
Հայ ժողովրդի բանահյուսություն	0302/B20	+	+	+			+	+		+		+		+	+		+
Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն	0302/B25	+		+			+	+	+		+	+		+	+		+
19-րդ դարի հայ գրականության պատմություն -1	0302/B28	+		+		+	+	+			+	+		+		+	
19-րդ դարի հայ գրականության պատմություն -2	0302/B34	+		+		+	+	+			+	+		+		+	
19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն -1	0302/B39	+		+	+	+	+	+		+	+	+		+	+		+
19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն -2	0302/B44	+		+	+	+	+	+		+	+	+		+	+		+
Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն-1	0302/B45	+		+	+	+	+	+		+	+	+		+	+		+
Նորագույն շրջանի հայ գրականության պատմություն-2	0302/B48	+		+	+	+	+	+		+	+	+		+	+		+
Արդի հայ գրականության պատմություն	0302/B50	+		+	+	+	+	+		+	+	+			+		+
Հայ գրաքննադատության պատմություն	0302/B49	+	+	+			+	+	+		+	+		+	+		+
Անտիկ և վերածննդի արտասահմանյան գրականության պատմություն	0302/B32	+		+		+	+		+		+	+	+	+			+
17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն	0302/B35	+		+		+	+		+		+	+	+	+			+
19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն	0302/B40	+		+		+	+		+		+	+	+	+			+
Գրականագիտության ներածություն	0302/B21	+	+	+			+	+		+	+	+		+	+		+
Գրականության տեսություն	0302/B37	+	+	+		+	+		+		+	+	+	+			+
Ռուս գրականության պատմություն	0302/B41	+		+		+	+	+	+			+	+	+			+
Հայ գրականության «հեթանոս» ավանդները	0302/B51	+		+	+		+		+	+		+		+		+	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՄԲ /Կամընտրական դասընթացներ/																	
Հայ գրականություն																	
Հեռուստաքննադատություն	0302/B53	+		+				+				+			+		+
Մշակութային լրագրություն	0302/B53	+		+			+	+				+			+		+
Հայ և ընդհանուր դիցաբանություն	0302/B53	+		+		+	+	+		+		+		+	+		+
Հայոց լեզու																	

Դարձվածաբանություն	0302/B52	+		+		+	+	+	+			+		+	+		+
Հայոց տեղանվանագիտություն	0302/B52	+		+		+	+	+	+			+		+	+		+
Հայերենի իմաստափոխությունը	0302/B52	+		+		+	+	+	+			+		+	+		+
Հայ գրականություն																	
Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները	0302/B55	+		+		+	+	+			+	+		+	+		+
Ֆրանսահայ գրականությունը 1920-60-ական թվականներին	0302/B55	+		+		+	+	+			+	+		+	+		+
20-րդ դարասկզբի իրադարձությունները հայ նորագույն գրականության մեջ	0302/B55	+		+		+	+	+			+	+		+	+		+
Հայոց լեզու																	
Ժամանակակից հայերենի կետադրության հիմունքներ	0302/B54	+		+		+	+	+			+	+		+	+		+
Սոցիալական խնդիրների լրագրություն	0302/B54	+		+		+	+	+			+	+		+	+		+
Առցանց մեդիա	0302/B54	+		+		+	+	+			+	+		+	+		+
Հայերենի ուղղագրության պատմություն	0302/B54	+		+		+	+	+			+	+		+	+		+
Հայ գրականություն																	
Հայ մատենագրություն	0302/B56	+	+	+				+			+	+			+		+
Նորագույն շրջանի հայ պոեմը	0302/B56	+	+	+				+			+	+			+		+
Քննադատության տեսություն	0302/B56	+	+	+				+			+	+			+		+
Հայոց լեզու																	
Ժամանակակից հայերենի նորաբանությունները	0302/B57	+		+		+	+	+	+			+					+
Միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգը	0302/B57	+		+		+	+	+	+			+					+
Ռազմական լրագրություն	0302/B57	+				+	+	+	+			+					+
Մեդիա, հաղորդակցություն և մշակույթ	0302/B57	+		+		+	+	+	+			+					+
ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ																	
Կուրսային աշխատանք-1	0302/B58	+		+		+	+	+	+		+	+		+	+	+	+
Կուրսային աշխատանք-2	0302/B59	+		+		+	+	+	+		+	+		+	+	+	+
Մասնագիտական պրակտիկա	0302/B60	+		+		+	+	+	+		+	+		+	+	+	+
Ավարտական աշխատանք	0302/B61	+		+		+	+	+	+		+	+		+	+	+	+

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՍԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0305/ B04	**Ռուսերեն -1**	**4 ECTS կրեդիտ**
4 ժամ/շաբ.	**0/60/0**	
1-ին կիսամյակ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:

Դասընթացի խնդիրներն են.

- Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:
- Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:
- Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
- Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը:
2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար:
3. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին):
2. Հասկանալու և կարողանալ սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. վերլուծական մեթոդ
6. խոսքային կամ բանավոր մեթոդ
7. գրավոր մեթոդ
8. բացատրական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: **Բաժին 2.** Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: **Բաժին 3.** Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: **Բաժին 4.** Ձևաբանություն. ձևաբանության

հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Русский язык. Под общ.ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

0305/B08	Ռուսերեն -2	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացինպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:

Դասընթացիխնդիրներն են.

- Ձևավորել գիտելիքներ՝ հիմնվածժամանակակիցպատկերացումներիվրա:
- Վերհանել թերություններն ու շտկել դրանք:
- Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
- Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը:
2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով:
3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները:
3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ:
4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը:
5. Զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:
2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. վերլուծական մեթոդ
6. խոսքային կամ բանավոր մեթոդ
7. գրավոր մեթոդ

8. բացատրական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: **Բաժին 2.** Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Բաժին 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: **Բաժին 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

Հիմնական գրականության ցանկ

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

0305/B15	Անգլերեն -1	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:

Դասընթացի խնդիրները.

- Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար:
- Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը:
2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները:
3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները:
4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:
2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:
3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:
2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո

4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույնաշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբայինաշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: **Բաժին 2.** Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: **Բաժին 3.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն:Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, &Grognet, AlleneGuss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

0305/B16	Անգլերեն 2	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:

Դասընթացիխնդիրները՝

- Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը:
- Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները:
2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույնաշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավորթարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1.Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: **Բաժին 2.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, &Grognet, AlleneGuss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

0305/B15	Ֆրանսերեն – 1	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Դասընթացի խնդիրները՝

- խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա,
- ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ,
- հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտականգիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնականմասնագիտականկարողություններ

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալուև վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելիկարողություններ

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. Անհատական և խմբայինառաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք□ Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1.Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2.** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3.** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4.** Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: **Թեմա 5**. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: **Թեմա 6.** Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: **Թեմա 7.** Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveauintermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveaudébutant),
4. M. Djoulhakian, R. Meliksnتian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

0305/B16	**Ֆրանսերեն– 2**	**4 ECTS կրեդիտ**
4 ժամ/շաբ.	**0/60/0**	
2-րդ կիսամյակ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:

Դասընթացի խնդիրները.

- խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա,
- ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ,
- հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները,
2. ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը,

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները,
2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները,
3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ),
4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր,

գ. ընդհանրական/փոխանցելիկարողություններ

1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն,
2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները,
3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր,
4. բառարանիօգնությամբընթերցելուգեղարվեստականգրականությունևմասնագիտականտեքստեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույնաշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք՝ Նախապես տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2**. Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 3.** Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 4.** Հարաբերական դերանուններ. Դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ: **Թեմա 5.** Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: **Թեմա 6.** Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը նգործածությունընախադասություններում: **Թեմա 7.** Նախդիրներիհամակարգայինդասակարգում: Տարբերի արաբերություններ արտահայտող նախդիրներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveauintermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveaudébutant),
4. M. Djoulhakian, R. Meliksnтian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

0304/ B01	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30 / 0/ 0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝

Ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:

Դասընթացի խնդիրները.

- Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
- Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:
- Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը,
2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները,
3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,
2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում,
3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը ևս հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում,
2. բանավիճելու:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. ռեֆերատ
4. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք□ Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: **Թեմա 2**. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի

թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: **Թեմա 3**. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: **Թեմա 4.** Արշակունիների թագավորությունը: **Թեմա 5.** Հայաստանը վաղ միջնադարում: **Թեմա 6.** Հայաստանը զարգացած միջնադարում: **Թեմա 7.** Հայաստանը ուշ միջնադարում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

0304/B05	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:

Դասընթացի խնդիրները.

- Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
- Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:
- Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը:
2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. ռեֆերատ
4. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: **Թեմա 3.** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 4.**Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 5.** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: **Թեմա 6.** Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: **Թեմա 7.** Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: **Թեմա 8.** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: **Թեմա 9**. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: **Թեմա 10**. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: **Թեմա 11.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

0104/B12	Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	15/15/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:
2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Գ2 Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Գ3 Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. ինքնուրույն խատանքներ

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարքն անց է կացվում բանավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 2.** Նմուշային եղանակ: **Թեմա 3.** Գնահատման տեսություն: **Թեմա 4.** Միջակայքային գնահատականներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г.И., Медведев Ю.И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.

0304/B13	Իրավունքի հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների

օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

Դասընթացի խնդիրները.

- Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
- Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ:
2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. զեկուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք□ Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4**. Քրեական իրավունք: **Թեմա 5**. Աշխատանքային իրավունք: **Թեմա 6**. Ընտանեկան իրավունք: **Թեմա 7**. Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8**. Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10**. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11**. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12**. Միջազգային իրավունք:

Հիմնական գրականության ցանկ.

1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:

0304/B17	Քաղաքագիտության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Դասընթացի խնդիրները

- Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
- Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
- Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք□ Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված :

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: ***Թեմա 2.*** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: ***Թեմա 3.*** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: ***Թեմա 4.*** Քաղաքական ընտրանի /Էլիտա/: ***Թեմա 5.*** Քաղաքական լիդերություն: ***Թեմա 6.*** Քաղաքական ռեժիմներ: ***Թեմա 7.*** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: ***Թեմա 8.*** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: ***Թեմա 9.*** Քաղաքացիական հասարակություն: ***Թեմա 10.*** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: ***Թեմա 11.*** Ընտրություններ և ընտրական համակարգեր: ***Թեմա 12.*** Գաղափարախոսությունների տեսություն: ***Թեմա 13.*** Ազգեր և ազգային քաղաքականություն: ***Թեմա 14.*** Քաղաքականությունը և կրոնը: ***Թեմա 15.*** Քաղաքական մշակույթ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С., Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В., Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А., Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.

0201/B17	Տնտեսագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

Դասընթացի խնդիրները.

- ՈՒսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:
- ՈՒսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:
- ՈՒսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից:
- ՈՒսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:
2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:
2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ
2. սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր
3. խմբային աշխատանքներ
4. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից

Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2.** Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3**. Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4.** Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5.** Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7.** Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8.** Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10.** Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11.** Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12.** Փողը և բանկային համակրգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14.** Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15.** Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գորթնի Ջ. , Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:
2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:
3. Макконнелл К.Р., Брью С.Л. Экономика. 17-ое изд., Москва, 2009.
4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998

0304/ B10	Փիլիսոփայության հիմունքներ	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/0 /30	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով

զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

Դասընթացի խնդիրները.

- Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
- Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
- Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:
2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:
3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7.** Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:
3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:
4. Գաբրիելյան Հ., Հայ փիլսոփայության պատմություն, Երևան, 1980:
5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:
6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:

0201/B17	Գործարարության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0 /0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ ներկայիս տնտեսական պայմաններում գործարարական գործունեություն կազմակերպելու և վարելու համար:

Դասընթացի խնդիրները.

- ձևավորել համակարգված գիտելիք գործարարական գործունեության կազմակերպման շուրջ,
- մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար
- ձևավորել գիտելիքներ գործարարական գործունեության սուբյեկտների պատասխանատվության շուրջ

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու գործարարական գործունեության միջավայրը և տեսակները,
2. տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը,
3. իմանալու գործունեության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը,
4. գիտենալ գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով,ընտրել լավագույնը,
2. կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը,
3. գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում,
4. հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու թիմում,
2. մոտիվացնելու,
3. առաջնորդելու,
4. աշխատելու տեղեկատվության հետ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական խաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց, ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքն անց է կացվում գրավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գործարարական գործունեության էությունը և ֆունկցիաները: ***Թեմա 2.*** Գործարարության միջավայրը և տեսակները: **Թեմա 3.** Գործարարական գործունեության սուբյեկտները: ***Թեմա 4***. Գործունեության կազմակերպա-իրավական ձևերը: ***Թեմա 5.*** Բիզնես-գաղափարը և բիզնես հաեցակարգը, որպես գործարարական գործունեության նախադրյալ: ***Թեմա 6.*** Մարքեթինգի պլան: ***Թեմա 7***. Գործունեության կադրային ապահովումը: ***Թեմա 8***. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: ***Թեմա 9.*** Ինքնարժեքի կալկուլյացիա: ***Թեմա 10.*** Ձեռնարկատիրական ռիսկ: ***Թեմա 11***. Ֆինանսական պլանավորում:

Հիմնական գրականության ցանկ.

1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю. С. Трефилова, Бизнес-планирование, учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/.
2. В.Ю.Буров, Основы предпринимательства, учебное пособие, Чита – 2011.
3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, Бизнес – планирование, учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//.

4. С.И.Башаримова,М.В.Дасько, Основы предпринимательства, учебное пособие,
5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, Основы предпринимательской деятельности, учебное пособие, Санкт-Петербург, 2016. https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//

0105/B 07	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/ 0/ 0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը:

Դասընթացի խնդիրները՝

- Ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:
- Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները:
- Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները:
2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:
3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

բ.գործնական մասնագիտական կարողություններ

1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին:
2. Նախազգուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից:
3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Տիրապետելու կանխատեսման մեթոդին, թե այս կամ այն գործոնը, ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Պասիվ դասախոսություն

2. Ակտիվ դասախոսություն
- ✓ *հարցուպատասխան*
- ✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն
- ✓ *«PowerPoint» համակարգչայինծրագրովդրվագներիցուցադրում*
- ✓ *հարցուպատասխան*
- ✓ *բանավեճ*
- ✓ *զրույց*

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:
2. Այնուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2**. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3**. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4**. Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5**. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6**. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7**. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.**Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաիների միջև գոյություն ունեցող փոխազդեցություններ, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

0304/ B17	Կրոնագիտության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները.

- Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:
- Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:
2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանել ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:
2. Համեմատական վերլուծության ենթարկել և իրարից տարբերել հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում են հարցեր դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5.** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимирон Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.

0104/B09	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական

հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Դասընթացի խնդիրները.

- Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
- Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
- Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
- Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
- Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

բ.գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,
- լաբորատոր աշխատանքներ,
- տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Թեստը, առաջադրանքը, խնդիրըկամռեֆերատը.գնահատվումէ «Բավարար»,եթեկատարելէ 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը:
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեսթերից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapeերի հետ: Աղյուսակների տեղադրում::

Թեմա 3. Microsoft Excelէլեկտրոնայինաղյուսակներ

Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյակների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:

Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ռճերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ռճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ա.Հովակիմյան., Ս. Սարգսյան, Լ. Խաչոյան., Ն.Իսպիրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան, Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. А.Тихомиров, Прокди А.К., Колосков П.В., Кендрова И.А. и др. MicrosoftOffice 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Ջանփոլադյան, Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Երևան, 2000թ.:

0303/B17	Հոգեբանության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզակամային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:

Դասընթացի խնդիրները՝

- Բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները:
- Լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ: Ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները,
2. տարբերակելու հագեկանի ակտիվության մակարդակները,
3. պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները,
4. բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացներըև նրանց առանձնահատկություններին,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մեկնաբանելու անձի հուզակամային ոլորտի նրբությունները,
2. տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները,
2. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն

2. քննարկում
3. բանավեճ
4. գործնական պարապմունք
5. ռեֆերատ/էսսե
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: **Թեմա 3**. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Հոգեկանի և գիտակցության զարգացումը: **Թեմա 6.** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 7.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: **Թեմա 8.** Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: **Թեմա 9.** Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: **Թեմա 10.** Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: **Թեմա 11.** Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 13.** Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա** 14. Անձի հուզակամային կողմը: **Թեմա 15.** Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ:
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997 :
3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.
4. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.
5. Немов Р.С., Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн. М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
6. Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.-592 стр.
7. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005

0304/B 17	Տրամաբանության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից:

Դասընթացի խնդիրները.
- Ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները:
- Ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ:
- Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողությանտեսակներին, տրամաբանության օրենքներին:
- Ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:
3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:
2. Զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:
3. Զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցելու և հերքելու:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
Գ5.Ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարք. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.
Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2**. Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4**. Տրամաբանության օրենքները: **Թեմա 5**. Մտահանգում: **Թեմա 6**. Ապացուցում և հերքում: **Թեմա 7**. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, պարադոքս: Հիպոթեզ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

0303/B17	Սոցիոլոգիայի հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

Դասընթացի խնդիրները.
- Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:
- Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ներկայացնելու գիտության մեջ ‹‹սոցիոլոգիա›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2.** Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3**. Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4.** Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Бабосов Е.М., Прикладная социология. ТетраСистемс, 2001. ISBN 985-6577-74-8.
2. Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011. ISBN 978-5-98281-155- 4.
3. Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А.М., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.
5. Ельмеев В.Я., Овсянников В.Г., Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)
6. Кравченко А.И., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.

0303/ B17	Բարոյագիտության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի խնդիրները.

- Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
- Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
- Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
- Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
- Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանություններ:
- Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու
2. չափանիշները:
3. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>Բաժին 1.</u> Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. **Թեմա 1.** Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: **Թեմա 2.** Բարին և չարը: **Թեմա 3.** Պարտք և պատասխանատվություն: **Թեմա 4**. Պատիվ և արժանապատվություն: **Թեմա 5.** Խիղճ: Բարոյական իդեալ: **Թեմա 6.** Կյանքի իմաստն ու նպատակը: **Թեմա 7.** Երջանկություն. Սեր: **<u>Բաժին 2.</u> Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8**. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: **Թեմա 9.** Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **<u>Բաժին 3.</u>Բարոյականություն և ազատություն: Թեմա 10.** Անձը և համակեցությունը: **Թեմա 11**. Բարոյականության հասարակական խնդիրները: **<u>Բաժին 4.</u> Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12**. Անձի բարոյական գիտակցությունը: **Թեմա 13.** Անձի բարոյական գործունեությունը: **Թեմա 14.** Անձի բարոյական հարաբերությունները: **Թեմա 15**. Անձի բարոյական մշակույթը: **<u>Բաժին 5.</u> Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16**. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերահիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: **Թեմա 17**. Ազգային-բարոյական նկարագիր: **<u>Բաժին 6.</u> Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18.** Կիրառական բարոյագիտություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. А. Разин, Этика, Москва, 2003.
6. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.
7. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.
8. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.
1. 5.Словарь по этике.

0202/B17	Մշակութաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/ 0/ 0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Դասընթացի խնդիրները.

- Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
- Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1□ Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: ***Թեմա 2***□ Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: ***Թեմա 3***□ Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: ***Թեմա 4***□ Մշակույթ-բնություն-հասարակություն: ***Թեմա 5***□ Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): ***Թեմա 6***□ Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: ***Թեմա 7***□ Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: ***Թեմա 8***□ Վերածնունդ և Ռեֆորմացիա: ***Թեմա 9***□ Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: ***Թեմա 10***□ Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: ***Թեմա 11***□ Հայկական մշակույթ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս. Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս. Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С. А., Рыжакова С. И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В. М., Культурология, М., 1998.

0105 /B17	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4 –րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ

քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ձևավորել բնագիտական աշխարհայացք,
- ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը,
- բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները,
- ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին:
3. Մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:
3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային մեթոդները(դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները(վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները(ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները(թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադատական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.**

Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները:Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները:Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները:**Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Երևան, 2007:
2. Канке В.А., Концепции современного естествознания, Логос. Москва, 2002.
3. Под.редакц. Л. А. Михайлова – Концепции современного естествознания, Питер, 2008 .

0001 /B02, B06	Ֆիզդաստիարակություն	0 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին, 2-րդ կիսամյակներ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողներիառողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը,բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորենֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրելդրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ

2. վարժություններ, վազք, հեռացատկ),
3. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
4. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ5.Աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
    - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
    - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
    - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
    - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
    - վերականգնողական միջոցառումների իրականացում,
    - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
    - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
    - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
    - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացի թեմատիկ բովանդակությունը. /բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից./

<u>1-ին կիսամյակ</u>

Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում:Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 2.*** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում:Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկիտեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից:***Թեմա 3.*** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում:***Թեմա 4.*** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

<u>2-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն:Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ:***Թեմա 2.*** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն:

Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ.վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում:Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում:Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում:Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում:Երկկողմանի խաղ: ***Թեմա 5.*** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ:Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ):Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները:Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով:***Թեմա 6.***Մասնակցությունըսպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: ***Թեմա 8.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
4. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
5. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
6. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
7. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:

0001/B11, B14	Ֆիզդաստիարակություն	0 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
3-րդ, 4-րդ կիսամյակներ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկել հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանել անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանել նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն,
2. աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ,
3. վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները,
4. կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներկուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս,
5. կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերելու առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ5.Աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
   - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
   - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
   - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը

ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

3-րդ կիսամյակ

Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: ***Թեմա 2.*** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 3.*** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/:Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում:Վազք արգելքների հաղթահարումով:Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: ***Թեմա 4.*** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: ***Թեմա 5.*** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում:Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: ***Թեմա 6.*** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: ***Թեմա 7.*** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը:***Թեմա 8.*** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: ***Թեմա 9.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: ***Թեմա 10.*** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

4-րդ կիսամյակ

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: ***Թեմա 2.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: ***Թեմա 5.*** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: ***Թեմա 6.*** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: ***Թեմա 7.*** Սպորտային խաղ բասկետբոլ,գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: ***Թեմա 8.*** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: ***Թեմա 9.*** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: ***Թեմա 10.*** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ:Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ):Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): ***Թեմա 11.*** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: ***Թեմա 12.*** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: ***Թեմա 13.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
4. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
5. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:

0001/B03	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	30 /30 /0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	
Դասընթացի նպատակն է՝ սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում		

առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները,
2. ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին,
3. մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները,
4. ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը,
5. ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն,
2. դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում,
3. ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում,
4. օգտագործելու ձեռքբերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում,
2. աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ,
3. վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ5.Աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ
4. լաբորատոր աշխատանքներ
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է **ստուգարքով:** Սստուգարքնանցկացվումէբանավորհարցմանմիջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքումստուգարքըհամարվումէհանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>Բաժին 1.</u> **Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ:** ***Թեմա 1.*** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2.*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: <u>Բաժին 2.</u>**Քաղաքացիական պաշտպանություն:*Թեմա 3.*** Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4.*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5.*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6.*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա 7.*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: <u>Բաժին 3.</u> **ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն:** ***Թեմա 8.*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 9.*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 10.*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 11.*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 12.*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Յ., Վարդանյան Ջ.Հ., «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:

2. Հեղինակների կոլլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարիկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:
3. Կ.Ա.Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:
4. Մ.Խ.Ադամյան, «Փոխադրականան շարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ:
5. Ս.Ա.Մանուկյան, Գ.Հ.Ճաղարյան «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

0302/B19	Գրաբար -1	3 ECTS կրեդիտ
3 ժամ/շաբ.	0/45/0	
1-ին կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ներկայացնել գրաբարը որպես հին գրական լեզու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև գրաբարի հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով: Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:

Դասընթացի խնդիրները.

- Ուսանողին ներկայացնել գրաբարի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ուղղախոսության-ուղղագրության նորմերը,
- իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում,
- տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում,
- հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու և նկարագրելու գրաբարի զարգացման փուլերը,
2. վերարտադրելու գրաբարի գրության և արտասանության փոխհարաբերությունները, ցույց տալու գրաբարի հնչյունափոխությունը,
3. վերարտադրելու և թվարկելու գրաբարի բայ խոսքի մասի թեքական այն առանձնահատկությունները, որոնցով գրաբարը տարբերվում է ժամանակակից հայերենից,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. անսխալ ընթերցելու, մեջբերելու և մեկնաբանելու գրաբար տեքստերը և զերծ մնալու գրաբարի ուղղագրական սխալներից,
2. խոնարհելու բայերը բոլոր ժամանակային ձևերով,
3. թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ արժևորելով դրանք տեքստում,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. բացահայտելու գրաբարի ոճերը, բայաձևերի քերականական իմաստները,
2. ճիշտ վերծանելու բառերի կառուցվածքային պլանում կատարված պատմական հնչյունափոխության դրսևորումները, մեկնաբանելու երկբարբառների և եռաբարբառների հնչաբանական փոփոխությունները,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

U1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

U3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական

վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդ
3. համագործակցային աշխատանք
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. մտագրոհ
6. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 ստուգում՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավոր: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավոր, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Գրաբարը որպես հայերենի զարգացման շրջան. գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2.** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3.** Գրաբարի դերբայները: **Թեմա 4.** Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակները: **Թեմա 5.** Գրաբարի անկանոն բայերը: Գրաբարի պակասավոր բայերը: **Թեմա 6**. Պատճառական բայեր: Գրաբարի բաղադրյալ ժամանակները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ա, Գրաբարի ձեռնարկ, Եր.,1977:
2. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:
3. Գոճանյան Պ., Դասական գրաբարի գործնական քերականություն, Եր., 2011:
4. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
5. Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1975:

0302/ B24	Գրաբար -2	3 ECTS կրեդիտ
3 ժամ/շաբ.	0/45/0	
2-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է հակիրճ ներկայացնել գրաբարը՝ որպես գրական լեզվու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով:

Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:

Դասընթացի խնդիրներն են

- Ուսանողին ներկայացնել գրաբարի անվանական հոլովման առանձնահատկությունները,
- իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը,
- տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործումը,
- հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկություն ների մեկնաբանումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու և մեկնաբանելու գրաբարի անվանական հոլովման առանձնահատկությունները,
2. ներկայացնելու հոլովների կազմության հիմունքները գրաբարում,
3. զատորոշելու գրաբարի և արևելահայ գրական լեզվի անվանական հոլովման նմանություններն ու տարբերությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու և բացատրելու գոյականների, ածականների, թվականների և դերբայների հոլովման յուրահատկությունները,
2. պարզաբանելու և ցույց տալու գրաբարյան բնագրերի քերականական առանձնահատկությունները,
3. քննելու և թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ դրանք արժևորելով տեքստում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. ձևաբանորեն վերլուծելու գրաբարի հոլովները, տարբեր բառաձևերի քերականական իմաստները,
2. գործնականում կիրառելու գրաբարի անվանական հոլովման վերաբերյալ յուրացրած գիտելիքները,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր

աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. բանավեճ
3. զրույց
4. խմբային աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 ստուգում՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավոր: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավոր, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Համառոտ բովանդակություն

Թեմա 1. Գրաբարի անվանական հոլովումը: Հոլովները և նրանց կազմությունը. հոլովման համակարգի տարբերությունն աշխարհաբարի համեմատությամբ: **Թեմա 2.** Պարզ հոլովումներ. Ա, Ե, Ի, Ո, ՈՒ հոլովումներ: Խառը հոլովումներ. Ի-Ա, Ո-Ա հոլովումներ: **Թեմա 3**. Անկանոն հոլովումներ: **Թեմա 4**. Ածական անուն: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: **Թեմա 5.** Թվական անուն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003:
2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1977:
3. Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Ջ հատ., Եր., 1974:
4. Գ. Թոսունյան, Լ. Խաչատրյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
5. Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1975:
6. Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008:
7. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:

0302/B30	Գրաբար -3	3 ECTS կրեդիտ
3 ժամ/շաբ.	0/45/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է հակիրճ ներկայացնել գրաբարը՝ որպես գրական լեզու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով:

Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողին ներկայացնել գրաբարի բառային և քերականական առանձնահատկությունները,
- ուսանողին ներկայացնել գրաբարի դերանվանական հոլովման առանձնահատկությունները,
- Իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում,

- տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում,
- հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու գրաբարի դերանվանական հոլովման առանձնահատկությունները, կազմության հիմունքները,
2. հակադրելու և համեմատելու գրաբարի և արևելահայ գրական լեզվի դերանվանական հոլովման նմանություններն ու տարբերությունները,
3. ներկայացնելու մակբայ խոսքի մասի առանձնացման հիմունքները, տարբերակելու դրա քերականական հատկանիշները,
4. ներկայացնելու գրաբարի քերականական կառուցվածքի յուրահատկությունները. իմանալու նախադասության կառուցվածքի և նախադասության անդամների շարադասության որոշակի կարգը, աշխարհաբարի համեմատությամբ նրա շրջուն շարադասական կառուցվածքը,
5. ներկայացնելու նախդիրների և նախադրությունների քերականական արժեքները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու և բացատրելու դերանվանական հոլովման յուրահատկությունները,
2. պարզաբանելու և ցույց տալու գրաբարյան բնագրերի քերականական առանձնահատկությունները,
3. քննելու և թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ դրանք արժևորելով տեքստում,
4. բացատրելու դերանունների հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ(դերանունների գործածությունը գոյականների հետ, դերանվանական մակբայներ),
5. բացատրելու նախդիրների և նախադրությունների քերականական իմաստները այս կամ այն հոլովի հետ գործածվելիս,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գործնականում կիրառելու գրաբարի դերանվանական հոլովման վերաբերյալ յուրացրած գիտելիքները,
2. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Գ5.Տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառել:
Գ6.Ուսումնասիրության ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. բանավեճ
3. զրույց
4. խմբային աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 ստուգում՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավոր: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավոր, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Համառոտ բովանդակություն

Թեմա 1. Գրաբարի դերանվանական հոլովումը: Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 2**. Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 3.** Ստացական և փոխադարձ դերանուններ: **Թեմա 4.** Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: **Թեմա 5.** Մակբայների տեսակներն ու կազմությունը գրաբարում: **Թեմա 6.** Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2003:
2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1977:
3. Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Ջ հատ., Եր., 1974:
4. Գ. Թոսունյան, Լ. Խաչատրյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
5. Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Եր., 1975:
6. Է. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008:
7. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:

0302/B22	Խոսքային էթիկետ և գործնական հաղորդակցման հմտություններ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	15 /15 /0	
1-ին կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Առարկայի ուսումնասիրության **նպատակը** ուսանողի՝ խոսք կառուցելու լեզվական կանոնների իմացությունն է, լեզվի գործառական տարբերակներում խոսքի արժանիքների, բառապաշարային ու քերականական յուրահատկությունների կիրառությունը հաղորդակցման ընթացքում:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները,
- բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները,
- դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ,
- հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները,
- յուրացնել խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցները, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց,
2. ընդհանրացնելու հայոց լեզվի գործառույթները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մեկնաբանելու լեզվի նորմավորման չափանիշները,
2. արժևորելու արտասանական, բառապաշարային և քերականական նորմերը, հնչյունական, բառային, քերականական մակարդակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դրսևորելու լեզվական բաձր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ :

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. քննարկում,
3. բանավեճ, խմբային աշխատանք,
4. վերլուծական,
5. բացատրական մեթոդներ,
6. էլեկտրոնային ուսուցում,
7. գրավոր աշխատանք,
8. բանավոր հարցում, զրույց:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Առանց ընթացիկ գնահատման քննությունը գնահատվում է 20 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխան 5,5,5,5միավոր-արժեքով(առաջիներկու հարցը 5,5 տեսական հարցադրումներով, վերջին երկու 5,5 միավորները բաշխվում են հետևյալ ձևով՝ 2 միավոր հատկացվում է ռեֆերատին /նախապես տրված թեմաներով/, 3 միավոր՝ ստեղծագործական աշխատանքին /շարադրանք, էսսե/, 3 միավոր գեղարվեստական բնագրի լեզվառճական վերլուծությանը, 2 միավոր՝ արտասանությանը):

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. **Խոսքային էթիկետ և գործնական հաղորդակցման հմտությունների առարկայի** նպատակը, խնդիրները: Կապը այլ գիտությունների հետ: **Թեմա 2.** Լեզվական նորմ: Հայոց լեզվի հիմնական նորմերը՝ արտասանական, բառապաշարային, քերականական: **Թեմա 3.** Հնչյունական մակարդակ: Ուղղագրություն: Ուղղախոսություն: Օտար բառերի արտասանության յուրահատկությունները: Հնչերանգ: Շեշտ: **Թեմա 4.** Խոսքի արժանիքներ: Արտահայտչական և պատկերավորման միջոցներ: **Թեմա 5.** Բառային մակարդակ: Հայոց լեզվի բառապաշարի շերտերը: Չևահմաստային խմբերը: **Թեմա 6.** Քերականական մակարդակ: Չևաբանություն, ձևաբանական նորմեր: Խոսքի մասերի գործածության յուրահատկությունները: **Թեմա 7.**

Շարահյուսություն: Շարահյուսական կապակցության միջոցներ ու եղանակներ: Նախադասություն: կառուցվածքային տեսակները: Ուղղակի և անուղղակի խոսք: Փոխակերպումներ: **Թեմա 8.** Խոսքի գործառական տարբերակները: Ոճեր: Գրագրության ձևեր:

Հիմնական գրականության ցանկ

1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր.,2014:
2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր, 2015:
3. Ասատրյան Մ.Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002:
4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանությունԵր., 2003:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
6. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:
7. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, 2003:
8. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ա, Բ, Եր., 1990,1991:

0302/B18	Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն-1	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	30 / 30/ 0	
1-ին կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական համակարգն իր տարբեր հատկանիշներով, ուսումնասիրել խոսքային ավելի մեծ միավորները՝ վանկը, հնչաբառը, հնչանախադասությունը, շեշտը և հնչերանգը, զինել ուղղագրությանը և ուղղախոսությանը վերաբերող տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով:

Դասընթացի խնդիրները.

- ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի հնչյունական, հնչյունափոխական առանձնահատկությունները,
- բացատրել ուղղախոսության-ուղղագրության նորմերը,
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու «Հնչյունաբանություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,
2. զանազանելու հնչյունափոխական առանձնահատկությունները, գրանշանների և հնչյունների փոխհարաբերությունը,
3. ներկայացնելու հայոց լեզվի հնչյունաբանության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց ներքին կապերը,
4. բացահայտելու «Հնչյունաբանություն» գիտակարգի դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու հնչյունաբանական վերլուծություն,
2. ճիշտ տարբերակելու հնչյունափոխության բոլոր տեսակները,
3. պրակտիկ գործունեության մեջ կիրառելու ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքները և ունակությունները,

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. կատարելու լեզվաբանական հետազոտություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

U1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

U3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

U4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

U5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած

ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդ
3. բացատրական մեթոդ
4. համագործակցային աշխատանք
5. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
6. մտագրոհ
7. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 2 միավորով, 2 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում. հայերենի զարգացման փուլերը: **Թեմա 2**. Հայերենի հնչյունական համակարգը. այբուբենի հատկանիշները: **Թեմա 3**. Հնչյուն և հնչույթ. հնչույթ և գրանշան: **Թեմա 4**. Ձայնավորների դասակարգումը. բաղաձայնների դասակարգումը: **Թեմա 5.** Շեշտը հայերենում. վանկ. տողադարձ: **Թեմա 5**. Հնչյունափոխությունը և նրա տեսակները: **Թեմա 6.** Հայերենի ուղղագրության սկզբունքները. ուղղագրական բարեփոխումներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբեղյան Մ.՝ Հայոց լեզվի տեսություն՝ Երկեր, Ջ հատոր, Եր., 1974:
2. Աղայան Էդ. , Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:
4. Մարգարյան Ա. ՝ Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/՝ Եր., 1990:
5. Ջահուկյան Ջ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս., Ա պրակ, Եր., 1980:
6. Ա. Սուքիասյան՝ Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:

0302/B23	**Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն և բառագիտություն - 2**	**4 ECTS կրեդիտ**
4 ժամ/շաբ.	**30/30/0**	
2-րդ կիսամյակ	**Եզրափակիչ գնահատմամբ**	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրա-

ռությունը:

Դասընթացի խնդիրները.

- կարևորել բառերի՝ իբրև լեզվի ինքնուրույնաբար գործածվող հիմնական միավորների դերը խոսքում,
- իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,
- ներկայացնել բառերի ծագման ու նրանց պատմական կյանքի, բառարանների կազմման, նրանց տեսակների, բառագիտական նշանակության և այլ հարցերի ուսումնասիրությունը,
- լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու «Բառագիտություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,
2. վերարտադրելու բառիմաստի տեսակներն ու փոփոխությունները,
3. ներկայացնելու ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,
4. ներկայացնելու հայոց լեզվի բառագիտության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց ներքին կապերը,
5. բացահայտելու «Բառագիտություն» գիտակարգի դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու ձևույթաբանական և բառակազմական վերլուծություն, բնագրերի հիման վրա ճիշտ տարբերակելու տարբեր բառերի ծագումը, կրած ձևաիմաստային փոփոխությունները,
2. կատարելու բառակազմական վերլուծություններ, նկարագրելու բառերի կառուցվածքային օրենքներն ու օրինաչափությունները,
3. ճիշտ գրելու բարդությունները՝ տարբերակելով հայերենի բառային բարդությունների տեսակները,
4. նկարագրելու բառապաշարի դասակարգման սկզբունքները և խոսքային միջավայրում ճիշտ օգտվելու տարբեր բառաշերտերից,
5. օգտվելու լեզվաբանական տարբեր բառարաններից, հայթայթելու տեղեկատվություն և գործառելու,
6. տեքստերում և բանավոր խոսքում ճիշտ գործառելու ձևաիմաստային տարբեր խմբի բառերը,
7. բացատրելու դարձվածքների կազմությունն ու գործածության ոճական նպատակը,

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. կատարելու լեզվաբանական հետազոտություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. հակադրելու, մշակումելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա2.Ճանաչելու լեզվաբանական մեթոդաբանական ուղղությունները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում բանասիրության բնագավառում ուսումը շարունակելու համար:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդ
3. բացատրական մեթոդ
4. համագործակցային աշխատանք
5. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
6. մտագրոհ
7. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 քննություն՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 5 միավոր, եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 10 միավոր:

Ընթացիկ քննությունների 5 միավորը տրոհվում է 4+1 սկզբունքով, որտեղ առավելագույն 4 միավորը ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից (գրավոր տարբերակ) և առավելագույն 1 միավորը՝ սեմինար դասընթացներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (5-ի դեպքում 1, 4-ի դեպքում 0,75, 3-ի դեպքում՝ 0,5, 2-ի դեպքում՝ 0):

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+1+1 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորը ուսանողը վաստակում է բանավոր անցկացվող քննությունից (բանավոր քննություն հարցատոմսերի միջոցով): Գնահատման չափանիշներն են՝ տեսական հարցերի ճիշտ պատասխանները և եզրահանգումները, խոսքի տրամաբանական կառուցվածքը, առարկայի ընդհանուր իմացությունը, բառակազմական ճիշտ վերլուծությունը:

Առավելագույն 1 միավորը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան (օրինակ՝ 1 միավորը կարող է ձևավորվել հետևյալ բաղադրիչներով.

- անհատական թեմատիկ առաջադրանք,
- տարբեր աղբյուրներից թեմայի շրջանակներում տեղեկատվության հայթայթում և համակարգում,
- տրված առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծություն:

Առավելագույն 1 միավորը՝ ռեֆերատի ներկայացում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բառագիտություն. նրա ենթաբաժինները: **Թեմա 2**. Բառային մենիմաստություն և բազմիմաստություն. բառիմաստի փոփոխություն. բառերի ձևաիմաստային խմբերը: **Թեմա 3.** Բառապաշար. նրա հատկանիշները: Բառապաշարի շերտերը և դրանց դասակարգումը: **Թեմա 4.** Բառակազմություն: Ձևույթը և նրա տեսակները: **Թեմա 5.** Բարդություններ, նրանց տեսակները: **Թեմա 6.** Դարձվածաբանություն. դարձվածային միավորների հատկանիշները և դասակարգումը: **Թեմա 7.** Բառարանագրություն. բառարանների տիպերը:

Հիմնական գրականության ցանկը

1. Աբեղյան Մ.՝ Հայոց լեզվի տեսություն՝ Երկեր, Ջ հատոր, Եր., 1974:
2. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Եր., 1974:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:
4. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 3-րդ, Եր., 1957, էջ 27/147, հտ. 6-րդ, 1976:
5. Մարգարյան Ա. ՝ Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990:
6. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս., Ա պրակ, Եր., 1980:
7. Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:

0302/ B27	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն-1	5 ECTS կրեդիտ
5 ժամ/շաբ.	30/45/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ձևաբանության վերաբերյալ հիմնավոր գիտելիքների ձևավորումը, քերականական հնարավոր սխալների կանխումը, նախադասության ձևաբանական վերլուծության հմտությունների ամրակայումը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները, քերականական հիմնական հասկացությունները,
- քերականական կարգերի, քերականական իմաստների և ձևերի յուրացմամբ հարստացնել ուսանողների իմացությունը քերականական կարևորագույն հասկացությունների վերաբերյալ,
- ներկայացնել խոսքի մասերի դասակարգման հիմունքները և տարբերակված խոսքիմասային խմբերն իրենց առանձնահատկություններով,
- հիմնավոր գիտելիքներ ձևավորել նյութական խոսքի մասերի և դրանց քերականական յուրահատկությունների վերաբերյալ,
- ընկալելի դարձնել հարաբերության նշանակություն ունեցող խոսքի մասերի դերն ու նշանակությունը,
- ներկայացնել վերաբերմունքային խոսքի մասերի դերն ու կարևորությունը և դրանց տարբերակման առանձնահատկությունը,
- ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու և մեկնաբանելու ձևաբանության ուսումնասիրության առարկան և նրա խնդիրները,
2. վերարտադրելու քերականական կարգերի էությունը և դրանց տարբերակման չափանիշները,
3. զանազանելու խոսքի մասերի դասակարգման հիմունքները և թվարկելու առանձին խոսքիմասային խմբերը,
4. զանազանելու, լուսաբանելու նյութական խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները, մեկնաբանելու դրանց դերը և կիրառական յուրահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացատրելու քերականական կարգերի էությունը, քերականական իմաստների և ձևերի փոխհարաբերությունները,
2. պարզաբանելու և թվարկելու խոսքի մասերի տարբերակման հիմունքները,
3. քննարկելու և խմբավորելու նյութական խոսքի մասերն իրենց քերականական կարգերով,
2. ընդհանրացնելու խոսքի մասերի տարբեր խմբերն իրենց առանձնահատկություններով և նշանակությամբ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. բացատրելու և վերլուծելու բառաձևերում ձևույթների արտահայտած քերականական նշանակությունները,
2. տեքստում հակադրելու խոսքի մասերը՝ զանազանելով իրենց քերականական հատկանիշներով,
3. հակադրելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու նյութական խոսքի մասերին հատուկ քերականական առանձնահատկությունները:
4. գործնականում կիրառելու և մեկնաբանելու նյութական խոսքի մասերին վերաբերող տեսական գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, կգնահատի ու կզուգադրի լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:
Գ5.Տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառել:
Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական աշխատանք
3. բանավեճ
4. զրույց
5. խմբային աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ձևաբանությունը՝ որպես լեզվաբանության բաժին. քերականական կարգեր. քերականական ձև,իմաստ և պաշտոն: **Թեմա 2.** Խոսքի մասերի դասակարգման հիմունքները. թեքվող և չթեքվող խոսքի մասեր: **Թեմա 3.** Գոյական անուն: Գոյականը որպես խոսքի մաս. Նրա իմաստային, ձևաբանական,շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները: **Թեմա 4.** Ածական անուն. ածականը որպես խոսքի մաս: Նրա իմաստային, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները: **Թեմա 5.** Թվական անուն: Թվականն իբրև խոսքի մաս. Նրա իմաստային, ձևաբանական, շարահյուսական և բառակազմական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Դերանուն: Դերանունն իբրև խոսքի մաս: Դերանվան հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ: Դերանվան տեսակները: **Թեմա 7.** Բայ: Բայերի կազմությունը, բայահիմքեր, դերբայներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր.,1969:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, 1974:
4. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970,1973,1977:

0302/ B33	Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն-2	5 ECTS կրեդիտ
5 ժամ/շաբ.	30/ 45/0	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է ձևաբանության վերաբերյալ հիմնավոր գիտելիքների ձևավորումը, քերականական հնարավոր սխալների կանխումը, նախադասության ձևաբանական վերլուծության հմտությունների ամրակայումը:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները, քերականական հիմնական հասկացությունները,
- քերականական կարգերի, քերականական իմաստների և ձևերի յուրացմամբ հարստացնել ուսանողների իմացությունը քերականական կարևորագույն հասկացությունների վերաբերյալ,
- ներկայացնել խոսքի մասերի դասակարգման հիմունքները և տարբերակված խոսքիմասային խմբերն իրենց առանձնահատկություններով,
- հիմնավոր գիտելիքներ ձևավորել նյութական խոսքի մասերի և դրանց քերականական յուրահատկությունների վերաբերյալ,
- ընկալելի դարձնել հարաբերության նշանակություն ունեցող խոսքի մասերի դերն ու նշանակությունը,
- ներկայացնել վերաբերմունքային խոսքի մասերի դերն ու կարևորությունը և դրանց տարբերակման

առանձնահատկությունը,
- ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Զանազանելու, լուսաբանելու նյութական խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները, մեկնաբանելու դրանց դերը և կիրառական յուրահատկությունները:
2. Ներկայացնելու, մեկնաբանելու քերականական խոսքի մասերի յուրահատկությունները, նրանց դերը և կիրառական առանձնահատկությունները:
3. Վերաձևակերպելու վերաբերմունքային խոսքի մասերի նշանակությունը, դասակարգելու և համեմատելու դրանց առանձնահատկությունները և գործածությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացատրելու նյութական խոսքի մասերի քերականական կարգերի էությունը:
2. Պարզաբանելու և թվարկելու քերականական խոսքի մասերի տարբերակման հիմունքները:
3. Տարբերակելու վերաբերմունքային խոսքի մասերն իրենց բնորոշ յուրահատկություններով:
4. Քննելու և գնահատելու խոսքի մասերի տարբեր խմբերն իրենց առանձնահատկություններով և նշանակությամբ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Բացատրելու և վերլուծելու խոսքի մասերը տեքստում՝ իրենց քերականական հատկանիշներով:
2. Զանազանելու նյութական խոսքի մասերին հատուկ քերականական առանձնահատկությունները և գործնականում կիրառելու դրանց վերաբերող տեսական գիտելիքը:
3. Հակադրելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու քերականական խոսքի մասերին վերաբերող յուրահատկությունները և գործնականում կիրառելու դրանց վերաբերող տեսական գիտելիքը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ2.Մայրենի լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. գործնական աշխատանք
3. բանավեճ
4. զրույց
5. խմբային աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմամբ:

Ընթացիկ քննությունները գրավոր են, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: 4 միավորն ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից, 1 միավորը՝ գործնական պարապմունքներից ստացած գնահատականներից հանված միջինից (5-ի դեպքում՝ 1, 4-ի դեպքում՝ 0,75, 3-ի դեպքում՝ 0,5, 2-ի կամ գնահատականի բացակայության դեպքում՝ 0):

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բայ. բայի քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ, եղանակային ձևեր: **Թեմա 2.** Մակբայ. Նրա տեսակները և կազմությունը: **Թեմա 3.** Կապ: Նրա տեսակները, դասակարգման սկզբունքները: **Թեմա 4**. Շաղկապ: Նրա տեսակները: **Թեմա 5**. Վերաբերական: Նրա տեսակները: **Թեմա 6.** Ձայնարկություն: Նրա տեսակները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր.,1969:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, 1974:
4. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983:
5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970,1973,1977:

0302/ B38	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-1	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	30/30/0	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել

- ժամանակակից հայերենի շարահյուսական համակարգը իր հատկանիշներով,
- շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները,
- նախադասության դասակարգման հիմունքները,
- պարզ նախադասության կառուցվածքը:

Դասընթացի խնդիրները.

- խոսք կառուցելու ժամանակ անսխալ կիրառել շարահյուսության քերականական կատեգորիաներ՝ նախադասության անդամների շարադասությունը, կապակցման միջոցներն ու եղանակները՝ համաձայնությունն ու խնդրառությունը, նախադասության կառուցվածքային տեսակները, հոլովների շարահյուսական կիրառությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Վերարտադրելու շարահյուսության քերականական կարգերն ու նրանց առանձնահատկությունները:
2. Զանազանելու բառի, բառակապակցության ու նախադասության տարբերությունները՝ իրենց հատկանիշներով:
3. Ըմբռնելու նախադասության գլխավոր և երկրորդական անդամների հատկանիշները, արտահայտությունը, շարադասությունը, կապակցման եղանակներն ու միջոցները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու նախադասության շարահյուսական անթերի վերլուծություն:
2. Հստակորեն տարբերակելու հոլովների շարահյուսական կիրառությունները:
3. Գրավոր և բանավոր խոսքում գործածելու գրական հայերենի լեզվական նորմերով կառուցված նախադասություններ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝սահմանված նպատակներին ու

խնդիրներին համահունչ:

Բ1.Կիրառելու լեզվական փաստերի հավաքման,պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. համագործակցային աշխատանք,
3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/,
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում,
5. մտագրոհ և այլն:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն:Թեստային աշխատանք:Առավելագույնը՝5 միավոր:

2-րդ ընթացիկ քննություն: Բանավոր քննություն: Առավելագույնը՝5 միավոր:

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Շարահյուսական կապակցման միջոցներ ու եղանակներ: **Թեմա 2. Բ**առակապակցություն, տեսակները: **Թեմա 3.**Պարզ նախադասության կառուցվածքը: **Թեմա 4**. Միակազմ նախադասություններ: **Թեմա 5** Նախադասության գլխավոր անդամներ: **Թեմա 6.** Նախադասության երկրորդական անդամներ: **Թեմա 7**. Հոլովների շարահյուսական կիրառությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/,Եր., 1987:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր.,1965:
3. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:
4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:
5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ, Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Եր.,1976:
6. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց,Եր., 2009:

0302/B43	Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն-2	5 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	30 /30 /0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարահյուսության բարդ նախադասությունը՝ իր տեսակներով, դասակարգման սկզբունքներով, բաղադրիչների կապակցության միջոցներով ու եղանակներով, քերականական դրսևորումներով:

Դասընթացի խնդիրները

- բնութագրել բարդ նախադասությունը, նրա տեսակները՝համադասական և ստորադասական,
- նրա բաղադրիչների կապակցության շարահյուսական միջոցներն ու եղանակները,
- բազմաբարդ նախադասությունն իր տեսակներով, փոխակերպումները, մեջբերվող խոսքը,

փոխակերպումը անուղղակի խոսքի:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. տարբերակելու բարդ նախադասության տեսակներն ու առանձնահատկությունները, բարդ համադասական նախադասության դասակարգման հիմունքները, բարդ ստորադասական նախադասության դասակարգումը,
2. բնութագրելու բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները և տեսակները,
3. փոխակերպելու ԴԴ-ով պարզ և բարդ ստորադասական նախադասությունները,
4. ներկայացնելու մեջբերվող խոսքը, նրա կետադրությունը և փոխակերպումը անուղղակի խոսքի,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու ցանկացած տեսակի պարզ և բարդ նախադասության շարահյուսական վերլուծություն,
2. տարբերակելու նախադասության կառուցվածքային տեսակները,
3. կազմելու առաջադրված նախադասությունների գծապատկերը:

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. կատարելու լեզվաբանական հետազոտություններ և վերլուծություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4. Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5. Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:

Բ1. Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3. Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ5. Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ1. Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3. Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ6. Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. բացատրական մեթոդ
3. համագործակցային աշխատանք
4. տեսադրվագաշարերի գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. մտագրոհ
6. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր:

Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 5 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 1,1,1,1,1միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ընթացիկ քննություն. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ քննություն. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Բարդ նախադասություն, ընդհանուր բնութագիրը: **Թեմա 2.** Բարդ համադասական նախադասություն, դասակարգման սկզբունքները: **Թեմա 3.** Բաղկացուցական և ներհակական կապակցություն: **Թեմա** 4. Բարդ ստորադասական նախադասություն: Դասակարգումը: **Թեմա 5**. Ենթակա և ստորոգյալ երկրորդական նախադասություններ: **Թեմա 6.** Գոյականական անդամի լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 7.** Բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններ: **Թեմա 8**. Բազմաբաղադրիչ նախադասություններ: **Թեմա 9.** Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի: **Թեմա 10.** Մեջբերվող խոսք, կետադրությունը, փոխակերպումը անուղղակի խոսքի:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբեղյան Մ.› Հայոց լեզվի տեսություն› Երկեր, Ջ հատոր, Ե., 1974:
2. Ասատրյան Մ.Ժամանակակից հայոց լեզու/շարահյուսություն/, Ե.,1987:
3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բադիկյան Խ., ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/, հ.3., Ե.,1976:
4. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն,հ. Ա, Ե.,1958:
5. Պառնասյան Ն., Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում,Ե.,1986:
6. Գարեգինյան Գր., ժամանակակից հայոց լեզու, բարդ նախադասություն, Ե.,1984:

0302/B29	Բարբառագիտության հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	15/15/0	
3-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայոց լեզվի բարբառները, դրանց դասակարգման սկզբունքները, ուսումնասիրության մեթոդները, բարբառների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի առանձնահատկությունները:

Դասընթացի խնդիրները

- ներկայացնել հայերենի բարբառների ծագման մասին տեսությունները,
- հասկանալ հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները,
- ներկայացնել հայերենի բարբառների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու «Բարբառագիտություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,
2. զատորոշելու հայ բարբառագիտության զարգացման փուլերը,
3. ներկայացնելու բարբառների ճյուղերն ըստ ձևաբանական դասակարգման,
4. հակադրելու և համեմատելու բարբառների և գրական լեզվի հնչյունական ու քերականական հատկանիշները,
5. ներկայացնելու հայերենի բարբառային բառապաշարի հատկանիշները, բարբառային բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գրի առնելու և մեկնաբանելու բարբառային տեքստերը, օգտվելու բարբառային քարտեզներից և աղյուսակներից,
2. ներկայացնելու բարբառագիտական ուսումնասիրությունների մեթոդաբանությունը, բարբառների դասակարգման հիմունքները,
3. օգտվելու և հայթայթելու տեղեկատվություն բարբառային տարբեր բառարաններից և գործառելու դրանք,

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. կատարելու լեզվաբանական հետազոտություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,

3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդ
3. բացատրական մեթոդ
4. համագործակցային աշխատանք
5. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
6. մտագրոհ
7. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները

Եզրափակիչ գնահատման 20 միավորը տրոհվում է 5+5+5 սկզբունքով (բանավոր քննություն հարցատոմսերի միջոցով): Գնահատման չափանիշներն են՝ տեսական հարցերի ճիշտ պատասխանները և եզրահանգումները, խոսքի տրամաբանական կառուցվածքը, առարկայի ընդհանուր իմացությունը:

Առավելագույն 5 միավորը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան՝

- անհատական թեմատիկ առաջադրանք,
- տարբեր աղբյուրներից թեմայի շրջանակներում տեղեկատվության հայթայթում և համակարգում,
- տրված առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծություն:
- ռեֆերատի ներկայացում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ: Բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները: **Թեմա 2**. Բարբառների հնչյունական համակարգերը: **Թեմա 3**. Բարբառների բառային համակարգերը: **Թեմա 4**. Բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները. սահմանական ներկան՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք: **Թեմա 5**. ՈՒՄ, ԿԸ, ԵԼ ճյուղերի բարբառներ: **Թեմա 6.** Տարբեր ճյուղերի բարբառների ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:

Հիմնական գրականության ցանկը

1. Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա – Նոր – Նախիջևան, 1911:
2. Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957:
3. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր.1953:
4. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն Եր. 1973:
5. Մ. Ասատրյան, Հայ բարբառագիտության գործնական աշխատանքների ձեռնարկ, 1985:
6. Ռ. Սաղաթելյան, Բարբառային բառաշերտը արդի գրական արևելահայերենում, Եր., 2011:

0302/B46	**Հայոց լեզվի պատմություն**	**6 ECTS կրեդիտ**
6 ժամ/շաբ.	**30 /60 /0**	
6-րդ կիսամյակ	**Եզրափակիչ գնահատմամբ**	
Դասընթացի նպատակն է՝ ընդհանրական գիտելիքներ և պատկերացում տալ□		

- հայոց լեզվի բնույթի, ժողովրդանունների, ազգի ծագումնաբանության մասին,
- հայ ժողովրդի բնօրրանի, ցեղակցական կապերի, տիպաբանական կառուցվածքի վերաբերյալ,
- հայոց լեզվի գիտական շրջանաբաժանման վերաբերյալ,
- նախագրային հայերենի ընդհանուր բնութագրի վերաբերյալ,
- գրերի գյուտի և գրական լեզուների պատմական քերականության և բառագիտության վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները

- ներկայացնել հայոց լեզվի ծագման և կազմավորման պատմությունը,
- բացատրել ցեղակցական կապերը, հայոց ժողովրդանունների ծագումնաբանությունը,
- բնութագրել հայերենի նախագրային շրջանը, գրական լեզուների պատմությունը,
- ներկայացնել պատմական բարբառագիտությունը, համեմատական ու պատմական քերականությունը և բառագիտությունը,
- բացատրել, պարզաբանել ձևաբանական և շարահյուսական շատ իրողությունների ծագումնաբանությունը,
- ներկայացնել պատմական ձևաբանությունը, համեմատական ու պատմական քերականությունը և բառագիտությունը,
- հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների մեթոդները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու հայոց լեզվի ծագման ու զարգացման առանձնահատկությունները,
2. ներկայացնելու հայոց լեզվի պատմության ուսումնասիրման տարբեր եղանակներն ու կառուցվածքային առանձնահատկությունները,
3. դասակարգելու ու տարբերելու հայոց լեզվի զարգացման փուլերը, վերլուծելու լեզվաբանական տարբեր ուսումնասիրությունների արդյունքները,
4. բնութագրելու ձևաբանական և շարահյուսական համակարգերի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները,
5. ներկայացնելու հայոց լեզվի պատմության խոնարհման համակարգի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները,
6. դասակարգելու և տարբերելու նախադասության նախադասության գլխավոր և երկրորդական անդամների, պարզ և բարդ նախադասությունների բնույթն ու արտահայտության ձևերը պատմական զարգացման ընթացքում:

*բ. **գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու լեզվաբանական ու պատմական վերլուծություններ, գնահատելու հայոց լեզվի ծագման ու զարգացման տեսությունները,
2. տարբերակելու հայոց լեզվի զարգացման կառուցվածքային առանձնահատկությունները, նկարագրելու հայերենի՝ որպես ազգային լեզվի կազմավորման և զարգացման պատմությունը, գրական լեզուների և բարբառների առաջացման ընթացքը՝ ձևավորման համար կիրառելով գործնական և ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
3. ներկայացնելու հայոց լեզվի զարգացման փուլերը, ծագման տեսություններն ու առանձնահատկությունները, ստուգաբանելու հայկական ժողովրդանունները,
4. կատարելու ինքնուրույն համեմատություններ և վերլուծություններ հայերենի պատմական քերականության վերաբերյալ՝ հիմնվելով գրաբարի, միջին հայերենի, և աշխարհաբարի՝ արևելահայ ու արևմտահայ գրական տարբերակների լեզվական հարուստ աղբյուրների վրա,
5. մեկնաբանելու հնդեվրոպական ցեղակից լեզուների և հայերենի մերձակցության աստիճանը տարբեր լեզվական մակարդակներում՝ բառապաշար և քերականություն,
6. կիրառելու հայերենի պատմության վերաբերյալ գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. ներկայացնելու և օգտագործելու քննադատական վերլուծության տեսությունների մեթոդները,
2. ցուցաբերելու ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը,
4. օգտվելու է դասընթացին վերաբերող տպագիր և համացանցային ռեսուրսներից:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. Բացահայտելու լեզվաբանական բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:
Բ1.Կիրառելու լեզվական փաստերի հավաքման,պահպանման և մշակման մեթոդները:
Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:
Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:
Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:
Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. խոսքային մեթոդներից՝ զրույց, երկխոսություն,
3. գործնական մեթոդներ (վարժություններ, տնային առաջադրանքներ,
4. ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ (բանավեճ, դերային խաղ, աշխատանք տեքստերի հետ և այլն),
5. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա, անհատական ինքնուրույն նախագծի իրականացում, գրավոր և բանավոր ստուգում, հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 քննություն՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 5 միավոր, եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 10 միավոր:

Ընթացիկ քննությունների 5 միավորը տրոհվում է 4+1 սկզբունքով, որտեղ առավելագույն 4 միավորը ուսանողը վաստակում է ընթացիկ քննությունից (գրավոր և բանավոր) և առավելագույն 1 միավորը՝ սեմինար դասընթացներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (5-ի դեպքում 1, 4-ի դեպքում 0,75, 3-ի դեպքում՝ 0,5, 2-ի դեպքում՝ 0):

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 4+4 սկզբունքով (բանավոր քննություն հարցատոմսերի միջոցով): Գնահատման չափանիշներն են՝ տեսական հարցերի ճիշտ պատասխանները և եզրահանգումները, խոսքի տրամաբանական կառուցվածքը, առարկայի ընդհանուր իմացությունը:

Առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան՝

- անհատական թեմատիկ առաջադրանք,
- տարբեր աղբյուրներից թեմայի շրջանակներում տեղեկատվության հայթայթում և համակարգում,
- տրված առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծություն,
- ռեֆերատի ներկայացում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1։ Հայոց լեզվի պատմությունը՝ որպես գիտաճյուղ. լեզվի ուսումնասիրության աղբյուրները: **Թեմա 2**։ Հայերենի պատմական զարգացման փուլերի ստորաբաժանումը և դրա վերաբերյալ կարծիքները: **Թեմա 3**։ Լեզուների ծագման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 4**։ Հայերենի հնչյունական համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 5**։ Հայերենի բառապաշարի պատմական զարգացումը: **Թեմա 6.** Հայերենի ձևաբանական և հոլովման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 7.** Բայ. հայերենի դերբայները և նրանց պատմական զարգացումը: **Թեմա 8.** Խոնարհման համակարգի պատմական զարգացումը: **Թեմա 9.** Շարահյուսական համակարգի պատմական զարգացումը. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնություն. կառավարում /խնդրառություն/. առդրություն. շարադասություն: **Թեմա 10.** Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ. պարզ և բարդ նախադասություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ա. , Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
3. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Երևան, 1987:

4. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին, Եր., 1940, մաս 2-րդ 1951:
5. Ղազարյան Ս., Հայոց գրական լեզվի պատմություն, Ա, Երևան, 1961:
6. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր ., 1981:
7. Ջահուկյան Գ.., Հայոց լեզվի պատմություն /նախագրային շրջան/, Եր., 1987:
8. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր.:

0302/B47	Հայոց լեզվի ոճագիտություն	5 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	15 / 45 /0	
7-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝

- Ուսուցանել գեղարվեստական պատկեր ստեղծող լեզվական միավորների՝ ոճույթների /հնչյուն, բառ, շարույթ, հոլովում,խոնարհում,, շարադասություն, նախադասություն /ոճական դերն ու նշանակությունը:
- Բացահայտել և մեկնաբանել ոճերի դասակարգման հիմունքները և նրանով առանձնահատկությունները:
- Լուսաբանել գեղարվեստական ոճի առանձնահատկությունները, պատկերավորման ու արտահայտչական միջոցները:

Դասընթացի խնդիրները

- Բառային և քերականական հոմանշության քննությունը:
- Խոսքի դրսևորման եղանակների ու ձևերի, լեզվական, խոսքային իրողությունների, հեղինակների ստեղծագործությունների լեզվաոճական համակարգը վերլուծելու ունակությունների խթանումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Գնահատելու ոճագիտություն առարկայի նպատակն ու խնդիրները, դասակարգելու ոճերը:
2. Զանազանելու պատկերավորման ու արտահայտչական միջոցները:

*բ. **գործնական մասնագիտական կարողություններ***

1. Գնահատելու հնչյունի, բառի, շարույթի, ձևաբանական ու շարահյուսական կարգերի ոճական արժեքը:
2. Դասակարգելու և մեկնաբանելու գործառական ոճերն ու նրանց հատկանիշները:
3. Ոճական վերլուծության ենթարկելու գեղարվեստական բնագրերը:

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Կատարելու լեզվաբանական հետազոտություններ:
2. Հաստատելու միջառարկայական կապեր:
3. Հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ6. Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. համագործակցային աշխատանք,
2. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում,
3. մտագրոհ, խմբային աշխատանք,
4. էլեկտրոնային դասախոսություն,
5. դասախոսություն,
6. գրավոր առաջադրանքներ/շարադրություն, էսսե, ռեֆերատ/,
7. գրական երկերի ոճական վերլուծություն:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն:Թեստային աշխատանք:Առավելագույնը՝5 միավոր:

2-րդ ընթացիկ քննություն: Բանավոր քննություն: Առավելագույնը՝5 միավոր:

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 3+3+2+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ոճագիտության առարկան և խնդիրները:Լեզվական և խոսքային ոճեր: Ոճույթ: **Թեմա 2.** Ոճերի դասակարգումը: Իրադրական ոճեր: **Թեմա 3.** Գործառական ոճերի դասակարգումը: **Թեմա 4.** Հնչյունական ոճագիտություն: **Թեմա 5.** Բառագիտական ոճագիտություն: **Թեմա 6.** Շևաբանական ոճագիտություն: **Թեմա 7.** Շարահյուսական ոճագիտություն: **Թեմա 8.** Շարահյուսական ոճագիտություն: **Թեմա 9.** Լեզվի պատկերավորման միջոցները: **Թեմա 10.** Լեզվի արտահայտչական միջոցները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն. Եր.,2002:
2. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Ա և Գ գրքեր,ԵՊՀ, 201, 2015:
3. Մարության. Ա, Հայոց լեզվի ոճաբանություն , Եր.. 2000:
4. Բադիկյան Խ.,Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ , Ա, Բ, Եր., 1990, 1991:
6. Հեղ. Խումբ, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր. Եր., 1987:

0302/B42	Արևմտահայերեն	6 ECTS կրեդիտ
5 ժամ/շաբ.	15/60 /0	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝

- Ուսանողներին հաղորդել գիտելիքներ գրական հայերենի ճյուղերից մեկի՝արևմտահայերենի վերաբերյալ՝ մասնավորաբար դրանք համադրելով ուսանողներին արդեն ծանոթ արևելահայերենի՝ հնչյունաբանությունից, բառագիտությունից, ձևաբանությունից և շարահյուսությունից ձեռք բերած գիտելիքների հետ,
- Զարգացնել ուսանողների բանավոր խոսքը՝ընթերցած նյութը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու և երկխոսություններ կառուցելու միջոցով:

Դասընթացի խնդիրները.

- Բացահայտել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածության յուրահատկություններն արևմտահայերենում, կանխել բառագործածական սխալները,
- Մշակել արևմտահայերեն ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու և տեքստեր կազմելու կարողություններ, զարգացնել լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն,
- Համեմատել արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական և բառային համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները, մեկնաբանել ուղղախոսության - ուղղագրության նորմերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու արևմտահայերենի հիմնական առանձնահատկությունները,
2. տարբերակելու արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունական և բառային համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները և մեկնաբանելու ուղղախոսության-ուղղագրության նոր-

մերը,

3. կառուցելու արևմտահայերենի ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք և զարգացնելու լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտություն,

Բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք,
2. վերարտադրելու ընթերցած նյութը, անցկացնելու քննարկումներ և կառուցելու երկխոսություններ,
3. մշակելու շարադրություններ, ռեֆերատներ, զեկուցումներ և կապակցված շարադրանք ստեղծելու վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարին այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով,
4. վերլուծելու արևմտահայ հեղինակների տարաբնույթ տեքստերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4.Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:

Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ4.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:

Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:

Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն, գործնական կամ սեմինար պարապմունքներ, քննարկումներ, հանձնարարված գրականության քննարկում, մասնակցություն արտալսարանային քննարկումների, թեզերի կատարում և ինքնուրույն հետազոտությունների հանձնարարում,
2. գրավոր կամ բանավոր հարցումներ, բանավիճային քննարկումներ, հարց ու պատասխան,
3. նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռավար ուսուցման մեթոդների կիրառում,
4. զեկույցի, էսսեի, խմբային կամ ինքնուրույն աշխատանքի, նախագծի հանձնարարում,
5. համագործակցային աշխատանքի կազմակերպում,
6. էվրիստիկական, մտագրոհ և վերլուծական մեթոդների կիրառում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմամբ և ներառում է երկու ընթացիկ քննություն, որոնցից տուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 5 միավոր: Յուրաքանչյուր քննություն ներառում է առավելագույնը 3 հարց՝ 2+2+1 սկզբունքով, որտեղ 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից: Ստուգման ձևերն են.

1-ին ընթացիկ քննություն. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ քննություն. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

Եզրափակիչ գնահատման 10 միավորը տրոհվում է 8+2 սկզբունքով, որտեղ առավելագույն 8 միավորն ուսանողը վաստակում է բանավոր քննությունից, իսկ առավելագույն 2 միավորը՝ կիսամյակի ընթացքում կատարած ինքնուրույն աշխատանքի մակարդակին համապատասխան (անհատական թեմատիկ առաջադրանքներ և շարադրանքներ, օժանդակ գրականությունից մշակումներ, նախադասությունների վերլուծություններ, ռեֆերատ):

Համառոտ բովանդակությունը.

Թեմա 1. Հայերենի զարգացման փուլերը. Աշխարհաբարի կազմավորումը, գրապայքար. արևմտահայերենի ձևավորումը: **Թեմա 2.** Արևմտահայերենի հնչյունական համակարգը. ուղղագրություն. բաղաձայնական համակարգի արտասանական առանձնահատկությունները. հնչյունափոխություն: **Թեմա 3.** Արևմտահայերենի և արևելահայերենի բառապաշարային ընդհանրություններն ու տարբերությունները: Դարձվածային միավորներ: **Թեմա 4.** Արևմտահայերենի և արևելահայերենի ձևաբանական համակարգերի ընդհանրություններն ու տարբերությունները: **Թեմա 5.** Արևմտահայերենի և արևելահայերենի շարահյուսական համակարգերի ընդ-

հանրություններն ու տարբերությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սաքապետոյան Ռ. Կ., Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
2. Սաքապետոյան Ռ. Կ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկություները, Երևան, 2004:
3. Սաքապետոյան Ռ.Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011:
4. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, 2007:
5. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Երևան, 2011:
6. Ավետիսյան Յու., Արևմտահայերենի քերականության գործնական աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2011:
7. Չոլաքեան Յ., Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Երևան, 2017:

0302/B26	Լեզվաբանության հիմունքներ	4 ECTS կրեդիտ
3 ժամ/շաբ.	30 /15/ 0	
2-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել

- լեզվաբանական ընդհանուր կարգերը, լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները,
- աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում,
- ուսուցանել լեզվաբանության հիմունքների հանգուցային դրույթները, լեզվի բնութագրերն ու բնորոշումները, լեզվաբանության բաժինները,
- լեզվի ծագումն ու զարգացումը, աշխարհի լեզուների դասակարգումները տարբեր լեզվաընտանիքներում և կառուցվածքային տիպերում:

Դասընթացի խնդիրները՝

- դիտարկել լեզվի բնութագրերն ու բնորոշումները,
- ներկայացնել լեզվաբանության ճյուղերն ու բաժինները,
- համեմատել լեզվաբանական հին և ժամանակակից հոսանքներն ու դպրոցները,
- ծանոթացնել լեզուների կառուցվածքային առանձնահատկություններին ու մակարդակներին,
- ներկայացնել աշխարհի լեզուները, դասակարգել ըստ լեզվաընտանիքների:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու «Լեզվաբանության հիմունքներ» առարկայի առանձնահատկությունները,
2. ներկայացնելու լեզուների ծագման, զարգացման մասին տեսությունները,
3. դասակարգելու լեզվական կարգերը, աշխարհի լեզուները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. դասակարգելու աշխարհի լեզուները,
2. տարբերակելու և արժևորելու լեզվի բնութագրերն ու բնորոշումները,
3. ներկայացնելու լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները, բնութագրելու լեզվաբանության բաժինները,
2. ներկայացնելու լեզվական կարգերը, աշխարհի լեզուների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու է դասընթացին վերաբերող տպագիր և համացանցային ռեսուրսներից:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառի արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա2.Ճանաչելու լեզվաբանական և գրականագիտական մեթոդաբանական ուղղությունները:

Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Բ1.Կիրառելու լեզվական փաստերի հավաքման,պահպանման և մշակման մեթոդները:

Բ2.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:

Բ3.Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի ոլորտին առնչվող տեղեկատվություն,

գաղափարներ, խնդիրներ, փաստարկներ:
Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք , անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում/,
4. զննական մեթոդներից՝ դիդակտիկ նյութերի ցուցադրում, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից՝ աշխատանք բնագրի ու տեքստերի հետ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. ընթացիկ 2 ստուգում՝ գրավոր տարբերակով, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է՝ առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավոր: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավոր, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը,լեզվի գոյության ձևերը: **Թեմա 2.** Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները, գրային համակարգեր: **Թեմա 3.** Լեզուների բառային համակարգերը: **Թեմա 4.** Լեզուների ձևաբանական համակարգերը: **Թեմա 5**. Լեզուների շարահյուսական համակարգերը: **Թեմա 6.** Լեզվի ծագումը: **Թեմա 7**. Աշխարհի լեզուների դասակարգումը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:
2. Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ.հ., 1-2, ԵՊՀ հրատ., Երևան, 1960-1962:
3. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ.հ., 1-2, ԵՊՀ հրատ., Երևան, 1958-1962:
4. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, ԳԱԱ հրատ., Երևան, 1990:
5. Маслов Ю.С., Введение в языкознание, «Высшая школа», М, 1987.
6. Պետրոսյան Հ. և ուրիշներ., Լեզվաբանական բառարան, ԳԱԱ հրատ., Երևան, 1975:

0302/B36	Ընդհանուր լեզվաբանություն	5 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	45/ 0/15	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել լեզվաբանական ուղղությունները, ուսումնասիրման մեթոդները, լեզվահոգեբանական յուրահատկությունները,աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում:

Դասընթացի խնդիրները

- դիտարկել լեզվի բնութագրերն ու բնորոշումները,
- ներկայացնել ընդհանուր լեզվաբանության ճյուղերն ու բաժինները,
- համեմատել լեզվաբանական հին և ժամանակակից հոսանքներն ու դպրոցները,
- ծանոթացնել լեզուների կառուցվածքային առանձնահատկություններին ու մակարդակներին,
- ներկայացնել աշխարհի լեզուները, դասակարգել ըստ լեզվաընտանիքների:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու «Ընդհանուր լեզվաբանության» առարկայի առանձնահատկությունները,
2. բացատրելու լեզուների կառուցվածքային օրինաչափությունները, ծագումնաբանական և տիպաբանական առանձնահատկությունները,
3. ներկայացնելու լեզվական համակարգերի և ենթահամակարգերի հարաբերակցությունը,
4. դասակարգելու լեզվական կարգերը, աշխարհի լեզուները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. տարբերակելու և արժևորելու լեզվի կառուցվածքային միավորների բնութագրերն ու բնորոշումները,
2. զուգադրելու և համեմատելու հայերենի ու օտար լեզուների քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները թեքական, կցական և անջատական լեզուներում,
3. ներկայացնելու լեզվական կարգերը, աշխարհի լեզուների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները,
4. ճանաչելու ցեղակից լեզուների ընտանիքները, մասնավորապես՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի դուստր լեզուները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու դասընթացին վերաբերող տպագիր և համացանցային ռեսուրսներից,
2. լեզվաբանական հետազոտության մեթոդների ու եղանակների գործադրումով կատարելու հետազոտական աշխատանքներ (կուրսային աշխատանք, զեկուցում, ավարտական աշխատանք):

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. Բացահայտելու լեզվաբանական բնագավառի արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա2. Ճանաչելու լեզվաբանական արդի մեթոդաբանական ուղղությունները:

Ա3. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:

Ա4. Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Բ1. Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հետազոտական, գործնական աշխատանքների կատարում,
2. խմբային աշխատանքներ և քննարկումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Արտադրական պրակտիկայի ավարտին ստուգարքն անց է կացվում բանավոր, յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած հաշվետվության հիման վրա: Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ փաստաթղթերից.

1. արտադրական պրակտիկայի օրագիր,
2. ուսանողի կողմից գրի առնված բանահյուսական նյութեր,
3. արձանագրությունների տետր:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մասնագիտական պրակտիկան բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

Նախապատրաստական փուլում կազմակերպվում է դասընթաց՝ ուսանողների և պրակտիկայի պատասխանատուների մասնակցությամբ, պարզաբանելու պրակտիկայի նպատակները, խնդիրները, նրա անցկացման ժամկետները:

Ծանոթացման փուլում իրականացվում են լսարանային պարապմունքներ, պրակտիկանտերին ծանոթացնելու նրանց իրավունքներին և պարտականություններին, ընդհանուր գծերով ներկայացնելու այն վայրերի պատմությունները, որտեղ նախատեսվում են այցելություններ:

Արտադրական պրակտիկայի նախնական փուլում նախատեսվում է աշխատանքի հետևյալ բովանդակությունը.

- ուսանողներին ծանոթացնել արտադրական պրակտիկայի պայմաններին,
- պլանավորել պրակտիկանտի աշխատանքները,
- բացահայտել ուսանողների նախնական գիտելիքները,
- օգնել պրակտիկանտին՝ ցուցադրական և զննական պարագաների պատրաստման գործում:

Հիմնական փուլում իրականացվում են պրակտիկայի ծրագրով նախատեսված աշխատանքները, առաջադրանքները:

Արտադրական պրակտիկայի հիմնական փուլը նախատեսվում է անցկացնել վեց փուլով՝ ըստ ներքոնշյալ ժամանակացույցի (Բերդ քաղաքի պատմության և կենցաղի թանգարան, Ցլիկ Ամրամի բերդ, այցելություն Տավուշի մարզային գրադարան, Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Երևանի Ե. Չարենցի տուն-թանգարան, Խ. Աբովյանի տուն-թանգարան, Դսեղի Հ. Թումանյանի տուն-թանգարան, բանահավաքչական աշխատանքներ մարզի գյուղերում):

Վերլուծական փուլում կատարվում է նախորդ փուլերից ստացված արդյունքների մշակում, վերլուծություն և համակարգում:

Ամփոփիչ փուլում պրակտիկայի անցկացման վերաբերյալ կազմվում է հաշվետվություն:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները կծանոթանան թանգարանների կառուցվածքին, գործունեությանը, ֆոնդերին, հեղինակների գործունեությանը, ստեղծագործությանը, մատենագիտական ձեռագրերին, ինչպես նաև մասնակից կլինեն թանգարանի միջոցառումներին (կամ իրենց նախաձեռնությամբ կկազմակերպվեն միջոցառումներ): Պրակտիկայի շրջանակներում ուսանողները կկատարեցին նաև գործնական աշխատանքներ՝ գրականագիտական, լեզվաբանական վերլուծություններ, քննարկումներ:

Դասընթացի ուսումնական նյութերը.

- պրակտիկայի մեթոդական ուղեցույց (տպագիր կամ էլեկտրոնային),
- պրակտիկայի անցկացման մեթոդների վերաբերյալ դասախոսություններ կամ դրանց սղագրերը (տպագիր կամ էլեկտրոնային),
- օժանդակ, բաշխիչ, դիդակտիկ, տեղեկատու նյութեր,անհրաժեշտ համակարգչային ֆայլեր, ծրագրեր, էլեկտրոնային ուսումնամեթոդական նյութեր, տեսահոլովակներ, տեսաերիզներ, մուլտիմեդիա նյութերը:

Հիմնական գրականության ցանկ.

1. ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ□ մայիսի 4-ի թիվ 7 նիստում

0302/B 61	Ավարտական աշխատանք	20 ECTS կրեդիտ
8-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Ավարտական աշխատանքի նպատակն է՝ արտացոլել տվյալ մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները:

Ավարտական աշխատանքի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացահայտելու ավարտական թեմային վերաբերող նոր գիտելիքներ՝ տեսություններ, հայեցակարգեր, մոտեցումներ, սկզբունքներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ձևակերպելու գիտական խնդիրներ:
2. Կատարելու գիտագործնական առաջարկներ՝ մասնագիտական խնդիրները լուծելու համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու ինքնուրույն:
2. Մտածելու մասնագիտորեն և քննադատաբար:

Ավարտական աշխատանքը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ավարտական աշխատանքի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:
Ա3.Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս:
Ա5.Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած ուսումնասիրության արդյունքները:
Բ1.Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:
Բ2.Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:
Բ3.Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:
Բ5.Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար և ծավալելու ինքնուրույն մասնագիտական-հետազոտական գործունեություն ակադեմիական ոլորտներում:
Գ1.Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից մասնագիտական արդիական տեղեկատվություն հայթայթելու և կիրառելու հմտություններ:
Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
Գ4.Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու կարողություն հանրության հետ, լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը գնահատելու և զուգադրելու հմտություններ:
Գ5.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
Գ6.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
Խորհրդատվություններ/ուղղորդում

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Տե՛ս «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ը:

Ավարտական աշխատանքի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.
1. թեմայի որոշում և հաստատում
2. հետազոտություն
3. արդյունքների համակարգում
4. նախապաշտպանություն
5. աշխատանքի կազմում
6. պաշտպանություն:

Հիմնական գրականության ցանկ.
1.ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ□ հոկտեմբեր 12-ի թիվ 1 նիստում(հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg-1-4.pdf 24□01□2018, ժամը 12:30 դրությամբ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 011301.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Բակալավրի աստիճան
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019-2020
6. Ուսումնառության լեզուն	Գրական հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա / Հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կամ նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական: Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները (ըստ մասնագիտական գործունեության տեսակների), ծրագրի առարկան (գրել համահունչ բուհի առաքելությանը և նպատակներին)

Ծրագրի նպատակն է.

- Ձեռք բերել հիմնարար և համակարգված գիտելիքներ մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքների ու հիմնական դրույթների, կրթական նոր տեխնոլոգիաների վերաբերյալ:
- Ճանաչել տարրական դպրոցի կրթության բովանդակությունը, նրա առանձնահատկությունները:
- Յուրացնել տարրական կրթության ծրագրերով դասավանդելու կարողություններ և հմտություններ:
- ՈՒսումնասիրել, վերլուծել և գնահատել մանկավարժական փորձը և մշակույթը:
- Կիրառել ձեռք բերված գիտելիքները պրակտիկայում, դրանք հիմնավորել և գնահատել:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. ներկայացնելու մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,
2. բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,
3. սահմանելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,
4. մատնանշելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.
5. ներկայացնելու հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,
6. նկարագրելու հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները.
7. մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ.

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

2. լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ,
3. կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
4. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով,
5. մեկնաբանելու սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորելու կայուն հետաքրքրություն,
6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. իրականացնելու մասնագիտական գործունեություն,
2. գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,
3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
4. գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները:
5. արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:
6. կատարելու հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- Լուսապատկերաշար
- Բանավոր հարցում
- Գործնական աճշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Հետազոտական աշխատանք /մասնագիտական գրականության վերաբերյալ
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում
- Զեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Ստուգարքներ
- Քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Բուհն ավարտելուց հետո շրջանավարտները կարող են աշխատանքի անցել դպրոցներում, կրթական կառավարչական, արտադպրոցական, արտաուսումնական հաստատություններում, զբաղեցնելով հետևյալ պաշտոնները՝

- տարրական դպրոցի դասատուներ.
- դասվարներ.

- մեթոդիստներ.
- ուսումնական հաստատությունների ղեկավարման քաղաքացիական ծառայության պաշտոններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը.

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են գրադարան և գրականության էլեկտրոնային ռեսուրսներ, լաբորատորիաներ, տեխնիկական ժամանակակից միջոցներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս.

Պետական կրթական չափորոշիչ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» մասնագիտությամբ:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ.

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիրը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի միջին բնութագրական ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագրքում:

«ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**	
Ա1	ներկայացնելու մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,	Բ1	պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,
Ա2	բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,	Բ2	լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ,
Ա3	սահմանելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,	Բ3	կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
Ա4	մատնանշելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.	Բ4	վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով,
Ա5	ներկայացնելու հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,	Բ5	մեկնաբանելու սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորելու կայուն հետաքրքրություն,
Ա6	նկարագրելու հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները.	Բ6	տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:
Ա7	մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	իրականացնելու մասնագիտական գործունեություն,	Գ4	գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները,
Գ2	գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,	Գ5	արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,
Գ3	ւտրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,	Գ6	կատարելու հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:

«ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																		
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ																				
Պարտադիր դասընթացներ																				
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B01														X			X		X
Ռուսերեն-1	0305/B02														X		X			
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B03							X									X			
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B04																X		X	
Ֆիզդաստիարակություն	0001/B05, B09																		X	
Ֆիզդաստիարակություն	0001/ B10, B14																		X	
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B06														X			X		X
Ռուսերեն-2	0305/B07														X		X			
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	0001/ B08							X									X			
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0104/B11																X			
Իրավունքի հիմունքներ	0304/B12			X	X												X			
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B13											X					X			
Կամընտրական դասընթացներ																				
Անգլերեն-1-4 կրեդիտ	0305/ B15															X	X			
Ֆրանսերեն-1-4 կրեդիտ	0305/ B15															X	X			
Կամընտրական դասընթացներ																				
Անգլերեն-2-4 կրեդիտ	0305/ B16															X	X			
Ֆրանսերեն-2-4 կրեդիտ	0305/ B16															X	X			
Ընդհանուր կրթական կառուցամաս /Կամընտրական 4/																				
Բարոյագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0303/B17																X			

Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր-2 կրեդիտ	0105/B17					X											X			
Գործարարության հիմունքներ-2 կրեդիտ	0201/ B17																X		X	
Կրոնագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B17																X	X		
Մշակութաբանության հիմունքներ-2 կրեդիտ	0202/ B17															X	X	X		
Սոցիոլոգիայի հիմունքներ-2 կրեդիտ	0303/ B17															X	X	X		
Տնտեսագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0201/ B17															X	X	X		
Տրամաբանության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B17																X			
Քաղաքագիտության հիմունքներ-2 կրեդիտ	0304/ B17															X	X	X		
Մասնագիտական կառուցամաս																				
Պարտադիր դասընթացներ																				
Մաթեմատիկա-1	0105/B18	X			X					X			X						X	
Հոգեբանության հիմունքներ-1	0303/B19	X	X	X						X	X								X	
Հայոց լեզու և գրականություն-1	0302/B20														X	X	X			
Մանկավարժության հիմունքներ-1	0303/B21	X	X	X					X		X			X	X	X				
Մաթեմատիկա-2	0105/B22	X				X				X			X						X	
Հոգեբանության հիմունքներ-2	0303/B23	X	X	X						X	X								X	
Հայոց լեզու և գրականություն-2	0302/B24														X	X	X			
Մանկավարժության հիմունքներ-2	0303/B25	X	X	X						X	X			X	X	X				
Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա	0105/B26		X			X			X	X								X		
Շախմատի տեսություն և պրակտիկա	0303/B27		X								X		X							X
Թվաբանության հիմունքներ-1	0105/B28	X	X			X				X			X						X	
Մայրենի լեզու-1	0302/B29	X				X				X			X	X		X			X	
Երաժշտություն և դասավանդման մեթոդիկա	0303/B30			X	X					X	X					X		X		
Տարիքային հոգեբանություն	0303/B31		X	X						X	X							X	X	
Մանկավարժության պատմություն	0303/B32	X	X										X							X
Թվաբանության հիմունքներ-2	0105/B33	X	X			X				X			X						X	
Մայրենի լեզու-2	0302/B34	X				X				X			X	X		X			X	
Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-1	0303/B35	X	X			X				X			X	X					X	
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-1	0303/B36	X	X			X				X			X						X	
Մանկավարժական հոգեբանություն	0303/B37	X	X	X						X	X			X	X				X	
Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա-1	0303/B38	X						X			X									X
Կերպարվեստ և դասավանդման մեթոդիկա-1	0303/B39	X				X			X	X							X			
Տարրական կրթության մանկավարժություն	0303/B40	X	X		X					X	X			X	X				X	
Մայրենի լեզու-3	0302/B41	X				X				X			X	X		X			X	

Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-2	0303/B42	X	X			X				X			X	X					X	
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2	0303/B43	X	X			X				X			X						X	
Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա-2	0303/B44	X						X			X									X
Կերպարվեստ և դասավանդման մեթոդիկա-2	0303/B45	X				X			X	X								X		
Հանրահաշվական կառույցներ	0105/B46	X	X			X				X			X						X	
Մայրենի լեզու-4	0302/B47	X				X				X			X	X		X			X	
Կոմբինատորիկայի տարրեր	0105/B48	X	X			X				X			X						X	
Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-3	0303/B49	X				X				X			X	X		X			X	
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-3	0303/B50	X	X			X				X			X						X	
Ես և շրջակա աշխարհը	0105/B51		X	X				X		X			X					X		
Մանկական գրականություն	0302/B52			X			X				X								X	
Ներառական կրթություն	0303/B53		X	X	X				X			X			X			X		
Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա-4	0303/B54	X				X				X			X	X		X			X	
Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-4	0303/B55	X	X			X				X			X						X	
Երկրաչափության հիմունքներ	0105/B56	X	X			X				X			X						X	
Կամընտրական դասընթացներ																				
Գործնական հոգեբանություն-3 կրեդիտ	0303/B57	X	X										X							X
Գործնական մանկավարժություն-3 կրեդիտ	0303/B57			X		X	X	X	X	X	X				X				X	
Կամընտրական դասընթացներ																				
Հատուկ հոգեբանության հիմունքներ-3 կրեդիտ	0303/B58		X							X	X				X		X		X	
Հատուկ մանկավարժության հիմունքներ-3 կրեդիտ	0303/B58		X						X	X	X				X		X		X	
Կամընտրական դասընթացներ																				
Առաջին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ-2 կրեդիտ	0303/B59		X					X	X									X	X	
Երեխայի իրավունքները և երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտներ-2 կրեդիտ	0303/B59			X	X						X							X	X	
Կամընտրական դասընթացներ																				
Մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ինտեգրված դասընթաց-2 կրեդիտ	0303/B61	X		X		X				X			X	X	X					
Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում-2 կրեդիտ	0303/B61	X	X			X				X			X						X	
Կամընտրական դասընթացներ																				

Գործնական գրությունների ուսուցում-2 կրեդիտ	0303/B60	X								X			X			X			X	
Մայրենիի ուսումնասիրման փոխգործուն մեթոդներ-2 կրեդիտ	0303/B60	X							X	X			X			X			X	
Կրթական այլ մոդուլներ																				
Մանկավարժական պրակտիկա-1	0303/B62								X	X	X	X			X	X	X	X		
Կուրսային աշխատանք -1	0303/B63	X	X	X	X					X		X				X	X		X	X
Մանկավարժական պրակտիկա-2	0303/B64								X	X	X	X			X	X	X	X		
Կուրսային աշխատանք -2	0303/B65				X	X				X		X				X	X		X	X
Մանկավարժական պրակտիկա-3	0303/B66								X	X	X	X			X	X	X	X		
Մանկավարժական պրակտիկա-4	0303/B67								X					X	X	X		X		
Ավարտական աշխատանք	0303/B68	X	X	X	X					X	X	X	X		X	X	X			X

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (Պարտադիր դասընթացներ)

1. 0304/B 01	2.Հայոց պատմության հիմնահարցեր-1	3.2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30 / 0/ 0	
6.1-ին կիսամյակ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:

Դասընթացի խնդիրները

1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:
3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը:
2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:
3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանել Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում
3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը ևս հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում:
2. բանավիճելու:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ1.Իրականացնելու մասնագիտական գործունեություն,

Գ4.Գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները:

Գ6.Կատարելու հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. Սեմինար
3. Ռեֆերատ
4. Անհատական և խմբային առաջադրանքներ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. **Թեմա 1**. Հայաստանը հնագույն շրջանում: **Թեմա 2**. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա. 9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: **Թեմա 3**. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: **Թեմա 4.** Արշակունիների թագավորությունը: **Թեմա 5.** Հայաստանը վաղ միջնադարում: **Թեմա 6.** Հայաստանը զարգացած միջնադարում: **Թեմա 7.** Հայաստանը ուշ միջնադարում:
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

1.0304/B06	**2.Հայոց պատմության հիմնահարցեր-2**	**3.2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5.30/0/0**	
6.2-րդ կիսամյակ	**7.Ստուգարք**	
8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում: **Դասընթացի խնդիրները** 1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին: 2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն: 3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*** 1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը: 2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները: ***բ. գործնական մասնագիտական կարողություններ*** 1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: 2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում ***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*** *1.* տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. **Գ1**.Իրականացնելու մասնագիտական գործունեություն, **Գ4.**Գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները: **Գ6.**Կատարելու հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Դասախոսություն 2. Սեմինար		

3. Ռեֆերատ
4. Անհատական և խմբային առաջադրանքներ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: **Թեմա 3.** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 4.**Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 5.** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: **Թեմա 6.** Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: **Թեմա 7.** Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: **Թեմա 8.** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: **Թեմա 9**. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: **Թեմա 10**. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: **Թեմա 11.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

1. 0305/ B02	2.Ռուսերեն -1	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:

Դասընթացի խնդիրներն են.

1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:
2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:
3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը:
2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար:
3. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին):
2. Հասկանալու և կարողանալ սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ1. Իրականացնելու մասնագիտական գործունեություն,

Գ3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. Մտագրոհ
5. ինդուկտիվ մեթոդ
6. դեդուկտիվ մեթոդ
7. վերլուծական մեթոդ
8. խոսքային կամ բանավոր մեթոդ
9. գրավոր մեթոդ

10. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: **Բաժին 2.** Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: **Բաժին 3.** Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: **Բաժին 4.** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1. 0305/ B07	2. Ռուսերեն -2	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:

Դասընթացի խնդիրներն են.

1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:
2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:
3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը:
2. 2.Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով:
3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները:
3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ:
4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը:
5. Ձանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները*:*

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:
2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ1. Իրականացնելու մասնագիտական գործունեություն,

Գ3. Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու

գիտական բանավեճեր:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. ինդուկտիվ մեթոդ
6. դեդուկտիվ մեթոդ
7. վերլուծական մեթոդ
8. խոսքային կամ բանավոր մեթոդ
9. գրավոր մեթոդ
10. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: **Բաժին 2.** Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Բաժին 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: **Բաժին 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

14.Հիմնական գրականության ցանկ

1. Русский язык. Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1.0105 /Բ03	2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.1-ին կիսամյակ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարահայացքի ինքնուրույն ընտրության:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:
2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները:
3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները:
2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:
3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին:
2. Նախազգուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից:
3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Տիրապետելու կանխատեսման մեթոդին, թե այս կամ այն գործոնը, ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա7. մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

Գ3.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու տական բանավեճեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Պասիվ դասախոսություն
2. Ակտիվ դասախոսություն

✓ *հարց ու պատասխան*

✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն

✓ *«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում*

✓ *հարց ու պատասխան*

✓ *բանավեճ*

✓ *զրույց*

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:
2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2**. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3**. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4**. Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5**. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6**. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման

սկզբունքները: **Թեմա 7**. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

1.0104/ B 04	2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.0/30/0	
6.1-ին կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

Դասընթացի խնդիրները

1. Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
2. Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
3. Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
4. Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
5. Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ3.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ5.արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային

նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը. գնահատվում է «Բավարար»,եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը;
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեսթերից:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapesերի հետ: Աղյուսակների տեղադրում::

Թեմա 3. Microsoft Excel Էլեկտրոնային աղյուսակներ

Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյակների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:

Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ռճերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ռճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ա.Հովակիմյան, Ս.Սարգսյան, Խաչոյան Լ., Ն.Իսպիրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. А. Тихомиров, Прокди А.К., Колосков П.В., Кендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Ջանփոլադյան, Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Երևան, 2000թ.:

1.0001/ B05/B09	2.Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.0/30/0	
6.1-ին, 2-րդ կիսամյակներ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի

միջոց,

- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկություններ մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Գ5.արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
    - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
    - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
    - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
    - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

12.Գնահատման մեթոդները և չափանիշները

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Անձի հուզակամային ոլորտ /Հույզեր և զգացմունքներ/: **Թեմա** 2. Անձի հուզակամային ոլորտ /Կամք և կամային գործունեություն/: **Թեմա 3.** Անձի անհատական տիպաբանական առանձնահատկությունները՝ խառնվածք: **Թեմա 4.** Բնավորություն, բնավորության շեշտվածություն: **Թեմա 5**. Ընդունակություններ և ինտելեկտ: **Թեմա 6.** Միջանձնային հարաբերություններ, հաղորդակցում: **Թեմա 7.** Սոցիալական խմբեր, տեսակները:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ.
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997.
3. Հայրապետյան Դ., Կոգնիտիվ գործընթացների պրակտիկում ԵՊՀ հրատ. Երևան.
4. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.
5. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.
6. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
7. Столяренко Л.Д., Психология.учебник для вузов.-СПб.: Питер,2010. 592.
8. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005.

1.0302/B24	**2.Հայոց լեզու և գրականություն -2**	**3.4 կրեդիտ**
4.4ժամ/շաբ.	**5.30/30/0**	
6.2-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, հայ անվանի հեղինակների հայտնի և արժեքավոր գործերը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, գրականության զարգացման ուղղությունները, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր և բանավոր խոսք:

Դասընթացի խնդիրները՝

1. Ուսանողին ներկայացնել հայ գրականության ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները,
2. բնագրային երկերի ուսումնասիրության հիման վրա ձևավորել ու զարգացնել վերլուծական

կարողությունները,
3. մեկնաբանել հայ հեղինակների գեղարվեստական հայտնի ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունները, բացահայտել գրական երկերի պատմական-հասարակական դերի, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորությունը,
4. կատարելագործել տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողությունը,
5. մշակել շարադրությունների, ռեֆերատների, զեկուցումների, վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունները,
6. զարգացնել և կատարելոգործել կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու կարողությունները, երկխոսություններ կառուցելու միջոցով՝ ուսանողների բանավոր խոսքը,
7. գեղարվեստական արձակ և չափածո գործերի ոճական վերլուծության միջոցով զարգացնել ուսանողների գեղագիտական ճաշակի և խոսքի մշակույթը:

9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու հայ գրականության առանձնահատկությունները, զարգացման միտումները, քննելու ժամանակաշրջանի հասարակական-գրական կյանքը,
2. ներկայացնելու անվանի հայ հեղինակներին, նրանց ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, հայ գրականության հիմնական ուղղո-թյունները, հոսանքներն ու ոճերը, գրական երկերի ժանրային ու գաղափարական առանձնահատկությունները,
3. ներկայացնելու մարդու բարոյական նկարագիրն ու ժամանակաշրջանի մտածողության գեղարվեստական արտացոլումը տարբեր գրողների ստեղծագործություններում,
4. դասակարգելու հայ գրականության առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու բնագրային երկի վերլուծություններ,
2. վերլուծելու և գնահատելու դասական հեղինակների գործերը, տեսնելու յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շղթայի մեջ,
3. կատարելու գրականագիտական ուսումնասիրություններ,
4. ներկայացնելու հայ գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները, կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գործնականում տարբերակելու գրական երկերի ժանրային պատկանելությունը,
2. վերլուծելու գրական երկերի գաղափարական բովանդակությունը և կերպարային համակարգը,
3. բանավիճելու և քննարկելու,
4. օգտվելու մասնագիտական գրականությունից և տարաբնույթ բառարաններից, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, աշխատելու թիմում:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ1. իրականացնելու մասնագիտական գործունեություն,

Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ3.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդ-ները.

Դասախոսություն, գրավոր աշխատանք, բանավոր հարցում, գրական-գեղարվեստական նմուշների ընթերցանություն և քննարկում, զեկուցում, ռեֆերատ, շարադրություն, դասերի վարման նմուշօրինակների կազմում, համագործակցային աշխատանք, նյութերի մեկնաբանության ընթացքում տարբեր մեթոդների օգտագործում:

12.Համառոտ բովանդակությունը.

Թեմա 1. Հայ գրականության շրջանափուլերը: Հայ հեթանոսական մշակույթը: Գրերի գյուտը և 5-րդ դարի հայ պատմիչները: Խորենացու «Հայոց պատմությունը»: Գրիգոր Նարեկացու տաղերը և «Մատյան ողբերգության» պոեմը: **Թեմա 2.** Հայ միջնադարյան գրականությունը, քնարերգության ընդհանուր բնութագիրը (Ֆրիկ, Քուչակ): Սայաթ-Նովայի ստեղծագործությունը: **Թեմա 3.** Հայ նոր գրականության զարգացումը: Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը: Նալբանդյանի քնարերգությունը: Րաֆֆու «Սամվել» պատմավեպը: Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը: Շիրվանզադեի «Քաոս» և «Պատվի

համար» գործերը: Նար-Դոսի պատմվածքները: Զոհրապի նովելները: Թուման-յանի ստեղծագործությունները: Իսահակյանի ստեղծագործությունները: Արևմտահայ բանաստեղծներ՝ Դուրյան, Մեծարենց, Վարուժան: Տերյանի քնարեր-գությունը: **Թեմա 4.** Հայ նորագույն գրականության առանձնահատկությունները: Չարենցի ստեղծագործությունները: Զորյանի պատմվածքները: Բակունցի գեղարվեստական արձակը: Դեմիրճյանի արձակը, «Վարդանանք» պատմավեպը: Սարյանի քնարերգությունը: Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: Շիրազի քնարերգությունը: Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպը: Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը: **Թեմա 5.** Արդի հայ գրականությունը: Սևակի, Սահյանի, Կապուտիկյանի, Դավթյանի, Էմինի բանաստեղծու-թյուններն ու պոեմները: Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը: Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը», «Ապրած և չապրած տարիներ», «Կրակե շապիկ» գործերը:

***13.* Գնահատման մեթոդները և չափանիշները.**

2 ընթացիկ ստուգումներ, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավե-լագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է հարցեր և ինքնուրույն տարաբնույթ առաջադրանքներ, հաշվի են առնվում նաև սեմինարների արդյունքները:

14.Հիմնական գրականության ցանկը.

1. Խորենացի Մ., Հայոց պատմություն
2. Նարեկացի Գ., Տաղեր
3. Քուչակ Ն., Հայրեններ
4. Սայաթ-Նովա, Խաղեր
5. Աբովյան Խ., Վերք Հայաստանի
6. Նալբանդյան Մ., Բանաստեղծություններ
7. Րաֆֆի, Սամվել
8. Մուրացան, Գևորգ Մարզպետունի
9. Շիրվանզադե Ալ., Քառս, Պատվի համար
10. Նար-Դոս, Պատմվածքներ
11. Թումանյան Հովհ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ, Պատմվածքներ, Հեքիաթներ
12. Իսահակյան Ավ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ, Պատմվածքներ, Հեքիաթներ
13. Դուրյան Պ., Բանաստեղծություններ
14. Մեծարենց Մ., Բանաստեղծություններ
15. Վարուժան Դ., Բանաստեղծություններ
16. Տերյան Վ., Բանաստեղծություններ
17. Չարենց Ե., Բանաստեղծություններ, Պոեմներ
18. Զորյան Ս., Պատմվածքներ
19. Բակունց Ա., Պատմվածքներ
20. Դեմիրճյան Դ., Վարդանանք, Պատմվածքներ
21. Սարյան Գ., Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ
22. Զարյան Ն., Արա Գեղեցիկ
23. Շիրազ Հովհ. Բանաստեղծություններ, Պոեմներ
24. Շահնուր Շ., Նահանջը առանց երգի
25. Զարյան Կ., տատրագոմի հարսը
26. Սևակ Պ., Բանաստեղծություններ, Պոեմներ
27. Սահյան Հ., Բանաստեղծություններ
28. Կապուտիկյան Ս., Բանաստեղծություններ
29. Դավթյան Վ., Բանաստեղծություններ
30. Էմին Գ., Բանաստեղծություններ
31. Մաթևոսյան Հ., Աշնան արև
32. Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Ապրած և չապրած տարիներ, Կրակե շապիկ

Տեսական-վերլուծական գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, 1964:
2. Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, 2 հատորով, 1961-1967:
3. Աղաբաբյան Ս., Սովետահայ գրականության պատմություն հ. 1, 2,1961-1965
4. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում գիրք 1, 2, 1983-1984
5. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 2004:
6. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, 4 գրքով, 1967-1990:
7. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականության պատմություն, 2008:
8. Գասպարյան Դ., Հայ սովետական գրականության պատմություն, 1987:

9. Գասպարյան Դ., Բողոսյան Ս., Սաֆարյան Վ., Հայ սովետական պոեզիայի պատմություն, 1987:
10. Թամրազյան Հր., Հայ քնարերգուներ, 1996:
11. Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, 1964-1965:
12. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5-18-րդ դդ., 1976:
13. Հայ նոր գրականության պատմություն, հատոր 1-5, 1962-1979:
14. Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, 1970:
15. Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ Գիրք Ա-Գ, 2003-2010:

1.0303/B25	2.Մանկավարժության հիմունքներ-2	3.4 կրեդիտ
4.3 ժամ /շաբ.	5.30/0/15	
6.2-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ապագա մանկավարժների տեսական մտածողության զարգացման հիման վրա մանկավարժական-մասնագիտական գործիմացության ձևավորումն է և մանկավարժական իրողությունների գիտական իմաստավորումը:

Դասընթացի խնդիրները.

1. մանկավարժական գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորումը, որն արտացոլում է ժամանակակից մանկավարժական գիտության զարգացման մակարդակը,
2. մանկավարժական երևույթները նկարագրելու, բացատրելու, նորը կանխատեսելու կարողությունների ձևավորումը,
3. մասնագիտական մանկավարժական խնդիրների լուծման համար գիտահետազոտական մեթոդների կիրառման կարողությունների ձևավորումը,
4. ապագա մանկավարժներին մասնագիտական գործունեությանը պատրաստության գործընթացում հետազոտական կարողությունների, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու մանկավարժության ուսումնասիրության առարկան, բացահայտելու մանկավարժության ծագումն ու զարգացման փուլերը, սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները:
2. Նկարագրելու մանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում, բացահայտելու մանկավարժության կապը այլ գիտությունների հետ,
3. Մեկնաբանելու մանկավարժական գիտության մեթոդաբանությունը, մանկավարժական հետազոտությունների իրականացման գիտական մեթոդները, մանկավարժական գործընթացի բաղադրամասերը, փուլերը և օրինաչափությունները:
4. Ներկայացնելու ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, կրթության նպատակը և բովանդակությունը կրթական բարեփոխումների արդի փուլում:
5. Թվարկելու և բացատրելու անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները:
6. Սահմանելու ուսուցման և դաստիարակության կազմակերպման սկզբունքները, թվարկելու դրանց իրականացման մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, ներկայացնելու ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու տեսական գիտելիքները մանկավարժական տարբեր իրավիճակներում:
2. Կատարելու գիտաուսումնական հետազոտություն, վերլուծելու, համակարգելու, ամփոփելու և իմաստավորելու հետազոտության արդյունքները:
3. Օգտվելու ուսումնական տեղեկատվության տարբեր աղբյուրներից, հավաքագրելու, համակարգելու և նպատակային կիրառելու մասնագիտական տեղեկատվությունը:
4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում զուգակցելու ուսուցման և դաստիարակության ավանդական և նոր տեխնոլոգիաները, կիրառելու ուսումնադաստիարակչական արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից ձևերը:
5. Ըստ ուսուցման և դաստիարակության նպատակների ձևակերպելու ուսումնադաստիարակչական խնդիրներ և նախագծելու դրանց լուծման ուղիներ:
6. հիմնավորել մանկավարժական հասկացությունները, սկզբունքները, օրինաչափությունները ուսումնական բանավեճերի ընթացքում, արտահայտել սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, դրսևորել համագործակցային և հաղորդակցական կարողություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Մասնագիտական միջավայրում դրսևորելու իր մանկավարժական մեթոդաբանական գիտելիքները:

2. Կրթական համակարգում պահպանելու աշակերտ և ուսուցիչ ուսումնական փոխհամագործակցությունը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
3. Մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում լուծելու ուսումնական խնդիրներ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Բ1.պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Բ6.տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն,

Գ2. գրագետ, ճիշտ ձևակերպել իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, գնահատել և զուգադրել լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը: **Թեմա 2**. Դաստիարակության սկզբունքները: **Թեմա 3.** Դաստիարակության մեթոդները միջոցները և ձևերը: **Թեմա 4**. Անձի դաստիարակությունը կոլեկտիվում և ընտանիքում: **Թեմա 5.** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական կողմերը: **Թեմա 6**. Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա 7**. Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն: **Թեմա 8.** Դասղեկի աշխատանքը հանրակրթական դպրոցում: **Թեմա 9**. Հանրակրթական դպրոցի կառավարումը և ղեկավարումը:

14.**Հիմնական գրականության ցանկ.**

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Մանկավարժ. հրատ., Երևան, 2005
2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,Զանգակ-97, Երևան, 2005
3. Пидкасистый П.И., Педагогика, Юраит, Москва, 2011
4. Подласый И.П., Педагогика, 2002
5. Учебник для бакалавров, Юраит, Москва, 2012
6. Сластенин В.А., Педагогика: Учебник, Академия, Москва, 2011
7. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник, Гардарики, Москва, 2007

1.0105/ B26	**2.Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա**	**3.2 կրեդիտ**
4.2ժամ/շաբ.	**5.30/0/0**	
6.2-րդ կիսամյակ	**7.Առանց ընթացիկ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝

- Ուսանողների մոտ ձևավորել պատկերացումներ մանկական օրգանիզմի զարգացման

ֆիզիոլոգիական առանձնահատկությունների և օրինաչափությունների օնտոգենեզի տարիքային տարբեր փուլերում, կառուցվածքի և ֆունկցիաների փոխհարաբերությունների, առողջության պահպանման ժամանակակից մոտեցումների մասին:

- Ապագա մանկավարժներին հանգամանորեն ծանոթացնել օրգանիզմի այս կամ այն հանգամանքի ֆունկցիոնալ ախտահարման պատճառներին և կանխարգելմանը վերաբերվող տեղեկատվությանը:
- Վերջիններիս իմացությունը չափազանց կարևոր է դասարանում որոշ անոմալիաներով օժտված և համակարգային ախտահարումների հետևանքով առաջացած հիվանդություններով տառապող աշակերտների բացահայտման, և նրանց հետ համապատասխան մոտեցումներ դրսևորելու համար:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ուսանողներին տալ համակարգված գիտելիքներ տարիքային անատոմիայի տարբեր շրջաններում մարդու օրգանիզմի կառուցվածքի ու ֆունկցիաների առանձնահատկությունների մասին,
2. ձևավորել գիտական պատկերացումներ մարդու օրգան-համակարգերի և օրգանների կառուցվածքի ու ֆունկցիաների միասնականության մասին,
3. ծանոթացնել երեխայի հոգեկան և ֆիզիկական զարգացման հետազոտությունների ժամանակակից մեթոդներին,
4. ուսանողներին ծանոթացնել առողջության պահպանմանն ուղղված կարևորագույն ուղղություններին:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու զարգացող օրգանիզմի տարիքային առանձնահատկությունները:
2. Բացատրելու օնտոգենեզի տարբեր փուլերում աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունները:
3. Բացատրելու մանկական օրգանիզմի ձևավորման մեջ կարգավորիչ համակարգերի դերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Պարզաբանելու մարդու օրգանիզմի և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների առանձնահատկությունները:
2. Որոշելու մարդու անհատական զարգացման տարբեր փուլերում հոգեֆիզիոլոգիական և անհատական տիպաբանական առանձնահատկությունները և դրանց հնարավոր փոփոխությունները:
3. Կազմակերպելու ուսումնա-դաստիրակչական գործընթացի և օրվա ռեժիմը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կազմակերպելու ուսումնադաստիրակչական աշխատանքներ՝ կիրառելով անատոմիայից և ֆիզիոլոգիայից ստացած գիտելիքները:
2. Կատարելու սոցիալական մանկավարժի արհեստավարժ գործունեության հիմնական տեսակները, լուծելու հանրակրթության հաստատություններում տիպային արհեստավարժ խնդիրներ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ1.պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Գ4.գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. պասիվ դասախոսություն
2. ակտիվ դասախոսություն
3. հարց ու պատասխան
4. զրույց
5. ինտերակտիվ դասախոսություն
6. «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում
7. հարց ու պատասխան
8. բանավեճ
9. զրույց:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մանկական օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափությունները: Տարիքային փուլեր: Օրացուցային և կենսաբանական տարիքը, նրանց հարաբերակցությունը օնտոգենեզի տարբեր փուլերում՝ կենսաբանական տարիքի սահմանման չափանիշները: Երեխայի զարգացման կրիտիկական շրջանները: **Թեմա 2.** Ժառանգականությունը և միջավայրը, նրանց ազդեցությունը մանկական օրգանիզմի զարգացման վրա: **Թեմա 3.** Կարգավորիչ համակարգերի զարգացում /հումոռալ և նյարդային/: **Թեմա 4.** Տարբեր տարիքային փուլերում ընդերային, շարժողական և զգայական համակարգերի ֆունկցիոնալ փոփոխություն: **Թեմա 5.** Ջերմակարգավորման և էներգիայի փոխանակման տարիքային առանձնահատկությունները: **Թեմա 6.** Հենաշարժիչ ապարատի օնտոգենետի-կական օրինաչափությունները: **Թեմա 7.** Ուղեղի հասունացման անատոմաֆի-զիոլոգիական առանձնահատկությունները: **Թեմա 8.** Երեխայի վարքագծի հոգեֆիզիոլոգիական ասպեկտները, հաղորդակցման վարքագծի ձևավորումը: Խոսք: **Թեմա 9.** Երեխայի անհատական տիպաբանական առանձնահատկությունները: **Թեմա 10.** Երեխայի ֆունկցիոնալ զարգացման մակարդակի ամբողջական ախտորոշում: Պատրաստակամություն ուսուցման նկատմամբ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Կարապետյան Ս.Կ., Շախբերյան Ս.Ա., Տարիքային ֆիզիոլոգիա: Ուս. ձեռնարկ բուհերի ուսանողների համար: Եր., «Լույս», 1981. - 264 էջ:
2. Միքայելյան Ն.Գ., Ֆիզիոլոգիա /օնտոգենեզի և անատոմիայի հիմունքներով/ դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար. - Եր.: լույս, 1990, 440 էջ:
3. Антонова О.А., Возрастная анатомия и физиология., Москва, Высш. образование, 2006.

1.0303/B27	2.Շախմատի տեսություն և պրակտիկա	3.4 կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել գիտելիքներով, որոնց օգնությամբ նրանք կկարողանան մանկավարժական գործընթացում առաջացած խնդիրներին տալ շախմատ առարկայի լուծումներ:

Դասընթացի խնդիրները.

1. ուսումնասիրել «Շախմատի դասավանդումը դպրոցում» առարկան, որը խիստ կարևոր է և մասնագիտական:
2. զինել շախմատին հատուկ գիտելիքներով, շախմատի ծագումնաբանությանը, խաղաքարերին, շախմատային հասկացություններին,
3. ծանոթացնել խաղի վարման կարգին:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու շախմատ խաղի նպատակը և խնդիրները, խաղի տրամաբանությունը, ռազմավարությունը:
2. Ներկայացնելու շախմատի խաղատախտակի կառուցվածքը, թվարկելու խաղաքարերը և բացատրելու նրանց գործողությունները և մոտավոր արժեքները:
3. Բնութագրելու շախ, մատ, պատ, փոխատեղում հասկացությունները, բերելու համապատասխան խաղային իրավիճակների օրինակներ:
4. Մեկնաբանելու տարբեր խաղային իրավիճակներ, բնութագրելու կոնկրետ իրավիճակներում խաղացողների հնարավորությունները, առավելությունները և հետագա քայլերի տրամաբանական ընթացքը:
5. Բացատրելու խաղաքար վերցնելու, զինվորը որևէ այլ խաղաքարով փոխարկելու, մատ, անելու, պատ ստեղծելու, փոխատեղում կատարելու իրավիճակները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճանաչելու խաղաքարերը և դրանք ճիշտ դասավորելու շախմատի խաղատախտակի վրա, ճիշտ քայլելու բոլոր խաղաքարերով:
2. Ճիշտ որոշումներ կայացնելու խաղային տարբեր իրավիճակներում:
3. Լուծելու տարբեր բարդության շախմատային խնդիրներ, կազմելու շախմատային պարզ խնդիրներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Արժևորելու շախմատի դերը երևակայության, տրամաբանական մտածողության, կամային որակների, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման և զարգացման գործում:
2. Գնահատելու արդարությունն ու ազնվությունը:

3. Կարևորելու ուշադիր և կենտրոնացված աշխատանքը:
4. Աշխատելու թիմում:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ6.կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջա-ռարկայական կապեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական աշխատանք
3. քննարկում
4. զեկուցում
5. ինքնուրույն աշխատանք:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Նախնական շախմատային պատկերացումների և հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 2.** Խաղատախտակի և խաղաքարերի շարժման, նաև խաղաքար վերցնելու վերաբերյալ պատկերացումների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 3.** Արքայի, քայլի հասկացության իմաստի,շախմատում հերթական քայլի, արքային վերաբերվող կանոնների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 4.** Թագուհի խաղաքարի, նրա շարժման, թագուհով խաղաքար վերցնելու,հարվածի տակ գտնվող դաշտերի և այլ հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 5.** Շախ և մատ:Մատի իմաստը, արքային վերաբերվող կանոնների, պատկերացումների, հասկացությունների ձևավորման մեթոդիկա: **Թեմա 6.** Պատ: Շախմատի խաղի հնարավոր արդյունքների, պատի իմաստի ուսուցանման մեթոդիկա: **Թեմա 7.** Նավակ և փիղ խաղաքարերի շարժման ձևերը, նավակ և փիղ խաղաքարերով մատերի ուսուցման մեթոդիկա: **Թեմա 8.** Ձի խաղաքարը, ձիով մատերի և «պատառաքաղե հասկացության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 9.** Զինվոր: Զինվորների սկզբնական դասավորությունը: Զինվորի շարժումը, հարվածի դաշտերը, զինվորով խաղաքար վերցնելը,շախ և մատ հայտարարելը, զինվորով կողանցիկ վերցնելու մեթոդիկան: **Թեմա 10.** Քայլի գրանցում:Պայմանական նշանները շախմատում: Խաղի /պարտիայի/ գրանցումը: Ընդարձակ և համառոտ գրանցման մեթոդիկան: **Թեմա 11.** Հավերժական շախ: Հավերժական շախը որպես ոչ-ոքիի հասնելու միջոցի ուսուցման մեթոդ: **Թեմա 12.** Մատ թագուհիով: Միայնակ թագուհիով մատի տեխնիկայի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 13**. Մատ մեկ և երկու նավակով: Մատ թագուհիով և մեկ նավակով վերջնախաղերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 14.** Մատ վերջին հորիզոնականում: Վերջին հորիզոնականում մատի տիպային դիրքերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 15.** Մանկական մատ: f2 և f7 դաշտերի թուլությունը խաղի սկզբում: Մանկական մատի տիպային դիրքերի և այլ տիպի մատերի ուսուցման մեթոդիկան: **Թեմա 16.** Պաշտպանություն: Պաշտպանական տիպային դիրքեր, անպաշտպան խաղաքար, կրկնակի հարձակումը որպես տակտիկական զենքի ուսուցման մեթոդիկա:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Մ.Ս.Իսպիրյան, Մարզանունների բացատրական բառարան. Երևան: Հայաստան. 1984էջ 108.
2. Շախմատային խաղի դասագիրք, Հայպետհրատ, Երևան 2014:

1.0105/B28	**2.Թվաբանության հիմունքներ-1**	**3.4 կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5.30/30/0**	
6.3-րդ կիսամյակ	**7.Եզրափակիչ գնահատումով**	
8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն		

մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Դասընթացի խնդիրները.

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու թվագրության դիրքային և ոչ դիրքային համակարգերը, մեկնաբանելու թվագրության տասնորդական համակարգի գործնական նշանակությունը:
2. Ներկայացնելու և բացատրելու թվաբանական գործողությունների կատարման ալգորիթմները:
3. Ներկայացնելու և մեկնաբանելու բաժանելիության հայտանիշները, Պասկալի հայտանիշը:
4. Սահմանելու պարզ և բաղադրյալ թվերը, ձևակերպելու և մեկնաբանելու թվաբանության հիմնական թեորեմը:
5. Բացատրելու ԱՄԸԲ և ԱՓԸԲ գաղափարները, ներկայացվնելու դրանք գտնելու ալգորիթմները, մեկնաբանելու դրանցում թվաբանության հիմնական թեորեմի կիրառության տրամաբանությունը:
6. Ներկայացնելու տարրական դպրոցում կիրառվող հաշվողական հնարները:
7. Թվարկելու և բացատրելու տեքստային խնդիրների լուծման փուլերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողությունները երկու բնական թվերի միջև, ապացուցելու բնական թվերի հետ կատարվող գործողությունների հիմնական հատկությունները:
2. Գտնելու երկու բնական թվերի ԱՄԸԲ-ն և ԱՓԸԲ-ն, դրանք կիրառելու տեքստային խնդիրներում:
3. Տարբերակելու տեքստային խնդիրների տիպերը, դրանք տեղափոխելու գործնական դաշտ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելուն իր գիտելիքները թվաբանությունից տարրական դպրոցում:
2. Կատարելու հաշվարկներ հաշվողական հնարների կիրառմամբ:
3. Լուծելու թվաբանության հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրներ և վարժություններ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Ոչ դիրքային և դիրքային թվագրության համակարգեր: Թվագրության տասնորդական համակարգը: **Թեմա 2**՝ Թվաբանական գործողություններ կատարելու ալգորիթմներ տասնորդական համակարգում: Թվագրության այլ համակարգեր: **Թեմա 3**՝ Բազմապատիկ, բաժանարար: Երկու բնական

թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարար (ԱՄԸԲ(A,B)) և ամենափոքր ընդհանուր բազմապատիկ (ԱՓԸԲ[A,B]): Էվկլիդեսի ալգորիթմը: ԱՄԸԲ(A,B)–ի և ԱՓԸԲ[A,B]-ի վերաբերյալ թեորեմներ: «Պարզ» (բաղադրյալ) թիվ հասկացությունը: Փոխադարձաբար պարզ թվեր: **Թեմա 4**□ Էրատոսթենեսի զատիչը: Թվաբանության հիմնական թեորեմը: **Թեմա 5**□ Տեքստային խնդիր: Տեքստային խնդիրների լուծման հիմնական մեթոդները: **Թեմա 6.** Մողուլի ելքեր-փոխանցումներ տդմում դասընթաց:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

1. 0302/B29	2.Մայրենի լեզու-1	3.5 կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5.15 / 45/ 0	
6. 3-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային համակարգերն իրենց տարբեր հատկանիշներով, ուսումնասիրել խոսքային ավելի մեծ միավորները՝ վանկը, հնչաբառը, հնչանախադասությունը, շեշտը և հնչերանգը, բառը, զինել ուղղագրությանը և ուղղախոսությանը, բառակազմությանը վերաբերող տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով:

Դասընթացի խնդիրները

1. ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի հնչյունական, հնչյունափոխական առանձնահատկությունները,
2. .....բացատրել ուղղախոսության-ուղղագրության նորմերը,
3. լեզվաքերականական գիտելիքների հիման վրա ձևավորել խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություններ,
4. .....կարևորել բառերի՝ իբրև լեզվի ինքնուրույնաբար գործածվող հիմնական միավորների դերը խոսքում,
5. իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը,
6. ներկայացնել բառերի ծագման ու նրանց պատմական կյանքի, բառարանների կազմման, նրանց տեսակների, բառագիտական նշանակության և այլ հարցերի ուսումնասիրությունը, լեզվաքերականական գիտելիքների հիման վրա ձևավորել խոսքի և նրա միավորների վերլուծության կարողություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու «Հնչյունաբանություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, ներկայացնելու նրա դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,
2. զանազանելու հնչյունափոխական առանձնահատկությունները, գրանշանների և հնչյունների փոխհարաբերությունը,
3. ներկայացնելու հայոց լեզվի հնչյունաբանության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց ներքին կապերը,
4. սահմանելու «Բառագիտություն» գիտակարգի առանցքային հասկացությունները և դրանց բովանդակությունը, մատնանշելու նրա դերը հայերենի կառուցվածքային տարբեր մակարդակների միավորների համակարգում,
5. վերարտադրելու բառիմաստի տեսակներն ու փոփոխությունները,
6. ներկայացնելու ժամանակակից հայերենի բառապաշարի հատկանիշները, բառերի ձևաիմաստային խմբերի դասակարգման սկզբունքները, բառակազմական օրինաչափությունները,
7. ներկայացնելու հայոց լեզվի բառագիտության տարբեր բաժինների հիմնադրույթները և դրանց

ներքին կապերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու հնչյունաբանական վերլուծություն,
2. տարբերակելու հնչյունափոխության բոլոր տեսակները,
3. կիրառելու ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքները և ունակությունները պրակտիկ գործունեության մեջ,
4. կատարելու ձևույթաբանական և բառակազմական վերլուծություն, բնագրերի հիման վրա ճիշտ տարբերակելու տարբեր բառերի ծագումը, կրած ձևաիմաստային փոփոխությունները,
5. նկարագրելու բառապաշարի դասակարգման սկզբունքները և խոսքային միջավայրում օգտվելու տարբեր բառաշերտերից,
6. տեքստերում և բանավոր խոսքում ճիշտ գործառելու ձևաիմաստային տարբեր խմբի բառերը,
7. բացատրելու դարձվածքների կազմությունն ու գործածության ոճական նպատակը,

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. կատարելուբ լեզվաբանական հետազոտություններ,
2. հաստատելու միջառարկայական կապեր,
3. հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1-ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա5-ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2-լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5- մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն:
2. Խոսքային կամ բանավոր մեթոդ:
3. Բացատրական մեթոդ:
4. Համագործակցային աշխատանք:
5. Սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում:
6. Մտագրոհ:
7. Ռեֆերատներ:

12. ***Գնահատման մեթոդները***

Նախատեսված ***2 ընթացիկ քննությունները*** թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացի *համառոտ բովանդակությունը*

Թեմա 1. Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանության ուսումնասիրության առարկան: Արտասանվածքի վերլուծություն: Վանկը, շեշտը հայերենում: Հնչյուններ. դասակարգումը: **Թեմա 2**. Հնչյունափոխություն. տեսակները: **Թեմա 3.** Ուղղագրություն և ուղղախոսություն: **Թեմա 4.** Բառագիտություն. ուսումնասիրության առարկան: Բառ. բառի հատկանիշները: Բառիմաստի տեսակները, բառի մենիմաստությունն ու բազմիմաստությունը: Բառիմաստի փոփոխություն: Բառերի ձևաիմաստային խմբերը: **Թեմա 5.** Բառապաշար: Բառապաշարի շերտերն ու դասակարգումը: **Թեմա 6**. Բառակազմություն: Ձևույթը և նրա տեսակները: Բարդություններ. տեսակները: Դարձվածաբանություն. դասակարգումը: **Թեմա 7.** Բառարանագրություն. բառարանների տիպերը:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Ջ հատոր, Եր., 1974:
2. Աղայան Էդ. , Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987:

3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հտ. 1-ին /հնչյունաբանություն և բառագիտություն/, Եր., 1979:
4. Մարգարյան Ա. , Ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Եր., 1990:
5. Ջահուկյան Ջ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս., Ա պրակ, Եր., 1980:
6. Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն/, Եր., 1982:

1.0303/B30	2.Երաժշտություն և դասավանդման մեթոդիկա	3.4 կրեդիտ
4.4ժամ/շաբ.	5.30/30/0	
6.3-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է՝ գործնական աշխատանքների միջոցով զարգացնել երաժշտական կրթություն չունեցող ուսանողների երաժշտական մտաշողությունը, ռիթմի և լադի աստիճանների զգացողությունը, ապահովել ուսանողների գեղագիտական դաստիարակությունը, ուսանողին զինել տարրական դասարաններում երգ և երաժշտություն առարկայի դասավանդման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներով և կարողություններով:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ուսումնասիրել երաժշտական դաստիարակության բովանդակությունը տարրական դասարանում,
2. բացահայտել երաժշտության դասավանդման տեսությունը որպես գիտելիքների, հասկացությունների, օրինաչափությունների համակարգ,
3. ուսումնասիրել երաժշտության դասի բովանդակությունը և կառուցվածքը տարբեր ժամանակաշրջաններում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու երաժշտության և երաժշտական գործունեության դերն ու նշանակությունը երեխայի կյանքում:
2. Բացատրելու հայկական և արտասահմանյան երկրների երաժշտական գործիքների և նրանցով կատարման առանձնահատկությունները:
3. Սահմանելու երաժշտության հիմնական հասկացությունները, երաժշտական ստեղծագործությունների տեսակները, երաժշտական ժանրերը և այլն:
4. Բնութագրելու տարրական դպրոցում երաժշտության ուսուցման խնդիրները, ներկայացնելու ուսուցման մեթոդները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Լսողությամբ տարբերակելու և ճանաչելու հայկական և արտասահմայան երկրների նվագարանները:
2. Տարբեր երաժշտական ստեղծագործությունների համար որոշելու ունկնդրման կազմակերպման ձևերը:
3. Աշակերտների տարիքային առանձնահատկություններից կախված ընտրելու ուսուցման համապատասխան մեթոդներ և կիրառելու մանկավարժական ժամանակակից մոտեցումներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Հանրության մեջ ցուցաբերելու երաժշտական տարրական գիտելիքներ:, ազատ հաղորդակցվել երաժիշտների հետ մասնագիտական թեմաներով:
2. Կազմակերպելու տարատեսակ երաժշտական միջոցառումներ, հանդիսություններ, զվարճանքներ:
3. Աշխատելու թիմում:
4. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Ա4.մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ2. գրագետ, ճիշտ ձևակերպել իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, գնահատել և զուգադրել լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ4.գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Կրտսեր դպրոցականի երաժշտական գործունեության հիմնական ձևերը: **Թեմա 2.** Երաժշտական դաստիարակությունը արտադասարանային աշխատանքների ընթացքում: **Թեմա 3.** Երաժշտական խմբակային աշխատանքների կազմակերպման ձևեր: **Թեմա 4.** Մանկական երաժշտական նվագարանների իմացություն: **Թեմա 5.** Ծանոթություն երաժշտական այբուբենին, նվագելու կարողություն: **Թեմա 6.** Բազմակողմանի երաժշտական կրթությամբ զարգացած անձնավորություն:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2004.
2. Ասատրյան Լ.Թ., Կարապետյան Ա.Ս., Ասատրյան Մ.Ա., Յոլակյան Թ.Ֆ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները, 1 մաս, Երևան, 2003.
3. Բաբանսկի Յու., Մանկավարժություն, հատոր 1,2, Երևան, 1986, 1987.
4. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,2, Երևան, 2005.
5. Алиев Ю.Б., Методика музыкального воспитания детей (от детского сада к начальной школе). - Воронеж, 1998.

1.0303/B31	**2.Տարիքային հոգեբանություն**	**3.4 կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5.30/0/30**	
6.3-րդ կիսամյակ	**7.առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝ ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը, ինչպես նաև տարիքային զարգացման շրջափուլերին, դրանց վերաբերող հոգեբանական տեսություններին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. տալ ընդհանուր պատկերացում տարիքային հոգեբանություն առարկայի, խնդիրների, մեթոդների վերաբերյալ,
2. տալ գիտելիքներ հոգեկան զարգացման պայմանների, շարժիչ ուժերի, տարիքաքային պարբերացման հիմնախնդրիների վերաբերյալ,
3. սովորեցնել վերլուծել հոգեկան զարգացման առանձնահատկությունները.
   - ✓ մինչծննդյան, մանկիկության և վաղ մանկության տարիքում,
   - ✓ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում,
   - ✓ դեռահասության և պատանեկության շրջանում,
   - ✓ հասուն տարիքի և ծերության շրջանում,
4. սովորեցնել ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների շնորհիվ լուծել պրոբլեմային իրադրություններ՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծությունը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու տարիքային հոգեբանության ընդհանուր հարցերը:
2. Սահմանելուհոգեկան զարգացում գաղափարը, նշելու նրա պայմաններն ու շարժիչ ուժերը, թվարկելու հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները:

3. Բացատրելու հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/, մանկիկության /նորածնություն, բուն մանկություն/ և վաղ տարիքի շրջաններում:
4. Պարզաբանելու անձնային ոլորտի զարգացում, նախադպրոցականի հոգեկան զարգացում ու անձնավորության ձևավորում գաղափարները:
5. Բնութագրելու անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, դեռահասության և պատանեկան շրջաններում:
6. Բացատրելու դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ուսումնասիրելու և մատնանշելու տարիքային հոգեբանության հիմնախնդիրները, տարիքային շրջաբաժանման և տարիքային ճգնաժամերի հիմնահարցերը:
2. Ուսումնասիրելու և տարբերակելու հոգեկան զարգացման շարժիչ ուժերը:
3. Ինքնուրույն հետազոտելու տարբեր տարիքային փուլերում դրսևորվող հոգեկան գործընթացները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գործնականում կիրառելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:
2. Կատարելու տարիքային հոգեբանական վերլուծություն և խնդրահարույց իրադրություններում առաջարկելու լուծումներ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ4.գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ, հետազոտական սեմինարներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Տարիքային հոգեբանության տեսական հիմնահարցերը: Անձի տարիքային տեսությունները: **Թեմա 3.** Անձնավորության անհատական զարգացումը: **Թեմա 4.** Տարիքային հոգեբանության մեթոդները: **Թեմա 5.** Նորածնության տարիքի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Վաղ մանկություն շրջանի վերլուծությունը: **Թեմա 7.** Հոգեկանի զարգացումը նախադպրոցական տարիքում: **Թեմա 8.** Կրտսեր դպրոցական տարիքի բնութագիրը: **Թեմա 9.** Դեռահասության տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Պատանեկության հոգեբանություն: **Թեմա 11.** Հասուն տարիքների հոգեբանություն: **Թեմա 12.** Ծերության հոգեբանության բնութագիրը:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Տարիքային հոգեբանություն և մանկավարժական հոգեբանություն դասընթացների ուսումնական

ծրագրեր Է.Ա.Զաքարյան: Դասընթացների ուս. ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2009թ., 41 էջ:
2. Խուդոյան U.U., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները. - Եր.: Զանգակ-97, 2004.
3. Абрамова Г.С., Возрастная психология: Учеб. пособие для студентов вузов. – М.: Академия, 1997.
4. Абрамова Г.С., Психология человеческой жизни: Исследования геронтопсихологии: Учеб. пособие для студентов психол. фак. вузов. – М.: Изд. центр "Академия", 2002.
5. Глуханюк Н.С., Гершкович Т.Б., Поздний возраст и стратегии его освоения. – М., 2003.
6. Смирнова Е.О., Детская психология. – М., 2003.

1.0303/B32	2.Մանկավարժության պատմություն	3.2 կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.3-րդ կիսամյակ	7.Առանց ընթացիկ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայ և համաշխարհային մանկավարժական մտքի զարգացման պատմությանը, կրթության բովանդակությանը, ուսուցման հիմնական օրենքների, օրինաչափությունների, մեթոդների, սկզբունքների զարգացման պատմությանը:

Դասընթացի խնդիրները.

1. պատմամանկավարժական գիտելիքների ձևավորում, դրանց դերի ու նշանակության գիտակցում, իմաստավորում, գնահատում,
2. պատմական, գիտական և գրական աղբյուրների հետ աշխատելու սովորողների կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորում ու զարգացում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու դասընթացի խնդիրները, ուսումնասիրության առարկան:
2. Ներկայացնելու դաստիարակության գաղափարի և դպրոցների ծագման ու զարգացման պատմությունը:
3. Բնութագրելու հնագույն, վաղ քրիստոնեության, Վերածննդի շրջանների դպրությունն ու մանկավարժական միտքը, նոր շրջանի արևմտաեվրոպական, ռուսական ու հայկական դպրությունն ու մանկավարժական միտքը:
4. Ներկայացնելու կրթության զարգացման միտումների վերլուծության պատմամանկավարժական արդի մեթոդները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ուսումնասիրելու պատմամանկավարժական աղբյուրները, կատարելու պատմական երևույթների և փաստերի պատմամանկավարժական համեմատական վերլուծություն:
5. Վերլուծելու և պարզաբանելու հնագույն, վաղ քրիստոնեության, Վերածննդի և նոր շրջանների արևմտաեվրոպական ու հայկական դպրության ու մանկավարժության առանձնահատկությունները:
2. Կատարելու հետազոտական ու ստեղծագործական աշխատանք պատմամանկավարժության շրջանակներում և կատարելու գիտական համադրումներ և եզրահանգումներ:
3. Պրակտիկայում կիրառելու դաստիարակության ուսուցման և զարգացման տարբեր տեսությունների վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Մասնագիտական խնդիրներ լուծելիս օգտվելու պատմամանկավարժական ժառանգությունից:
2. Լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ:
3. Կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ6.կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կի-

րառմամբ), 2. թիմային աշխատանքներ, 3. քննարկումներ, 4. հետազոտական սեմինարներ:
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. **Թեմա 1.** Դաստիարակությունը նախնադարյան և ստրկատիրական հասարակարգերում: **Թեմա 2**. Դպրոցը և մանկավարժական միտքը միջնադարում: **Թեմա 3.** Վերածննդի դարաշրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 4.** Նոր շրջանի դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 5.** Նորագույն շրջանի արևմտաեվրոպական դպրոցն ու մանկավարժական միտքը: **Թեմա 6**. Խորհրդային դպրոցի ձևավորումն ու զարգացումը, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգի ձևավորումը:
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Կոնստանտինով Ն., Մեդինսկի Ն., Շաբաևա Մ., Մանկավարժության պատմություն: Երևան, 1972: 2. Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության: Երևան, 1958: 3. Վարդումյան Ս., Մանկավարժության պատմություն, Երևան, 2008: 4. Джуринский А.Н., История педагогики и образования: Учебник / А.Н. Джуринский. - М.: КДУ, Владос-Пр., 2013. - 400 с. 5. Джуринский А.Н., История педагогики и образования /А.Н. Джуринский. - М.: КДУ, 2013. - 400 с. 6. Капранова В.А., История педагогики в лицах: Учебное пособие / В.А. Капранова. - М.: НИЦ ИНФРА-М, Нов. знание, 2013. - 176 с.

1.0105/B33	**2.Թվաբանության հիմունքներ-2**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.15/30/0**	
6.4-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. թվարկելու մաթեմատիկայի կարևորագույն մեծությունները,
2. բնութագրելու հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաները, մատնանշելու դրանց հետ կապված հարցերը,
3. ներկայացնելու բնական թվի և զրոյի գաղափարների ներմուծման և ձևավորման հարցերը, բացատրելու թվարկության տասնորդական դիրքային համակարգի առանձնահատկությունները,
4. շարադրելու թվաբանական գործողությունների ներմուծման, թվաբանական գործողությունների բաղադրիչների և արդյունքի միջև եղած կապի ուսուցման հիմնախնդիրները,
5. ներկայացնելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու ուսուցման մեթոդները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու թվաբանական գործողությունների ստուգման մեթոդները տարբեր առաջադրանքներում,
2. օգտվելու մաթեմատիկական արտահայտությունների արժեքները անսխալ հաշվելու մեթոդներից,
3. կազմակերպելու և անցկացնելու հանրահաշվական և երկրաչափական բովանդակությամբ արտադասարանական, խմբակային պարապունքներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Առաջադրելու և լուծելու տարբեր հանրահաշվական և երկրաչափական խնդիրներ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքներըը.

U1ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

U2բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման

առանձնահատկություններն ու օրինաչափությունները,
Ա5ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,
Բ2. լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
Բ5. մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
Ստուգման ձևերն են.
1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բնական թվերի ընդլայնումը՝ ամբողջ թվեր: **Թեմա 2.** Ամբողջ թվերի ընդլայնումը՝ ռացիոնալ թվեր: **Թեմա 3.** Ռացիոնալ թվերի ընդլայնումը՝ իրական թվեր: **Թեմա 4.**Կոմբինատորիկայի հիմնական հասկացություններն ու փաստերը : **Թեմա 5.**Կոմբինատորիկայի տարրեր ՏԴՄԴ-ում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

1.0302/ B34	**2.Մայրենի լեզու-2**	**3.4 ECTS կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.15/30/0**	
6.4-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի ձևաբանական համակարգը՝քննության առնելով խոսքի մասերի որոշման հիմունքները, բնորոշ հատկանիշները, քերականական կարգերը և ուսուցանել տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Դասընթացի խնդիրներն են՝

1. ուսանողին ներկայացնել ժամանակակից հայոց լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները, քերականական հիմնական հասկացությունները,
2. քերականական կարգերի, քերականական իմաստների և ձևերի յուրացմամբ հարստացնել ուսանողների իմացությունը քերականական կարևորագույն հասկացությունների վերաբերյալ,
3. ներկայացնել խոսքի մասերի դասակարգման հիմունքները և տարբերակված խոսքիմասային խմբերն իրենց առանձնահատկություններով,
4. հիմնավոր գիտելիքներ ձևավորել խոսքի մասերի և դրանց քերականական յուրահատկությունների վերաբերյալ,
5. ձևավորել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու և մեկնաբանելու ձևաբանության ուսումնասիրության առարկան և նրա խնդիրները,
2. բացատրելու քերականական կարգերի էությունը, քերականական իմաստների և ձևերի

փոխհարաբերությունները, վերարտադրելու քերականական կարգերի էությունը և դրանց տարբերակման չափանիշները,
3. թվարկելու գոյական, ածական, թվական խոսքիմասային խմբերը, բացատրելու դրանց դերը և կիրառական յուրահատկությունները,
4. պարզաբանելու և թվարկելու խոսքի մասերի տարբերակման հիմունքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. զանազանելու խոսքի մասերի դասակարգման հիմունքները
2. զանազանելու, լուսաբանելու գոյական, ածական, թվական խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները,
3. քննարկելու և խմբավորելու խոսքի մասերն իրենց քերականական կարգերով,
4. ընդհանրացնելու խոսքի մասերի տարբեր խմբերն իրենց առանձնահատկություններով և նշանակությամբ,
5. բացատրելու և վերլուծելու բառաձևերում ձևույթների արտահայտած քերականական նշանակությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. հակադրելու և զանազանելու տեքստում խոսքի մասերը իրենց քերականական հատկանիշներով,
2. հակադրելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու նյութական խոսքի մասերին հատուկ քերականական առանձնահատկությունները,
3. գործնականում կիրառելու նյութական խոսքի մասերին վերաբերող տեսական գիտելիքները:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1 ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա5 ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2 լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5 մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական աշխատանք
3. բանավեճ
4. զրույց
5. խմբային աշխատանք

12.Գնահատման մեթոդները և չափանիշները.

1-ին ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության ուսումնասիրության առարկան: Քերա-կանական կարգեր: Խոսքի մասերը ժամանակակից հայերենում, դրանց որոշման հիմունքները: Փոխանունություն:Գոյական. քերականական կարգերը (թվի, հոլովի, առկայացման, անձի և ոչ անձի),

իմաստային-քերականական խմբերը: **Թեմա 2.** Ածական. տեսակները և նրանց հատկանիշները: Թվական. տեսակները, կազմությունը: Դերանուն. տեսակները և դրանց քերականական հատկանիշները: **Թեմա 3-4.** Բայ. կազմությունը, տեսակները, քերականական կարգերը՝ դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ, կերպ: **Թեմա 5.** Մակբայ. տեսակները և կազմությունը: **Թեմա 6.** Կապ. տեսակները, դասակարգման սկզբունքները, հոլովառությունը: Շաղկապ. տեսակները: **Թեմա 7.** Վերաբերական. տեսակները: Ձայնարկություն. տեսակները:
14.Հիմնական գրականության ցանկ. 1. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր.,1969: 2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965: 3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, 1974: 4. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983: 5. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ, Եր., 1970,1973,1977:

1.0303/B35	**2.Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -1**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.30/15/0**	
6.4-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության ժամանակակից մեթոդների կիրառման տեսությունն ու պրակտիկան, ձևավորել առաջին դասարանում 6 տարեկաններին գրել, կարդալ սովորեցնելու ուսանողների գիտելիքները և գրաճանաչության դասեր վարելու կարողությունները:

Դասընթացի խնդիրները.

1. ուսանողներին նախապատրաստել գրաճանաչության երեք շրջաններում դասեր վարելու կարողություններով,
2. մեկնաբանել վաղ ուսուցման պայմաններում առաջին դասարանում կազմակերպվող գրաճանաչության դասի առանձնահատկությունները,
3. ձևավորել գրաճանաչության դասեր վարելու գործընթացում կրտսեր դպրոցականների դժվարությունների պատճառները բացահայտելու և հաղթահարելու ուսանողների կարողությունները:

9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Հիմնավորելու գրաճանաչության ժամանակակից մեթոդների արդյունավետությունն ու անձնակողմնորոշիչ բնույթը:
2. Դիտարկելու գրաճանաչության պատմական մեթոդները:
3. Վերլուծելու ՀՀ գործող այլընտրանքային այբբենարանների բովանդակությունն ու կառուցվածքը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կազմելու գրաճանաչության երեք շրջաններում իրականացվող դասերի պլաններ, քննարկելու դրանց հիման վրա իրականացվող դասերի ընթացքն ու արդյունավետությունը:
2. Ներկայացնելու ներառական կրթության պայմաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ իրականացվող աշխատանքի բովանդակությունն ու ձևերը:

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Մշակելու և ներկայացնելու հայերենի հնչյուն-տառերի ուսուցման այլընտրանքային դասեր:
2. Ուսումնասիրելու ներառական կրթության պայմաններում ՀՀ գործող այբբենարանների գործածման հնարավորությունները, ներկայացնելու համապատասխան առաջարկություններ:
3. Ստեղծելու գրաճանաչության ընթացքում կիրառվող դիդակտիկ նյութերի, խաղերի համալիր, մշակելու նրանց կիրառման մեթոդական երաշխավորություններ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1 ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2 բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5 ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2 լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5՝ մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:
Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ակտիվ դասախոսություն
2. խոսքային մեթոդներ
3. էվրիստիկ մեթոդ
4. համագործակցային աշխատանք
5. սահիկաշարի գործածություն
6. մտագրոհ

12.Գնահատման մեթոդները

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 3, 3, 4 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

Ներածություն. Մայրենիի դասավանդման մեթոդիկան որպես մանկավարժական գիտություն, կապն այլ գիտությունների հետ: **Թեմա 1**. Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում, ժամանակակից մեթոդները: **Թեմա 2**. Գրաճանաչության նախաայբբենական շրջան: **Թեմա 3**. Գրաճանաչության այբբենական շրջան: **Թեմա 4.** Գրաճանաչության հետայբբենական շրջան:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գյուլամիրյան Ջ՝, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:
2. Տեր-Գրիգորյան Ա՝, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:
3. Վ՝Սարգսյան, Այբբենարան, Երևան, Մանմար, 2017:
4. Ա՝Քյուրքչյան, Լ՝Տեր-Գրիգորյան, Այբբենարան, Երևան, Էդիթ պրինտ, 2017:
5. Ա՝Քյուրքչյան, Լ՝Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2017:

1.0303/B36	2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-1	3.3 կրեդիտ
4.3 ժամ/շաբ.	5.30/15/0	
6.4-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏՂ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին: Ուսանողի առջև բացել մաթեմատիկայի աշխարհայացքային նշանակությունը՝ մաթեմատիկան որպես մշակույթի տեսակ, մաթեմատիկան որպես լեզու, մաթեմատիկան որպես իմացության գործիք, մաթեմատիկան որպես արժեք: Ուսանողին տալ այնպիսի մաթեմատիկական գիտելիքներ, որոնց հիմքի վրա գիտականորեն հիմնավորված ու արդյունավետ կառուցվում է տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացը: Նպաստել ուսանողի մտածողության տարբեր տեսակների (խոսքային-տրամաբանական, կոմբինատորային, հավանականականական և այլն) զարգացմանը, ուսանողի կողմից ինքնուրույն աշխատանք կատարելու, մշտապես սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ տեսական – մաթեմատիկական հիմքեր «Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա» դասընթացի արդյունավետ իրականացման համար:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու «Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկան» որպես ուսումնական

առարկա, ներկայացնելու կապը այլ գիտությունների հետ:
2. Ներկայացնելու տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթացի կառուցման առանձնահատկությունները, ձևակերպելու դասընթացի ուսումնասիրության նպատակները:
3. Սահմանելու բնական թիվ, ներկայացնելու բնական թվի տասնորդական գրառումը, ներկայացնելու և բացատրելու բնական թվերի նկատմամբ կատարվող գործողությունների ալգորիթմներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու թեմատիկ բաշխում ըստ առարկայական ծրագրի:
2. Կազմելու դասի պլանավորումներ ըստ տեսակների:
3. Կազմելու արտադասարանական աշխատանքների պլան:
4. Հավաքագրելու և ստեղծելու նախապատրաստական շրջանի և թվարկության ուսուցման վերաբերյալ օժանդակ նյութեր, դիդակտիկական խաղեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու հաշվողական հնարները տարրական դպրոցում:
2. Լուծելու մաթեմատիկայի հիմնական հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող վարժություններ և խնդիրներ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտաժողով:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

Թեմա 1 «Տարրական դպրոցում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» բուհական դասընթացի նպատակը և ուսումնասիրման առարկան: **Թեմա 2** Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի պետական չափորոշիչը: Այդ դասընթացի նպատակներն ու խնդիրները: «Մաթեմատիկա» դասընթացի բովանդակության կառուցման սկզբունքները: **Թեմա 3** Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման կազմակերպումը, առանձնահատկությունները սակավակազմ դպրոցում: **Թեմա 4** Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդները և միջոցները: **Թեմա 5** Առաջին տասնյակի թվերի թվարկության ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան: **Թեմա 6** «Հարյուրյակ» համակենտրոնում թվարկության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 7** Թվարկության ուսուցման մեթոդիկան «հազարյակ», «բազմանիշ թվեր» համակենտրոններում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.

6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

1.0303/B37	**2.Մանկավարժական հոգեբանություն**	**3.4 կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5.30/0/30**	
6.4-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	
8.Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին: **Դասընթացի խնդիրները.** 1. ներկայացնել ուսումնական գործընթացի կառուցվածքը, 2. վերլուծել մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները, 3. ծանոթացնել մանկավարժական հմտություններին և կարողություններին:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*** 1. բնութագրելու մանկավարժական գործունեության դերը ուսումնական գործընթացում, 2. մատնանշելու մանկավարաժական հոգեբանության մեջ կիրառվող մեդոնեչի ամբողջականությունը, ներկայացնելու կրթության հոգեբանության դերը մանկավարժական հոգեբանության մեջ, 3. բացատրելու դաստիարակության հոգեբանության դերը մանկավարժական գործընթացում, ***բ. գործնական մասնագիտական կարողություններ*** 1. կարևորելու ուսուցչի դերը մանկավարժական գործընթացում, 2. մեկնաբանելու ոսուցման հոգեբանական առանձնահատկությունները, 3. որպես մանկավարժ գործնականում կիրառելու անձնային հոգեբանական մոտեցումներ, ***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*** 1. ընկալելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:		
10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. **Ա1.**ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, **Ա2.**բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, **Ա3.**սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը, **Բ2.**լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ, **Բ3.**կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա, **Բ6.**տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում: **Գ1.** իրականացնել մասնագիտական գործունեություն, **Գ5.**արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:		
11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ), 2. թիմային աշխատանքներ, 3. քննարկումներ, 4. հետազոտական սեմինարներ:		
12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան: ***1-ին ստուգում.*** Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:		

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3.** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4.** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5.** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6.** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7.** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8.** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9.** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10.** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11.** Ուսուցչի անձի հոգեբանություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Բալյան Ա.Ա., "Մանկավարժական հոգեբանության հարցեր", Երևան: Լույս, 1983.
2. Էլկոնին Դ.Բ., "Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն" Երևան: Լույս, 1975.
3. Էլոյան Տ.Ս., "Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները", Երևան: Լույս, 1980.
4. Айсмонтас Б.Б., Педагогическая психология: схемы и тесты. - М.: Владос, 2004. - 208.
5. Басова Н.В., Педагогика и практическая психология, Ростов н/Д.: Феникс, 2000. - 416.

1.0303/B38	**2.Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա-1**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.15/30/0**	
6.4-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողին զինել նախնական գիտելիքներով, ծանոթացնել թղթի տեսակներին, դրանց օգտագործման բնագավառներին, մկրատից օգտվելու անվտանգության կանոններին, գույների պարզ համադրությունից առաջացած պատկերներին և աշխատանքային դաստիարակությանը:

Դասընթացի խնդիրները.

1. դաստիարակել աշխատասիրություն, զարգացնել էսթետիկական ճաշակ,
2. վեր հանել տեխնոլոգիայի գիտամանկավարժական հիմքերը՝ տարրական դպրոցում կիրառելու համատեքստում,
3. բացահայտել տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմանները տարրական դպրոցում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու դասընթացի դերը տարրական դասարաններում, նրա կառուցվածքը և բովանդակությունը,
2. թվարկելու և բնութագրելու տեխնոլոգիայի զարգացման հիմնական փուլերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. աշխատելու թղթով, ստվարաթղթով, մատիտներով, մկրատով, քանոնով, բնական և արհեստական նյութերով (տերևներով, քարերով, կորիզներով, սերմերով, կաղիններով, կոներով և այլն),
2. ընտրելու և կիրառելու տարրական դասարանի համար ընդունելի կերպարվեստի համապատասխան տեսակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դրսևորելու իրեն որպես կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի,
2. աշխատելու ինքնուրույն,
3. տարբեր իրավիճակներում կիրառելու մասնագիտական հմտությունները,
4. կիրառելու պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա7.մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ6.կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային մեթոդները (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),
2. զննական մեթոդները (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և

այլն),
3. գործնական մեթոդները (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),
4. հետաքրքրությունների խթանման մեթոդները (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),
5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդները (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),
6. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),
7. քննադատական մտածողության մեթոդները (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),
8. խմբային աշխատանքի մեթոդները (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
9. ինքնուրույն աշխատանքի մեթոդները (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),
10. վերահսկողության մեթոդները (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից

Թեմա1. Ներածություն. Ծանոթություն «Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա» առարկայի հետ: **Թեմա 2.** Տեխնոլոգիայի ուսուցումը տարրական դասարաններում: **Թեմա 3.** Թղթի գործածության ոլորտը առարկայի շրջանակներում: **Թեմա 4.** Թղթի ծալման և կտրման գործողություններ (դետալներ, տրաֆարետներ,գծանմուշներ): **Թեմա 5.** Ստվարաթուղթ, ստվարաթղթից տարբեր առարկաների պարտրաստում, հասկացություններ «սիմետրիկ»-ի և «ասիմետրիկ»-ի մասին: **Թեմա 6.** Տեխնոլոգիայի ուսուցման դասի կառուցվածքը և բովանդակությունը: **Թեմա 7.** Հասկացություն ապլիկացիայի մասին, ապլիկացիան տարրական դասարաններում: **Թեմա 8.** Երկրաչափական պատկերներով ապլիկացիա, «Զարդանախշեր»:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» I դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2015.:
2. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Տեխնոլոգիա» II դասարան, Երևան, «Տիգրան Մեծ», 2016.:
3. Ս.Հովսեփյան և ուրիշներ, «Ուսուցչի ձեռնարկ II դասարանների համար», Երևան, «Տիգրան Մեծ», 2014.:
4. Ա.Հարությունյան, Ս. Հովսեփյան, Ժ. Ավետիսյան, «Գործնական աշխատանքներ», Ուսումնական ձեռնարկ, «Աստղիկ գրատուն», 2011.:
5. Ժ.Ավետիսյան, «Տեխնոլոգիա», Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, «Աստղիկ գրատուն», 2014.:

1. 0303/B39	2. Կերպարվեստ և դասավանդման մեթոդիկա-1	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 15/30/0	
6. 4 կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին սովորեցնել ճանաչել, նկարագրել և մեկնաբանել կերպարվեստի ստեղծագործությունները, աշխատել նկարչական տարբեր նյութերով, դպրոցում գրագետ կազմակերպել կերպարվեստի դասերը:

Դասընթացի խնդիրները

1. սովորեցնել տարբերակել արվեստի տեսակներն ըստ տեսակների և ժանրերի,
2. ծանոթացնել արվեստի զարգացման պատմական կարևորագույն ժամանակաշրջաններին,
3. աշխատել կերպարվեստի տարբեր նյութերով,
4. ծանոթացնել կերպարվեստի դասավանդման մեթոդներին,
5. ծանոթացնել տարրական դպրոցում կերպարվեստի դասերի 4 տեսակների կազմակերպման ձևերին և մեթոդներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ճանաչելու, նկարագրելու և թվարկելու կերպարվեստի տեսակները և ժանրերը,
2. ճանաչելու և ցուցակարգելու կերպարվեստի զարգացման կարևոր փուլերը,
3. ճանաչելու և ներկայացնելու կերպարվեստի նշանավոր գործիչներին և նրանց

ստեղծագործությունները,
4. ընտրելու տարրական դպրոցում կերպարվեստի դասի տեսակներն ըստ ժամաքանակների,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. նկարելու նկարչական տարբեր նյութերով,
2. ցուցադրելու նկարչական տարբեր հնարներ,
3. մշակելու ստեղծագործական կարողությունները խթանող առաջադրանքներ,
4. մշակելու հանձնարարությունների հաջորդականությունը պարզից բարդ սկզբունքով՝ հաշվի առնելով ուսուցանվող առարկաների փոխկապակցվածությունը,
5. կիրառելու պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պլանավորելու և կազմակերպելու խմբային աշխատանքներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և հոգեբանության (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալտնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները

Բ1.պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Գ3.պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր.

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. **խոսքային մեթոդները** (դասախոսությունը, բացատրումը, ներկայացումը, ընթերցումը, երկխոսությունը և այլն),
2. **զննական մեթոդները** (գծագրերի, նկարների և զննական պարագաների դիտումն ու ցուցադրումը և այլն),
3. **գործնական մեթոդները** (առաջադրանքներիը, վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),
4. **հետաքրքրությունների խթանման մեթոդները** (հետաքրքիր դեպքեր հայ և համաշխարհային արվեստի և մշակույթի պատմությունից, արվեստագետների կյանքի ներկայացմամբ հուզական խթանում և այլն),
5. **ինտերակտիվ-կառուցողական մեթոդները** (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, աշխատանք սկզբնաղբյուրների հետ և այլն),
6. **համագործակցային ուսուցման մեթոդները** (թիմային առաջադրանքների կատարում, խմբային ուսումնասիրություն և այլն),
7. **քննադատական մտածողության մեթոդները** (տնային աշխատանքների վերլուծություններ և այլն),
8. **խմբային աշխատանքի մեթոդները** (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
9. **ինքնուրույն աշխատանքի մեթոդները** (ինքնուրույն աշխատանք սկզբնաղբյուրներով, ինտերնետային կայքերով և այլն),
10. **վերահսկողության մեթոդները** (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր և կիրառվում է դիագնոստիկ գնահատում, ուսուցանող գնահատում, ձևավորող գնահատում: Յուրաքանչյուր ստուգման 10 միավորը բաժանվում է բաղադրիչների

1-ին ընթացիկ ստուգում

ա/ Թեստային աշխատանքի ժամանակ ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները՝0-6 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-4 միավոր:

2-րդ ընթացիկ ստուգում

ա/ Թեստային աշխատանքի ժամանակ ստուգվում են ուսանողի տեսական գիտելիքները՝0-4 միավոր:

բ/ Ուսանողի կատարված գործնական աշխատանքները գնահատվում են 0-2 միավոր:

գ/Ինքնուրույն աշխատանքը ուսանողը պատրաստում է ներկայացում որևէ նկարչի ստեղծագործությունների, արվեստի տեսակի, արվեստի ժանրի մասին, որը գնահատվում է 0-4 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Ներածություն: Առանկայի դերն ու նշանակությունը: **Թեմա 1.** Կերպարվեստի առաջացումը և

զարգացման ժամանակաշրջանները: **Թեմա 2**. Կերպարվեստի տեսակները և ժանրերը: **Թեմա 3**. Կերպարվեստի նյութերը և տարբեր նյութերով աշխատանքի կազմակերպման ձևերը: **Թեմա 4.** Կերպարվեստի ուսուցումը տարրական դպրոցում: **Թեմա 5.** Կերպարվեստի դասավանդման առանձնահատկությունները և մեթոդները տարրական դպրոցում: **Թեմա 6**. Գույնի դերն ու նշանակությունը մանկական նկարում:
14. Հիմնական գրականության ցանկ. 1. Բորև Յու. Բ., Գեղագիտություն, Հայաստան, Երևան, 1982: 2. Բաղդասարյան Ք. Մ., Կերպարվեստի դասեր 1-3-րդ դասարաններում, Լույս, Երևան, 1986: 3. Նեմենսկի Բ.Մ., Գեղագիտության իմացությունը, Լույս, Երևան, 1987: 4. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական պատկերացումների տեղը ստեղծագործական գործունեության մե, Զանգակ, Երևան, 2002: 5. Ներսիսյան Լ.Ս., Գեղարվեստական ընկալման ձևավորման հիմնախնդիրները դպրոցում, Մանկավարժ, Երևան, 1999: 6. Бехтерев В.М., Первоначальная эволюция детского рисунка в объективном изучении., Прогресс, Москва, 1910.

1.0303/B40	**2.Տարրական կրթության մանկավարժություն**	**3.4 կրեդիտ**
4.4ժամ/շաբ.	**5.30/0/30**	
6.4-րդ կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատմամբ**	

8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մանկավարժության պատմության զարգացման պատմական փուլերին, առաջավոր փորձին:

Դասընթացի խնդիրները.

1. ձևավորել գիտելիքներ կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,
2. ձևավորել տարրական դպրոցի հոգեբանի պրակտիկ գործունեության հմտություններ և կարողություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու 20-րդ դարի մանկավարժական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը:
2. Բացատրելու մանկավարժական մտքի գիտատեսական հիմքերը, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, հետազոտության մեթոդները, հիմնական աղբյուրները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու, տեղայնացնելու մանկավարժական առաջավոր փորձը ժամանակակից պայմաններում:
2. Ըմբռնելու 20-րդ դարի մանկավարժական առաջավոր փորձը, մեթոդաբանությունը, աղբյուրները:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա4.մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Բ6.տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. համագործակցային աշխատանք
3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. մտագրոհ և այլն:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գ.Ի.Գյուրջյանի մանկավարժական տեսությունը, նրա զրույցներն ու ստեղծագործությունները: **Թեմա 2**. Ռ.Շտայների մանկավարժական հայացքները: **Թեմա 3**. Վալդորֆյան դպրոց, կազմակերպումը, առանձնահատկությունները: **Թեմա 4**. Լ.Ս.Վիգոտսկի: Վիգոտսկու մանկավարժական տեսությունը, հիմնական աշխատությունները: **Թեմա 5**. Պ.Բլոնսկու մանկավարժական հայացքները, մանկաբանությունը: **Թեմա 6**. Ս.Շացկու մանկավարժական հայացքների ձևավորումը, նրա հիմնական աշխատությունները: **Թեմա 7**. Մ.Մոնտեսսորիի ազատ դաստիարակության գաղափարները, մեթոդների պատմությունը: **Թեմա 8**. Ջ.Դյուիի տեսությունը, նրա մանկավարժական տեխնոլոգիաները: **Թեմա 9**. Ա.Մասլոուի մանկավարժական գաղափարները, հիմնական աշխատությունները:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005 թ, էջ 18.
2. Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ.
3. Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, էջ 16.
4. Подласый И.П., “Педагогика”, кн. 1, М., “ВЛАДОС”, 2002, с.9.
5. Сластенин В.А., “Общая педагогика”, ч. 2, “ВЛАДОС”, М., 2002, с. 11.
6. Смирнов В.И., “Общая педагогика в тезисах, дефинициях, иллюстрациях”, Педагогическое общество России, М., 1999, с. 21.

1.0302/B41	**2.Մայրենի լեզու-3**	**3. 2 ECTS կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.15/15/0**	
6. 5-րդ կիսամյակ	7.**Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենի շարա-հյուսական համակարգը՝ իր տարբեր հատկանիշներով, ուսուցանել բառերի կապակցման միջոցներն ու եղանակները, պարզ նախադասության առանձնահատկությունները և համադրելով ստացած գիտելիքները՝ մշակել գործնականում այն կիրառելու կարողություն, կենդանի խոսքը՝ գրավոր և բանավոր, ճիշտ կառուցելու հմտություն:

Դասընթացի խնդիրները

1. Խոսք կառուցելու ժամանակ անսխալ կիրառել շարահյուսության քերականական կատեգորիաներ՝ նախադասության անդամների շարադասությունը,
2. կապակցման միջոցներն ու եղանակները՝ համաձայնությունն ու խնդրառությունը,
3. նախադասության կառուցվածքային տեսակները,
4. հոլովների շարահյուսական կիրառությունները,
5. նախադասության գլխավոր և երկրորդական (գոյականական և բայական անդամի լրացումները) անդամները,
6. նախադասության բազմակի անդամները, նրանց արտահայտությունը, կապակցության եղանակը, շարադասությունը և կետադրությունը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Վերարտադրելու շարահյուսության քերականական կարգերն ու նրանց առանձնահատկությունները:
2. Զանազանելու բառի, բառակապակցության ու նախադասության տարբերությունները՝ իրենց հատկանիշներով:
3. Ըմբռնելու և խոսքի մեջ ճիշտ կիրառելու պարզ նախադասության կառուցվածքային տեսակները:
4. Ըմբռնելու նախադասության գլխավոր և երկրորդական անդամների հատկանիշները, արտահայտությունը, շարադասությունը, կապակցման եղանակներն ու միջոցները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարել նախադասության շարահյուսական անթերի վերլուծություն:
2. Հստակորեն տարբերակելու հոլովների շարահյուսական կիրառությունները:
3. Գրավոր և բանավոր խոսքում գործածելու գրական հայերենի լեզվական նորմերով կառուցված

նախադասություններ:

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Կատարելու լեզվաբանական հետազոտություններ և վերլուծություններ:
2. Հաստատելու միջառարկայական կապեր:
3. Մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվություն:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1-ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա5-ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2-լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5-մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. Համագործակցային աշխատանք
3. Ինքնուրույն առաջադրանքներ /ռեֆերատ, աշխատանք գրական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. Սլայդների գործածություն՝ թեմաների ուսուցման ընթացքում
5. Մտագրոհ և այլն:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում, գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

13.Դասընթացի համառոտ բովանդակություն.

Թեմա 1. Շարահյուսության ուսումնասիրության առարկան. կապակցության միջոցներն ու եղանակները: Բառակապակցություն. դասակարգումը: **Թեմա 2** Նախադասություն. հատկանիշները, տեսակները: Պարզ նախադասություն. կառուցվածքային տեսակները: **Թեմա 3.** Նախադասության գլխավոր անդամներ: Ենթակա և ստորոգյալ, դրանց արտահայտությունը: **Թեմա 4.** Գոյականական և բայական անդամի լրացումներ: **Թեմա 5.** Դերբայական դարձված և կողմնակի անդամներ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/,Եր., 1987:
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր.,1965:
3. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2002:
4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1991:
5. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ, Ժամանակակից հայոց լեզու, հ.3, Շարահյուսություն, Եր.,1976:
6. Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009:

1.0303/B42	2.Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -2	3.5 կրեդիտ

4.4 ժամ/շաբ.	**5.30/30/0**
6.5-րդ կիսամյակ	**7. Եզրափակիչ գնահատումով**

8.Դասընթացի նպատակն է ուսումնասիրել բացատրական ընթերցանության մեթոդով իրականացվող մայրենիի դասի կազմակերպման մեթոդիկան 2-4-րդ դասարաններում։

Դասընթացի խնդիրները.

1. քննարկել ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի դասի բաղադրիչները,
2. դիտարկել կարդալու կարողության ձևավորման գիտամեթոդական հիմքերը,
3. ուսումնասիրել կարդալու որակական հատկանիշները և դրանց ձևավորմանը միտված կարդալու տեսակների իրականացման մեթոդիկան։

9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացատրելու մայրենիի դասերի բաղադրիչներից յուրաքանչյուրի նպատակը, խնդիրներն ու իրականացման մեթոդական քայլաշարը։
2. Բացահայտելու լավ կարդալու կարողության ձևավորման հնարները տարրական կրթության պրակտիկայում։
3. Ներկայացնելու մայրենիի դասերի պլանները՝ հաշվի առնելով ուսումնասիրվող ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները։
4. Ներկայացնելու ներառական կրթության պայմաններում մայրենիի դասերի իրականացման մեթոդական առանձնահատկությունները։

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մշակելու և իրականացնելու կարդալու տարբեր տեսակներով բնագրի շուրջ աշխատանքի տեխնոլոգիաներ։
2. Կիրառելու բնագրի գաղափարի և ենթատեքստի բացահայտման փոխգործուն մեթոդներ։
3. Իրականացնելու բառային աշխատանքի և բառապաշարի հարստացման մեթոդական համակարգ։

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Կատարելու սովորողների ուսումնառրոնողական գործունեությանը մղող աշխատանք։
2. Ուսումնասիրելու առարկայական զուգադրումներով և եռադրումներով մայրենիի դասեր, կատարել արդյունքների վերլուծություն։
3. Մշակելու ստեղծագործական-հետազոտական աշխատանքի իրականացման քայլաշար, ամփոփելու փորձարարական աշխատանքների արդյունքները։

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1-ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2-բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5-ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2-լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5-մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում։

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ակտիվ դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդներ
3. էմպիրիկ մեթոդ
4. խմբային աշխատանք
5. տեսասահիկների պատրաստում և նրանց միջոցով դասերի վարում
6. հիմնախնդիրների ինքնուրույն վերլուծություն։

12.Գնահատման մեթոդները

Նախատեսված ***2 ընթացիկ քննությունները*** թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով։

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով։

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Ընթերցանության խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում: **Թեմա 2**. Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը: **Թեմա 3**. Գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները: **Թեմա 4.** Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրման առանձնահատկությունները:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գյուլամիրյան Ջ□, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:
2. Տեր-Գրիգորյան Ա□, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:
3. Գյուրջինյան Դ□, Հեքեքյան Ն□, «Մայրենի- 2» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե□, Լույս, 2004:
4. Ա□ Քյուրքչյան, Լ□Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Երևան, Էդիթ պրինտ, 2017:
5. Ա□ Քյուրքչյան, Լ□Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2017:

1.0303/B43	2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-2	3.5 կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6.5-րդ կիսամյակ	7.Եզրափակիչ գնահատումով	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Դասընթացի խնդիրները.

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Մեկնաբանելու թվաբանական գործողությունների ուսուցման հաջորդականության տրամաբանությունը, գործողությունների կատարման ալգորիթմները (բանավոր և գրավոր), ներկայացնելու հիմնական հատկությունների և օրենքների կիրառման առանձնահատկությունները մաթեմատիկայի տարրական դասընթացում:
2. Հիմնավորելու տարրական դասարաններում ուսուցվող մեծությունների և դրանց միավորների գիտական մեկնաբանությունները և ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները տարրական դպրոցում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Գիտամեթոդական բարձր մակարդակով մեկնաբանելու թվաբանական գործողությունների կատարման ալգորիթմները, ներկայացնելու այդ գործողությունների ուսուցման մեթոդիկայի հարցերը, տարանջատելու երկրաչափական և ոչ երկրաչափական մեծությունների ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները տարրական դպրոցում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու հաշվողական տարբեր մեթոդական հնարները տեքստային խնդիրներում, երկրաչափական նյութի և մեթոդիկայի այլ նյութի ուսուցման ուսուցման ժամանակ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,

2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ քննությունները*** թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

3. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ.Ջեկույց որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր և «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրման ծրագիր», Երևան, 2013թ.
4. «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատումե հետազոտությունը: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ.
5. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ձեռնարկ: Նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր, Երևան, 2013թ.

1.0303/B54	**2.Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա -4**	**3.5 կրեդիտ**
4.4 ժամ/շաբ.	**5.18/18/0**	
6.7-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կրտսեր դպրոցականի գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկություններին, նրանց զինել խոսքի զարգացման կարողություններով:

Դասընթացի խնդիրները.

1. Դիտարկել 1-4-րդ դասարանների մայրենիի ծրագիրը կրտսեր դպրոցականի բանավոր և գրավոր խոսքի զարգացման տեսանկյունից:
2. Ուսումնասիրել տարրական դպրոցում կիրառվող գրավորի տեսակները և այդ ուղղությամբ աշակերտների կարողությունների ձևավորման մեթոդիկան:
3. Մշակել գրավորի դասեր վարելու կարողություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Տարբերակելու տարրական դպրոցում կիրառվող գրավորի տեսակները:
2. Մշակելու գրավորի տարբեր տեսակների դասեր վարելու պլաններ, դիտարկելու նրանց արդյունքները:
3. Բացահայտելու և դասակարգելու գրավոր խոսքում սովորողների թույլ տված սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մշակելու և կիրառելու սովորողների ուղղագրական սխալները կանխելուն և շտկելուն միտված վարժությունների համակարգ:
2. Կիրառելու ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ գիտելիքները և ունակությունները, պրակտիկ գործունեության մեջ:
3. Կիրառելու ուղղագրական կարողությունների ձևավորմանը միտված հետաքրքրաշարժ փոխգործուն մեթոդներ:

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Կատարելու լեզվական հետազոտություններ:
2. Հաստատելու միջառարկայական կապեր:
3. Հավաքելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

U1□ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

U5□ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական

առարկաների հիմնական դրույթները,
Բ2-լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
Բ5-մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:
Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,
Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ակտիվ դասախոսություն
2. փոխգործուն մեթոդներ
3. համագործակցային աշխատանք
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. էսսեների կիրառում:

12.Գնահատման մեթոդները

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է առավելագույնը 3 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 3, 3, 4 միավորով, 1 միավորը ձևավորվում է գործնական և ինքնուրույն աշխատանքների արդյունքից (վարժությունների, առաջադրանքների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

1-ին ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր աշխատանք: Միավորների քայլը 0.5 է:

13.Դասընթացի համառոտ բովանդակությունը

Թեմա 1. Խոսքի տեսակները, նրանց ներկայացվող պահանջները: **Թեմա 2**. Կապակցված խոսքի զարգացման մեթոդները: **Թեմա 3**. Գրավոր խոսքի տեսակները, նրանց ուսուցման մեթոդիկան: **Թեմա 4.** Կրտսեր դպրոցականի կարողությունների ձևավորման մեթոդիկան:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, Զանգակ, 2018:
2. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1980:
3. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի- 2» դասագրքի մեթոդական ուղեցույց, Ե., Լույս, 2004:
4. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Երևան, Էդիթ պրինտ, 2017:
5. Ա. Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, Էդիթ պրինտ, 2017:

1.0303/B55	**2.Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-4**	**3.5 կրեդիտ**
4.4 ժամ/շաբ.	**5.18/18/0**	
6. 7-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու տարրական դպրոցում մեծության մասի և կոտորակների ուսուցման դժվարությունները, բացատրելու կոտորակների համեմատման և նրանց հետ թվաբանական գործողությունների կատարման սխեմաները, նկարագրելու դրանց արդյունավետ ուսուցման մեթոդները:
2. Ներկայացնելու մաթեմատիկայի տարրական դասընթացում երկրաչափական հիմնական

հասկացությունների տրման և նրանց մեկնաբանման առանձնահատկությունները և ուսուցման մեթոդները։
3. Ներկայացնելու մաթեմատիկայի տարրական դասընթացում հանրահաշվական հիմնական հասկացությունների տրման և նրանց մեկնաբանման առանձնահատկությունները և ուսուցման մեթոդները։
4. Նկարագրելու և տարանջատելու ըստ ուսուցման տարիների աշակերտների գիտելիքներին ներկայացվող պահանջները։
5. Բնութագրելու կրտսեր դպրոցականների մտավոր զարգացման առանձնահատկությունները և մտածողական հնարների զարգացման պայմանները։

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կազմակերպելու աշակերտների ուսումնական գործունեությունը ուսուցման տարբեր ձևերի կիրառմամբ։
2. Կիրառելու միջառարկայական կապերը ուսուցման ժամանակ, ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում։
3. Ուսուցման գործընթացում կիրառելու ակնառուական բացատրություններ, ցուցումներ և գործնական աշխատանքներ (տեսազննական պարագաների պատրաստում)։
4. Կազմելու կրտսեր դպրոցականների մտավոր գործունեությունը խթանող առաջադրանքներ և քննարկելու դրանք։
5. Տալու ինքնուրույն աշխատանքին վերաբերող հատուկ ցուցումներ։

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Մասնագիտական միջավայրում անկաշկանդ կիրառելու մաթեմատիկայի հիմանկան հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժությունների լուծման ձևերը և մեթոդները։

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքներըը.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1 □ «Մաս», «Կոտորակ» հասկացությունների ուսումնասիրության և ուսուցման մեթոդիկան:

Թեմա 1. Մեծության մասի հետ ծանոթացման մեթոդիկան: **Թեմա 2.** Կոտորակների ուսուցման մեթոդիկան: **Թեմա 3.** Մեծության տրված մասը և տրված մասով մեծությունը գտնելուն վերաբերող հարցրի ուսուցման մեթոդիկան:

Բաժին 2. Երկրաչափական նյութի ուսուցման մեթոդիկան:

Թեմա 1. Տարրական դպրոցում երկրաչափական նյութի ուսուցման հիմնական նպատակները և խնդիրները: **Թեմա 2.** Երկրաչափական հասկացությունների ներմուծման և հիմնական փաստերի շարադրման առանձնահատկությունները տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացում: **Թեմա 3.** Կրտսեր դպրոցականին «Կետ», «Ուղիղ(գիծ)», «Կոր (գիծ)», «Հատված», «Անկյուն», «Բազմանկյուն», «Շրջան» («Շրջանագիծ»), «Բեկյալ», «Բեկյալի երկարություն», «Բազմանկյան պարագիծ», «Մակերես»,

«Համաչափություն» հասկացության հետ ծանոթացնելու և ուսուցանելու մեթոդիկան:

Բաժին 3 Հանրահաշվական նյութի ուսուցման մեթոդիկան:

Թեմա 1 Տարրական դպրոցում հանրահաշվի տարրերի ուսուցման ընդհանուր հարցեր. ուսուցման նպատակները և խնդիրները: Թեմա 2 Թվային արտահայտությունների, հավասարությունների և անհավասարությունների ուսուցման մեթոդիկան: Թեմա 3 Թվաբանական գործողությունների արդյունքի փոփոխությունը՝ կապված բաղադրիչների փոփոխությունից:

Բաժին 3 ՏՌՄՈՒՄ դասընթացի տեսական հիմունքները:

Բաժին 4 Մաթեմատիկական մտահանգումները տարրական դպրոցի մաթեմատիկա դասընթացում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏՌՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

1.0105/B56	2.Երկրաչափության հիմունքներ	3.4 կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.18/18/0	
6.7-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏՌ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

Դասընթացի խնդիրները.

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու, սահմանելու և մեկնաբանելու տարրական դպրոցի եմաթեմատիկայի դասընթացում հանդիպող երկրաչափության հիմնական հասկացությունները և մեծությունները:
2. Ձևակերպելու և մեկնաբանելու Էվկլիդեսյան երկրաչափության և մեծությունների հիմնական հասկացությունները:
3. Հստակ ձևակերպելու աքսիոմներն ու թեորեմները և մեկնաբանելու դրանք:
1. Բացատրելու և հիմնավորելու տարրական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում երկրաչափութան ուսուցման նպատակահարմարությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Տարբերելու պարզագույն երկրաչափական պատկերները, գծագրելու դրանք, կատարելու նրանց նշանակումները և ճիշտ կարդալու:
2. Կիրառելու պարզագույն երկրաչափական պատկերների հատկություններն ու հայտանիշները նրանց վերաբերյալ խնդիրները լուծելիս:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու երկրաչափական հնարները տարրական դպրոցում:
2. Գործնականում կիրառելու երկրաչափական հիմանկան հասկացություններին վերաբերող և դրանց իմաստը բացահայտող խնդիրների և վարժությունների լուծման ձևերն ու մեթոդները:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքներըը.

Ա1 ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2 բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5 ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2-լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
Բ5-մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,
Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Երկրաչափության դասընթացի կառուցվածքը: **Թեմա 2.** Պարզագույն երկրաչափական պատկերներ: **Թեմա 3.** Բազմանկյուններ և բազմանիստեր: **Թեմա 4.** Պատկերների ձևափոխություններ: **Թեմա 5.** Փոփոխական և հաստատուն մեծություններ: **Թեմա 6.** Մոդուլի ելքեր - փոխանցումներ տդմում դասընթաց:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

Կամընտրական դասընթացներ

1.0303/B57	**2.Գործնական հոգեբանություն**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.15/30/0**	
6.5-րդ կիսամյակ	**7.Առանց ընթացիկ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գործնական հոգեբանության բովանդակությանը, խնդիրներին, կիրառական նշանակություններին ու մեթոդներին:

Դասընթացի խնդիրները.

1. Գործնական հոգեբանության գիտելիքների ձևավորում, առարկայի նպատակի, խնդիրների մեկնաբանում
2. Գործնականում հոգեբանական իրադրությունների, խնդիրների հետ աշխատելու կարողությունների, ունակությունների և հմտությունների ձևավորում ու զարգացում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու դասընթացի խնդիրները, ուսումնասիրության առարկան:
2. Ներկայացնելու գործնական հոգեբանության տեսագործնական ու մեթոդաբանական հիմքերը:
3. Բնութագրելու գործնական հոգեբանության մեթոդների ու տեխնիկաների կիրառական նշանակությունը մանկավարժահոգեբանական իրադրություններում:
4. Ներկայացնելու դպրոցում և ընդհանրապես մանկավարժական պրակտիկայում գործնական հոգեբանության գիտելիքների, հմտությունների և կարողությունների կիրառական նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ուսումնասիրելու գործնական հոգեբանության տեսամեթոդաբանական հիմքերը և վերլուծելու դրանք:

2. Վերլուծելու և պարզաբանելու գործնական հոգեբանության կիրառական մեթոդաբանական համակարգը:
3. Կատարելու հետազոտական և գործնական աշխատանքներ հոգեբանական որոշակի խնդրային իրադրությունների կարգավորման նպատակով:
4. Պրակտիկայում կիրառելու պրակտիկ հոգեբանության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ:
2. Կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ6.կատարել հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գործնական հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2**. Գործնական հոգեբանության կիրառական մեթոդներն ու տեխնոլոգիաները: **Թեմա 3.** Հոգեախտորոշիչ աշխատանքը կրթության բնագավառում: **Թեմա 4.** Հոգեբանական պրակտիկ աշխատանքը դպրոցում: **Թեմա 5.** Հոգեշտկողական և թերապևտիկ աշխատանքը կրթության ոլորտում: **Թեմա 6**. Հոգեբանական աշխատանքը կրթության ոլորտի մասնագետների հետ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Абрамова Г.С. Практикум по психологическому консультированию. 1995.
2. Гулина М.А. Терапевтическая и консультативная психология. 2001.
3. Немов Р.С. Психологическое консультирование. М.: 2003.
4. Кочюнас Р. Психологическое консультирование и групповая психотерапия. М. 2005.
5. Линде Н.Д. Психологическое консультирование. М.: 2009.
6. Абрамова Г.С. Практикум по психологическому консультированию. 1995.
7. Бондаренко А.Ф. Психологическая помощь: теория и практика, М.: 2000.
8. Малкина-Пых И.Г. Справочник практического психолога. М.: 2008.
9. Осипова А.А. Общая психокоррекция. М.: 2000.
10. Потапова А.В. Психологическая служба. часть 1. М.: 2001.

1.0303/B57	2.Գործնական մանկավարժություն	3.3 կրեդիտ
4.3 ժամ/շաբ.	5.15/30/0	
6.5-րդ կիսամյակ	7.Առանց ընթացիկ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է՝ ընդլայնել ուսանողների մասնագիտական առարկայական գիտելիքները, մանկավարժական պրակտիկ կարողությունների և հմտությունների շրջանակը, նպաստել ուսանողների մասնագիտական կոմպետենտության ձևավորմանը:

Դասընթացի խնդիրները.

1. ճանաչել ներառական դպրոցներում դասավանդվող առարկայի ծրագիրը, ուսումնասիրվող նյութի բովանդակությունը, դրա դասավանդման մեթոդները,
2. բացատրել առարկայի դասավանդման շտկողական-դաստիարակչական և մեթոդական

առանձնահատկությունները հանրակրթական / ներառական / դպրոցում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու գործնական մանկավարժություն առարկան, ներկայացնելու նրա նպատակը, խնդիրները և առարկայի տեղն ու դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ:
2. Թվարկելու գործնական մանկավարժության հետազոտման մեթոդները և բացատրելու նրանց առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու և մեկնաբանելու ուսուցչի գործունեության ոլորտները, թվարկելու դասղեկի պարտականությունները:
4. Բացատրել հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունավետության պայմանները:
5. Ներկայացնելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, մանկավարժական ղեկավարման ոճերը, առանձնացնելու և բնութագրելու մանկավարժի կողմից ուսումնառողներին ճանաչելու միջոցներն ու մեթոդները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Պլանավորելու և իրականացնելու մանկավարժական գործունեություն, կատարելու մանկավարժական ախտորոշում և կանխատեսում:
2. Գործնականում ապահովելու տեսության և պրակտիկայի կապը, կատարելու մանկավարժական գործունեության նախագծում և մոդելավորում:
3. Կազմելու թեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային և այլ պլաններ:
4. Կրթական գործընթացում կիրառելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Խնդրահարույց իրավիճակներում լուծելու առաջացած մանկավարժական խնդիրները:
2. Մասնագիտորեն ճիշտ հաղորդակցվելու մանկավարժական միջավայրում, համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:
3. Դրսևորելու և զարգացնելու անձնային համապատասխան մասնագիտական որակներ և գործիմացություն:
4. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքներըը.

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Ա6.նկարագրել հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները.

Ա7.մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

Բ1.պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում
2. զրույց
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գործնական մանկավարժության առարկան, նպատակը, խնդիրները: **Թեմա 2.** Մանկավարժական վարպետություն: **Թեմա 3.** Կրթական հաստատությունների կառավարում: **Թեմա 4.** Դպրոցի կառավարման հիմունքներ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ս.Մանուկյան, Մանկավարժական և աշակերտական դասանպատակներ: Եր.,«Լուսաբաց», 2003, 188էջ:
2. Ս.Մանուկյան, Մտավոր գործունեության ձևերը կրթության բովանդակության կազմում: Եր., «Զանգակ-97», 2000, 80 էջ:
3. Ս.Մանուկյան, Մանկավարժագիտություն: Եր., «Զանգակ-97», 2002, 512 էջ:
4. А.Кузенцов, Принципы активной педагогики. -М.; Академия, 2001, 120 с.

Կամընտրական դասընթացներ

1.0303/B58	**2.Հատուկ հոգեբանության հիմունքներ**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.30/0/15**	
6.6-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝ Ուսանողներին զինել գիտելիքներով անձի զարգացման մեջ տեղ գտած շեղումների մեխանիզմների և օրինաչափությունների, դինամիկայի, հոգեբանական առանձնահատկությունների մասին:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու անձի հոգեբանական զարգացման խանգարումների ախտորոշման տեսական և կիրառական մոտեցումները:
2. Մեկնաբանելու անձի հոգեբանական զարգացման խանգարումների դասակարգումները:
3. Նկարագրելու անձի հոգեբանական զարգացման առանձնահատուկ դիզոնտոգենեզով երեխաների հոգեբանական բնութագիրը:
4. Մեկնաբանելու հաշմանդամություն ունեցող անձանց հոգեբանական ռեաբիլիտացիայի առանձնահատկությունները:

գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու տեսական մասնագիտական գիտելիքները զարգացման խնդիրներով անձանց հետ աշխատանքի ընթացքում:
2. Որոշելու զարգացման խանգարումների հոգեբանական կառուցվածքը՝ կիրառելով հատուկ հոգեբանական ախտորոշման մեթոդներ:
3. Իրականացնելու հոգեբանական հետազոտություններ՝ խախտված հոգեֆիզիկական զարգացման բնութագրման նպատակով:
4. Որոշելու հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություններով երեխաների սոցիալիզացիայի պայմաններն ու չափանիշները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Վերլուծելու անձի ախտորոշման արդյունքները:
2. Կազմակերպելու հոգեֆիզիկական զարգացման խնդիրներով անձանց հետազոտում՝ կիրառելով համապատասխան տեխնոլոգիաները, մեթոդներն ու միջոցները:
3. Գնահատելու անձի հոգեֆիզիկական վիճակը՝ կիրառելով հոգեշտկողական ներգործության մեթոդները և միջոցները:
4. Կազմակերպելու հոգեֆիզիկական զարգացման շեղումներով երեխաների բազմակողմանի ֆիզիկական և հոգեկան զարգացումը և գնահատելու այդ աշխատանքների արդյունքները:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքներըը.

Ա2.բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն,

Գ3.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ինտերակտիվ քննարկում
3. ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հատուկ հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդները, միջառարկայական կապերը: **Թեմա 2.** Հոգեկան զարգացման հապաղումների դասակարգումը: **Թեմա 3.** Փոխհատուցումը, ադապտացիան, շտկումը և ռեաբիլիտացիան՝ որպես ժամանակակից հատուկ հոգեբանության ֆունդամենտալ կատեգորիաներ: **Թեմա 4.** Մտավոր հետամնացություն: **Թեմա 5.** Լսողության խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 6.** Տեսողության խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 7.** Հոգեկան զարգացման հապաղումով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 8.** Խոսքի խանգարումներով երեխաների հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 9.** Հուզակամային ոլորտի և վարքի խանգարումներով երեխաների հոգեկան զարգացում: **Թեմա 10.** Հոգեբանական շտկման բովանդակությունն ու ուղղությունները հատուկ կրթության համատեքստում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Сорокин В. М.Специальная психология: Учеб. пособие / Под научн. ред. Л. М. Шипицыной. — СПб.: «Речь». 2003. — 216 с.
2. Специальная психология: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В. И. Лубовский, Т. В. Розанова, Л. И. Солнцева и др.; Под ред. В. И. Лубовского. – 2-е изд., испр. – М.: Изд. центр «Академия», 2005. – 464 с.
3. Шаповал И.А. Специальная психология: Учебное пособие. — М.: ТЦ Сфера, 2005. — 224 с.
4. Трофимова Н. М., Дуванова С. П., Трофимова Н. Б., Пушкина Т. Ф. Основы специальой педагогики и психологии. — СПб.: Питер, 2005. — 304 с.
5. Основы специальной психологии: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений/ Л.В.Кузнецова, Л.И.Переслени, Л.И.Соднцева и др.; под ред. Л.В.Кузнецовой.- 2-ое изд. стер.-М.: Изд.центр «Академия», 2005. – 480 с.

1.0303/B58	**2.Հատուկ մանկավարժության հիմունքներ**	**3.3 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.30/0/15**	
6.6-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, նրանց կրթության և դաստիարակության օրինաչափությունների և մեթոդների մասին:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ուսանողների մոտ ձևավորելու խնդրով երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման օրինաչափությունների մասին գիտելիքներ:
2. Մեկնաբանելու խնդրի բնույթը, շտկման և փոխհատուցման հնարավորությունները և ուղիները:
3. Մշակելու խնդրով երեխաների ուսուցման և դաստիարակության մանկավարժական սկզբունքները:
4. Ներկայացնելու խնդրով երեխաների դաստիարակության նպատակները, բովանդակությունը, մշակելու նրանց հետ աշխատելու մեթոդներ և ձևեր:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Զարգացնելու երեխաների գործունեությունը սոցիալական միջավայրում:
2. Կիրառելու հատուկ ուսուցման սկզբունքները:
3. Ուսումնասիրելու և ընդհանրացնելու հատուկ ուսուցման առաջավոր փորձը:
4. Մշակելու աշխատանքային և մասնագիտական պատրաստության համակարգը, որն անհրաժեշտ է նրանց սոցիալական հարմարեցման և ներառման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Բացահայտելու և հաղթահարելու երեխայի անհատական զարգացման խնդիրները, շտկելու նրանց գործունեության ու վարքի ֆունկցիոնալ խանգարումները:
2. Գնահատելու խնդրով երեխաների ընթացիկ վիճակը՝ մանկավարժական շտկողական ներգործության մեթոդներով և միջոցներով:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Բ1.պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու կրտսեր

դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,
Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,
Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,
Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն,
Գ3.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,
Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ինտերակտիվ քննարկում
3. ստեղծագործական գործունեության արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:
2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հատուկ մանկավարժության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Հատուկ կրթության հիմնախնդիրները, տեխնոլոգիաներն ու մեթոդները: **Թեմա 3.** Հատուկ կարիքով երեխաների սոցիալ-մանկավարժական օգնությունը: **Թեմա 4.** Հատուկ մանկավարժության խնդիրները մտավոր հետամնացության դեպքում: **Թեմա 5.** Խոսքի խանգարումներ: Աշխատանքը խոսքի խանգարումների դեպքում: **Թեմա 6.** Տեսողության խանգարումներ: Աշխատանքը տեսողության խանգարումների դեպքում: **Թեմա 7.** Լսողության խանգարումներ: Աշխատանքը լսողության խանգարումների դեպքում: **Թեմա 8.** Մանկական աուտիզմ **Թեմա 9.** Հենաշարժողական համակարգի խանգարումներ: Հատուկ մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Մանկական ուղեղային կաթված:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Специальная педагогика /Под редакцией Н.М. НАЗАРОВОЙ. — Москва: 2000.
2. Аксенова Л.И., Архипов Б.А., Белякова Л.И. и др. - Специальная педагогика: Учебное пособие для студентов педагогических вузов. - 2001.
3. Басова А.Г., Егоров С.Ф., История сурдопедагогики. - М., 1984.
4. Дефектологический словарь / Гл. рел. А.И.дьячков и др. — М., 1970.
5. Замский Х.С., Умственно отсталые дети: история их изучения, воспитания и обучения с древних времен до середины XX века. — М., 1995.
6. Назарова П.М., Развитие теории и практики дефектологического образования. Сурдопедагог: история, современные проблемы, перспективы профессиональной подготовки. — М., 1992.
7. Обучение детей с проблемами в развитии в разных странах мира: Хрестоматия / Сост. Л.М. Щипицина. —СП6., 1997.
8. Рейсвейк К. Специальное образование в Нидерландах. — 1993.
9. Уорд АЛ. Новый взгляд. Задержка в психическом развитии: правовое регулирование. — Тарту, 1995.
10. Феоктистова В.А. Очерки истории зарубежной тифлопедагогики и практики обучения слепых и слабовидящих детей. — Л., 1973.
11. Хрестоматия по истории тифлопедагогики / Сост. В.А.Феоктистова. — М., 1987.

Կամընտրական դասընթացներ

1.0303/B59	**2.Առաջին բուժօգնություն և երեխայի առողջապահության պահպանման հիմունքներ**	**3.2կրեդիտ**
4.2ժամ/շաբ.	**5.9/9/0**	
6.7-րդ կիսամյակ	**7.Առանց ընթացիկ գնահատման**	
8.Դասընթացի նպատակն է՝ Ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժվածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների		

պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Դասընթացի խնդիրները.

1. զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններնաղետների տուժածներին առաջին օգնություն ցույց տալու,նվիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար,
2. պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակներին պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բժշկա-հիգիենիկ դաստիրակության կանոնները:
2. Թվարկելու երեխայի առողջության պահպանման մեխանիզմները, բնութագրելու դրանց առանձնահատկությունները:
3. Թվարկելու տարբեր վտանգավոր իրավիճակներում տուժածի քննության և առաջին բուժօգնության ձևերը:
4. Թվարկելու երեխաների տարբեր տարիքային խմբերի համար ռիսակային հանդիսացող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները և ներկայացնելու դրանց դեմ պայքարելու ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ցուցադրելու և կիրառելու հիգիենայի պահպանման կանոնները պրակտիկ աշխատանքում:
2. Ցուցադրել առաջին բուժօգնության հնարները (վիրակապում, բեկակալի տեղադրում, ջերմաչափում, պուլսի որոշում) գործնական ստեղծած իրավիճակներում:
3. Համապատասխան վայրերում իրականացնելու տուժածների առաջին բուժօգնություն (ստամոքսի լվացում, հոգնա, այրվածքի մակերեսի և խորության որոշում և այլն):
4. Կազմակերպելու և ցուցաբերելու առաջին օգնություն ցրտահարված տուժածներին:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

1. Անհրաժեշտության դեպքում կիրառելու առաջին բուժօգնության հնարները հասարակական վայրերում:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա7.մատնանշել քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:

Բ1.պլանավորել, կազմակերպել, իրականացնել, ղեկավարել, վերահսկել, գնահատել կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Գ4.գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները: **Թեմա 2.** Վերակենդանացման միջոցառումներ: **Թեմա 3.** Թունավորումներ: **Թեմա 4.** Վնասվածքներ: **Թեմա 5.** Ջերմային խանգարումներ: **Թեմա 6.** Արյունահոսություններ: **Թեմա 7.** Վիրակապություններ: Վիրակապություններ: **Թեմա 8.** Առողջ ապրելակերպի կանոնները: **Թեմա 9.** Ինֆեկցիոն հիվանդություններ: **Թեմա 10.** Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Рожинский М. М, Катовский Г. Б. Оказание доврачебной помощи, Медицина, Москва, 1981.

1.0303/B59	**2.Երեխայի իրավունքները և երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտներ**	**3.2 կրեդիտ**
4.2ժամ/շաբ.	**5.9/9/0**	
6.7-րդ կիսամյակ	**7.Առանց ընթացիկ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ՀՀ-ում անչափահաս երեխայի իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն, նրանց պաշտպանությունը հասարակությունում և պետության մեջ, անչափահասի դերը հասարակությունում և նրա իրավունքներն ու պարտականությունները:

Դասընթացի խնդիրները.

1. բնորոշել ՀՀ երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործող օրենսդրական հիմնական նորմատիվ իրավական ակտերը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Դասակարգելու Մարդու և քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
2. Բացատրելու երեխաների իրավունքների պաշտպանություն առարկայի կապը իրավունքի այլ ճյուղերի հետ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Համադրելու իրավունքի տարբեր ճյուղերի փոխհամագործակցությունը երեխաների իրավունքների պաշտպանության հարցում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատել թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Ա4.մատնանշել ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը.

Բ3.կազմակերպել իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա,

Գ4.գիտակցել անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանել ազգային և համամարդկային արժեքները,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. համագործակցային աշխատանք
3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման քննություն, գնահատվում է 20 միավոր, ներառում է և՛ բանավոր հարցումներ, և՛ գրավոր, ինքնուրույն աշխատանքներ:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրական ակտերը: «Երեխայի իրավուքների մասին» ՀՀ օրենքը: **Թեմա 2.** Երեխայի իրավունքները, դրանց պաշտպանությունը ընտանիքում, հասարակության և պետության կողմից: **Թեմա 3.** Ընտանիք հասկացությունը, կազմը: Ծնողների իրավունքները և պարտականությունները երեխաների նկատմամբ**: Թեմա 4.** Ընտանիքի մյուս անդամների իրավունքները և պարտականությունները երեխաների նկատմամբ**: Թեմա 5.** Անչափահասը քաղաքացիական իրավունքնում, նրա իրավասուբյեկտությունը: Գործունակություն, անգործունակություն, էմանսիպացիա: **Թեմա 6.** Երեխայի իրավունքների պաշտպանությունը խնամակալության, հոգեբարձության մարմինների գործունեության միջոցով: Խնամակալություն, հոգեբարձություն, պատրոնաժ: **Թեմա 7.** Անչափահասը քրեական իրավունքում: Անմեղսունակություն: Անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի տեսակները: **Թեմա 8.** Երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտները, նրանց գործունեության նպատակներն ու խնդիրները: **Թեմա 9.** Երեխայի իրավունքների պաշտպանությունը գործող միջազգային իրավունքի նորմերով: «Երեխայի իրավուքների կոնվենցիան» ընդունված 1989թ. նոյեմբերի 20-ին:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. ՀՀ Սահմանադրություն 27.11.2005թ.
2. Տ.Բարսեղյան, բուհական դասագիրք 1-ին հատոր, Երևան, 2010-2011թթ.

3. Գ.Ղազինյան, Քրեականիրավունք, բուհական դասագիրք, Երևան, 2010-2011թթ.
4. ՀՀ ընտանեկան օրենսգիրք 09.11.2004թ.
5. ՀՀ աշխատանքային օրենսգիրք 09.11.2004թ.
6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք 05.05.1998թ.
7. ՀՀ քրեական օրենսգիրք 18.04.2003թ.

Կամընտրական դասընթացներ

1.0303/B61	**2.Մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ինտեգրված դասընթաց**	**3.2 կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.9/9/0**	
6.7-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մեջ ձևավորել մեթոդական, ստեղծագործական մտածողություն, զարգացնել նրանց ինքնուրույն մտածելու, գործելու կարողությունները, նրանց մեջ սերմանել աշխատանքի ընթացքում ծագող ուսումնադաստիարակչական խնդիրները լուծելու նախադրյալներ, ապահովել ապագա ուսուցիչների բարոյական, տեսական և գործնական պատրաստվածությունը ուսումնական ծրագրերում անհրաժեշտաբար հանդես եկող փոփոխությունների նկատմամբ:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,
5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողըունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու մաթեմատիկայի տարրական դասընթացի կառուցվածքը և բովանդակությունը, I-IV դասարաններում մաթեմատիկայի գործող ծրագրերի բովանդակությունը, առանձնացնելու յուրաքանչյուր դասի հիմնական նպատակները:
2. Առանձնացնելու տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցման մեթոդները և ձևերը, բնութագրելու դրանց առանձնահատկությունները:
3. Ձևակերպելու աշակերտների մաթեմատիկական գիտելիքներին, կարողություններին և ունակություններին ներկայացվող պահանջներն ու սահմանելու գնահատման նորմերը;
4. Ներկայացնելու արտադասարանական աշխատանքի ձևերը և ձևակերպելու նրանց ներկայացվող պահանջները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընտրելու և կազմելու անհրաժեշտ մասնագիտական գրականության ցանկ:
2. Ուսումնասիրելու և վերլուծելու մանակավարժական առաջատար փորձը, ընտրելու ուսուցման ռացիոնալ մեթոդներ:
3. Կազմակերպելու արտադասարանական աշխատանքներ, ուսուցման տարբեր փուլերում ղեկավարելու աշակերտների ինքնուրույն աշխատանքը:
4. Վերլուծելու և լուծելու մաթեմատիկայի տարրական դասարաններում ընդգրկված բոլոր խնդիրները, նաև դժվարագույն և հետաքրքրաշարժ խնդիրները, որոնց մեծ մասը տեղակայված է դասագրքերի վերջում:
5. Ընտրելու վարժությունների և խնդիրների այն համակարգը, որը պետք է օգտագործվի նոր նյութի ուսուցման և ամրապնդման համար:
6. Պատրաստելու ոչ բարդ զննական պարագաներ և նույնը սովորեցնելու աշակերտներին:
7. աշակերտների մեջ ձևավորելու մաթեմատիկական լեզու:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու բանավոր և գրավոր հարցման տարբեր ձևերը և պահպանելու ներկայացվող պահանջները:

2. Գրելու ռեֆերատ և կուրսային աշխատանքներ մաթեմատիկայի դասավանդման մեթոդների և ձևերի վերաբերյալ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա3.սահմանել երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Բ6.տարբերակել դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:

Գ1. իրականացնել մասնագիտական գործունեություն:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում
2. զրույց
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բազմության տեսության տարրերի ոչ բացահայտ պրոյեկտումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթաց: ***Թեմա 2.*** Ֆունկցիոնալ առնչության տարրերի պրոյեկտումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթաց: ***Թեմա 3.*** Մաթեմատիկական տրամաբանության տարրերի ներառումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթաց: ***Թեմա 4.*** Ստոխաստիկայի տարրերի ներառումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթաց: ***Թեմա 5.*** Երկրաչափության տարրերի ներառումը տարրական դասարանների մաթեմատիկայի դասընթաց:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

1.0303/B61	**2.Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում**	**3.2 կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5.9/9/0**	
6.7-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ՄՏԴ-ում ուսուցանվող կարևորագույն մեծությունների, ինչպես նաև հանրահաշվական և երկրաչափական նախագիտելիքների ուսումնասիրման մեթոդիկաներին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. մաթեմատիկա գիտությունից տարրական դասարաններում ուսուցանվող նյութի ընտրություն,
2. տարրական դասարանների համար մաթեմատիկայի ծրագրերի մշակում,
3. ուսուցանվող նյութերի ուսուցման մեթոդների մշակում և դրանց ընտրություն,
4. աշակերտների հետ մաթեմատիկայի ուսուցման նպատակով տարվող աշխատանքի ձևերի մշակում,

5. ուսուցման և դաստիարակության կատարելագործված մեթոդների մշակում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու մաթեմատիկական սխալների առաջացման պատճառները, ներկայացնելու դրանց կանխարգելման ու հաղթահարման ուղիներին վերաբերող մեթոդները:
2. Մաթեմատիկայի դասավանդման ավանդական ու ժամանակակից մեթոդների կիրառմամբ բացահայտելու սխալների առաջացման պատճառները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մաթեմատիկայի դասավանդման ավանդական ու ժամանակակից մեթոդների կիրառմամբ ուղղելու սխալները:
2. Կիրառելու սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները խնդիրները լուծելու ժամանակ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Մասնագիտական միջավայրում ներկայացնելու և վերլուծելու տարական դպրոցի մաթեմատիկայի դասընթացի խնդիրների լուծման ժամանակ տարածված սխալները, առաջարկելու դրանց հաղթահարման մոտեցումներ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Ա2.բացատրել կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները,

Ա5.ներկայացնել հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դիտում,
2. զրույց,
3. գրավոր աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն,
4. մանկավարժամեթոդական գիտափորձ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները տարրական դասարանների մաթեմատիկայի դասավանդման գործընթացում: **Թեմա 2.** Բնորոշ սխալները թվաբանական գործողությունների ուսուցման գործընթացում: **Թեմա 3.** Բնորոշ սխալները մեծությունների ուսուցման գործընթացում: **Թեմա 4.** Բնորոշ սխալները գործողությունների կատարման կարգի ուսուցման ընթացքում: **Թեմա 5.** Բնորոշ սխալները երկրաչափական նախագիտելիքների ուսուցման գործընթացում: **Թեմա 6** Բնորոշ սխալները խնդիրների լուծման գործընթացում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Իսկանդարյան Ս.Ա., Իսկանդարյան Ս.Ս., «Տարրական դասարաններում թվաբանական գործողությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 136 էջ:
2. Իսկանդարյան Ս.Ս., Իսկանդարյան Ս.Ա., «Տարրական դասարաններում մեծությունների ուսուցման մեթոդիկան»: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան: «Զանգակ», 2014թ., 78 էջ:
3. Գործնական առաջադրանքներ, ՏԴՄՈՒՄ, 2-րդ կուրս, ամբիոնի ձեռնարկ:
4. Ս.Ա.Իսկանդարյան, Ս.Ս.Իսկանդարյան, «Տարրական դպրոցում տեքստային խնդիրների ուսուցումը»: Երևան «Զանգակ-97», 2010.
5. Истомина Н.Б., «Методика обучения математике в начальных классах». -М., LINKA-PRESS, 1997.
6. Տարրական դպրոցի «Մաթեմատիկա» դասընթացի դասագրքերը (1-4-րդ դասարաններ):

Կամընտրական դասընթացներ

1.0303/B60	2.Գործնական գրությունների ուսուցում	3.2 կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.9/9/0	
6.7-րդ կիսամյակ	7.Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հայերենի գործնական գրությունների տեսակներին՝ նամակ, արտագրություն, դիմում, կենսագրություն և այլն։

Դասընթացի խնդիրները.

1. ուսանողներին ներկայացնել գործնական գրությունների առանձնահատկությունները,
2. բացատրել նրանց բաղադրիչների ձևակերպման ձևերը,
3. մշակել գործնական գրություններ շարադրելու կարողություններ։

9.Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ձևակերպելու և ներկայացնելու հայերենի գործնական գրությունների համակարգը։
2. Մեկնաբանելու գործնական գրություններ գրելու կրտսեր դպրոցականի կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը։
3. Ճիշտ գործածելու գործնական գրությունների բովանդակության բաղադրիչներն ու բառապաշարը։

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Գրելու տարաբնույթ գործնական գրություններ՝ պահպանելով ակադեմիական գրագիտության կանոնները։
2. Կրտսեր դպրոցականներին սովորեցնելու տարրական դասարանների մայրենիի ծրագրով նախատեսված գործնական գրութոյուններ գրելու կարողություններ։

գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ

1. Մշակելու հիմնախնդրի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկույթը։

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները

Ա1.ներկայացնել մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները,

Բ2.լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, կայացնել որոշումներ,

Բ5.մեկնաբանել սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորել կայուն հետաքրքրություն,

Գ2.գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը,

Գ5.արդյունավետորեն շփվել և համագործակցել ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ակտիվ դասախոսություն
2. խոսքային կամ բանավոր մեթոդ
3. համագործակցային աշխատանք
4. սահիկաշարի գործածություն
5. մտագրոհ
6. ռեֆերատներ։

3. Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին:
4. Ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:
3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:
2. Զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:
3. Զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2**. Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4**. Տրամաբանության օրենքները: **Թեմա 5**. Մտահանգում: **Թեմա 6**. Ապացուցում և հերքում: **Թեմա 7**. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՍ

Պարտադիր դասընթացներ

1. 0303/B20	**2. ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա**	**3. 5 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/ շաբ.	**5. 45/0/15**	
6. 1-ին կիսամյակ	**7. Եզրափակիչ գնահատումով**	

8 Դասընթացի նպատակն է՝ ձևավորել կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքային առանձնահատուկությունների և գործառույթների, բարձրագույն նյարդային գործունեության հիմնական օրինաչափությունների վերաբերյալ լիարժեք մասնագիտական գիտելիքներ, ինչպես նաև դրանց գործնական կիրառման կարողություններ և հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և մեկնաբանելու մարդու կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքագործառնական հիմքերը, գործառնության մեխանիզմները:
2. Ներկայացնելու և քննարկելու մարդու կենտրոնական նյարդային համակարգի ֆիլո- և օնտոգենեզը:
3. Վերլուծելու միջնորդանյութերի դերը ԿՆՀ-ի գործառնության մեջ:
4. Սահմանելու բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմները և օրինաչափությունները:
5. Սահմանելու նոր կոնցեպտուալ մոտեցումները գիտական հիմնախնդիրների լուծման ժամանակ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու ստացած գիտելիքները նորմայում և ախտաբանության մեջ հոգեկանի ուսումնասիրման ժամանակ:
2. Կապ հաստատելու օրգանիզմի նյարդային համակարգի կազմավորման և ֆիզիոլոգիական գործընթացների միջև:
3. Բացատրելու տարբեր հոգեկան վիճակների, հատկությունների և գործընթացների ուղեղային ապահովման առանձնահատկությունները:
4. Որոշելու կենտրոնական նյարդային համակարգի գործունեության խանգարումների ուղեղային բաժինների ախտահարումները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու նյարդային համակարգի գործառույթների ուսումնասիրման մեթոդները և հնարքները,
2. Կիրառելու ԿՆՀ-ի և ԲՆԳ-ի գործառնության վերաբերյալ տեղեկության հավաքագրման, մշակման և պահպանման մեթոդները:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա4.Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առընչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ3.Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ1.Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ5.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. գործնական պարապմունք
4. տեսանյութերի դիտում
5. գրականության ինքնուրույն վերլուծություն,
6. բանավոր զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր.*

Գնահատման մեթոդ. ամփոփ տրամաբանական պատասխաններ հարցերին՝ գրավոր կերպով, թեստային աշխատանք:

Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն:

2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր.*

Գնահատման մեթոդ. ամփոփ տրամաբանական պատասխաններ հարցերին գրավոր կերպով, թեստային աշխատանք

Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը *10 միավոր..*

Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:

Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ներածություն: ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա առարկան: ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա առարկայի նպատակը և խնդիրները: Նյարդային համակարգի զարգացումը ֆիլո- և օնտոգենեզում: Նեյրոնի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Սինապս, կառուցվածքը, տեսակները, սինապսում նյարդային ազդակի փոխանցման մեխանիզմները: Ռեֆլեկտոր աղեղի կառուցվածքը: Միջնորդանյութերը և դրանց դասակարգումը: Միջնորդանյութերի դերը հոգեկանի գործառնության մեջ:

Բաժին 2. Կենտրոնական նյարդային համակարգի բաժինների կառուցվածքագործառնական առանձնահատկությունները: ԿՆՀ-ի բաժինների կառուցվածքը, դրանց միջև առկա կառուցվածքային և ֆունկցիոնալ կապերը, ախտահարման ժամանակ առաջացած խանգարումները: Ողնուղեղի կառուցվածքագործառնական առանձնահատկությունները՝ ողնուղեղի գորշ նյութի կառուցվածքը և ֆունկցիաները, սպիտակ նյութը (կպուկային, զուգորդական և պրոյեկցիոն նյարդաթելերի ընթացքը և դերը): Գլխուղեղի կառուցվածքը: Երկարավուն ուղեղի կառուցվածքագործառնական առանձնահատկությունները: Երկարավուն ուղեղի գործառնության հոգեբանական և ֆիզիոլոգիական դրսևորումները: Ուղեղիկի կառուցվածքը և դրա խանգարումները: Միջին ուղեղի կառուցվածքը և գործառնությունը: Միջանկյալ ուղեղի կառուցվածքը: 12 զույգ գանգուղեղային նյարդերի տեղդրությունը, գործառույթները: Գլխուղեղի մեծ կիսագնդերի կառուցվածքը, դրա ֆունկցիոնալ բեռնվածությունը:

Բաժին 3. ԲՆԳ ֆիզիոլոգիայի ուսումնասիրության մեթոդոլոգիա նյարդային համակարգի ռեֆլեկտոր գործունեությունը, պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսների առանձնահատկությունները, պայմանական և ոչ պայմանական արգելակում և դրանց դերը հոգեկանի գործառնության մեջ: Պայմանառեֆլեկտոր գործունեության օրինաչափությունները: Պայմանական ռեֆլեքսների գոյացման մեխանիզմները: Ուղեղի ինտեգրատիվ գործունեություն: Վարքի ձևերը: Վարքի կազմակերպման գործոնները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Щербатых Ю.В., Туровский Я.А. Анатомия центральной нервной системы для психологов: Учебное пособие.СПб.: Питер, 2007. 128 с.
2. Плотникова М. В. Анатомия центральной нервной системы : учеб. Пособие. Тюмень: Изд-во ТюмГУ, 2009, 188 с
3. Анатомия, физиология, психология человека : краткий иллюстрированный словарь/ ред. А.С.Батуев. Санкт-Петербург: Питер, 2005, 256 с.
4. Tortora, G.J., Derrickson, B. *Principles of Anatomy and Physiology (15th edition).* Publisher.J. Wiley, 2016
5. Դասախոսությունների տեքստեր և մեթոդական ուղեցույց նկարներով՝ էլեկտրոնային կրիչով:

1. 0303/ B21	**2. Մասնագիտության ներածություն**	**3. 2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/ շաբ.	**5. 30/0/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. Առանց ընթացիկ գնահատման**	

8. Դասընթացի նպատակն է՝

- իրազեկել ուսանողին ուսումնական գործունեության առաձնահատկությունների մասին, նպաստել հոգեբանության բնագավառում գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը:
- ուսանողներին ծանոթացնել հոգեբանության գիտական հիմունքներին, տեսություններին և հիմնական բնագավառներին, զարգացման ժամանակակից միտումներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու հոգեբանի մասնագիտական գործունեության բովանդակությունը, առանձնահատկությունները,
2. տարբերակելու ուսումնական գործունեության ձևերը, բովանդակությունը, պահանջները և տրամաբանությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ճանաչելու արդի հոգեբանության հիմնադրույթները և հասկացությունները,
2. վերլուծելու հոգեբանության տարբեր բնագավառներում գիտելիքների ձեռքբերման ուղիները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կազմակերպելու իր ուսումնական գործունեությունը ինչպես լսարանային պայմաններում, այնպես էլ ինքնուրույն ուսումնական և հետազոտական աշխատանքներում:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա4. Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առընչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ4. Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:

Գ1. Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները

1. դասախոսություն,
2. քննարկում,
3. ինքնուրույն աշխատանքներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման քննությունը գնահատվում է 20 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Հոգեբանության զարգացման համառոտ պատմությունը, փուլերը: Ժամանակակից հոգեբանության ուղղությունները: **Թեմա 2**՝ Հոգեբանության որպես գիտություն զարգացման նախապայմանները և հիմնական փուլերը: **Թեմա 3**՝ Հոգեբանության ուսումնասիրման առարկան և խնդիրների շրջանակը: **Թեմա 4**՝ Հոգեկանի կառուցվածքը՝ հոգեկան հատկություններ, վիճակներ, գործընթացներ: **Թեմա 5**՝ Հոգեբանական հետազոտության մեթոդները և մեթոդիկաները: **Թեմա 6**՝ Հոգեբանության բնագիտական հիմքերը: Հոգեբանության սոցիալական և հումանիտար հիմքերը: **Թեմա 7**՝ Անձի կառուցվածքը: Անձի տեսությունները: **Թեմա 8**՝ Հոգեբանության հիմնական բնագավառները, զարգացման ժամանակակից միտումները: **Թեմա 9**՝ Հոգեբանության հիմնական սկզբունքները (դետեզմինիզմի, զարգացման, ակտիվության): **Թեմա 10**՝ Հոգեկանի էվոլյուցիոն զարգացում: Հոգեկանի զարգացման փուլերը ֆիլոգենեզում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ.Մ., Հովհաննիսյան Ս.Վ., Հովհաննիսյան Հ.Ռ., Ասրիյան Է.Վ., Հոգեբանություն (դեմքեր, փաստեր): Ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
2. Климов Е.А., Психология как профессия. М.: МГУ, 2009
3. Маклаков А.Г. Общая психология. – СПб. :Питер, 2006. – 583с.
4. Introduction to Psychology// <u>https://ocw.mit.edu/ans7870/9/9.00SC/MIT9_00SCF11_text.pdf</u>

1. 0303/ B22	2. Իմացական գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-1	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/ շաբ.	5.60/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝

1. Ձևավորել պերցեպտիվ գործընթացների և ուշադրության հոգեբանական առանձնահատկությունների, հիմնական տեսական և կիրառական մոտեցումների և հայեցակարգերի վերաբերյալ ամբողջական պատկերացումներ:
2. Ընդլայնել և լրացնել գիտելիքները պերցեպտիվ գործընթացների և ուշադրության, որպես հոգեբանական երևույթների, զարգացման, օրինաչափությունների, տեսակների, առանձնահատկությունների և ուսումնասիրման մեթոդների մասին:
3. Զարգացնել մեթոդոլոգիական գիտելիքները, որը թույլ կտա ուսանողին համադրել անհատական մոտեցումները ընդհանուր, համակարգային մոտեցումների հետ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Մեկնաբանելու զգայության, ընկալման, ուշադրության հոգեբանության հիմնական տեսական (դասական և ժամանակակից) մոտեցումները:
2. Ներկայացնելու և վերարտադրելու պերցեպտիվ գործընթացների հայրենական և արտասահմանյան հեղինակների կողմից մշակված տեսական և կիրառական հիմքերը:
3. Վերլուծելու պերցեպտիվ գործընթացների և ուշադրության վերաբերյալ հիմնարար գրականությունը:
4. Քննարկելու զգայության, ընկալման, ուշադրության հոգեբանության հիմնական փորձարարական մոտեցումները, հիմնական ուղղությունները, առաջադրանքներն ու խնդիրները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճանաչելու և մեկնաբանելու պերցեպտիվ գործընթացների և ուշադրության հոգեբանական առանձնահատկությունները, օրինաչափությունները, հիմնական օրենքները:
2. Քննարկելու զգայության, ընկալման և ուշադրության ծագումնաբանական խնդիրները:
3. Տարբերակելու նրանց բնութագրող հիմնական հասկացութային համակարգը:
4. Ինքնուրույն իրականացնելու ուսումնասիրություններ՝ փորձարարական ճանապարհով:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պատրաստելու բանավոր զեկուցումներ պերցեպտիվ գործընթացների հոգեբանությանը վերաբերող լրացուցիչ գրականությունից:
2. Վերլուծելու և եզրակացություններ կատարելու պերցեպտիվ գործընթացների տեսական դրույթների, և գործնական ու կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:
3. Կիրառելու գիտելիքները հոգեբանական այլ գործընթացների և երևույթների դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների և պատճառահետևանքային կապերի բացահայտման համար:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա3.Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները:

Բ1.Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

Գ5.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն՝ տեսական նյութի մատուցում
2. սեմինար պարապմունք, մենագրությունների ինքնուրույն ընթերցանություն և խմբային քննարկում
3. գործնական պարապմունք և ինքնուրույն կատարած հետազոտությունների ներկայացում
4. գրականության ինքնուրույն վերլուծություն և բանավոր զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր.*

Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով և թեսթային աշխատանք:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն:

2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր..*

Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով և թեսթային աշխատանք:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.*

Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:

Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ներածություն: Հոգեկանի կառուցվածքը: **Բաժին 2.** Զգայություն: **Բաժին 3**□ Ընկալում: **Բաժին 4.** Ուշադրություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Գրին Է.Ա., Հոգեբանությունը իրավապահ գործունեու թյունում. - Եր. Զանգակ-97, 2007. - 144 էջ
2. Годфруа Ж., Что такое психология. Т. 2, М. Мир, 1992., 376 с.
3. Рубинштейн С.Л., Основы общей психологии. – СПб.: Питевр, 2002. 700 с.
4. Фаликман М.В., Внимание. М. АСАДЕм 2006. - 455 с.
5. Шифман Х., Ощущение и восприятие, 5-е изд. - СПб.: Питер, 2003.-928 с.

1. 0303/ B23	2. Անձնային աճի պրակտիկում	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/ շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ծանոթացնել ուսանողներին «հասուն անձ», «անձնային աճ» հասկացությունների էությանը, բավանդակությանը,
2. տրամադրել գիտելիքներ ինքնակարգավորման էության, նպատակների և նպաստող գործոնների վերաբերյալ,
3. իրազեկել անձնային աճին նվիրված թրենինգների բովանդակային կողմերին, նպատակներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու «Անձնային աճ» հասկացությունը, ներկայացնելու «Անձնային աճ» հասկացության ծագման պատմությունը, մեկնաբանելու դրա էությունը, բնութագրելու հիմնական գործոնները,
2. բացատրելու ինքնակարգավորման առանցքային կողմերը և հմտությունները,
3. քննարկելու անձնային աճին ուղղված հանդիպումների կազմակերպման էական առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պլանավորելու, կազմելու անձնային աճին ուղղված հանդիպումներ,
2. կազմակերպելու և իրականացնելու անձնային աճին ուղղված առանձին վարժություններ տարիքային տարբեր խմբերում,
3. վերլուծելու և կարգավորելու սեփական մտքերն ու հույզերը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կիրառելու ինքնակարգավորման և անձնային աճին ուղղված հմտությունները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U5. Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը:

Բ4. Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:
Բ5.Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործնական գիտելիքներին համապատասխան:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. գործնական վարժանքներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.*
Գնահատման մեթոդ՝ ամփոփ վերլուծական գրավոր պատասխաններ հարցերին,
Գնահատման չափանիշները՝ նյութի ինքնուրույն վերլուծություն, պատասխանների ամբողջականություն
2-րդ ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.*
Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (գործնական առաջադրանքի իրականացում և վերլուծություն),
Գնահատման չափանիշները՝ կատարված աշխատանքի համապատասխանությունը առաջադրված նկարագրիչներին, ռեֆլեքսիայի և ինքնավերլուծության առկայություն

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1՝ Անձ, անձնային աճ, հասուն անձ, ինքնակարգավորում: Հասուն անձի էական բնութագրիչները: Հասուն անձի իմացական, հուզական և վարքային բաղադրիչների նկարագիրը: Անձնային աճ հասկացության պատմական հիմքերը: Անձնային աճի հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները: Անձնային աճի ներանձային և միջանձնային գործոնները:
Բաժին 2՝ Անձնային աճին նպաստող հանդիպումների կառուցվածքը, խմբային աշխատանքների օրինակներ: Անձնային աճին նվիրված խմբեր: Անձնային աճի խմբերի կազմակերպման սկզբունքները: Անձնային աճի խմբերի հանդիպումների կառուցվածքը, նպատակները:
Բաժին 3՝ Գործնական հանդիպումներ և վարժանքներ՝ սեփական ռեսուրսների բացահայտում և ճանաչում, ադեկվատ ինքնագնահատականի կառուցում, ինքնագիտակցության բաղադրիչների վերակառուցում, հուզական ինքնակարգավորման հմտությունների, ամբողջական Ես-կերպարի, կենսական լավատեսության և դրական ինքնընկալման ձևավորում:

14. **Հիմնական գրականության ցանկ**.

1. Зайцева Т.В., Теория психологического тренинга. Психологический тренинг как инструментальное действие. Спб.: Речь, М.: Смысл, 2002.
2. Карелин А., Большая энциклопедия психологических тестов. Изд. Эксмо, 2007.
3. Рамедник Д.М՝, Тренинг личностного роста: Учебное пособие. – М.: ФОРУМ: ИНФРА –М, 2007.
4. Шевцова И.В.,Тренинг личностного роста, СПб.: Речь, 2003.
5. http://www.essentiallifeskills.net/personaldevelopmentarticles.html

1. 0303/ B24	**2. Խմբային գործընթացների հոգեբանություն և պրակտիկում-2**	**3. 6 ECTS կրեդիտ**
4. 6 ժամ/շաբ.	**5. 60/30/0**	
6. 2 –րդ կիսամյակ	**7. եզրափակիչ գնահատումով**	

8. **Դասընթացի նպատակն է՝**

1. ուսանողներին ծանոթացնել կոգնիտիվ գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը,
2. ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները,
3. ծանոթացնել դրանց փորձարարական ուսումնասիրման եղանակներին և հիմնական արդյունքներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու կոգնիտիվ գործընթացների աշխատանքի առանձնահատկությունները,
2. ներկայացնելու և վերլուծելու կոգնիտիվ ոլորտի զարգացման օրինաչափությունները,
3. գտնելու և բացատրելու կոգնիտիվ ոլորտի նորագույն հոգեբանական տեսությունները և այդ ոլորտում կատարված ուսումնասիրությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ուսումնասիրելու և վերլուծելու կոնկրետ անհատի կոգնիտիվ ոլորտի անհատական

առանձնահատկությունները,
2. կազմելու և իրականացնելու կոգնիտիվ գործընթացների ուսումնասիրման հոգեբանական հետազոտական ծրագրեր,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու կոգնիտիվ տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ,
2. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալել և տարածել նոր տեղեկատվությունը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1 Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2 Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա4 Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առընչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ1 Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2 Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ3 Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասընթացի յուրացումը իրականանում է միմյանց միջև փոխադարձ պարապմունքների և կրթության ձևերի միջոցով, որոնց թվին են պատկանում դասախոսությունները, պրակտիկ պարապմունքները, ուսանողների ինքնուրույն աշխատանքը, յուրացման այլ ակտիվ մեթոդներ, պրակտիկ առաջադրանքների իրականացում, գործնական խաղեր, խմբային քննարկումներ:
2. Կարևոր տեղ է հատկացվում ուսանողների ինքնուրույն աշխատանքին, որը ներառում է անցած նյութի կրկնություն՝ կոնսպեկտներով, յուրաքանչյուր թեմայի գրականության հետ ծանոթացում, այդ թվում նաև համացանցի օգնությամբ խմբային քննարկումներին նախապատրաստում:
3. Առարկայի դասավանդումը ենթադրում է նաև ժամանակակից բազմաթիվ գործնական հնարների և մեթոդների մատուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն առավելագույնը՝ 5 միավոր, 25 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

2-րդ ընթացիկ քննություն առավելագույնը՝ 5 միավոր, 20 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

Եզրափակիչ քննություն առավելագույնը՝ 10 միավոր, 50%:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է բանավոր՝ համաձայն անցած թեմաների կազմված հարցաշարի հարցերին ուսանողների բանավոր պատասխանների միջոցով:

13. Դասընթացը և սեմինարները բաղկացած են հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1 Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության ֆենոմենոլոգիան: Հիշողության կազմակերպումը. հիմնական մոտեցումներն ու տեսությունները: Հիշողության դասակարգումը, տեսակները, ձևերը: **Թեմա 2** Հիշողության եռաբաղադրիչ մոդելը կառուցվածքը և գործընթացները: Հիշողության տարիքային առանձնահատկությունները, զարգացումը: Մնեմոտեխնիկաներ: **Թեմա 3** Մտածողության հասկացությունը: Մտածողության տեսակները: Մտածողության տեսությունները: Մտածողություն և գիտելիք: **Թեմա 4** Դրդապատճառները և հույզերը մտածողական գործունեությունում: Մտածողության անհատական առանձնահատկությունները: **Թեմա 5** Զարգացման սկզբունքը մտածողության հոգեբանությունում: Ինտելեկտի հիմնախնդիրը: **Թեմա 6** Լեզու եւ խոսք: Խոսքի տեսությունները: **Թեմա 7** Երևակայությունը որպես ճանաչողական գործընթաց: Երևակայության տեսությունները: Երևակայության զարգացումը և նրա գնահատումը: Երևակայության դերը ստեղծագործական

աշխատանքում:

Գործնական աշխատանքների թեմատիկ պլան

1. Կարճատեւ հիշողության ծավալի ուսումնասիրում (Ջեկոբսի մեթոդը):
2. Օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրում:
3. Ոչ կամածին եւ կամածին մտապահման արդյունավետության ուսումնասիրումը (Պ.Զինչենկոյի մեթոդիկան):
4. Անմիջական եւ միջնորդավորված մտապահման ուսումնասիրումը:
5. Պիկտոգրամմաների մեթոդը:
6. Մտապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության ուսումնասիրումը:
7. Մտապահման կախվածությունը անձի դիրքորոշումներից:
8. Հիշողության մեջ պահպանման ժամանակ նյութի որակական փոփոխությունների ուսումնասիրումը:
9. Մտածողական գործընթացների ռիգիդության ուսումնասիրումը (նախկինի փորձի ազդեցությունը խնդրի լուծման միջոցի վրա):
10. Ակնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրում («Պիկտոգրամմա» մեթոդիկան):
11. Ստեղծագործական եւ վերարտադրողական մտածողության ուսումնասիրում (դիրքորոշման ազդեցությունը մտածողական գործունեության յուրահատկության վրա):
12. Արտիկուլյար խոչընդոտների առկայության պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում:
13. Պատկերացումներ եւ երեւակայություն:
14. Երեւակայության արդյունավետության ուսումնասիրում:
15. Երեւակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:
16. Ստեղծագործական երեւակայության ուսումնասիրում

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии.-СПБ.; Питер, 2002
2. Надлер Дж., Хибино М., Фаррелл Дж. Мышление полного спектра. Минск, Попурри,2001
3. Психология памяти. Под ред. Ю. Б. Гиппенрейтер, В.Ф. Спиридонова М.;Астерь,2008
4. Хозиев В. Б. Практикум по общей психологии; Учебное пособие для студ. Высш. Учебн,заведений. М, Академия,2003
5. Philip Quinlan, Philip T. Quinlan, Ben Dyson. 2008. *Cognitive Psychology*. Publisher-Pearson/Prentice Hall.

1. 0303/ B25	**2. Հոգեբանության պատմություն**	**3. 5 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/ շաբ.	**5. 45/0/15**	
6.2-րդ կիսամյակ	**7. եզրափակիչ գնահատումով**	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ներկայացնել ուսանողներին առարկայի հիմնախնդիրներն ու բովանդակությունը, հոգեբանության գիտության զարգացման ուղին,
2. ներկայացնել հոգեկանի՝ որպես հոգեբանության ուսումնասիրության առարկայի զարգացումը պատմական տարբեր ժամանակաշրջաններում,
3. ծանոթացնել այն կարևորագույն հարցերին, որոնք առնչվում են հոգեբանության գիտության ձևավորմանը, զարգացման ընթացքին, կառուցվածքին, ինչպես նաև ժամանակակից հայեցակարգերին, միջառարկայական և միջբնագավառային նշանակությանը, հայ հոգեբանական մտքի զարգացմանը:
4. վերլուծել և ներկայացնել նաև հոգեբանության գիտության զարգացումը Հայաստանում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ճանաչելու հոգեբանության գիտության նախահիմքերը, բնութագրելու հոգեբանության գիտական համակարգը, ներկայացնելու վերջինիս կառուցվածքը, խնդիրները և մեթոդները,
2. մեկնաբանելու հոգեբանական տեսությունները, դպրոցների, ուղղությունների, նրանց հայեցակարգերի և տեսական հայացքների դրույթները,
3. ներկայացնելու հոգեկանի ծագման և զարգացման հիմնախնդիրը, հոգեկանի ուսումնասիրության էմպիրիկ կողմը, փորձարարական ուղին և հետազոտական բնույթը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու վերլուծահամադրական աշխատանքներ իրենց մասնագիտության համար,
2. մեկնաբանելու հոգեկանի կառուցվածքը, հոգեկան երևույթները, գործընթացները և հատկությունները իրենց պատմական զարգացման ընթացքում,
3. իրականացնելու ուսումնասիրություններ հոգեբանության տեսությունների և մոտեցումների,

փորձարարական ուսումնասիրության վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

9. մշակելու հոգեբանության մասնագիտական գրականություն, պատրաստելու բանավոր զեկուցում և վարելու գիտական բանավեճ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա4. Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առընչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում,

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. քննարկում,
4. բանավեճ,
5. գրականության ինքնուրույն վերլուծություն *և բանավորզեկուցում:*

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. առանց եզրափակիչ գնահատման

1-ին ընթացիկ քննություն՝ (առավելագույնը՝ 5 միավոր, 25 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

2-րդ ընթացիկ քննություն՝ առավելագույնը՝ 5 միավոր, 20 %:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

Եզրափակիչ քննություն ՝ առավելագույնը՝ 10 միավոր, 50%:

Գնահատման մեթոդ. Իրականացվում է բանավոր՝ համաձայն անցած թեմաների կազմված հարցաշարի հարցերին ուսանողների բանավոր պատասխանների միջոցով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Անտիկ շրջան և միջնադարյան հոգեբանություն՝ հոգեբանության փիլիսոփայական հիմքերը: **Թեմա 2**՝ Միջնադար՝ գիտակցության հիմնախնդիրները և արաբական փիլիսոփայության զարգացումը: **Թեմա 3**՝ Վերածննդից հետո մինչև նորագույն շրջան՝ հոգեբանության գիտության զարգացման և ձևավորման ամփոփում: **Թեմա 4**՝ Նորագույն շրջան՝ հոգեբանության ժամանակակից ուղղությունները:

Բոլոր այս բաժիններում առանձնակի տեղ է հատկացվում հայ հոգեբանական մտքի զարգացմանը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հոգեբանություն (Դեմքեր, փաստեր): Խմբ. Հ. Ավանեսյան, Եր.: 2010
2. Հայ հոգեբանների միջազգային ներուժը, ԵՊՀ, Ե.: 2015, 75էջ
3. Лучинин А.С., История Психологии, изд. Экзамен, М.: 2005, 288с
4. Ярошевский М.Г., История психологии.— 3-е изд.— М., 1985
5. Петровский А.В., Ярошевский М.Г., История и теория психологии: В 2 т. Ростов н/Д., 1996, 416

1. 0303/ B26	**2. Մարդաբանություն և համեմատական հոգեբանություն**	**4 կրեդիտ**
4. 4 ժամ/ շաբ.	**5. 45/0/15**	
6. 2-րդ կիսամյակ	**7. առանց եզրափակիչ գնահատման**	

8. Դասընթացի նպատակն է՝

1. ծանոթացնել ուսանողներին բանական մարդու ծագման, հոգեկանի առաջացման և զարգացման էվոլյուցիային, մարդաբանության ուսումնասիրման բաժիններին, անթրոպոգենեզի վարկածներին, զոոհոգեբանության և էթոլոգիայի հետազոտությունների ժամանակակից վերլուծություններին,
2. փոխանցել գիտելիքներ մարդու ֆիլոգենետիկական և օնտոգենետիկական զարգացման, հոգեկան ընդունակությունների առաջացման օրինաչափությունների, պերցեպտիվ հոգեկանի, ինտելեկտի և

անհատական կազմավորման, մարդու և կենդանիների հոգեկան
3. գործընթացների որակական տարբերությունների վերաբերյալ,
4. ծանոթացնել կենսասոցիալական տեսանկյունից մարդու և կենդանիների էվոլյուցիայի վարքային առանձնահատկությունների դրսևորումների տարբերություններին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանել և մեկնաբանել մարդու և կենդանիների վարքի դրսևորումները էվոլյուցիոն հոգեբանության տեսանկյունից,
2. ներկայացնել և քննարկել համեմատական հոգեբանության զարգացման ժամանակակից միտումները և ուսումնասիրվող հիմնախնդիրները,
3. թվարկել և բացատրել հոգեկանի զարգացման մակարդակները՝ ստորակարգ կենդանիներից մինչև մարդ
4. քննարկել կենդանիների վարքի ուսումնասիրման տարբեր տեսությունների սահմանափակումները և կիրառական նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծել և համեմատել ստորակարգ և բարձրակարգ կենդանիների հոգեկան դրսևորումների առանձնահատկությունները,
2. տարանջատել կենդանիների վարքի ուսումնասիրման հիմնական բնութագրիչները պերցեպտիվ հոգեկանի զարգացման տարբեր փուլերում
3. ձևակերպել մարդու և կենդանիների հոգեկան գործունեության ուսումնասիրման մեթոդաբանությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստել բանավոր զեկուցում և ակնարկ (էսսե), գիտական քննարկումներ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները:

Բ3.Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. քննարկում,
4. գրականության ինքնուրույն վերլուծություն և բանավոր զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են

1-ին ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.

Գնահատման մեթոդ՝ ամփոփ վերլուծական գրավոր պատասխաններ հարցերին,

Գնահատման չափանիշները՝ նյութի ինքնուրույն վերլուծություն, պատասխանների ամբողջականություն:

2-րդ ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը 10 միավոր.

Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (ռեֆերատ, ակնարկ՝ էսսե),

Գնահատման չափանիշները՝ կատարված աշխատանքի թեմատիկ համապատասխանությունը և ինքնուրույն վերլուծությունը:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Կյանքի ծագման վարկածները: Մարդաբանության պատմական ակնարկ: Սոցիալական մարդաբանություն: Ինտելեկտի ձևավորումը: Հոգեկանի էվոլյուցիան: Մարդու էվոլյուցիայի հիմնական փուլերը: Մարդու կազմավորման գնահատման մեթոդները: Անթրոպոիդների սոցիալական վարքը: Աքսելերացիայի զարգացման հիմնախնդիրը և կենսաբանական տարիքի չափորոշիչները: Նյութական մշակույթը և կենսաբանական օրինաչափությունները: Էթնիկական մարդաբանություն:

Բաժին 2. Համեմատական հոգեբանության կենսաբանական հիմունքները: Հմտությունների ձևքվորումը կենդանիների մոտ: Կինեզներ և տաքսիսներ: Կենդանիների զգայության և ըմբռնման ուսումնասիրման մեթոդները: Կենդանիների վարքը և հաղորդակցումը: Ուսուցանումը և ընտելացումը կենդանիների մոտ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Պապոյան Վ.Ռ., Դասախոսություններ մարդաբանությունից, Երևան, 2004
2. Мандель Б.Р., Зоопсихология и сравнительная психология. Новый модульный курс [Электронный ресурс] : Учеб. пособие / Б. Р. Мандель. - М.: Вузовский учебник; ИНФРА-М, 2014. - 304 с.
3. Филиппова Г.Г., Зоопсихология и сравнительная психология, Москва, 2004

*1. 0303/*B27	2. Հոգեֆիզիոլոգիա	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 45/0/15	
6. 3-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. **Դասընթացի նպատակն է՝** ձևավորել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների ֆիզիոլոգիական օրինաչափությունների, հոգեֆիզիոլոգիական տարբեր դպրոցների կողմից ընդունված տեսությունների և հայեցակարգերի վերաբերյալ լիարժեք մասնագիտականգիտելիքներ։

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և մեկնաբանելու մարդու հոգեկանի գործառնության ուղեղային ապահովումը, գլխուղեղում դրանց լոկալիզացիան, բացատրելու և մեկնաբանելու միջկիսագնդային անզուգաչափության դերը հոգեկանի գործառնության դրսևորումներում։
2. Ներկայացնելու և քննարկելու հոգեկան գործընթացների վեգետատիվ կոռելյատները։
3. Ներկայացնելու տարբեր հոգեկան գործընթացների ուսումնասիրման համար նախատեսված համապատասխան հոգեֆիզիոլոգիական մեթոդները։
4. Մեկնաբանելու տարբեր հոգեկան գործընթացների հոգեֆիզիոլոգական մոտեցումները, հայեցակարգերը և տեսությունները։

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու ստացված գիտելիքները՝ հոգեկանի գործառնության առանձնահատկությունները բացատրելու համար։
2. Որոշելու հոգեկան վիճակների վեգետատիվ և ուղեղային կոռելյատները։
3. Կանխատեսելու հոգեկանի զարգացման ուղին՝ հիմնվելով գլխուղեղի գործառնության առանձնահատկությունների վրա։

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու հոգեկան հատկությունների, գործընթացների և վիճակների ուսումնասիրման հոգեֆիզիոլոգիական մեթոդները և հնարքները,
2. Վերլուծելու հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները։

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում։

Ա2. Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները։

Բ1.Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար։

Բ2. Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ։

Բ3. Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելուայդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ։

Գ1 .Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը։

Գ4 .Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը,

11 Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. գործնական պարապմունք
4. դիսկուրսներ, բանավեճեր,
5. գրականության ինքնուրույն վերլուծություն,
6. բանավոր զեկուցում:

11. Գնահատման մեթոդները և չափանիշներն են

1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր*

Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն:

2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր.*.

Գնահատման մեթոդ. ամփոփ տրամաբանական պատասխաններ հարցերին՝ գրավոր կերպով, թեստային աշխատանք

Գնահատման չափանիշներ. նյութի ճիշտ մեկնաբանություն, ինքնուրույնություն:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը *10 միավոր*..

Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:

Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

11. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հոգեֆիզիոլոգիայի ներածություն: **Բաժին 2.** Պերցեպտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 3.** Գիտակցված վարքի և շարժման հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 4.** Կոգնիտիվ գործընթացների հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 5.** Ուսուցման հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 6.** Հույզերի հոգեֆիզիոլագիա: **Բաժին 7.** Սթրեսի հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 8.** Գիտակցության հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 9.** Քնի հոգեֆիզիոլոգիա: **Բաժին 10.** Միջկիսագնդային անզուգաչափություն:

12. Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Վ. Հ. Հոգեֆիզիոլոգիա. Եր.: ԵՊՀ. հրատ., 2014, 465 էջ
2. Психофизиология / Под ред. Ю. И. Александрова. 4-е изд. Питер пресс, 2016, 464 с.
3. Лурия А. Р. Основы нейропсихологии. М., Изд-во Академия. 2006. 381с.
4. Психофизиология: Учебник для вузов / Н. Н. Данилова М.: Аспект Пресс, 2012. 368 с.
5. Handbook of Psychophysiology // Edited by J. T. Cacioppo, L. G. Tassinary, G. Berntson. Cambridge University Press, 2007, P. 914.

1. 0303/ B28	2. Անձի հոգեբանություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. 30/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝

- ծանոթացնել ուսանողներին անձի հոգեբանության հիմնարար խնդիրներին
- փոխանցել գիտելիքներ անձի հոգեբանական կենտրոնական առանձնահատկությունների մասին
- ծանոթացնել ուսանողներին անձի ուսումնասիրման հնարավորությունները:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և մեկնաբանելու անձի հոգեբանության առարկան, խնդիրները, հիմնահարցերը:
2. Ներկայացնելու և բացատրելու անձի կառուցվածքի, զարգացման, դրդապատճառային և արժեհիմաստային ոլորտների առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու անձի հոգեբանության ներառարկայական և միջառարկայական կապերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Իրականացնելու հետազոտական աշխատանքներ՝ անձի տարբեր հոգեբանական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար:
2. Վերլուծելու, համադրելու և ընդհանրացնելու անձի զարգացման գործոնները և պայմանները:
3. Վերլուծելու հետազոտական տարբեր նյութեր՝ հիմնվելով ունեցած գիտելիքների վրա:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու բանավոր զեկուցումներ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարարտեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2.Բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ3.քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք
3. քննարկում,
4. բանավեճ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.*

Գնահատման մեթոդ՝ ամփոփ վերլուծական գրավոր պատասխաններ հարցերին,

Գնահատման չափանիշները՝ նյութի ինքնուրույն վերլուծություն, պատասխանների ամբողջականություն

2-րդ ընթացիկ ստուգումը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.*

Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (ռեֆերատ, ակնարկ՝ էսսե),

Գնահատման չափանիշները՝ կատարված աշխատանքի թեմատիկ համապատասխանությունը և ինքնուրույն վերլուծություն:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Անձի հոգեբանության մեթոդաբանական հարցեր: **Բաժին 2.** Անձի ուսումնասիրման մեթոդները և սկզբունքները: **Բաժին 3.** Անձի հոգեբանական կառուցվածք: **Բաժին 4.** Անձի զարգացում. շարժիչ ուժերը և առանձնահատկությունները: **Բաժին 5.** Ինքնագիտակցություն և Ես-կոնցեպցիա: **Բաժին 6.** Անձի դրդապատճառային ոլորտ: **Բաժին 7.** Անձի արժեհմաստային ոլորտի առանձնահատկությունները դրդապատճառային կարգավորման մեջ: **Բաժին 8.** Գաղափար անձնային առողջության մասին:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Асмолов А.Г., Психология личности, М., Изд. Смысл, 2007.
2. Первин Л.А., Джон О.П., Психология личности: Теория и исследования. М., 2000.
3. Психология личности./ под ред. П.Н. Ермакова, В.А. Лабунской. 2008.
4. Слотина Т.В., Психология личности. СПб,: Питер, 2008.
5. Хекхаузен Х., Мотивация и деятельность, СПб.: Питер; М.: Смысл, 2003.

1. 0303/ B29	2. Դիֆերենցիալ հոգեբանություն և պրակտիկում	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/ շաբ.	5. 30/30/15	
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝

- ծանոթացնել ուսանողներին դիֆերենցիալ հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին,
- փոխանցել գիտելիքներ անձի խառնվածքի, բնավորության և ընդունակությունների անհատական տարբերությունների ձևավորման և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ:

8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու և մեկնաբանելու դիֆերենցիալ հոգեբանության մեթոդաբանական հարցերի և զարգացման ժամանակակից միտումները,
2. քննարկելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների ուսումնասիրման դասական և ժամանակակից մոտեցումները,
3. թվարկելու և բացատրելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների տիպոլոգիական առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու անհատական տարբերությունները, դրանց զարգացման օրինաչափությունները և մեխանիզմները,
2. կիրառելու անհատական տարբերությունների բացահայտման ախտորոշիչ մեթոդիկաներ և

վերլուծելու դրանց արդյունքները:
3. ախտորոշելու և վերլուծելու խառնվածքի, բնավորության և ընդունակությունների անհատական տարբերություններն ըստ տարբեր տիպոլոգիական մոտեցումների,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու բանավոր զեկուցում և վարելու գիտական բանավեճ,
2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա4.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Գ4.Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունք,
3. գործնական պարապմունք (ինքնուրույն առաջադրանքների կատարում, թեստերի և մեթոդիկաների կիրառում):

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր:*

Գնահատման մեթոդ. ամփոփ պատասխաններ հարցերին գրավոր կերպով, թեստային առաջադրանքներ:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն, ճիշտ պատասխանի ընտրություն:

2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր:*

Գնահատման մեթոդ. ամփոփ պատասխաններ հարցերին գրավոր կերպով, թեստային առաջադրանքներ:

Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն, ճիշտ պատասխանի ընտրություն:

Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը *10 միավոր.. Գնահատման մեթոդ.* բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:

Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական և հիմնավորված պատասխաններ:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Դիֆերենցիալ հոգեբանության մեթոդաբանական հիմքերը: Դիֆերենցիալ հոգեբանության առարկան, խնդիրները, ուսումնասիրության ուղղությունները: Դիֆերենցիալ հոգեբանության մեթոդները: Հասկացություն անհատականության մասին: Անհատականության կառուցվածք:

Բաժին 2. Խառնվածքը որպես անհատական առանձնահատկություն: Խառնվածքի մասին պատկերացումների ձևավորում: Խառնվածքի ուսումնասիրության կոնստիտուցիոնալ մոտեցում: Խառնվածքի ուսումնասիրության հոգեֆիզիոլոգիական մոտեցում: Խառնվածքի ուսումնասիրության գործոնային մոտեցում: Ժամանակակից ուսումնասիրություններ. հոգեգենետիկ և լոնգիտյուդ հետազոտություններ:

Բաժին 3. Բնավորությունը որպես անհատական առանձնահատկություն: Բնավորությունը որպես անհատական առանձնահատկություն. տարբեր մոտեցումներ և մեկնաբանություններ: Բնավորություն և անձ. բնավորության կառուցվածք, բնավորության գծեր: Բնավորության նորմա և պաթոլոգիայի հիմնախնդիրը: Բնավորության և անձի շեշտվածություն: Բնավորության ձևավորման հիմնախնդիրը. պայմաններ և մեխանիզմներ:

Բաժին 4. Ընդունակությունները որպես անհատական տարբերություններ: Ընդունակությունների հիմնախնդրի ձևավորումը: Ընդունակությունները որպես անհատական առանձնահատկություններ: Ընդունակությունների կառուցվածքը. Ընդունակությունների տեսակները ըստ տարբեր դասակարգումների: Ընդունակությունների զարգացում: Օժտվածության հիմնախնդիրը: Մտավոր ընդունակությունների և ինտելեկտի ուսումնասիրություններ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ильин Е.П. Психология индивидуальных различий. СПб.: Питер, 2004.
2. Нартова-Бочавер С.К. Дифференциальная психология: Учебное пособие для студентов. – М.: МГППУ, 2007.
3. Психология индивидуальных различий. Хрестоматия. Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.Я. Романова, М.: ЧеРо, МПСИ, 2006.

1. 0303/ B30	**2. Սոցիալական հոգեբանություն**	**3. 6 ECTS կրեդիտ**
4. 6 ժամ/շաբ.	**5. 60/30/0**	
6. 3-րդ կիսամյակ	**7. եզրափակիչ գնահատումով**	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տրամադրել հիմնարար գիտելիքներ սոցիալական հոգեբանության, սոցիալական գործընթացների և երևույթների, ինչպես նաև դրանց փոխակերպումների մասին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու հոգեբանության պատմությունը, սահմանելու և բացատրելու նրա հիմնական հասկացությունները,
2. տարբերակելու հիմնարար սոցիալ-հոգեբանական գործընթացների և երևույթների, ինչպես նաև սոցիալական հոգեբանության կիրառության դաշտը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ուսումնասիրելու և մեկնաբանելու սոցիալ-հոգեբանական գործընթացները և երևույթները,
2. վերլուծելու սոցիալ-հոգեբանական հարաբերությունների առանձնահատկությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կիրառելու սոցիալ-հոգեբանական գիտելիքները գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելիս:
2. ուսումնասիրելու տարբեր սոցիալական խմբերի հոգեբանական առանձնահատկությունները:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ5.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը,

9.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

Խորհրդատվություններ / ուղղորդում

10.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Տե՛ս «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ը:

11.Ավարտական աշխատանքի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. թեմայի որոշում և հաստատում
2. հետազոտական պլանի մշակում
3. տեսական և էմպիրիկ հետազոտություն
4. արդյունքների համակարգում
5. վերլուծություն
6. նախապաշտպանություն
7. աշխատանքի կազմում
8. պաշտպանություն:

12.Հիմնական գրականության ցանկ.

2. ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ□ հոկտեբեր 12-ի թիվ 1 նիստում (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg-1-4.pdf 24□01□2018, ժամը 12:30 դրությամբ)

1.0303/B64	2.Մասնագիտական պրակտիկա-3	3.6 կրեդիտ
4.8-րդ կիսամյակ	5.ստուգարք	

6.Պրակտիկայի նպատակն է՝

- Նպաստել տեսական գիտելիքների գործնականում կիրառման փորձի և մասնագիտական որակների զարգացմանը,

- Խթանել փորձարարական հետազոտության ինքնուրույն նախագծումն ու անցկացումը,
- Ստեղծել ավարտական աշխատանքի հետազոտական մասի կազմակերպման հնարավորություն,

Պրակտիկայի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան՝

- ✓ Ծանոթանալ հաստատության համապատասխան աշխատակիցների, սաների հետ (անրաժեշտության դեպքում),
- ✓ Հաստատության համապատասխան աշխատակիցների թույլտվությամբ ծանոթանալ հաստատության սաների համապատասխան տվյալների, գործունեության արդյունքների հետ,
- ✓ Պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը և հաստատության համապատասխան կանոնները՝ նախագծել և անցկացնել փորձարարական հետազոտություն։

7.Մասնագիտական պրակտիկայի ավարտին ուսանողն ունակ լինի՝

ա. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Նախագծելու և անցկացնելու փորձարարական հետազոտություն
2. Վերլուծելու փորձարարական հետազոտության արդյունքում ստացված տվյալները
3. Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա համապատասխան եզրահանգումներ կատարելու

բ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը
3. Մասնագիտական շփման ընդունակությունները զարգացնելու
4. Աշխատելու որպես բազմամասնագիտական թիմի անդամ

8.Մասնագիտական պրակտիկան ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Ա3.Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները,հնարավորությունները և սահմանափակումները:

Ա5.Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը:

Բ1. կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Բ4.Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում:

Գ3.Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ5.Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը,

9.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հետազոտական, գործնական աշխատանքների կատարում,
2. խմբային աշխատանքներ և քննարկումներ:

10.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք՝ հիմնված անհատական հաշվետվության կազմման և պաշտպանության վրա:

11.Մասնագիտական պրակտիկան բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. նախապատրաստման
2. իրագործման
3. ավարտման:

12.Հիմնական գրականության ցանկ.

ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ□ մայիսի 4-ի թիվ 7 նիստում.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
«Պատմություն»
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Պատմություն 022201.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Պատմության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019/20
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով հայոց լեզու, հայոց պատմություն առարկաներից գրավոր միասնական քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ծրագրի նպատակները և խնդիրները

Ծրագրի նպատակն է պատրաստել կրթության, գիտության, մշակույթի ոլորտների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի համար պատմության բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:
2. Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:
3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:
4. Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության

բազմաթիվ հարցեր:
2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:
3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:
4. Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:
5. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
6. Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:
7. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
3. Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
4. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:
5. Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:
6. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- ստուգարքներ,
- ընթացիկ քննություններ,
- կուրսային աշխատանքների կատարում,
- եզրափակիչ քննություններ,
- ավարտական աշխատանքի պաշտպանություն

ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ. Էջ 5-11:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Պատմություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, թանգարաններում, արխիվներում, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի ասպարեզներում, տուրիզմի ոլորտում, ՀՀ Կրթության և գիտության, Մշակույթի նախարարություններում, Ազգային անվտանգության ծառայությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Թանգարաններում.

- էքսկուրսավար,
- գիտաշխատող,
- բաժնի վարիչ,
- տնօրեն:

Արխիվներում.

- գիտաշխատող,
- բաժնի վարիչ
- տնօրեն:

Ռադիոյում, հեռուստատեսությունում, մամուլում.

- լրագրող, վերլուծաբան

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

- ստորին և միջին օղակների ծառայող:

Մանկավարժի որակավորման համար լրացուցիչ կրթություն ստանալու դեպքում կարող է աշխատել նաև դպրոցում.

- ուսուցիչ

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Պատմություն կրթական ծրագիրն իրականացնելու համար ֆակուլտետում առկա են 4 լսարաններ, որոնցից մեկը հագեցված է տեխնիկական միջոցներով՝ համակարգիչ և տեսասարք: Մասնաճյուղում հասանելի է ինտերնետ կապը՝ էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար: Ունենք համապատասխան դիդակտիկ նյութեր՝քարտեզներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

ԵՊՀ Պատմության կրթական ծրագիր
ՀՊՄՀ Պատմության կրթական ծրագիր

17. **Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Մասնաճյուղում իրականացվող Պատմություն կրթական ծրագրի ուսանողները ի թիվս շատ դասընթացների, ուսումնասիրելու են արևելյան լեզուներից մեկը՝ վրացերեն կամ ադրբեջաներեն: Արևելյան այս լեզուներից մեկի ուսումնասիրությունը ավելի մրցունակ կդարձնի մեր շրջանավարտներին աշխատաշուկայում՝ ՀՀ զինված ուժերում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում և այլն:

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**	
Ա1	Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:	Բ1	Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:
Ա2	Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:	Բ2	Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:
Ա3	Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:		
Ա4	Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:	Բ3	Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:
	Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ		
Գ1	Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:	Բ4	Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:
Գ2	Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:		
Գ3	Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:	Բ5	Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
Գ4	Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:	Բ6	Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:
		Բ7	Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:
Գ5	Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:		
Գ 6	Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:		

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																	
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B05												+	+					
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B09												+	+					
Անգլերեն/ֆրանսերեն-1	0305/B15							+					+	+					
Անգլերեն /ֆրանսերեն-2	0305/B16							+					+	+					
Ռուսերեն-1	0305/B03							+					+	+					
Ռուսերեն-2	0305/B08							+					+	+					
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B04							+						+					
Քաղ.պաշտպան. և արտակարգ իրավիճակ. բնակչ. առաջին բուժօգնություն	0001/B07																	+	
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B02									+				+	+				
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0104/B11																		
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B12	+												+		+		+	
Իրավունքի հիմունքներ	0304/B14									+				+	+	+			
Ֆիզդաստիարակություն	0001/B01																	+	
Ֆիզդաստիարակություն	0001/B06																	+	
Ֆիզդաստիարակություն	0001/B10																	+	
Ֆիզդաստիարակություն	0001/B13																	+	
Տնտեսագիտության հիմունքներ	0201/B17	+								+				+					
Գործարարության հիմունքներ	0201/B17	+								+				+					
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B17			+						+		+		+	+	+			
Մշակութաբանության հիմունքներ	0202/B17									+				+	+	+			
Կրոնագիտության հիմունքներ	0304/B17			+						+		+		+	+	+			
Բարոյագիտության հիմունքներ	0303/B17													+	+				
Սոցիոլոգիայի հիմունքներ	0303/B17									+				+	+	+			
Տրամաբանության հիմունքներ	0304/B17											+	+	+					
Հոգեբանության հիմունքներ	0303/B17									+				+	+	+			
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B17									+		+		+					
Հայաստանի պատմական աշխարհագրություն	0304/B18				+							+		+		+			
Հայ գրականության պատմություն	0302/B22									+			+	+					
Հին Արևելքի պատմություն	0304/B21																		
Նախնադարյան հասարակության պատմություն	0304/B19	+			+			+				+		+	+				
Հայոց պատմություն-1	0304/B20			+	+	+	+				+	+		+	+				

Հայոց պատմություն-2	0304/B25			+		+	+				+	+		+		+			
Ազգագրության հիմունքներ և հայ ազգագրություն	0304/B31				+			+			+			+					
Հին Հունաստանի և Հռոմի պատմություն	0304/B23																		
Ռուսաստանի պատմություն-1	0304/B24				+	+	+				+	+		+		+			
Հայոց պատմություն-3	0304/B29			+		+	+				+	+		+		+			
Միջին դարերի պատմություն-1	0304/B30				+	+	+					+		+	+	+			
Ռուսաստանի պատմություն-2	0304/B26					+	+				+	+		+		+			
Հնագիտ. հիմունքներ և Հայաստանի հնագիտություն	0304/B27	+			+			+				+		+	+				
Գրաբար-1	0302/B28							+				+	+						
Գրաբար-2	0302/B32							+				+	+						
Հայոց պատմություն-4	0304/B33			+		+	+				+	+		+		+			
Միջին դարերի պատմություն-2	0304/B34					+						+		+	+	+			
Ռուսաստանի պատմություն-3	0304/B35				+	+	+				+	+		+	+	+			
Ուրբանիզմի պատմություն	0304/B42																		
Հայոց պատմություն-5	0304/B39					+	+				+	+		+		+			
Նոր պատմություն-1	0304/B37					+						+		+	+	+			
ԽՍՀՄ-ի և Ռուսաստանի հետխորհրդային շրջանի պատմություն	0304/B40			+		+	+				+	+		+		+			
Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն	0304/B41				+			+			+			+					
Նոր պատմություն-2	0304/B47	+	+					+	+		+						+		
Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն	0304/B43					+						+		+	+	+			
Թանգարանագիտություն և արխիվագիտություն	0304/B48				+	+	+				+			+		+	+		
Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն	0304/B44				+			+			+			+					
Հայոց պատմություն-6	0304/B45					+	+				+	+		+		+			
Հայոց պատմության աղբյուրագիտություն	0304/B46					+	+				+	+		+		+			
Նորագույն պատմություն	0304/B51	+	+					+	+		+						+		
Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն	0304/B38					+	+					+		+	+	+	+		
Աշխարհաքաղաքականություն	0304/B55		+					+	+		+						+		
Հայոց պատմության պատմագրություն	0304/B49			+			+				+	+		+		+			
Վրաստանի և Ադրբեջանի պատմություն	0304/B50	+	+					+	+		+						+		
Փիլիսոփայության պատմություն	0304/B52				+	+	+				+		+			+	+		
Հայ և համաշխարհային արվեստի պատմություն	0304/B53			+						+		+							
Թուրքիայի և Իրանի պատմություն	0304/B36			+			+	+		+									
Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն	0304/B54				+	+	+				+			+		+	+		
Պառլամենտարիզմի պատմություն	0304/B54																		
Դասական կամ արևելյան լեզուներ- վրացերեն/ աղրբեջաներեն	0304/B54	+	+									+		+		+			

Դեմոկրատիայի պատմություն-1	0304/B55							+		+			+	+					
Հռոմեական ժառանգությունը և եվրոպական հանրույթը	0304/B55			+	+							+		+		+			
Հայ ռազմարվեստի պատմություն	0304/B55				+	+					+	+		+	+		+		
Դեմոկրատիայի պատմություն-2	0304/B56	+	+									+		+		+			
Նոր և նորագույն ժամանակների սոցիալ-քաղաքական պատմություն	0304/B56			+	+							+		+		+			
Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն	0304/B56					+	+					+		+	+	+			
Էթնիկ հոգեբանություն	0303/B56													+	+		+	+	
Կուրսային աշխատանք-1	0304/B58					+					+			+	+		+		
Կուրսային աշխատանք-2	0304/B59	+	+					+	+		+			+			+		
Ուսումնական պրակտիկա	0304/B57	+	+					+	+		+			+			+		
Մասնագիտական պրակտիկա	0304/B60				+	+					+		+	+	+	+			
Ավարտական աշխատանք	0304/B61				+	+					+		+	+	+	+			

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
«Պատմություն»
ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1.0302/B05	**2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1**	**3. 2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 0/30/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. ստուգարք**	

8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:

Դասընթացի խնդիրները.

1. ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները,
2. ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելու լեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը:
2. Ձևավորելու բանավոր խոսքի կուլտուրա և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն):
3. Սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:
2. Գործառելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. մտագրոհ
4. վերլուծական մեթոդ
5. խոսքային կամ բանավոր մեթոդ
6. գրավոր մեթոդ
7. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ:

Թեմա 2. Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: **Թեմա 3.** Բառային մակարդակ: **Թեմա 4.** Քերականական մակարդակ: Ձևաբանություն: **Թեմա 5.** Շարահյուսություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014:
2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր, 2015:
3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002:
4. Բադիկյան Խ., Դարձվածային ոճաբանությունԵր., 2003:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
6. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

1.0302/B09	2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6.2-րդ կիսամյակ	7. ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելու համար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնել ուսումնական գործընթացներում:

Դասընթացի խնդիրները.

1. Բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու խոսքի արժանիքները:
2. Կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, դրսևորելու խոսքային բարձր էթիկետ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. մտագրոհ
4. վերլուծականմեթոդ
5. խոսքային կամ բանավոր մեթոդ
6. գրավոր մեթոդ
7. բացատրական մեթոդ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Խոսքի արժանիքները: **Թեմա 2.** Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: **Թեմա 3.** Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: **Թեմա 4.** Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր.,2014:
2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր., 2015:
3. Ասատրյան Մ.Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002:
4. Բադիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն,Եր., 2003:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
6. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

1. 0305/B03	**2.Ռուսերեն -1**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 0/60/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. ստուգարք**	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել բանավոր և գրավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակություններ, ելնելով հաղորդակցման հիմնական պահանջմունքներից:

Դասընթացի խնդիրներն են.

1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:
2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:
3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ծրագրով նախատեսված քերականական նյութը:
2. Ներկայացնելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ բառապաշար:
3. Կիրառելու ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կարդալու, պատմելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստեր գրքերից, թերթերից, ամսագրերից:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Շարադրելու տեքստ (20 նախադասություն) առաջարկված որևէ թեմայով (իր, ընտանիքի, ուսման, ազատ ժամանակի, հայրենիքի, հայրենի քաղաքի, եղանակի, հետաքրքրությունների և այլնի մասին):
2. Ընկալելուև սկսելու, շարունակելու և ավարտելու երկխոսությունները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

ԲՏ.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. ինդուկտիվ մեթոդ
6. դեդուկտիվ մեթոդ
7. վերլուծական մեթոդ
8. խոսքային կամ բանավոր մեթոդ
9. գրավոր մեթոդ
10. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանք-

ների արդյունքների վրա:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և ինչերանգային հիմնական նորմերը: **Բաժին 2.** Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: **Բաժին 3.** Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: **Բաժին 4.** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1. 0305/B08	**2. Ռուսերեն -2**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 0/60/0**	
6. 2-րդ կիսամյակ	**7. ստուգարք**	

8. Դասընթացի նպատակն է՝ ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:

Դասընթացի խնդիրներն են.

1. Ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա:
2. Վեր հանել թերություններն ու շտկել դրանք:
3. Խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները:
4. Հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը:
2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով:
3. Գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները:
3. Վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ:
4. Թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը:
5. Զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:
2. Օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

11.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում

պատմական փաստերի նկատմամբ:
Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հաղորդակցության մեջ:
Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. էվրիստիկական մեթոդ
4. մտագրոհ
5. ինդուկտիվ մեթոդ
6. դեդուկտիվ մեթոդ
7. վերլուծական մեթոդ
8. խոսքային կամ բանավոր մեթոդ
9. գրավոր մեթոդ
10. բացատրական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանք-ների արդյունքների վրա:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: **Բաժին 2.** Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառակապակցություն, նախադասություն, նախադասության անդամներ/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: **Բաժին 3.** Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: **Բաժին 4.** Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:

14.Հիմնական գրականության ցանկ

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

1. 0305/B15	**2. Անգլերեն -1**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 0/60/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. ստուգարք**	

8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար:
2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը:
2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները:
3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները:
4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:
2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:

3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:
2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝ մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: **Բաժին 2. Քերականություն:** Խոսքի մասեր: Շարահյուսություն: **Բաժին 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն:** Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1. 0305/B16	**2. Անգլերեն- 2**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 0/60/0**	
6. 2-րդ կիսամյակ	**7. ստուգարք**	
8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:		

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը:
2. Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները:
2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1.Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: **Բաժին 2.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1.0305/B15	**2.Ֆրանսերեն – 1**	**3.4 ECTS կրեդիտ**
4.4 ժամ/շաբ.	**5.0/60/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները,
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

ԲՏ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ 2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ

4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2.** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3.** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4.** Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: **Թեմա 5.** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: **Թեմա 6.** Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: **Թեմա 7.** Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
4. M. Djoulhakian, R. Meliksntian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

1.0305/B16	2.Ֆրանսերեն – 2	3.4 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբ.	5.0/60/0	
6.2-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա,
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ,
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները,
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

Նախապես տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2.** Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 3.** Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 4.** Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ **Թեմա 5.** Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: **Թեմա 6.** Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում: **Թեմա 7.** Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
4. M. Djoulhakian, R. Meliksnتian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

1. 0304/B14	2. Իրավունքի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7. ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
2. Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության

մեջ:
2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործման, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը անց է կացվում բանավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4**. Քրեական իրավունք: **Թեմա 5**. Աշխատանքային իրավունք: **Թեմա 6**. Ընտանեկան իրավունք: **Թեմա 7**. Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8**. Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10**. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11**. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12**. Միջազգային իրավունք:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:

1.0105/ B02	**2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ**	**3. 2 ECTS կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.30/0/0**	
6.1-ին կիսամյակ	**7.ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: ույն ընտրության:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:
2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և

գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները:
3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները:
2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:
3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին:
2. Նախազգուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից:
3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու՝ ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնը, ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

ԲՏ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Պասիվ դասախոսություն
2. Ակտիվ դասախոսություն
- ✓ *հարց ու պատասխան*
- ✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն
- ✓ *«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում*
- ✓ *հարց ու պատասխան*
- ✓ *բանավեճ*
- ✓ *զրույց*

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:
2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2**. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3**. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ:

Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4**. Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5**. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6**. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7**. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաիների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

1.0104/B04	2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 0/30/0	
6. 1-ին կիսամյակ	7. ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
2. Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
3. Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
4. Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
5. Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. Էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական

աշխատանքների ցուցադրման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք.

Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը. գնահատվում է «Բավարար»,եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեսթերից:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapesերի հետ: Աղյուսակների տեղադրում::

Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ

Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյակների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:

Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ռաֆերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ռաֆերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ա.Հովակիմյան., Ս.Սարգսյան, Լ.Խաչոյան., Ն.Իսպիրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. Тихомиров А., Прокди А.К. Колосков П.В., Кендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Ջանփոլադյան, Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Երևան, 2000թ.:

1.0001/B01,B06	**2.Ֆիզդաստիարակություն**	**3.0 ECTS կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.0/60/0**	
6.1-ին, 2-րդ կիսամյակներ	**7.ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է ՝ հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ

գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները:
2. Թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը:
3. Ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները:
4. Ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները:
5. Առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրելու դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ):
2. Ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում:
3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը:
2. Դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից:
3. Կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ6.Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1.Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .

- տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2.արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

12.Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

13.Դասընթացի բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

<u>1-ին կիսամյակ</u>

Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 2.** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: **Թեմա 3.** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Ջամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: **Թեմա 4.** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

<u>2-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: **Թեմա 2.** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: **Թեմա 5.** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 8.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Է.Ա., Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբասյան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

1.0001/B10, B13	2.Ֆիզդաստիարակություն	3.0 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.0/60/0	
6.3-րդ, 4-րդ կիսամյակներ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. Ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների

և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ:

3. Հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը:
4. Թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը:
5. Ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները:
2. Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնել օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,
3. Ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ:
4. Կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն:
2. Աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ:
3. Վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները:
4. Կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս:
5. Կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ6.Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1.Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .

- տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2.արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

12.Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

<u>3-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: **Թեմա 2.** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 3.** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: **Թեմա 4.** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: **Թեմա 5.** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: **Թեմա 6.** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: **Թեմա 7.** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: **Թեմա 8.** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: **Թեմա 9.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: **Թեմա 10.** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

4-րդ կիսամյակ

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: **Թեմա 2.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: **Թեմա 5.** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: **Թեմա 6.** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: **Թեմա 7.** Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: **Թեմա 8.** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: **Թեմա 9.** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: **Թեմա 10.** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): **Թեմա 11.** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: **Թեմա 12.** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: **Թեմա 13.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբայան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս. Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

1. 0304/B12	2. Փիլիսոփայության հիմունքներ	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 30/0/30	
6. 4-րդ կիսամյակ	7. ստուգարք	
8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու		

սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

Դասընթացի խնդիրները.

1. Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
2. Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
3. Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:
2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:
3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7.** Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:
3. Գաբրիելյան Հ., Հայ փիլսոփայության պատմություն, Երևան, 1980:
4. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:
5. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:

1. 0104/B 11	**2.Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք**	**3. 2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 15/15/0**	
6. 3-րդ կիսամյակ	**7. ստուգարք**	

8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:
2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունակատկերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը, անեու հետևություններ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ3.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. ինքնուրույն խատանքներ

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Նկարագրական վիճակագրություն: **Բաժին 2.** Նմուշային եղանակ: **Բաժին 3.** Գնահատման տեսություն: **Բաժին 4.** Միջակայքային գնահատականներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ. Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.

1.0001/B 07	**2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն**	**3.4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5.30/30/0**	
6. 2-րդ կիսամյակ	**7.ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է՝ սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները:
2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին:
3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները:
4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը:
5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն:
2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում:
3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում:
4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում:
2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:
3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ6. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ
4. լաբորատոր աշխատանքներ
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:

12. Գնահատման մեթոդները և չափանիշները

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>Բաժին 1</u>. Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: ***Թեմա 1.*** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2.*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **<u>Բաժին 2.</u> Քաղաքացիական պաշտպանություն:** ***Թեմա 3.*** Բնակչության գործողությունները ահաբեկչությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4.*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5.*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6.*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: ***Թեմա 7.*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **<u>Բաժին 3.</u> ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն:** ***Թեմա 8.*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 9.*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 10.*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 11.*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 12.*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ռ.Մարկարյան Ն.Ջանջուղազյան, Մ.Օհանջանյան, Ա.Հարությունյան, Վ.Հարությունյան, Լ.Բաղդասարյան, Ռ.Հասրաթյան, Ջ.Վարդանյան, «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:
2. Հեղինակների կոլլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում»,

ուսումնական ձեռնարիկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:
3. Կ.Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:
4. Մ.Ադամյան, «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ:
5. Ս.Մանուկյան, Գ.Ճաղարյան, «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ
ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1.0201/B17	**2.Տնտեսագիտության հիմունքներ**	**3.2 ECTS կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.30/0/0**	
6.4-րդ կիսամյակ	**7.ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

Դասընթացի խնդիրները.
1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:
2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:
3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից:
4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:
2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:
2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Աշխատելու թիմում:
2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություններ
2. սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր
3. խմբային աշխատանքներ
4. ռեֆերատներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2**. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3.** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4**. Անհատական

շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5**. Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7**. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8**. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10**. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11**. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12**. Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14**. Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15**. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գորթնի Ջ. , Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:
2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:
3. Макконнелл К.Р., Брью С.Л. Економика. 17-ое изд., Москва, 2009.
4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998

1.0201/B 17	2.Գործարարության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:
2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:
3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:
2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:
3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:
4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը
2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:
3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:
4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Մոտիվացնելու:
3. Առաջնորդելու:
4. Աշխատելու տեղեկատվության հետ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական խաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց,ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց կացվում գրավոր:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.
Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: **Թեմա 2.** Գործարարության միջավայրը և տեսակները: **Թեմա 3**. Գործարարության սուբյեկտները: **Թեմա 4**. Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: **Թեմա 5.** Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը,որպես գործարարության նախադրյալ: **Թեմա 6.** Մարքեթինգի պլան: **Թեմա 7**. Գործունեության կադրային ապահովումը: **Թեմա 8**. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: **Թեմա 9.** Արտադրական պլան **Թեմա 10.** Ինքնարժեքի կալկուլյացիա: **Թեմա 11.** Ձեռնարկատիրական ռիսկ: **Թեմա 12**. Ֆինանսական պլանավորում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. М.Н. Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/
2. В. Ю. Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011.
3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//
4. С.И.Башаримова, М.В. Дасько, «Основы предпринимательства» учебное пособие.
5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//.

1.0304/B17	2.Քաղաքագիտության հիմունքներ	3.2 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Դասընթացի խնդիրները.
1. Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
2. Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
3. Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարախոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: ***Թեմա 15.*** Քաղաքական մշակույթ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.

1.0202/B 17	**2.Մշակութաբանության հիմունքներ**	**3. 2 կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5. 30/0/0**	
6.4-րդ կիսամյակ	**7. ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: ‹‹Մշակույթ›› հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.**Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: **Թեմա 11.**Հայկական մշակույթ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս.Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В.М., Культурология, М., 1998.

1.0304/B17	2.Կրոնագիտության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:
2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:
2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5.** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимирон Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.

1.0303/B17	2.Բարոյագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ

4.2 ժամ/շաբ.	5. 30/0/0
6.4-րդ կիսամյակ	7. ստուգարք

8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի խնդիրները.

1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:
6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն. Սեր: **Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները:** Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **Բաժին 3. Բարոյականություն և ազատություն:** Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: **Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը:** Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: **Բաժին 5. Համամարդկային բարոյական**

արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: **Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ:** Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. А. Разин, Этика, Москва, 2003.
2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.
3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.
4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.
5. Словарь по этике.

1. 0303/B17	2. Հոգեբանության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7. ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզակամային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:

Դասընթացի խնդիրները

1. Բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները:
2. Լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ:
3. Ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները:
2. Տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները:
3. Պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները:
4. Բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու անձի հուզակամային ոլորտի մասին:
2. Տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները:
2. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ
4. գործնական պարապմունք

5. ռեֆերատ/էսսե
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: **Թեմա 3**. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Հոգեկանի և գիտակցության զարգացումը: **Թեմա 6.** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 7.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: **Թեմա 8.** Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: **Թեմա 9.** Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: **Թեմա 10.** Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: **Թեմա 11.** Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 13.** Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա** 14. Անձի հուզակամային կողմը: **Թեմա 15.** Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., ԵՊՀ հրատ. 2010:
2. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր.1997:
3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005:
4. Маклаков А.Г., Общая психология. М., 2007:
5. Немов Р.С., Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
6. Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.

1.0304/B17	2.Տրամաբանության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից:

Դասընթացի խնդիրները.

1. Ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները:
2. Ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ:
3. Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին:
4. Ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:
3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:
2. Զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:
3. Զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:
Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:
Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.
Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2**. Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4**. Տրամաբանության օրենքները: **Թեմա 5**. Մտահանգում: **Թեմա 6**. Ապացուցում և հերքում: **Թեմա 7**. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

1.0303/B17	2.Սոցիոլոգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

Դասընթացի խնդիրները.
1. Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ներկայացնելու գիտության մեջ ‹‹սոցիոլոգիա›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:
Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:
Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2**. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4**. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5**. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Бабосов Е.М., Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8
2. Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011.
3. Горшков М.К., Шереги Ф.Э., Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А.М., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.
5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)
6. Кравченко А.И., Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.

1.0105/B17	2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4–րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:

Դասընթացի խնդիրներն են՝

1. Ձևավորել բնագիտական աշխարհայացք:
2. Ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը:
3. Բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները:
4. Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին:
3. Մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և

օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալու որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:
3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադատական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք.

Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն - կենսաբանության կոնցեպցիաները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ,ԵՊՀ, Երևան, 2007:
2. Канке В.А.,Концепции современного естествознания, Логос. Москва, 2002.
3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова).

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ
ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. 0304/B18	2. Հայաստանի պատմական աշխարհագրություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ համակողմանի և ամբողջական գիտելիքներ Հայաստանի պատմական աշխարհագրության՝ Հայկական լեռնաշխարհի, էթնիկ հիմնահարցերի, վարչական բաժանումների, քաղաքների մասին:

Դասընթացի խնդիրները.

- Ներկայացնել Հին Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը:
- Ներկայացնել Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը:
- Ներկայացնել Հայկական լեռնաշխարհի տերիտորիալ և վարչական բաժանումները:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու Հին Հայաստանի պատմաշխարհագրական պատկերը:
2. Ներկայացնելու Հայկական լեռնաշխարհի վարչական և տերիտորիալ բաժանումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու Հին Հայաստանի գլխավոր ճանապարհների քաղաքական ու տնտեսական նշանակությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. սեմինար
3. զեկուցումներ
4. ռեֆերատներ
5. քննարկումներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները: **Թեմա 2**. Հին Հայաստանի բնակչությունը: **Թեմա 3.** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը: **Թեմա 4**. Հին Հայաստանի տերիտորիալ և վարչական բաժանումը Ք.ա. 5-րդ դարից մինչև 1-ին դարը: **Թեմա 5**. Հին Հայաստանի պատմաշխարհագրական նկարագիրը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան /ցանկացած հրատարակություն/:
2. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979:
3. Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963:
4. Հարությունյան Բ.Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Երևան 2001:

1.0304/B19	2. Նախնադարի հասարակության պատմություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ / շաբ	5. 30/0/15	
6. 1-ին կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնառողների շրջանում հետաքրքրություն առաջացնել հեռավոր ժողովուրդների, նրանց կացութաձևի, սովորույթների ու ծեսերի նկատմամբ, չսքողելով առկա գիտական հիմնախնդիրներն ու տարբեր հայեցակետերը՝ ուսանողներին ներգրավել հետազոտական որոնումների ոլորտ, ուր անելիքներ կգտնեն պատմաբանների դեռ շատ սերունդներ, ձևավորել գիտելիքների համակարգ անտրոպոգենն, սոցիոգենն, կուլտուրոգենն և պոլիտոգենն գործընթացների վերաբերյալ, օգնել հասկանալու սոցիալ-տնտեսական զարգացման ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները, հասարակական ինստիտուտների առաջացման պատճառները և ժամանակակից էթնոսների պատմական զարգացման առանձնահատկությունները, պատկերացում տալ մարդ-բնություն փոխգործակցության, մարդու գործունեության փոխակերպումների, համաշխարհային մշակույթում նախնադարյան հասարակությունների ներդրած ավանդի մասին, ցույց տալ ժամանակակից բազմաթիվ վարքագծային կարծրատիպերի, ավանդույթների, իրավական և բարոյական նորմերի ծագումը, հնարավորություն տալ գնահատելու անցյալի վերապրուկների դերը մշակույթում, ազգ-արյունակցական համակարգերի զարգացման գործընթացները, ազգակցության կառուցվածքը և պահպանվածությունը:

Դասընթացի խնդիրները.

1. Ծանոթացնել գիտական ճանաչողության սկզբունքներին, ձևավորել պատմական մտածողություն, պատկերացումներ հասարակական ձևերի, ամուսնության, համագործակցության, կառավարման համակարգի, կրոնի, դիցաբանության, արվեստի և դրանց դերի մասին նախնադարի յուրաքանչյուր փուլում:
2. Ձևավորել պատմական գիտելիքներ, որոնք թույլ կտան հասկանալ համաշխարհային պատմության ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները, առաջընթացի էությունը և հասարակական ձևերի առաջացման պատճառները:
3. Ձևավորել գրականության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ, զարգացնել կարողություններ մասնակցելու քննարկումներին և հանդես գալու պատմական թեմաների շրջանակներում:
4. 4. Ապահովել ուսումնառողների կողմից ՄԿԾ-ով սահմանված այլ դասընթացների ընկալումը և պատրաստվածությունը, երբ առաջադրվող թեման վերաբերում է մարդկության պատմության առավել վաղ շրջանի խնդիրներին:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նշելու նախնադարի հասարակության պատմության գիտական արդի պարբերացումը, թվարկելու փուլերը ենթափուլերով, նշելու ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրները:
2. Ներկայացնելու հիմնական կոնցեպցիաները, գործածելի հասկացությունները, բացատրելու դրանց իմաստային նշանակությունն ու կիրառելիությունը:
3. Ներկայացնելու բրածո ուսումնասիրության արդյունքները, բրածո էակների տարածման տիրույթները և գործունեության ձևերը:
4. Ներկայացնելու նախնադարյան համայնքի շրջափուլերը, բացատրել զարգացման առանձնահատկությունները:
5. Նշելու ժամանակակից վաղ հասարակություններին, նկարագրել նրանց զարգացման առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու նախնադարյան համայնքի շրջափուլերը, օգտագործելով տարբեր ռեսուրսներ՝ ժամանակակից վաղ հասարակությունների վերաբերյալ տեղեկությունները համեմատելու, համադրելու /կամ տարբերակելու, հակադրելու/:
2. Իմաստավորելու (քննադատորեն վերլուծելու) մարդու և հասարակության ծագման վերաբերյալ գիտական մոտեցումների ու հայեցակարգերի բազմազանությունը:
3. Մեկնաբանելու պատմական գործընթացներն ու երևույթները նախնադարյան համայնքի տարբեր շրջափուլերում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կատարելու հետազոտական բնույթի աշխատանքներ:
2. 2. Ունենալու մարդասիրական համոզմունքներ և տոլերանտ պահվածք հասարակության մեջ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Մեկնաբանելու և գնահատելու պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսել ու բանավիճել ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային կամ բանավոր մեթոդ
2. ցուցադրման մեթոդ
3. գրավոր մեթոդ
4. բացատրական մեթոդ
5. քննարկում/բանավեճ
6. ինդուկտիվ մեթոդ
7. դեդուկտիվ մեթոդ
8. ուղղորդված գրառումներ
9. տեղեկատվության որոնում
10. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու նպատակով նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Քննատոմսն ընդգրկում է 4 հարց: Արդյունարար գնահատականը համարվում է դրական, երբ ուսումնառողը վաստակում է նվազագույնը 8 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Նախնադարի պատմության առարկան, նշանակությունը, պարբերացումն ու ժամանակագրությունը: **Թեմա 2**. Նախնադարի դարաշրջանի պատմական աղբյուրները: **Թեմա 3**. Նախնադարի պատմության պատմագրությունը: Հին մարդկանց պատկերացումները ժողովուրդների մասին: Ազգաբանական դիտարկումները միջնադարում: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները և ազգաբանական գիտելիքների ընդլայնումը: Նախնադարյան հասարակության մասին գիտելիքների կուտակումը և դրանց ընդհանրացումները XIX դարում: **Թեմա 4.** Նախնադարի հասարակության կազմավորումը. նախահամայնքի դարաշրջանը՝ մարդու ծագումը: Մարդագոյացման պրոցեսի շարժիչ ուժերը: Մարդու մերձավոր նախնիները և մարդացման գործընթացի տեղն ու ժամանակը: Հնագույն և հին հոմինինները: **Թեմա 5**. Մարդկային հասարակության ծագումը՝ նախահամայնք: Սեռական հարաբերությունները նախահամայնքում: Մտածողության և խոսքի ծագման խնդիրը: Գաղափարական պատկերացումների սաղմերը: **Թեմա 6**. Մարդագոյացման պրոցեսի ավարտը, ժամանակակից տեսակի մարդու հանդես գալը, ռասաների ծագումը, համայնատոհմական կարգերի առաջացումը: **Թեմա 7**. Վաղ նախնադարյան համայնքը: Սեռատարիքային խմբերը վաղ նախնադարյան համայնքում, ինիցիացիա: Ամուսնությունը և ընտանիքը, իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը վաղ նախնադարյան համայնքում: **Թեմա 8.** Ուշ նախնադարյան համայնք: Արտադրող տնտեսության առաջացումը, բնակչությունը և նրա վերարտադրությունը: Սեռատարիքային կազմակերպություններ: Ամուսնությունը և ընտանիքը: Իշխանության կազմակերպումը և հոգևոր մշակույթը: **Թեմա 9.** Դասակարգային հասարակության հաստատությունների հանդես գալը: Ստրկությունը և նրա ձևերը: Մենամուսնական ընտանիք: Դրացիական համայնքի ձևավորումը: Հոգևոր մշակույթի զարգացումը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Վ.Պ.Ալեքսեև, Ա.Ի.Պերշից, Նախնադարյան հասարակության պատմություն, ԵՊՀ հրատ., Եր., 2012, էջ 368
2. Марков Г.Е., Первобытное общество: Учебное пособие. Издательство исторического факультета Московского университета, М., 2009, 210 с.

1. 0302/B22	2. Հայ գրականության պատմություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել հայ գրականության ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները:
2. Բնագրային երկերի ուսումնասիրության հիման վրա զարգացնել վերլուծական կարողությունների ձևավորում:
3. Հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունների մեկնաբանում, գրական երկերի պատմական-հասարակական դերի, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորության բացահայտում:
4. Տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում:
5. Շարադրությունների, ռեֆերատների, զեկուցումների, վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակում:
6. Կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով ուսանողների բանավոր խոսքի զարգացում և կատարելագործում:
7. Տարաբնույթ (գեղարվեստական արձակ և չափածո, հրապարակախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվաոճական վերլուծության միջոցով ուսանողների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու հայ գրականության առանձնահատկությունները, զարգացման միտումները, քննել ժամանակաշրջանի հասարակական-գրական կյանքը:
2. Ներկայացնելու անվանի հայ հեղինակներին, նրանց ստեղծագործությունների ընթհանուր բնութագիրը, հայ գրականության հիմնական ուղղությունները, հոսանքներն ու ոճերը, գրական երկերի ժանրային ու գաղափարական առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու մարդու բարոյական նկարագիրն ու ժամանակաշրջանի մտածողության գեղարվեստական արտացոլումը հայ գրականության տարբեր գրողների ստեղծագործություններում:
4. Դասակարգելու հայ գրականության առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կատարելու բնագրային երկի վերլուծություններ:
2. Վերլուծելու և գնահատելու դասական հեղինակների գործերը, ներկայացնելու յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շղթայի մեջ:
3. Կատարելու գրականագիտական ուսումնասիրություններ:
4. Ներկայացնելու հայ գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գործնականում տարբերակելու երկերի ժանրային պատկանելիությունը:
2. Վերլուծելու գրական երկերի գաղափարական բովանդակությունը և կերպարային համակարգը:
3. Բանավիճելու և քննարկելու:
4. Օգտվելու մասնագիտական գրականությունից և տարաբնույթ բառարաններից հմտություն:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

ԲՏ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

ԲՏ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գրավոր աշխատանք
3. բանավոր հարցում
4. գրական–գեղարվեստական նմուշների ընթերցանություն և քննարկում
5. զեկուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված քննությունն անցկացվում է բանավոր: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 4 միավոր: Մնացած չորս միավորը ուսանողը վաստակում է դասընթացի ընթացքում՝ ինքնուրույն աշխատանքների հիման վրա:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ մշակույթը մինչև 5-րդ դար**:** Մեսրոպ Մաշտոցը և գրերի ստեղծումը**:** Գրականության զարգացման հիմնական ուղղությունները**: Թեմա 2.** Պատմագրություն: **Թեմա 3.** Հայ միջնադարյան գրականություն: **Թեմա 4.** Հայ նոր գրականություն: **Թեմա 5.** Հայ նորագույն գրականություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ա, հատոր Է, Երևան,1966, 1975:
2. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1964:
3. Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, 2 հատորով, Երևան, 1961-1967:
4. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, 4 գրքով, Երևան, 1967-1990:
5. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, Երևան, 2004:
6. Գասպարյան Դ., Բոդոսյան Ս., Սաֆարյան Վ., Հայ սովետական պոեզիայի պատմություն, Ե., 1987:
7. Գասպարյան Դ., Հայ սովետական գրականության պատմություն, Երևան, 1987:

1. 0304/B27	**2. Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն**	**3. 5 ECTS կրեդիտ**
4. 5 ժամ /շաբ.	**5. 55 /0/20**	
6. 3-րդ կիսամյակ	**7. եզրափակիչ գնահատումով**	

8. Դասընթացի նպատակն է՝ մասնագիտության կրթական աստիճանին համապատասխան գիտակարգի վերաբերյալ ուսումնառողներին տալ հիմնարար գիտելիքներ, լուսաբանել պատմական իրողությունները հնագիտորեն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, վերականգնելու հնարավորությունները և պատմական ճանաչողության նշանակությունը, ձևավորել գիտելիքների համակարգ մարդկային մշակույթի և մշակույթի զարգացման ժառանգականության վերաբերյալ, օգնել հասկանալու մշակույթի արտաքին ձևերի դինամիկան, հասարակական կյանքի տարբեր կողմերը, օրինաչափությունները տարածության և ժամանակի մեջ,պատկերացում տալ գիտակարգի ուսումնասիրության եղանակների, ժամանակագրական որոշակիություն ունեցող փաստերի գրանցման, դրանց ուսումնասիրության հնագիտական մեթոդների և գիտելիքներ ձեռք բերելու ուղիների վերաբերյալ

Դասընթացի խնդիրները.

1. Քննարկել հնագիտության հիմնախնդիրները, զարգացման ժամանակակից միտումները, գիտակարգում գործածելի հասկացությունները, հուշարձանների հետազոտության մեթոդները:
2. Բնութագրել հնագիտական սկզբնաղբյուրների հիմնական տեսակները, դրանց առանձնահատկությունները և պատմական ճանաչողության հնարավորությունները:
3. Ներկայացնել գիտակարգի զարգացման փուլերը, քննարկել համաշխարհային պատմության և Հայաստանի պատմության ուսումնասիրության ասպարեզում ձեռք բերված նվաճումները:
4. Ձևավորել գրականության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ, զարգացնել կարողություններ մասնակցելու քննարկումներին և հանդես գալու պատմական թեմաների շրջանակներում:
5. Ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ, որոնք ուսումնառողը կարող է համադրել ՄԿԾ-ով սահմանված այլ դասընթացներին, զարգացնել ստեղծագործական և վերլուծական մտածողություն:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նշելու պատմության հնագիտական պարբերացումը, թվարկել փուլերը ենթափուլերով, սահմանել ժամանակագրական փոփոխությունները, նշել ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրները:
2. Ներկայացնելու հիմնական հասկացությունները, բացատրել դրանց իմաստային նշանակությունն ու կիրառելիությունը:
3. Ներկայացնելու հնագիտական հուշարձանները, դրանց ուսումնասիրության արդյունքները, հնագիտական

մշակույթները, դրանց տարածման արեալները և առանձնահատկությունները:
4. Ներկայացնելու հնագիտական պեղումների կազմակերպման և իրականացման ընթացքը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու հնագիտական պարբերացման շրջափուլերը, հուշարձանների շերտագրական դասավորության հիման վրա վաղ ձևերը առանձնացնել ուշ ձևերից, մեկնաբանելու փոփոխությունների ժամանակագրական հաջորդականությունը:
2. Մեկնաբանելու հնագիտական մշակույթները, դրանց բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, կատարել սինխրոն և դիախրոն համեմատություն, առանձնացնել ընդհանրություններն ու տարբերությունները,
3. Ներկայացնելու հնագիտական հուշարձանների ուսումնասիրվածության աստիճանը, գտածոները:
4. Մեկնաբանելու պատմական գործընթացների ու երևույթների համատեքստում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կատարելու հետազոտական բնույթի աշխատանքներ:
2. Ունենալու փաստարկված և տրամաբանված բանավոր և գրավոր խոսք:
3. Խնամքով վերաբերելու պատմամշակութային ժառանգություններին:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Մեկնաբանելու և գնահատելու պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրել պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրել, խմբագրել, մշակել, պահպանել և փոխանցել, փաստագրել և համակարգել, ցուցաբերել քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնել խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսել ու բանավիճել ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային կամ բանավոր մեթոդ
2. ցուցադրման մեթոդ
3. գրավոր մեթոդ
4. բացատրական մեթոդ
5. քննարկում/բանավեճ
8. ուղղորդված գրառումներ
9. տեղեկատվության որոնում
10. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու նպատակով անցկացվում են 2 ընթացիկ քննություններ (գրավոր՝յուրաքանչյուրը 5 միավոր) և եզրափակիչ քննություն (10 միավոր): Քննատոմսն ընդգրկում է 4 հարց: Արդյունարար գնահատականը համարվում է դրական, երբ ուսումնառողը վաստակում է նվազագույնը 8 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Հնագիտություն առարկան, խնդիրները, տեղը պատմական գիտությունների համակարգում: Մշակույթի նյութական մնացորդների հնագիտական ուսումնասիրություններն ու նրանց պատմական արժեքը: **Թեմա 2**. Հնագիտության ձևավորումն ու պատմությունը: **Թեմա 3.** Հնագիտության փորձարարական հնարավորությունները և տերմինաբանությունը: **Թեմա 4.** Հնագիտական ուսումնասիրության աստիճանները, կիրառվող մեթոդները: **Թեմա 5**. Պատմության և մշակույթի պատմահնագիտական պարբերացումը, ժամանակագրությունը: **Թեմա 6.** Հայոց պատմության հնագիտական ուսումնասիրությունը մինչև արտադրական տնտեսության ձևավորումը: **Թեմա 7**. Արտադրական տնտեսության ձևավորումը Հայկական լեռնաշխարհում և Մերձավոր Արևելքում: **Թեմա 8**. Հայաստանում վաղ դասակարգային հասարակության հնագիտական ուսումնասիրության նախնական արդյունքները: Հնագույն պետականության սաղմնավորումն ըստ Հայաստանի

հնագիտության: **Թեմա 9**. Տավուշի մարզի հնագիտական հուշարձանները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Օ.Խնկիկյան, Հայաստանի հնագիտություն (հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը), Եր. 2009:
2. Ս.Եսայան, Հայաստանի հնագիտություն, Եր. 1992:
3. А. Арциховский, Основы археологии, М., 1955 .
4. А.Мартынов, Я. Шер, Методы археологического исследования, М., 2002.
5. И.Кругликова, Античная Археология, М., 1984.
6. Б.Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949.
7. Г.Матюшин, Археологический словарь, М., 1996.

1. 0304/B48	2. Թանգարանագիտություն և արխիվագիտություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0 /15	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ թանգարանագիտության և արխիվագիտության վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները.

1. Քննարկել թանգարանագիտության և արխիվագիտության հիմնախնդիրները, զարգացման ժամանակակից միտումները, գործածելի հասկացությունները, մեթոդները:
2. Ներկայացնել թանգարանների հիմնական տեսակները, դրանց առանձնահատկությունները և պատմական ճանաչողության հնարավորությունները:
3. Ներկայացնել թանգարանային և արխիվային գործունեությունը, ձեռք բերված նվաճումները, իրավական նորմերը:
4. Ձևավորել գրականության հետ ինքնուրույն աշխատելու հմտություններ, զարգացնել կարողություններ մասնակցելու քննարկումներին և հանդես գալու պատմական թեմաների շրջանակներում:
5. Ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ, որոնք ուսումնառողը կարող է համադրել ՄԿԾ-ով սահմանված այլ դասընթացներին, զարգացնել ստեղծագործական և վերլուծական մտածողություն:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նշելու թանգարանների ձևավորման պատմական շրջափուլերը, ներկայացնելու յուրաքանչյուր շրջափուլերում հավաքածուական գործունեություն իրականացնող կենտրոնների գործունեությունը:
2. Ներկայացնելու հիմնական կոնցեպցիաները, գործածելի հասկացությունները, բացատրելու դրանց իմաստային նշանակությունն ու կիրառելիությունը:
3. Նշելու աշխարհի հայտնի թանգարանները, Հայաստանի թանգարանները, թվելու պատմական արժեք ներկայացնող ցուցանմուշները:
4. Ներկայացնելու թանգարանների տեսակները, թանգարանները ենթարկելու դասակարգման՝ կիրառելով դասակարգման սկզբունքները:
5. Ներկայացնելու թանգարանային և արխիվային գործունեությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու թանգարանային և արխիվային փաստարկները, համադրելու և մեկնաբանելու պատմական գործընթացների ու երևույթների համատեքստում, օգտագործելու հետազոտական բնույթի աշխատանքներում:
2. Նախագծելու թանգարանային այցելությունների ծրագիր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու խմբում:
2. Դրսևորելու մասնագիտական վարքագիծ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում

պատմական փաստերի նկատմամբ:
Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:
Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային կամ բանավոր մեթոդ
2. ցուցադրման մեթոդ
3. գրավոր մեթոդ
4. բացատրական մեթոդ
5. քննարկում/բանավեճ
6. ուղղորդված գրառումներ
7. տեղեկատվության որոնում
8. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու նպատակով նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Թանգարանագիտությունը որպես գիտություն, տեղը մյուս գիտությունների համակարգում, գիտակարգի հիմանական հասկացությունները: **Թեմա 2**. Թանգարանների ծնունդը և զարգացումը: **Թեմա 3**. Հայաստանի թանգարանների պատմությունից: **Թեմա 4.** Թանգարանների դասակարգումը ըստ տիպերի: **Թեմա 5**. Թանգարանների կառավարում և մարքեթինգ: **Թեմա 6.** Թանգարանային ֆոնդեր, ցուցադրություն, ցուցահանդես: **Թեմա 7**. Թանգարանի հանրահռչակում, ինֆորմացիա և գովազդ: **Թեմա 8**. Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը թանգարաններում: **Թեմա 9**. Արխիվագիտությունը որպես գիտություն, տեղը մյուս գիտությունների համակարգում, գիտակարգի հիմանական հասկացությունները: **Թեմա 10**. Արխիվային գործ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Էդիտ պրինտ, Եր., 2007:
U4.Ներկայացնելու և մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը**:**

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելուաշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. զեկուցում
4. ռեֆերատ
5. քննարկումներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում առավելագույնը 20 միավոր արժեքով բանավոր քննություն:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ներածություն: **Թեմա 2.** Նստակյաց բնակավայրի առաջացումը և քաղաքային հեղափոխությունը: Ագրոթաունի գաղափարը:**Թեմա 3.** Քաղաքագոյացման հիմնական օջախները: Տաճարական քաղաքի

ձևավորման փուլերը: **Թեմա 4.** Ռազմական կայսրությունների և դասական ժամանակաշրջանի քաղաքները: **Թեմա 5.** Միջնադարյան քաղաքային կենտրոնները Հայաստանում, դրանց հիմնական տիպերը: **Թեմա 6.** Արևելյան քաղաքն ու դրա առանձնահատկությունները, քաղաքային կյանքը Եվրոպայում: **Թեմա 7.** Քաղաքագոյացման գործընթացի ընդհանուր օրինաչափությունները, նոր տիպի քաղաքի կառուցվածքը: **Թեմա 8.** Քաղաքը որպես համակարգ մեծ քաղաքների համակարգում: **Թեմա 9.** Մեգապոլիս: **Թեմա 10.** Քաղաքային բնակչության թվի շարժընթացը: **Թեմա 11.** Նոր քաղաքներ. վերացական գաղափարներ և իրատեսական վիճակներ: **Թեմա 12.** Հայաստանի քաղաքային բնակչության թվի շարժընթացը և ուրբանիզացման գործընթացները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մ.Մանասյան, Բնակչության աշխարհագրություն, Եր. 2010:
2. Ю.Пивоваров, Основы геоурбанистики, М.1999,
3. Ю.Бочаров, Производство и пространственная организация городов, М. 1987г,
4. Г.Лаппо, Города на пути в будущее М.1987
5. Пивоваров Ю.Л., Основы геоурбанистики / Пивоваров Ю.Л. – М.: Гуманитар. изд. центр «Владос», 1999.

1.0302/ B28	2.Գրաբար-1	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 0/45/0	
6. 3-րդ կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8. **Դասընթացի նպատակն է** հակիրճ ներկայացնել գրաբարը՝ որպես գրական լեզու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով: Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:

Դասընթացի խնդիրներն են՝

1. Ուսանողին ներկայացնել գրաբարի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ուղղախոսության-ուղղագրության նորմերը:
2. Իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը:
3. Լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը,
4. Տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործումը,
5. Հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանումը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և նկարագրելու գրաբարի զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու գրաբարի գրության և արտասանության փոխհարաբերությունները, գրաբարի հնչյունափոխությունը:
3. Վերարտադրելու և թվարկելու գրաբարի բայ խոսքի մասի թեքական այն առանձնահատկությունները, որոնցով գրաբարը տարբերվում է ժամանակակից հայերենից:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Անսխալ ընթերցելու, մեջբերելու և մեկնաբանելու գրաբար տեքստերը և զերծ մնալու գրաբար ուղղագրական սխալներից:
2. Խոնարհելու բայերը բոլոր ժամանակային ձևերով:
3. Թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ արժևորելով դրանք տեքստում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Բացահայտելու գրաբարի ոճերը, բայաձևերի քերականական իմաստները:
2. Ճիշտ վերծանելու բառերի կառուցվածքային պլանում կատարված պատմական հնչյունափոխության դրսևորումները, մեկնաբանելու երկբարբառների և եռաբարբառների հնչունաբանական փոփոխությունները:

3. Մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. բանավեճ
3. զրույց
4. խմբային աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2, 3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին) կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գրաբարը՝ որպես հին հայերենի զարգացման շրջան: Գրաբարի ընդհանուր առանձնահատկությունները: **Թեմա 2.** Գրաբարի հնչյունական համակարգը. երկբարբառներ և եռաբարբառներ: **Թեմա 3**. Գրաբարի դերբայները: **Թեմա 4**. Գրաբարի խոնարհման համակարգը. սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներ: **Թեմա 5**. Գրաբարի անկանոն բայերը: **Թեմա 6**. Գրաբարի պակասավոր բայերը: Պատճառական բայեր: Գրաբարի բաղադրյալ ժամանակները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ա, Գրաբարի ձեռնարկ, Եր.,1977:
2. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:
3. Գոճանյան Պ., Դասական գրաբարի գործնական քերականություն, Եր., 2011:
4. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
5. Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1975:

1.0302/B32	**2.Գրաբար-2**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 3 ժամ/շաբ.	**5. 0/45/0**	
6. 4-րդ կիսամյակ	**7. առանց եզրափակիչ գնահատման**	

8. Դասընթացի նպատակն է հակիրճ ներկայացնել գրաբարը՝ որպես գրական լեզու, նրա խոսակցական հիմքը, ինչպես նաև հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն բաժիններն իրենց առանձնահատկություններով: Գրաբարի ուսումնասիրությունն անհրաժեշտ է ուսանողների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության զարգացման նպատակով: Գրաբարի իմացությունը նպաստելու է հայապահպանությանը, ինքնարժևորմանն ու մղելու է շատերին՝ պատմիչներին բնագրով կարդալու:

Դասընթացի խնդիրներն են՝

1. Ներկայացնել գրաբարի հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունները:
2. Իմաստաբանության, բառապաշարի շերտերի, դարձվածաբանության յուրացմամբ հարստացնել

ուսանողների բառապաշարը, կիրառելի դարձնել հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների, դարձվածքների գործածությունը:
3. Լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորումը:
4. Տեքստի թարգմանության և վերլուծության միջոցով գրվածքի լեզվառճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործումը:
5. Հայ հին պատմիչների գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունների մեկնաբանումը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու և մեկնաբանելու գրաբարի անվանական հոլովման առանձնահատկությունները:
2. Թվարկելու և զանազանելու դերանվան տեսակները, լուսաբանելու դրանց հոլովման յուրահատկությունները, ներկայացնելու ածական, թվական, շաղկապ խոսքի մասերի տեսակները և քննարկելու դրանց քերականական առանձնահատկությունները:
3. Զանազանելու գրաբարի նախդիրներն ու նախադրությունները, լուսաբանելու դրանց կարևորությունն ու գործածության առանձնահատկությունները գրաբարի շարահյուսական համակարգում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու և բացատրելու գոյականների, ածականների, թվականների և դերանունների հոլովման յուրահատկությունները:
2. Պարզաբանելու և ցույց տալու գրաբարյան բնագրերի քերականական առանձնահատկությունները:
3. Քննելու և թարգմանելու պատմիչների երկերից հատվածներ, բնութագրելու ոճական կառույցները՝ դրանք արժևորելով տեքստում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ձևաբանորեն վերլուծելու գրաբարի հոլովները, տարբեր բառաձևերի քերականական իմաստներ:
2. Հակադրելու և զանազանելու գրաբարի անվանական և դերանվանական հոլովումները, ինչպես նաև գործառելու գրաբարի շարահյուսական յուրահատկությունների վերաբերյալ յուրացրած գիտելիքները:
3. Հակադրելու, մշակելու, ընդհանրացնելու և մեկնաբանելու լեզվաբանական տարբեր աղբյուրներից հայթայթած տեղեկատվությունը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

ԲՏ.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսք մասնագիտական հաղորդակցության:

Գ 2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. բանավեճ
3. զրույց
4. խմբային աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան,

2-րդ ընթացիկ ստուգում. գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Անցկացվում է գրավոր: Հարցատոմսը պարունակում է 4 առաջադրանք՝ յուրաքանչյուրը 2, 2, 2,3 միավորով, քայլը 0,5 միավոր է: 1 միավոր տրվում է լսարանային և ինքնուրույն աշխատանքների (վարժությունների, առաջադրանքների, թարգմանությունների կատարում, լսարանային գնահատման միավորից հանված միջին)կատարման մակարդակին համապատասխան:

Գնահատման համար պահանջվող փաստերն են ինքնուրույն աշխատանքների, գործնական պարապմունքների գնահատականները:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Գրաբարի անվանական հոլովումը: **Թեմա 2.** Գրաբարի դերանվանական հոլովումը: **Թեմա 3**. Անձնական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 4.** Ցուցական դերանունները և նրանց հոլովումը: **Թեմա 5.** Ստացական և փոխադարձ դերանուններ: Հարցահարաբերական և անորոշ դերանուններ: Որոշյալ դերանուններ: **Թեմա 6**. Ածական անուն: Ածականների համեմատության աստիճանների կազմությունը: Թվականը գրաբարում: **Թեմա 7**. Գրաբարի նախդիրները և նախադրությունները: Գրաբարի հոդերը: Գրաբարի շաղկապները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր.,1977:
2. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2007:
3. Գոճանյան Պ., Դասական գրաբարի գործնական քերականություն, Եր., 2011:
4. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
5. Շարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Եր., 1975:

1.0304/B38	**2. Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն**	**3. 4 կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.30/0/15**	
6. 5-րդ կիսամյակ	**7.առանց եզրափակիչ գնահատման**	

8.Դասընթացի նպատակն է սովորեցնել աղբյուրագիտության կազմավորման, կայացման և զարգացման խորքային տեղաշարժերը, աղբյուրագիտական ճանաչողության ընդհանուր միտումներն ու բովանդակությունը, բացատրել աղբյուրագիտական մեթոդների և տեսության կարևորությունը համաշխարհային պատմության գործընթացների ուսումնասիրման գործում, վեր հանել սկզբնաղբյուրների բովանդակությունն ու կառուցվածքային առանձնահատկությունները պատմական տարբեր դարաշրջաններում, բացահայտել փաստերից օգտվելու և պատմագիտորեն շարադրելու մեթոդները:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել համաշխարհային պատմության աղբյուրագիտական հենքը:
2. Ուսումնասիրել պատմական տարբեր դարաշրջաններում ստեղծված աղբյուրների բովանդակությունն ու կառուցվածքը:
3. Ներկայացնել փաստերից օգտվելու և գիտական հետազոտությունների կատարելու մեթոդները:

9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.

ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացատրելու և հիմնավորելու աղբյուրագիտական հղացքների ու տեսությունների, ինչպես կայացման ու ձևավորման, այդպես և փոխակերպությունների ընթացքը:
2. Քննարկելու և մեկնաբանելու աղբյուրագիտության տեսության հիմնական ներկայացուցիչների ուսմունքներն ու տեսությունները:
3. Հիմնավորելու աղբյուրագիտության և հումանիտար այլ գիտակարգերի (քաղաքակրթություն, պատմագիտություն, մշակութաբանություն, ընկերաբանություն, փիլիսոփայություն և այլն) փոխկապվածությունն ու փոխներգործությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու պատմական սկզբնաղբյուրների և փաստերի հավաքման, մշակման, շարակարգման և կիրառման վերլուծական մեթոդները:
2. Կիրառելու աղբյուրագիտական գիտելիքներն ու հմտությունները ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացման և ներկայացման համար:
3. Տիպաբանելու և վերլուծելու տարբեր դարաշրջանների աղբյուրագիտական հղացքներն ու հարացույցները, դրանց խորքային տեղաշարժեն ու հիմնարար արդյունքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Համակարգելու ձեռք բերված փաստերն ու գիտելիքները և իրականացնելու հետազոտական աշխատանքներ աղբյուրագիտական հետազոտական աշխատանքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ:
2. Օգտվելու տեղեկատվական-հաղորդակցական տարատեսակ սկզբնաղբյուրներից և քննադատաբար վերագնահատելու աղբյուրագիտության արդի և ավանդական հիմնախնդիրները՝ համադրելով տեսական և պրակտիկ հարացույցները:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա2.Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմության վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ4.Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:

Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. PowerPoint-ով ներկայացումներ
3. հարցադրումներով սեմինար-քննարկումներ, բանավեճեր
4. խմբային և ինքնուրույն աշխատանքների վրա հիմնված քննարկումներ
5. հանձնարարված գրականության ընթերցում և քննարկում
6. նախադեպերի վերլուծություն:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված է 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Աղբյուրագիտության առարկան և խնդիրները: **Թեմա 2**. Պատմական սկզբնաղբյուրն իբրև սոցիալական տեղեկատվության կրիչ: **Թեմա 3**. Աղբյուրագիտության՝ իբրև ինքնուրույն գիտակարգի կայացումը: **Թեմա 4**. Պատմական սկզբնաղբյուրների դասակարգման և վերլուծության հիմնախնդիրները: **Թեմա 5**. Աղբյուրագիտության մեթոդաբանության և պատմագիտության մեթոդաբանության փոխհարաբերությունները: **Թեմա 6**. Սկզբնաղբյուրների հետ հետազոտողի աշխատանքների հիմնական փուլերը: **Թեմա 7**. Աղբյուրագիտությունը և պատմական ճանաչողությունը:

14.Հիմնական գրականության ցանկը

1. Русина Ю.А.**,** Методология источниковедения, Екатеринбург, Издательство Уральского университета, 2015.
2. Bazerman Ch., The Informed Writer: Using Sources in the Disciplines, The WAC Clearinghouse. Fort Collins, CO., 2011.
3. Booth C.W., Colomb G.G., Williams M. J.**,** The Craft of Research, Fourth Edition, The University of Chicago Press Chicago & London, 2010.
4. Howell C.M., Prevenier W.**,** From Reliable Sources an Introduction to Historical Methods, Cornell University Press, 2010.
5. Marius R. and Melvin E. P., A Short Guide to Writing about History. 8th ed. White Plains, NY: Longmans, 2012.

1. 0304/B46	2. Հայոց պատմության աղբյուրագիտություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ բազմադարյան մատենագրության ընթացքը՝ աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացը, ներկայացնել ինչպես աղբյուրագիտական նյութերի նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

Դասընթացի խնդիրները.

1. Ծանոթացնել հայ բազմադարյան մատենագրության ընթացքին:
2. Ծանոթացնել աղբյուրագիտական գիտելիքների ձևավորման, կուտակման և համակարգ դառնալու գործընթացին:
3. Ներկայացնել աղբյուրագիտական նյութերի, ինչպես նախագրային շրջանի, այնպես էլ հետգրային շրջանի աղբյուրների վերլուծությունն ու դասակարգումը:

4. Ծանոթացնել ազգային և օտար բոլոր այն հեղինակների երկասիրություններին, որոնցում խոսվում է հայերի և Հայաստանի մասին:
5. Ձևավորել սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Մեկնաբանելու սկզբնաղբյուրների հիմնական խմբերը:
2. Ներկայացնելու պատմական սկզբնաղբյուրների ծագումն ու դասակարգումը:
3. Ներկայացնելու հայ բազմադարյան մատենագրությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու ուսումնասիրվող նյութի դասակարգային բնույթը:
2. Ներկայացնելու սկզբնաղբյուրների արժանահավատությունը և գիտական արժեքը:
3. Վերլուծելու և սինթեզելու պատմական սկզբնաղբյուրները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա2.Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմության վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ4.Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:

Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. սեմինար
3. զեկուցում
4. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ. Նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Ներածություն: Հայկական լեռնաշխարհի համայնական հասարակության պատմության սկզբնաղբյուրներ: **Թեմա 2**. Հին Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 3.** Վաղ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 4.** Զարգացած միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 5.** Ուշ միջնադարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 6.** Հայ ժողովրդի նոր պատմության սկզբնաղբյուրները: **Թեմա 7.** Հայ ժողովրդի նորագույն պատմության սկզբնաղբյուրները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1, 2, Երևան, 1944, 1946:

2. Ստ. Մելիք –Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1996:
3. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա հ. 1, Երևան, 2011:
4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա հ. 1, Երևան, 2012:
5. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Երևան, 1976:

0304/B41	2.Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն	4 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5.30/0/15	
6. 5-րդ կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել պատմական գործընթացի վերաբերյալ տարբեր ժամանակներում առաջ քաշված հայեցակարգերը, լուսաբանել պատմական գործընթացը կերտող գործոնների հետազոտման հիմնական սկզբունքները, պատմագիտության գործառույթների լուսաբանման հիմամբ վեր հանել պատմական ճանաչողության յուրահատկությունը, հիմնավորել պատմական հետազոտության և նրա մեթոդաբանության կապի անհրաժեշտությունը:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել պատմական գործընթացի վերաբերյալ տարբեր ժամանակներում առաջ քաշված հայեցակարգերը:
2. Վեր հանել պատմական ճանաչողության յուրահատկությունը:
3. Հիմնավորել պատմական հետազոտության և նրա մեթոդաբանության կապի անհրաժեշտությունը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու պատմագիտական առավել նշանակալի տեսությունները և մեթոդաբանական դպրոցները:
5. Մեկնաբանելու պատմական գործընթացը կերտող գործոնների հետազոտման հիմնական սկզբունքները:
6. Մեկնաբանելու եվրոպական պատմագիտական մտքի առանձնահատկությունները:
7. Թվարկելու և մեկնաբանելու պատմագիտության տեսության և մեթոդաբանության տերմինաբանությանը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու պատմական ճանաչողության յուրահատկությունը:
2. Հիմնավորելու պատմական հետազոտության և նրա մեթոդաբանության կապի անհրաժեշտությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
3. Կատարելու գիտական հետազոտություններ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա2.Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմության վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ4.Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:

Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. սեմինար
3. քննարկումներ
4. ռեֆերատ

5. գրավոր աշխատանքներ։

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ ստուգումները. նախատեսված է 2 ընթացիկ ստուգում, յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով։

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Պատմագիտության տեսություն և մեթոդաբանություն դասընթացի առարկան, խնդիրները, նպատակները: **Թեմա 2**. Պատմագիտությունը իբրև ուրույն հետազոտական միջավայր՝իր օբյեկտով, սուբյեկտով, գործառույթներով, հիմնախնդիրներով և մեթոդներով: **Թեմա 3.** Պատմական ճանաչողության ձևավորման հիմնական փուլերը: **Թեմա 4.** Պատմության գիտականության հիմնախնդիրը. պատմության դրապաշտական /պոզիտիվիստական/ և ռոմանտիկական ընկալումները: **Թեմա 5**. Կ. Մարքսի ֆորմացիոն տեսությունը: **Թեմա 6.** Հասարակության զարգացման քաղաքակրթական մոտեցումները պատմագիտության մեջ: **Թեմա 7.** Պատմագիտության հարացույցը 20-րդ դարասկզբին. «Աննալների» պատմագիտական դպրոցը: **Թեմա 8.** Պատմական հետազոտության վերաբերյալ պոստմոդեռնիստական մոտեցումները: Նոր ուղղություններ պատմագիտական հետազոտություններում: **Թեմա 9**. Պատմական հետազոտության համընդհանուր և հատուկ պատմական մեթոդները: **Թեմա 10.** Պատմական իրադարձություն, երևույթ և գործընթաց: **Թեմա 11.** Պատմական գործընթացը կերտող կարևորագույն գործոնները և դրանց հետազոտման հիմնական սկզբունքները: **Թեմա 12**. Պատմագետի գործունեության դիտանկյունները: Պատմագետ- հետազոտողի տիպը և անձնական որակները: **Թեմա 13**. Պատմագետը իբրև «դարաշրջանի բանական աչք». պատմական ժամանակ, հիշողություն և մոռացում: **Թեմա 14**. Պատմական փաստը և սկզբնաղբյուրի ընտրության սկզբունքներն ու նրա աշխատանքի փուլերը: **Թեմա 15**. Հատուկը և կրկնվողը պատմության մեջ: Պատմական առաջադիմություն և հետադիմությունը: Պատմության այլընտրանքայնությունը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Теория и методология истории: учебник для вузов,/ Отв. Редакторы В.В.Алексеев, Н.Н.Крадин и др./, Волгоград, 2014.
2. История исторического знания,Учебник под.ред. В.В.Зверева, М., 2013.
3. Гринин Л. Е., От Конфуция до Конта: Становление теории, методологии и философии истории, М.,2012.
4. Арьес Ф., Время истории, М.,2011. 5. Бенн С., Одежды Клио, М., 2011.
2. Кондорсе Ж., Эскиз исторической картины прогресса человеческого разума, М., 2011.
3. Смоленский Н., Теория и методология истории, М., 2008.
4. Бродель Ф., Грамматика цивилизаций, М., 2008.
5. Лаптева М., Теория и методология истории, Пермь,2006.
6. 10. Семенов Ю., Философия истории, М., 2003.

1. 0304/B49	2. Հայոց պատմության պատմագրություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 7-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին հիմնարար գիտելիքներ հաղորդել մեր ազգային պատմական գիտության անցած ողջ ուղու մասին՝ սկսած նախագրային շրջանի պատկերացումներից մինչև մեր օրերի պատմագիտական դպրոցները, ուղղությունները, տեսությունները:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել հայ պատմագիտության ուրույն ընթացքը և առանձնահատկությունները:
2. Ներկայացնել հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման, կուտակման և համակարգման ընթացքը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու հայ պատմագրության զարգացման ուրույն ընթացքը և առանձնահատկությունները:
2. Նկարագրելու հայ իրականության մեջ պատմական գիտելիքների առաջացման, կուտակման և համակարգման ընթացքը:
3. Մեկնաբանելու հայոց պատմության պատմագրության խնդիրները, պատմագրական հետազոտությունների տիպերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կողմնորոշվելու պատմագիտության պատմության վիճելի հարցերում:
2. Գնահատելու հայ պատմագրության զարգացման փուլերից յուրաքանչյուրի ինքնատիպությունը և

առանձին նշանավոր պատմիչների դերն ու ավանդը հայ պատմագրության ձևավորման ու առաջընթացի համատեքստում:
3. Պարբերացնելու հայ միջնադարյան պատմագրության ընթացքը, բնութագրել նրա զարգացման առանձին փուլերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Վերլուծելու փաստերը և եզրակացություններ կատարելու՝ հենվելով նախորդ հետազոտողների ձեռքբերումների վրա:
2. Օգտվելու տեղեկատվության ժամանակակից միջոցներից:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1.Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:

Ա2.Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:

Բ3.Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմության վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

Բ4.Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:

Բ6.Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկումներ
4. զեկուցումներ
5. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ. նախատեսված է 2 ընթացիկ քննություն, յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն. եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Պատմական գիտելիքների առաջացումը Հայաստանում: Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը: **Թեմա 2.** Հայ միջնադարյան պատմագրության պարբերացումը: Հայ միջնադարյան պատմագրության բնութագրական գծերը և առանձնահատկությունները: Պատմական երկերի հիմնական տեսակները հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 3.** Պատմության պարբերացումը հայ միջնադարյան պատմագրության մեջ: Պատմական ժամանակը հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 4.** Ստեղծագործական հիմնական եղանակները հայ միջնադարյան պատմագրության մեջ: **Թեմա 5.** Հայ միջնադարյան պատմագրության ականավոր դեմքերը: **Թեմա 6.** Հայ պատմագրության զարգացման պայմանները, ընթացքը, ականավոր ներկայացուցիչները 18-րդ դարի վերջերին-19-րդ դարում: **Թեմա 7.** Հայ պատմագրության առաջընթացը, զարգացման հիմնական միտումները, նշանավոր դեմքերը 20-րդ դարում: **Թեմա 8.** Հայ պատմագրության ներկա վիճակը և հեռանկարները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1977:
2. Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1981:
3. Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1984:

4. Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1965 թթ., ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1967:
5. Ճեմճեմեան Ս., Հ. Միքայէլ Չամչեան եւ իր Հայոց պատմութիւնը, Մխիթարեան տպարան, Վենետիկ, 1983:

1. 0304/B52	2. Փիլիսոփայության պատմություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայական մտքի պատմությունը, որը իբրև գիտություն ուսումնասիրում է փիլիսոփայական մտքի ձևավորման, լինելիության ու զարգացման օրինաչափությունները:

Դասընթացի խնդիրները.

1. Բացահայտել փիլիսոփայական ուղղությունների, դպրոցների ձևավորման և զարգացման ընթացքը, փիլիսոփայական ուսմունքների ընդհանրություններն ու յուրահատկությունները:
2. Ներկայացնել փիլիսոփայական գիտելիքի կապը մյուս գիտությունների, աշխարհայացքի մյուս ձևերի հետ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու փիլիսոփայական մտքի պատմության հինգ խոշոր պատմաշրջանները իրենց ընդհանրությամբ:
2. Բացահայտելու փիլիսոփայական մտքի պատմության հինգ խոշոր պատմաշրջանների ինքնատիպությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու փիլիսոփայական ուղղությունների, դպրոցների ձևավորման և զարգացման ընթացքը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Բ5.Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. զեկուցում
4. ռեֆերատ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված է երկու ընթացիկ ստուգում: Յուրաքանչյուր առավելագույն՝ 10 միավոր արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Փիլիսոփայության պատմության առարկան: **Թեմա 2.** Հին Արևելքի փիլիսոփայությունը: **Թեմա 3.** Անտիկ հունական փիլիսոփայություն: **Թեմա 4**. Դասական շրջանի հունական փիլիսոփայությունը: **Թեմա 5**. Հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայությունը: **Թեմա 6.** Միջնադարյան փիլիսոփայություն: **Թեմա 7**. Սխոլաստիկական փիլիսոփայություն: **Թեմա 8.** Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայությունը: **Թեմա 9**. Նոր ժամանակի փիլիսոփայությունը: **Թեմա 10**. Գերմանական դասական փիլիսոփայություն: **Թեմա 11**. Փիլիսոփայական միտքը 19-րդ դարում: **Թեմա 12**. 20-րդ դարի փիլիսոփայական ուղղությունները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Բուրժուական փիլիսոփայությունը իմպերալիզմի նախօրյակին և սկզբին, Երևան, 1981:
2. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն,Երևան,1980
3. Զաքարյան Ս., Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2000:
4. Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն, Երևան, 1983:
5. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1979:

1. 0202/B53	2.Հայ և համաշխարհային արվեստի պատմություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել նախնադարյան արվեստին, Հին Եգիպտոսի, Միջագետքի, Իրանի, Հին Հռոմի և Հունաստանի մշակույթների պատմության, կրոնա–դիցաբանության, արվեստի առաջացման, զարգացման օրինաչափությունների հետ, ձևավորել գիտելիքներ վերածննդի ժամանակաշրջանի, XVII-XVIIIդդ. եվրոպական արվեստի, XIX-XX դդ. արևմտաեվրոպական և ռուսական գեղարվեստական ուղղությունների մասին /ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ, մոդեռն ոճ, էքսպրեսիոնիզմ, կուբիզմ, աբստրակցիոնիզմ, ֆովիզմ, ֆուտուրիզմ, դադաիզմ, սյուրռեալիզմ, պոստմոդեռնիզմ/, ծանոթացնել հայ արվեստի պատմությանը, նրա զարգացման հիմնական փուլերին, կարևոր ստեղծագործություններին և արվեստագետներին, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Ներկայացնել հայ արվեստի տեղը համաշխարհային արվեստի համատեքստում, բացահայտել հայ արվեստի կապերը հունական, հռոմեական, բյուզանդական, պարսկական, արաբական, ռուսական, եվրոպական արվեստների հետ: Ցուցադրական նյութի և տեսաֆիլմերի հիման վրա ներկայացնել ճարտարապետությունը, քանդակագործությունը և գեղանկարչությունը: Ձևավորել հուշարձանների գիտական վերլուծությունների մասին պատկերացում:

Դասընթացի խնդիրները.

1. «Հայ և համաշխարհային արվեստի պատմություն» առարկայի բովանդակության տիրապետում ուսանողների կողմից:
2. Դարձնել արվեստի կարևոր հուշարձանների հաղորդակիցը իլյուստրատիվ նյութի և տեսաֆիլմերի հիման վրա կամ անմիջականորեն
3. Ուսանողների մոտ ձևավորել լսարանային և արտալսարանային աշխատանքների պլանավորում, ստուգումներ նյութի ուսումնասիրության ընթացքում (սեմինարներ, ինքնուրույն աշխատանքներ, ցուցահանդեսների այցելություն և այլն:)

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու համաշխարհային և հայ արվեստի պատմության օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները, տալ արվեստի սահմանումը, թվարկելու արվեստի տեսակները, ոճերը:
2. Բացատրելու արևելյան բռնակալական երկրների և անտիկ աշխարհի դիցաբանությունը, թվարկելու համաշխարհային և ազգային կրոնները, բացահայտելու արվեստի հետ դրանց կապը, համաշխարհային արվեստի զարգացման առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու համաշխարհային և հայ արվեստի առավել հայտնի հուշարձաններիը և հայտնի վարպետների ստեղծագործությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու համաշխարհային և հայ արվեստի խնդիրները:
2. Զանազանելու տարբեր երկրների արվեստների գլխավոր առանձնահատկութունները, բնորոշիչ գծերը:
3. Տեսանյութերի, կարճամետրաժ ֆիլմերի և իլյուստրատիվ նյութերի միջոցով ցուցադրելու և վերլուծելու արվեստի համաշխարհային հռչակ վայելող ստեղծագործությունները:

գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները:
2. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:
3. Գնահատելու արվեստի գործերի գեղարվեստական արժեքը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3.Գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ5.Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. լսարանայի ցուցադրություններ
3. տեսաֆիլմեր
4. քննարկում
5. բանավեճ
6. սեմինար պարապմունք
7. ռեֆերատ/էսսե
8. անհատական և խմբային առաջադրանքներ:

12. Գնահատման մեթոդները և բանավոր հարցում:չափանիշներն են.

Նախատեսվածէ հանրագումարային քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝0.5 է:

Գնահատման ընդհանուր ռազմավարությունը. Հանրագումարային քննության 20 միավորը տրոհվել է 15+2+1 սկզբունքով, որտեղ մաքսիմալ 2 միավորը ուսանողը վաստակում է սեմինար պարապմունքներից՝ ըստ ընթացիկ քննաշրջանում ուսանողի վաստակած միջին գնահատականի (5-ի դեպքում 2, 4-ի դեպքում 1, 3-ի դեպքում՝ 0,5), մաքսիմալ 3 միավորը՝ կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի իրականացման մակարդակին համապատասխան, մաքսիմալ 1 միավորը՝ ուսանողի ընդհանրական կարողությունների դրսևորման համար, և մաքսիմալ 15 միավորը՝ բանավոր քննության միջոցով մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման համար:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ներածություն. Նախնադարյան արվեստ: **Թեմա 2.** Հին քաղաքակրթությունների արվեստների ընդհանուր բնութագիրը և հիմնական հուշարձանները: **Թեմա 3**. Հին Հունաստանի և Հռոմի արվեստի հիմնական շրջանները և հուշարձանները: **Թեմա 4.** Միջնադարյան արևելաքրիստոնեական և արևմտաքրիստոնեական արվեստ.: **Թեմա 5.** Վերածննդի արվեստը: **Թեմա 6.** XVII դարի արվեստի ընդհանուր բնութագիրը. իտալական, ֆլամանդական, հոլանդական, իսպանական դպրոցները: **Թեմա 7.** 18-19-րդ դդ արվեստի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 8.** Իմպրեսիոնիզմ, պոստիմպրեսիոնիզմ: **Թեմա 9.** Մոդեռնիզմի ուղղությունները: **Թեմա 10.** Արդի արվեստ: **Թեմա11.** Հին հայկական և ուրարտական արվեստ: **Թեմա 12.** Միջնադարյան հայ արվեստ: **Թեմա 13.** Հայ կերպարվեստագետները 19-րդ դ. և 20-րդ դարի 1-ին կեսին: **Թեմա 14**. Խորհրդային շրջանի հայ արվեստը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մ.Կուզմինա, Ն.Մալցևա, Արտասահմանյան արվեստի պատմություն, Երևան 2003:
2. Հ.Հակոբյան, Մ.Հասրաթյան, Համաշխարհային և հայ արվեստի պատմության ուղեցույց, Երևան 2005:
3. Памятники мирового искусства, т 7, Т 8, Москва 1971-1987:
4. Третьяковская галерея, Москва,1972.
5. Թորոմանյան Թ.,Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ.1,հ 2, Երևան 1942-1948:
6. Մարտիկյան Ե.,Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա,Բ, Գ,Դ Երևան 1971-1987:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՍԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

1. 0304/B55	**2.Դեմոկրատիայի պատմություն -1**	**3. 4 ECTS կրեդիտ**
4.3 ժամ/շաբ.	**5.30/0/15**	
6.6-րդ կիսամյակ	**7.Առանց եզրափակիչ գնահատման**	

8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի ծնունդը, զարգացումը և անկումը անտիկ քաղաքակրթության, մասնավորապես պոլիսային համակեցության համատեքստում, քննության ենթարկել անտիկ ժողովրդավարության ինստիտուցիոնալ կառույցը (քաղաքացիության ինստիտուտ, աշխարհաժողով, պետական խորհուրդ, պաշտոնեություն, դատարաններ և այլն), գաղափարախոսական հենքը, ժողովրդավարության դրսևորումները միջնադարյան Եվրոպայում, դիտարկել «ժողովրդավարություն» հասկացության մշակումը, նրա հարաբերակցումը քաղաքական կառավարման մյուս ձևերի հետ անտիկ և միջնադարյան հասարակական-քաղաքական, իմաստասիրական մտքի ծիրում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ժողովրդավարությունն իբրև հասարակության կառավարման ձևի առաջացման

պատճառները, զարգացման փուլերը Հին Հունաստանում, Հռոմում և միջնադարյան Եվրոպայում:
2. Համեմատելու անտիկ և միջնադարյան ժողովրդավարության առանձնահատկությունները:
3. Բացատրելու ժողովրդավարական հաստատությունների գործառույթները, իրավասությունները, դրանց գործառման ընթացակարգը:
4. Սահմանելու անտիկ ժողովրդավարության զարգացման ընդհանուր միտումներն ու առանձնահակությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մասնակցելու ժողովրդավարության վերաբերյալ քննարկումներին:
2. Իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջոլորտային հետազոտությունների վերլուծություն:
3. Ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Օգտվելու մասնագիտական գրականությունից:
2. Մասնակցելու բազմաբնույթ քննարկումներին, վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները:
3. Արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները:
4. Պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
5. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդմաների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. դիդակտիկ նյութերի օգտագործում
4. բանավեճ
5. կլոր սեղան-քննարկում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին Ա: Ժողովրդավարական կարգի կայացման պատճառները Աթենքում: Ժողովրդավարական հաստատությունները, դրանց համալրման սկզբունքները, գործառույթները, իրավասությունները, գործառումը Հին Հունաստանում:

Բաժին Բ: Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Հին Հռոմում: Հանրապետական կարգի ճգնաժամի և անկման պատճառները: Հռոմեական ժողովրդավարության պատմական նշանակությունը:

Բաժին Գ: Ժողովրդավարության զարգացման առանձնահատկությունները Միջնադարյան Եվրոպայում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. А.Г.Буйчик, Э.Ч.Зайнагабдинова, Е.В.Сорокина, История социума и демократии. В 2 кн. Книга 1: Древний мир, Средневековье и эпоха Возрождения /А.Г.Буйчик, Э.Ч.Зайнагабдинова, Е.В.Сорокина; СЗ НИИ КиПН. СПб., 2007.
2. Dunn J., Democracy: a history. Atlantic Monthly Press, 2006

3. Dunn J. Democracy: a history. Atlantic Monthly Press, 2006
4. Keane J. Violence and Democracy. Cambridge University Press, 2004
5. Ober J. Democracy and knowledge: innovation and learning in classical Athens. Princeton University Press,2008

1. 0304/B56	2.Դեմոկրատիայի պատմություն -2	3.4 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ	5.30/0/15	
6.7-րդ կիսամյակ	7.Առանց ընթացիկ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել ժողովրդավարության որպես հասարակության կառավարման ձևի զարգացումը նոր և նորագույն դարաշրջաններում: Համեմատելու և համադրելու տարբեր կառավարման ձևերն ու պետական կառուցվածքները, մարդու և իշխանության փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Հասկանալ, թե ինչու արևմտյան քաղաքագիտական միտքը հանգեց այն դատողությանը, որ պետական կառավարման և մարդկային համակեցության արդյունավետ գործունեության համար մարդու կառավարման ձևերից ժողովրդավարությունն ամենաարդյունավետն է և ընդունելի:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բացատրելու ժողովրդավարությունը զարգացման փուլերը:
2. Թվարկելու նոր և նորագույն դարաշրջաններում դեմոկրատիա եզրույթի զարգացաման ձևերն ու առանձնահատկությունները:
3. Համեմատելու անտիկ և միջնադարյան դեմոկրատիայի փորձը արդի քաղաքագիտական տեսությունները ուսումնասիրելիս և վերլուծելիս:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մասնակցելու ժողովրդավարության վերաբերյալ քննարկումներին:
2. Իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջոլորտային հետազոտությունների վերլուծություն:
3. Ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Օգտվելու մասնագիտական գրականությունից:
2. Մասնակցելու բազմաբնույթ քննարկումներին, վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները:
3. Արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները:
4. Պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
5. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա3.Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:

Ա4.Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4.Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. դիդակտիկ նյութերի օգտագործում
4. բանավեճ
5. կլոր սեղան-քննարկում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Նախատեսվածէ հանրագումարային քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով, միավորների քայլը՝ 0.5 է:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Բաժին 1. Ժամանակակից ժողովրդավարության մեխանիզմների ամրագրումը 18-րդ դարի վերջին Միացյալ Նահանգներում: **Բաժին 2.** Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունն և դրա ազդեցությունը 19-րդ դարի Եվրոպայի քաղաքականացման և ժողովրդավարացման հիման վրա: **Բաժին 3**. Արդի ժողովրդավարության տարբերակների կոնսոլիդացումը Ամերիկյան և Ֆրանսիական ժողովրդավարության ձեռքբերումների հիման վրա: **Բաժին 4.** Ժողովրդավարական ինստիտուտները և քաղաքացիական հասարակությունը արդի դարաշրջանում: Հայաստանը արդի ժողովրդավարության համատեքստում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Heideking J.; Henretta J.A., Becker P., Republicanism and Liberalism in America and the German States, 1750-1850. Cambridge University Press, 2002
2. Ober J., Democracy and knowledge: innovation and learning in classical Athens. Princeton University Press, 2008
3. Powell A., Athens and Sparta: Constructing Greek Political and Social History from 478 BC. Routledge, 2001
4. Robinson E.W., Ancient Greek Democracy: Readings and Sources. Blackwell Publishing, 2003
5. Raaflaub K.A., Ober J., Wallace R.W., Origin of Democracy in Ancient Greece. University of California Press, 2007
6. De Sainte, C. G. E. M., The Class Struggle in the Ancient Greek World. Cornell University Press, 2006

1. 0304/B54	2. Պառլամենտարիզմի պատմություն	3.4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ	5. 40/0/20	
5-րդ կիսամյակ	առանց ընթացիկ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել պառլամենտի՝ որպես պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմնի և պառլամենտական կարգերի առաջացման ու զարգացման պատմական պայմանները, հետազոտել տարբեր երկրներում պառլամենտի ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք վերջնականորեն օրենսդրականորեն ձևակերպվել և ամրագրվել են ժամանակակից երկրների սահմանադրություններում և օրենսդրական ակտերում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ներկայացնելու տարբեր երկրներում դասային ներկայացուցչական միապետության օրենսդիր մարմնի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները:
2. Սահմանելու այդ երկրների զարգացման քաղաքացիական հասարակությունների ձևավորման առանձնահատկությունները:
3. Գիտակցելու ժողովրդավարական գործընթացների շարժընթացը ամերիկյան և եվրոպական հասարակություններում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Մասնակցելու կառավարման համակարգերի վերաբերյալ քննարկումներին:
2. Բազմակողմանիորեն վերլուծելու և գնահատելու երկրի կառավարման պառլամենտական ձևերի արդյունավետությունը:
3. Իրականացնելու ինքնուրույն և խմբային աշխատանքներ, միջոլորտային հետազոտությունների վերլուծություն:
4. Ներկայացնելու առաջարկներ մասնագիտական ոլորտի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ:
5. Վերլուծելու Հայաստանում կատարվող պառլամենտական փոփոխությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Օգտվելու մասնագիտական գրականությունից:
2. Մասնակցելու բազմաբնույթ քննարկումներին, վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ հնարավորությունները:
3. Արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները:
4. Պատրաստելու զեկույցներ, ներկայացնելու հետազոտական աշխատանքների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:
5. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ2.գնահատելու, վերլուծելու, զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը՝ ծառայեցնելով իր ազգի և պետության ինտեգրմանը համաշխարհային ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Պասիվ դասախոսություն
2. Ակտիվ դասախոսություն
   - ✓ *հարց ու պատասխան*
   - ✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն

- ✓ *«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում*
- ✓ *հարց ու պատասխան*
- ✓ *բանավեճ*

զրույց:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:

2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2.** Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3.** Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսկական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4.** Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակորգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5.** Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6.** Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7.** Քարոլորտի կառուցվածքը:Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը; ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը; պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ., Ժամհարյան Հ.Գ., Խոյեցյան Ա.Վ., Մովսեսյան Հ.Ս., Փիրումյան Գ.Պ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, «Զանգակ-97», 2010, -224 էջ
2. Գրիգորյան Ա., ԱղասյանԱ., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008
3. Մելքումյան Լ.Ս., Գալստյան Մ.Հ., Բնապահպանույան հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ.-Երևան, «Զանգակ-97», 2010.-312 էջ
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն.Կ. , Էկոլոգիա , «Զանգակ-97», Երևան, 2002 ,-64 էջ
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, «Дашков и К» 2005,-264с.

0104/B13	Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	2 կրեդիտ
2 ժամ	15/15/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:
2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ5.կազմակերպելու և կառավարելու և ըստ իրավիճակի ադապտացնելու մասնագիտական

գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը,
Գ1.օգտագործելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,
Գ2.գնահատելու, վերլուծելու, զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը՝ ծառայեցնելով իր ազգի և պետության ինտեգրմանը համաշխարհային ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը,
Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. ինքնուրույն խատանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարքն անց է կացվում բանավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 2.** Նմուշային եղանակ: **Թեմա 3.** Գնահատման տեսություն: **Թեմա 4.** Միջակայքային գնահատականներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г.И., Медведев Ю.И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.

0304/B15	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
4 ժամ	30/0/30	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

Դասընթացի խնդիրները.
1. բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
2. բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
3. հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:
2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:
3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի
Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակար-

գային կապերն ու հարաբերությունները,
Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,
Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից

Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7**. Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:
3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:
4. Գաբրիելյան Հ., Հայ փիլսոփայության պատմություն, Երևան, 1980:
5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:
6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:

0304/B14	Իրավունքի հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
3-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

Դասընթացի խնդիրները

1. ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
2. ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
2. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
3. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ:
2. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
3. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,
Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:
Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. զեկուցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են
Ստուգարք Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից
Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4.** Քրեական իրավունք: **Թեմա 5.** Աշխատանքային իրավունք: **Թեմա 6.** Ընտանեկան իրավունք: **Թեմա 7.** Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8.** Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10.** Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11.** Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12.** Միջազգային իրավունք:

Հիմնական գրականության ցանկ.

1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:

0001/B04, B09	Ֆիզդաստիարակություն	0 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին, 2-րդ կիսամյակներ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.
- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>
1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնաղաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը

զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրելու դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտու-րայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
   - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
   - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
   - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>1-ին կիսամյակ</u>

Թեմա 1. Ֆիզիականական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 2.** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: **Թեմա 3.** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և

ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: **Թեմա 4.** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

2-րդ կիսամյակ

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: **Թեմա 2.** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: **Թեմա 5.** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: **Թեմա 6.** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: **Թեմա 7.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիականական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիականական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբասյան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժու-թյուններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխու-թյունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

0001/B12, B16	Ֆիզդաստիարակություն	0 կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
3-րդ, 4-րդ կիսամյակներ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել

ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,

- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

1. հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
2. ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
3. ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
4. ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնաղաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
5. ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկելու սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկելու նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնելու տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկելու հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանելու անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանելու նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարելու ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն,
2. աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ,
3. վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները,
4. կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս,
5. կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերելու առաջին բուժօգնություն վնասվածքների

դեպքում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները .

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
   - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
   - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
   - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>3-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: **Թեմա 2.** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: **Թեմա 3.** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: **Թեմա 4.** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: **Թեմա 5.** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: **Թեմա 6.** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: **Թեմա 7.** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: **Թեմա 8.** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: **Թեմա 9.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: **Թեմա 10.** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

<u>4-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: **Թեմա 2.** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: **Թեմա 3.** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: **Թեմա 4.** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: **Թեմա 5.** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: **Թեմա 6.** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: **Թեմա 7.** Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: **Թեմա 8.** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: **Թեմա 9.** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: **Թեմա 10.** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով

(աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): **Թեմա 11.** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: **Թեմա 12.** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: **Թեմա 13.** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ. Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբասյան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժու-թյուններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխու-թյունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՍԱՍ (ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0201/B17	Տնտեսագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

Դասընթացի խնդիրները՝

1. ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները,
2. ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները,
3. ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից,
4. ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները,
2. ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը,
2. վերլուծելու տնտեսական իրավիճակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու թիմում,
2. տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքներ տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու և ըստ իրավիճակի ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը,

Գ1.օգտագործելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,
Գ2.գնահատելու, վերլուծելու, զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը՝ ծառայեցնելով իր ազգի և պետության ինտեգրմանը համաշխարհային ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը,
Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. սեմինարներ, քննարկումներ և բանավեճեր,
3. խմբային աշխատանքներ,
4. ռեֆերատներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարք Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.
Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2.** Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3.** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4.** Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5.** Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7.** Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8.** Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10.** Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11.** Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12.** Փողը և բանկային համակրգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14.** Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15.** Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գորթնի Ջ., Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:
2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:
3. Макконнелл К.Р., Брью С.Л. Экономика. 17-ое изд., Москва, 2009.
4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998

0201/B17	Գործարարության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:

Դասընթացի խնդիրները
1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:
2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:
3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:
2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:
3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:
4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը:
2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:
3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:
4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Աշխատելու թիմում:

2. Մոտիվացնելու:
3. Առաջնորդելու:
4. Աշխատելու տեղեկատվության հետ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական հաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց,ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց է կացվում գրավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: **Թեմա 2.** Գործարարության միջավայրը և տեսակները: **Թեմա 3.** Գործարարության սուբյեկտները: **Թեմա 4.** Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: **Թեմա 5.** Բիզնես-գաղափարը և բիզնես հաեցակարգը, որպես գործարարության նախադրյալ: **Թեմա 6.** Մարքեթինգի պլան: **Թեմա 7.** Գործունեության կադրային ապահովումը: **Թեմա 8**. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: **Թեմա 9.** Արտադրական պլան **Թեմա 10.** Ինքնարժեքի կալկուլյացիա: **Թեմա 11.** Ձեռնարկատիրական ռիսկ: **Թեմա 12.** Ֆինանսական պլանավորում:

Հիմնական գրականության ցանկ.

1. М.Н.Кондратьева, Е.В.Баландина, Ю.С.Трефилова, «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/
2. В.Ю.Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011.
3. В.А.Богомолова, Н.М.Белоусова, О.В.Кублашвили, Р.Ю.Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//
4. С.И.Башаримова, М.В.Даско, «Основы предпринимательства» учебное пособие.
5. Е.К.Торосян, Л.П.Сажнева, Ж.Н.Зарубина, «Основы предприни-мательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург, 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//.

0304/B17	Քաղաքագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Դասընթացի խնդիրները.

1. ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
2. ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
3. ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն

հասկացությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմու-թյունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարա-խոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականու-թյուն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: **Թեմա 15.** Քաղաքական մշակույթ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.

0202/B17	Մշակութաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Դասընթացի խնդիրները.

1. ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
2. ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: ‹‹Մշակույթ›› հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ:

Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.** Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: **Թեմա 11.** Հայկական մշակույթ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս.Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В.М., Культурология, М., 1998.

0304/B17	**Կրոնագիտության հիմունքներ**	**2 կրեդիտ**
2 ժամ	**30/0/0**	
4-րդ կիսամյակ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները

1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկու-թյունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:
2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:
2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողո-վուրդների դիցաբանական համակարգերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5.** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимирон Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.

0303/B17	Բարոյագիտության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի խնդիրները.

1. ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին,
2. ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին,
3. նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը,
4. բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից,
5. վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները,
6. ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. Տիրապետելու բարոյական կոնֆլիկտների լուծման և հաղթահարման տեխնոլոգիաներին, ինչպես նաև սոցիալական կյանքի, բիզնես էթիկայի և քաղաքական էթիկայի հիմունքներին:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները: Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Բարին և չարը: Պարտք և պատասխանատվություն: Պատիվ և արժանապատվություն: Խիղճ: Բարոյական իդեալ: Կյանքի իմաստն ու նպատակը: Երջանկություն. Սեր: **Թեմա 2.** Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **Թեմա 3.** Բարոյականություն և ազատություն: Անձը և համակեցությունը: Բարոյականության հասարակական խնդիրները: **Թեմա 4.** Անձի բարոյական գիտակցությունը: Անձի բարոյական գիտակցությունը: Անձի բարոյական գործունեությունը: Անձի բարոյական հարաբերությունները: Անձի բարոյական մշակույթը: **Թեմա 5.** Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերահիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: Ազգային-բարոյական նկարագիր: **Թեմա 6.** Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Կիրառական բարոյագիտություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. А. Разин, Этика, Москва, 2003.
2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.
3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.
4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.
5. Словарь по этике.

0303/B17	Սոցիոլոգիայի հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ,
2. ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և

գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2.** Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4.** Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Бабосов Е.М. Прикладная социология. ТетраСистемс, 2001. ISBN 985-6577-74-8
2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011. ISBN 978-5-98281-155- 4
3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А.М. От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011. ISBN 978-5-905369-01-8
5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)
6. Кравченко А.И. Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998, ISBN 5-211-03988-2
7. Смехнова, Галина Петровна. Основы прикладной социологии (учеб. пос.), Изд-во «Вузовский учебникե,

2009. ISBN 978-5-9558-0061-5
8. Шуклина Елена, Зборовский Гарольд. Прикладная социология. М.: Гардарики, 2006. ISBN 5-8297-0184-7

0304/B17	Տրամաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից:

Դասընթացի խնդիրները.

1. Ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները
2. Ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ
3. Ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողությանտեսակներին, տրամաբանության օրենքներին:
4. Ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական հարաբերությունները, տրամաբանական հնարները:
2. Մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները:
3. Սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները:
2. Զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները:
3. Զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. բանավեճ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք՝ Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Տրամաբանություն առարկան և նրա դերն ու նշանակությունը: **Թեմա 2.** Հասկացություն: **Թեմա 3.** Դատողություն: **Թեմա 4.** Տրամաբանության օրենքները: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Ապացուցում և հերքում: **Թեմա 7.** Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, Պարադոքս: Հիպոթեզ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Երևան, 1976:
2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.
3. Гетманов А., Логика, Москва, 1993.
4. Маковелский А., История логики, Москва, 1967.
5. Демидов И., Логика, Москва, 2004:

0303/B17	Հոգեբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, ծանոթացնել հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին: ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզակամային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. Բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները:
2. Լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ:
3. Ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները:
2. Տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները:
3. Պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները:
4. Բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու անձի հուզակամային ոլորտի նրբությունները:
2. Տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնա-հատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողություն-ները:
2. Վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում

3. բանավեճ
4. գործնական պարապմունք
5. ռեֆերատ/էսսե
6. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք՝ Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2.** Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: **Թեմա 3.** Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Հոգեկանի և գիտակցության զարգացումը: **Թեմա 6.** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 7.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: **Թեմա 8.** Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: **Թեմա 9.** Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: **Թեմա 10.** Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: **Թեմա 11.** Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 13.** Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա 14.** Անձի հուզակամային կողմը: **Թեմա 15.** Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է. Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/Ուսումնական ձեռնարկ, Եր. ԵՊՀ հրատ. 2010, 204 էջ
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997
3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005
4. Маклаков А.Г., Общая психология. М., 2007 4
5. Немов, Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
6. Столяренко, Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер,2010.-592 с.
7. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005

0105/B17	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:

Դասընթացի խնդիրներն են.

1. ձևավորել բնագիտական աշխարհայացք,
2. ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը,
3. բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները,
4. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին:
3. Մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:

3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:
3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադատական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները(գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները:Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Էրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Երևան, 2007
2. Канке В.А., Концепции современного естествознания, Логос, Москва, 2002
3. Концепции современного естествознания, Питер 2008 , (Под. редакц. Л.А.Михайлова).

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

0305/B18	**Լատիներեն**	**2 կրեդիտ**
2 ժամ	**30/0/0**	
1-ին կիսամյակ	**Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել համաշխարհային պատմության և ներկայիս մշակույթի համար կարևոր նշանակություն ունեցող դասական լատիներենը:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

Ցույց տալ լատիներենի գործնական ու տեսական արժեքը անգլերենի և ֆրանսերենի յուրացման հարցում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա.մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու միջազգային հաղորդակցման համար անհրաժեշտ դեր ունեցող լատինական այբուբենի, բոլոր գիտակարգերում կիրառվող տերմինների, քերականական տերմինների ակունքների առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացահայտելու մշակութային կյանքի շատ նրբություններ՝ լատինական բառերի ներքին բովանդակության բացահայտման շնորհիվ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. հասկանալու ժամանակակից լեզուներում, գովազդներում և այլուր գործածվող շատ հասկացություններ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա6.մեկնաբանելու ֆրանսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, թվարկելու երկրագրական տեղեկություններ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի. Ֆրանսիայի և ֆրանկոֆոն երկրների մասին:

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը.

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական պարապմունքներ դասախոսի ղեկավարությամբ,
2. անհատական և խմբային աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք,
4. բանավոր ներկայացում/պրեզենտացիա (խմբային նախագծի իրականացում),
5. գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Լատիներեն բառը բառարանում ներկայացնելու առանձնահատկությունները: **Թեմա 2.** Հոլովման համակարգը: **Թեմա 3.** Խոնարհման համակարգը: **Թեմա 4.** Ածականների համեմատության աստիճանները և հոլովումը: **Թեմա 5.** Շարահյուսական առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Л.Винничук, Латинский язык, М., «Высшая школа», 1985.
2. В.Ярхо, В.Лободы, Латинский язык, М.«Просвещение», 1983.
3. В.Мирошенкова, Н.Федоров, Учебник латинского языка, «Издательство Московского университета»,1985.
4. Ա.Հայրապետյան, Ն.Մկրտչյան, Լատիներենի ձեռնարկ (Զևաբանու-թյուն), ԵՊՀ հրատ, Երևան, 2004
5. Գ.Տիրացյան, Լատիներեն լեզվի ուսումնական ձեռնարկ, Եր., 2005:

0302/ B21	Հայ գրականություն	2 կրեդիտ
2 ժամ / շաբ.	30 /0/0	
3-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել հայ գրականությունը, գրական երկերի ժանրային առանձնահատկությունները, գրականության զարգացման ուղղությունները:

Դասընթացի խնդիրները.

1. ուսանողին ներկայացնել հայ գրականության ժանրային առանձնահատկությունները, զարգացման ուղղությունները,
2. բնագրային երկերի ուսումնասիրության հիման վրա ձևավորել ու զարգացնել վերլուծական կարողությունները,
3. հայ հեղինակների գեղարվեստական հայտնի ստեղծագործությունների բնորոշ առանձնահատկությունների մեկնաբանում, գրական երկերի պատմական-հասարակական դերի, գեղագիտական-փիլիսոփայական հարցադրումների կարևորության բացահայտում,
4. տեքստի վերլուծության և մեկնաբանության միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության կատարելագործում,
5. շարադրությունների, ռեֆերատների, զեկուցումների, վերլուծական-դատողական գրավոր խոսքի, կարծիքի, գրական դիմանկարի և այլ ստեղծագործական աշխատանքների միջոցով կապակցված շարադրանք ստեղծելու կարողությունների մշակում,
6. կարդացածը ստեղծագործաբար վերարտադրելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ

անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով ուսանողների բանավոր խոսքի զարգացում և կատարելագործում,
7. տարաբնույթ (գեղարվեստական արձակ և չափածո, հրապարակախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվաոճական վերլուծության միջոցով ուսանողների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու հայ գրականության առանձնահատկությունները, զարգացման միտումները, քննելու ժամանակաշրջանի հասարակական-գրական կյանքը,
2. ներկայացնելու անվանի հայ հեղինակներին, նրանց ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը, հայ գրականության հիմնական ուղղությունները, հոսանքներն ու ոճերը, գրական երկերի ժանրային ու գաղափարական առանձնահատկությունները,
3. ներկայացնելու մարդու բարոյական նկարագիրն ու ժամանակաշրջանի մտածողության գեղարվեստական արտացոլումը տարբեր գրողների ստեղծագործություններում,
4. դասակարգելու հայ գրականության առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու բնագրային երկի վերլուծություններ,
2. վերլուծելու և գնահատելու դասական հեղինակների գործերը, տեսնելու յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը տվյալ շրջանի գրականության զարգացման շղթայի մեջ,
3. կատարելու գրականագիտական ուսումնասիրություններ,
4. ներկայացնելու հայ գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գործնականում տարբերակելու գրական երկերի ժանրային պատկանելությունը,
2. վերլուծելու գրական երկերի գաղափարական բովանդակությունը և կերպարային համակարգը,
3. բանավիճելու և քննարկելու,
4. օգտվելու մասնագիտական գրականությունից և տարաբնույթ բառարաններից:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով:

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքներ տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

Դասախոսություն, գրավոր աշխատանք, բանավոր հարցում, գրական-գեղարվեստական նմուշների ընթերցանություն և քննարկում, զեկուցում, ռեֆերատ, շարադրություն:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված է հանրագումարային քննություն (20 միավոր՝ բանավոր պատասխան և ինքնուրույն աշխատանքի հանձնարարականներ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ հին գրականությունը, զարգացման ուղղությունները: 5-րդ դարի պատմիչները: Խորենացու «Հայոց պատմությունը»: Գրիգոր Նարեկացու տաղերը և «Մատյան ողբերգության» երկը: **Թեմա 2.** Հայ միջնադարյան գրականությունը, քնարերգության ընդհանուր բնութագիրը (Ֆրիկ, Քուչակ): Սայաթ-Նովայի ստեղծագործությունը: **Թեմա 3.** Հայ նոր գրականության զարգացումը: Նար-Դոսի պատմվածքները: Զոհրապի նովելները: Թումանյանի ստեղծագործությունները: Իսահակյանի ստեղծագործությունները: Արևմտահայ բանաստեղծներ՝ Դուրյան, Մեծարենց, Վարուժան: Տերյանի քնարերգությունը: **Թեմա 4.** Հայ նորագույն գրականության առանձնահատկությունները: Չարենցի ստեղծագործությունները: Զորյանի պատմվածքները: Բակունցի գեղարվեստական արձակը: Դեմիրճյանի արձակը: Սարյանի քնարերգությունը: Զարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը: Շիրազի քնարերգությունը: Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպը: **Թեմա 5.** Արդի հայ գրականությունը: Սևակի, Սահյանի, Կապուտիկյանի, Դավթյանի, Էմինի բանաստեղծություններն ու պոեմները: Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակը: **Թեմա 6.** Օտարագիր հայ գրողներ (Սարոյան, Վահե Քաչա, Անրի Թրուայա, Շառլ Ազնավուր):

14. Տեսական-վերլուծական գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Երևան, 1964:
2. Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, 2 հատորով, Երևան, 1961-1967:
3. Աղաբաբյան Ս., Սովետահայ գրականության պատմություն հ. 1, 2,1961-1965
4. Աղաբաբյան Ս., 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում գիրք 1, 2, 1983-1984
5. Գասպարյան Դ., Բոդոսյան Ս., Սաֆարյան Վ., Հայ սովետական պոեզիայի պատմություն, Ե., 1987:
6. Գասպարյան Դ., Հայ սովետական գրականության պատմություն, Երևան, 1987:
7. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականության պատմություն, Երևան, 2008:
8. Թամրազյան Հր., Սովետահայ գրականության պատմություն, Երևան, 1964-1965:
9. Թամրազյան Հր., Հայ քնարերգուներ, Երևան, 1996:
10. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, 5-18-րդ դդ., Երևան, 1976:
11. Հայ նոր գրականության պատմություն, հատոր 1-5, Երևան, 1962-1979:
12. Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1970:
13. Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ Գիրք Ա-Գ, Երևան, 2003-2010:

0302/B22	Համաշխարհային գրականություն	4 կրեդիտ
3 ժամ/շաբ.	45/0/0	
4-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել համաշխարհային գրականության հիմնական հասկացությունները, գրական ուղղությունները, նշանավոր հեղինակներին և նրանց լավագույն ստեղծագործեությունները:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ներկայացնել հույն և հռոմեացի, գերմանացի, իտալացի, իսպանացի նշանավոր գրողների ստեղծագործությունների այժմեականությունը և իմաստությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու անտիկ գրականության մեծագույն արվեստը,
2. թվարկելու հունական և հռոմեական գրականության հեղինակներին և նրանց ստեղծագործությունները,
3. ներկայացնել վերածննդի և լուսավորության շրջանների ստեղծագործությունների գաղափարախոսությունը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու անտիկ գրականության ժամանակաշրջանի արվեստի գլուխգործոցներին բնորոշ գծերը, և գրական ստեղծագործությունների գաղափարական հարցադրումները և կերպարային համակարգը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կատարելու համեմատական վերլուծություն հայ և անտիկ գրականության ստեղծագործությունների միջև,
2. օգտվելու տեսական նյութից և կատարելու աղապտացիաներ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա1. մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2. արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական անգլերենով (առնվազն B2) և ֆրանսերենով (առնվազն B2), բնութագրելու անգլո-ամերիկյան և ֆրանսիական մշակույթները, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, ինչպես նաև անգլո-ամերիկյան պատմության, տնտեսագիտության և բնական գիտությունների ուսումնասիրության արդի հիմնահարցերը,

Բ2. պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ինքնուրույն աշխատանք
3. ռեֆերատ
4. պրեզենտացիա:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգումը գրավոր է: Ընթացիկ ստուգման հարցատոմսը բաղկացած է 3 հարցից՝ համապատասխանաբար 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ ստուգումը բանավոր է: Ընթացիկ ստուգման հարցատոմսը բաղկացած է 4 հարցից՝ համապատասխանաբար 3,3,2,2 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Անտիկ գրականություն. Հոմերոս, «Իլիական» և «Ողիսական»: **Թեմա 2.** Հունական և հռոմեական գրականության ծագումը և շրջանները. հունական կատակերգություն և ողբերգություն. էսքիլես, Սոփոկլես, Եվրիպիդես, Արիստոփանես, հռոմեական կատակերգակներ, Վերգիլիուսի «Էնեականը»: **Թեմա 3.** Վերածննդի գրականությունը Իտալիայում. Դանթե Ալիգերիի «Աստվածային կատակերգություն»-ը: **Թեմա 4.** Վերածննդի գրականությունը Իսպանիայում. Լոպե դե Վեգա, Սերվանտես: **Թեմա 5.** Լուսավորությունը Գերմանիայում, Շիլլերի դրամատուրգիան և գեղագիտական աշխատությունները: **Թեմա 6.** Գյոթեի գրական ժառանգությունը, «Ֆաուստ»: **Թեմա 7.** Արևելյան գրական ժառանգությունը. ճապոնական գրականություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մամիկոնյան Հ., Արտասահմանյան գրականության պատմություն, Վերածնության դարաշրջան, 1961:
2. Սողոմոնյան Ս., Արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, 1981:
3. Արտամոնով Ս.Դ., թարգմ. Հ.Բախչինյան, 17-18-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, ԵՊՀ, 1986:
4. Առաքելյան Ա.Գ., Հունական գրականության պատմություն/ Հելլենական կամ դասական, հելլենիստական, հռոմեական կայսրության շրջանի գրականություն, Խմբ.՝ Է.Ա. Հանեսօղլյան, Երևան, 1962, 615 էջ:
5. Առաքելյան Ա.Գ., Մկրտչյան Վ.Ա., Հռոմեական գրականության պատմություն, Հայպետուսմանկհրատ, Երևան, 1925, 542 էջ;
6. Տրոնսկի Ի.Մ., Անտիկ գրականության պատմություն, Մաս 1, Հունական գրականություն. ՀՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, Երևան : Ա.հ., 1949:
7. Դիցաբանական բառարան, Մ. Բոտվիննիկ և ուրիշն; Թարգմ.՝ Ս.Մ.Կրկյաշարյան; Խմբ.՝ Գ.Ն.Երզնկյան, Մ.Ն.Բոտվիննիկ, Մ.Ա.Կոգան, Մ.Բ.Ռաբինովիչ, Բ.Պ.Սելեցկի, Ս.Մ.Կրկյաշարյան [թարգ.], Գ.Ն.Երզնկյան [խմբ.], Երևան, 1966, 154 էջ:
8. 19-րդ դարի արտասահմանյան գրականության պատմություն, Երևան 1989:

0302/B19	Լեզվաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ	30/0/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել լեզվաբանական ընդհանուր կարգերը. լեզվի էության, գործառության ու զարգացման հիմնական օրինաչափությունները, աշխարհի լեզուների հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի ընդհանուր առանձնահատկությունները, աշխարհի լեզուներն ու նրանց բաշխումը լեզվաընտանիքներում, ուսուցանել լեզվաբանության հիմունքների հանգուցային դրույթները, լեզվի բնութագրերն ու բնորոշումները, լեզվաբանության բաժինները, լեզվի ծագումն ու զարգացումը, աշխարհի լեզուների դասակարգումները տարբեր լեզվաընտանիքներում և ըստ կառուցվածքային տիպերում:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ներկայացնել լեզվի բնութագրերն ու բնորոշումները,
2. լեզվաբանության ճյուղերն ու բաժինները,
3. ներկայացնել լեզվաբանական հին և ժամանակակից հոսանքներն ու դպրոցները,
4. լեզուների կառուցվածքային առանձնահատկություններին ու մակարդակներին,
5. տարբերակել աշխարհի լեզուները, լեզվաընտանիքները:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու «Լեզվաբանության հիմունքներ» առարկայի առանձնահատկությունները,
2. ներկայացնելու լեզուների ծագման, զարգացման մասին տեսությունները,
3. տարբերերակելու լեզվական կարգերը,

բ. գործնական մասնագիտական կարողությունն

1. դասակարգելու աշխարհի լեզուները (ձևավորման համար կկիրառվեն գործնական մեթոդները՝ վարժություններ, տնային առաջադրանքի կատարում և այլն, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից բանավեճը, համագործակցային ուսուցման մեթոդներից խմբային աշխատանքը, ինքնուրույն աշխատանքի մեթոդները),

2. մեկնաբանելու լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները և ներկայացնելու լեզվաբանության բաժինները՝ ձևավորման համար կիրառելով խոսքային մեթոդներից զրույցը, երկխոսությունը, գործնական մեթոդներից՝ վարժությունների, տնային առաջադրանքի կատարում և այլն, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից՝ բանավեճ, դերային խաղ, տեքստերի հետ աշխատանք և այլն),
3. ներկայացնելու լեզվական կարգերը, լեզվաբանության բաժինները և աշխարհի լեզուների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները՝ ձևավորման համար կիրառելով խոսքային մեթոդներից պատմումը և ընթերցումը, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներից՝ տեքստերի ու տեսական գրականության հետ աշխատանքը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու դասընթացին վերաբերող տպագիր և համացանցային ռեսուրսներից:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ3.զուգադրելու անգլերենի և ֆրանսերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում,
4. զննական դիդակտիկ նյութերի ցուցադրում, ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ, աշխատանք բնագրի ու տեքստերի հետ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացը նախատեսում է 2 գրավոր ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով:

Ամփոփիչ քննությունը գնահատվում է 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 2,2,3,3 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից

Թեմա 1. Լեզվի բնութագիրը. լեզվի բնորոշումը. լեզվի գոյության ձևերը: **Թեմա 2.** Լեզուների հնչյունական համակարգերի նմանություններն ու տարբերությունները. գրային համակարգեր**: Թեմա 3.** Լեզուների բառային համակարգերը: **Թեմա 4.** Լեզուների ձևաբանական համակարգերը: **Թեմա 5.** Լեզուների շարահյուսական համակարգերը: **Թեմա 6.** Լեզվի ծագումը: **Թեմա 7.** Աշխարհի լեզուների դասակարգումը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:
2. Ջահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ.հ., 1-2, ԵՊՀ հրատ., Երևան, 1960-1962:
3. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ.հ., 1-2, ԵՊՀ հրատ., Երևան, 1958-1962:
4. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, ԳԱԱ հրատ., Երևան, 1990:
5. Маслов Ю.С., Введение в языкознание, «ВЫСШАЯШКОЛА», М, 1987.
6. Պետրոսյան Հ. և ուրիշներ., Լեզվաբանական բառարան, ԳԱԱ հրատ., Երևան, 1975:

0305/B23	**Օտար լեզվի պատմություն**	**2 կրեդիտ**
2 ժամ/ շաբ.	**30/0/0**	
5-րդ կիսամյակ	**Առանց եզրափակիչ գնահատման**	
Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ անգլերենի պատմության		

հիմնական փուլերի և զարգացման առանձնահատկությունների, անգլերենի ծագման, ցեղակցական կապերի մասին: Դասընթացը նպատակ ունի նաև ուսանողներին սովորեցնել օգտվել մասնագիտական գրականությունից և գրել ոչ մեծ աշխատանքներ՝ զեկուցումներ, թեզիսներ, հոդվածներ:

Դասընթացի խնդիրները.

1. զարգացնել անգլերենի զարգացման հիմնական փուլերի տարբերակման հմտությունները, ընդհանուր պատկերացում տալ անգլերենի գրական լեզվի և բարբառների զարգացման մասին մասին,
2. զարգացնել անգլերենով մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունը,
3. բացահայտել ուսանողների կարողությունները՝ կապված անգլերենի հնչյունական և քերականական համակարգերի կրած փոփոխություննե-րի և առանձնահատկությունների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացահայտելու անգլերենի զարգացման համառոտ պատմությունը,
2. բացահայտելու լեզվաբանական ուսմունքների պատմությունը,
3. պարզաբանելու անգլերենի հնչյունական և քերականական համակարգերի կրած փոփոխությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. տարբերակելու լեզվի զարգացման հիմնական փուլերը,
2. տարբերակելու գրական լեզուն բարբառներից,
3. օգտվելու մասնագիտական գրականությունից,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. տարբերակելու և գնահատելու ուսումնասիրվող լեզվի հնչյունական և քերականական համակարգի կրած փոփոխությունների առանձնահատկությունները,
2. տարբերակելու լեզվաբանական տարբեր ուսմունքների առանձնահատկությունները,
3. վեր հանելու անգլերեն լեզվի համառոտ պատմության առանձնահատկությունները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա1.մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.ցուցաբերելու հիմնարար գիտելիքներ կենցաղային, գործնական և մասնագիտական անգլերենից (առնվազն B2)), անգլո-ամերիկյան և ֆրանսիական մշակույթներից, արտասահմանյան գրականության տարբեր ուղղություններից, ինչպես նաև անգլո-ամերիկյան պատմության, տնտեսագիտության և բնական գիտությունների ուսումնասիրության արդի հիմնահարցերից,

Ա5.ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Ա6.մեկնաբանելու անգլերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, թվարկելու երկրագրական տեղեկություններ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի. մասին:

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծելու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքներ տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,

Գ3.զուգադրելու անգլերենի և ֆրանսերենի լեզվամշակութային արժեհամակարգերը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. պրեզենտացիա,

3. ինքնուրույն թարգմանչական աշխատանք,
4. բնագրերի մշակում,
5. համեմատական վերլուծություն՝ բաց գրքով:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը 2.5 միավոր:

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ընթացիկ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ բաժիններից.

Թեմա 1. Միջլեզվական հարաբերությունների ուսումնասիրությունը լեզվի պատմության շրջանակներում: **Թեմա 2.** Անգլերենի զարգացման երեք փուլերը, դրանց լեզվական հատկանիշների և պատմական ժամանակաշրջանի բնութագիրը: **Թեմա 3.** Հին անգլերենի հնչյունական և քերականական համակարգի առանձնահատկությունները: **Թեմա 4.** Միջին և նոր անգլերենի հնչյունական և քերականական համակարգերի բնորոշ գծերը: **Թեմա 5.** Թարգմանություններ հին և միջին անգլերենից՝ ժամանակակից անգլերեն: **Թեմա 6.** Ժամանակակից անգլերենի տարածաշրջանային տարբերակներն ու դրանց համեմատական ուսումնասիրությունը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Viney, B., The History of the English Language. Oxford: OUP, 2008.
2. Rastorguyeva, T.A., A History of English. Moscow:Vysshaya Shkola, 1983.
3. Bough, A.C., Cable, T., A History of the English Language. London: Routledge, 2002.
4. Algeo, J., The Origins and the Development of the English Language. 6th ed., Boston: Wadsworth, 2010.
5. Hogg, R., An Introduction to Old English. Edinburgh: EUP, 2002.
6. Mugglestone, L., The Oxford History of English. Oxford: OUP, 2006.

0305/B24	Տեսական հնչյունաբանություն	4 կրեդիտ
4 ժամ/ շաբ.	60/0/0	
5-րդ կիսամյակ	եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ամբողջական պատկերացում տալ անգլերենի հնչյունական համակարգի ձևավորման և արտասանական առանձնահատկությունների, բանավոր խոսքի և գրավոր տեքստերի հնչյունական և հնչյունաբանական կառուցվածքի մասին, ծանոթացնել ժամանակակից անգլերեն լեզվի հնչյունաբանության կարևորագույն հիմնախնդիրների հետ, նախապատրաստել նրանց ավելի նորմատիվային արտասանության և անգլերեն խոսքի տարբեր ոճերի մեջ ազատ կողմնորոշվելու ունակությանը, ներկայացնել տեսական գիտելիքներ հնչյունաբանական տարբեր ուղղությունների վերաբերյալ, ուսանողներին ամբողջական պատկերացում տալ անգլերենի հնչյունական համակարգի ձևավորման վերաբերյալ ծանոթացնել արտասանական առանձնահատկու-թյուններին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ներկայացնել հնչյունաբանական տեսությունը, որպես սկզբունքների համընդհանուր համակարգ
2. գիտելիք տալ անգլերենի հնչյունական համակարգի մասին՝ համեմատության մեջ դնելով հայերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուների հետ,
3. ուսանողներին ծանոթացնել ռոմանական լեզվաբանության ներկայացուցիչների՝ հնչյունաբանության շուրջ կատարված հետազոտություններին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. հստակ կերպով ներկայացնելու հնչյունաբանության ուսումնասիրման առարկան, խնդիրները,
2. բնութագրելու անգլերեն լեզվի հնչունական համակարգի ստեղծումն ու զարգացումը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնականում կիրառելու հնչյունաբանությունից ձեռք բերված տեսական գիտելիքները,
2. գործնական օրինակների միջոցով պատկերելու տեսական որոշակի դրույթներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. մատնանշելու հնչյունաբանության բնագավառի վերջին նորությունները, կիրառելու լեզվաբանության ուսումնասիրության երեք հիմնական կաղապարները և մեկնաբանելու նրանց ազդեցությունը հնչյունաբանության տեսության զարգացման վրա,
2. ներկայացնելու ժամանակակից անգլերենի արտասանական բազայի առանձնահատկությունները, բնութագրելու և կիրառելու անգլերենի բանավոր խոսքի ոճերը և ենթաոճերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի□

Ա1.մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,
Ա5. ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,
Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,
Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,
Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացը նախատեսում է 2 գրավոր ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 1,1,1.5,1.5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:
Ամփոփիչ քննությունը գնահատվում է 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 2,2,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հնչյունաբանություն. Տեսական մոտեցումներ: Հատույթային մակարդակ: Վերհատույթային մակարդակ: Վերշարահյուսական մակարդակ: **Թեմա 2.** Անգլերենի զարգացման պատմական փուլերը: Յուրաքանչյուր փուլին բնորոշ հնչյունական փոփոխությունները, վանկային և բառային համակարգերը: **Թեմա 3.** Խոսքի տաղաչափական առանձնահատկությունները; Արտասանության տեսակները: **Թեմա 4.** Բանասիրական և բառագիտական հնչյունաբանություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Roach Peter, Cambridge University Press, Cambridge, 2009.
2. L.V.Borisova, A.A. Metlyuk, Theoretical Phonetics, Minsk, 1980.
3. Леонтьева С.Ф., Теоретическая фонетика современного английского языка. Менеджер, Москва, 2004.

0305/B25	Տեսական քերականություն	4 կրեդիտ
4 ժամ/ շաբ.	60/0/0	
5-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել անգլերենի տեսական քերականության հիմնահարցերը և խնդիրները, պարզաբանել պրակտիկ քերականության դասընթացներում անցած երևույթների հիմքում ընկած տեսական օրինաչափությունները, ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ անգլերենի քերականական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունների մասին, ձևավորել քերականական երևույթները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու ունակություն:

Դասընթացի խնդիրները.

1. հիմնավոր պատկերացում կազմել խոսքի մասերի մասին,
2. տիրապետել խոսքի մասերից յուրաքանչյուրի քերականական կարգերի վերաբերյալ գիտելիքներին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու անգլերենի քերականության հիմնական հարցերի վերաբերյալ դասական և ժամանակակից ամենակարևոր տեսությունները,
2. քննարկելու անգլերենի քերականական համակարգի երկու ոլորտների՝ ձևաբանության և շարահյուսության, հիմնական երևույթների մեխանիզմները,
3. նկարագրելու լեզվի տարբեր հատույթային մակարդակների դինամիկ հարաբերությունները, ինչպես նաև բառակապակցության և նախադասության փոխհարաբերությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ընկալելու անգլերենի ձևաբանական և շարահյուսական կառույցները,

2. գնահատելու քերականական տեսություններին նվիրված գիտական գրականությունը,
3. լուսաբանելու տարբեր խոսքի մասերի ձևաբանական առանձնահատկությունները,
4. վերլուծելու բառակապակցությունների տիպերը, նրանց կառուցվածքային յուրահատկությունները; վերլուծելու նախադասությունը և նախադասության անդամները ըստ հիմնական շարահյուսական առանձնահատկությունների:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կատարելու զուգադրական վերլուծություն հայերենի և անգլերենի քերականական երևույթների միջև:
2. օգտվելու *անգլերենի* տարբեր գործառական դրսևորումներ ներկայացնող տպագիր և ինտերնետային ռեսուրսներից,
3. վերլուծելու տարատեսակ քերականական դրսևորումները ներկայացնող փաստական նյութեր և կատարելու հետևություններ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

Ա1. մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա5.ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը.

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ՝ Դասընթացը նախատեսում է 2 գրավոր ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

Ամփոփիչ քննությունը գնահատվում է 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 2,2,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Անգլերենի քերականական տեսությունների պատմության ընդհանուր նկարագրություն: **Թեմա 2.** Լեզուն որպես համակարգ: **Թեմա 3.** Խոսքի մասեր: Գոյականը և նրա ձևաբանական առանձնահատկությունները: Բայը և նրա ձևաբանական առանձնահատկությունները: Ածական անունը, մակբայը, դերանունը, թվական անունը: **Թեմա 4.** Գործառական խոսքի մասերը: **Թեմա 5.** Շարահյուսություն: Նախադասության հիմնական խոսքի մասերը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan Y., Chubaryan A., Theoretical English Grammar. Yerevan: YSU Press, 2013.
2. Blokh M.Y., A Course in Theoretical English Grammar, M.: Progress, 2002.
3. Quirk R., Greenbaum S., Leech Q., Svartvik J., A University Grammar of English, M.: Progress, 1982.
4. Khlebnikova I. B., Essentials of English Morphology, M.: MGU, 2004.
5. Ilyish, B. The Structure of Modern English, L.: PGS, 1971.

0305/B20	Ռուս գրականության պատմություն	2 կրեդիտ
2 ժամ/ շաբ.	30/0/0	
3-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել ռուս գրականության և մշակույթի հետ, ընդլայնել գիտելիքների շրջանակը:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

վեր հանել ռուս գրականության հիմնական ուղղությունները, դրանց առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. թվարկելու ռուս գրականության պատմության ժամանակաշրջաններն ու ուղղությունները,
2. ներկայացնելու ռուս դասականների ստեղծագործություններն ու վերջիններիս բովանդակությունը,
3. տարբերակելու գրական և գեղարվեստական ժանրերը՝ թվարկելով դրանց առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու ռուս գրականության գլուխգործոցների գաղափարական հարցադրումները,
2. մատնանշելու ռուս գրականության դաստիարակիչ դերը մերօրյա հասարակության մեջ,
3. ներկայացնելու ռուս դասականների այժմեականությունը՝ բերելով օրինակներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու և բանավոր ներկայացնելու պրեզենտացիաներ,
2. կատարելու աղապատացիաներ՝ բնագրերից:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքներ տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը.

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ինքնուրույն աշխատանք
3. գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուսական ժողովրդական բանասիրության յուրահատկությունը և գեղարվեստականությունը: Հին ռուս գրականության ձևավորման հիմնական փուլերը: **Թեմա 2.** XIX դարի ռուս գրականության զարգացման հիմնական փուլերը և ուղղությունները: **Թեմա 3.** XX դարի գլխավոր գրականագիտական ուղղությունները: Սիմվոլիզմ, ակմեիզմ, ֆուտուրիզմ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Лебедев Ю.В., История русской литературы XIX века, В трех частях.
2. http://www.rulit.me/books/istoriya-russkoj-literatury-xix-veka-v-treh-chastyah-chast-1-1800-1830-e-gody-read-282027-1.html
3. Минералов Ю.И., История русской литературы: 90-егоды XX века, Учебное пособие.
4. Кормилов С., История русской литературы XX века (20-90-е годы). Основные имена, 1998.

0305/B27	Բառագիտություն	4 կրեդիտ
4 ժամ/ շաբ.	60/0/0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել անգլերենի բառական միավորների (բառ, ձևույթ, բառակապակցություն) համալիր քննության կարևորությունը, լուսաբանել անգլերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը՝ շեշտելով բառագիտական կատեգորիաների համակարգային բնույթը, պարզաբանել լեզու–իրականություն, լեզու–հաղորդակցություն առանցքների, և համապատասխանաբար՝ լեզու–խոսք երկատման կարևորությունը բառագիտական հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Դասընթացի խնդիրները.

1. դիտարկել բառերի իմաստային կառուցվածքը և կապակցելիությունը, նրանց ձևիմաստային փոխհարաբերությունները, բառակազմական միջոցները և կաղապարները հայերենում և անգլերենում, ինչպես նաև դարձվածքների տեսակները և նրանց թարգմանությանն առնչվող խնդիրների լուծման եղանակները,
2. ուսանողներին ամբողջական պատկերացում տալ անգլերենի բառապաշարի տարբեր շերտերի և զարգացման առանձնահատկությունների մասին

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. տարբերակելու *անգլերենի* և հայերենի բառապաշարային առանձնահատկությունները,

2. ներկայացնելու *անգլերենի* բառապաշարի առանձնահատկությունները և զարգացման միտումները (հատկապես նորակազմ բառերի շերտը),
3. քննարկելու բառագիտության առանձին բաժինները,
4. նկարագրելու բառագիտական հիմնական կարգերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու *անգլերեն* և հայերեն բառերի ձևիմաստային, բառակազմական և այլ տեսակների վերլուծություն,
2. գնահատելու բառային դրսևորումներում բառագիտական արժեք ներկայացնող տարրերը,
3. լուսաբանելու փաստական բառանյութը՝ վերհանելով բառակազմական, իմաստաբանական, գործառական և տերմինաբանական առանձնահատկությունները,
4. վերլուծելու անգլերենի բառապաշարի զարգացման փուլերը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գտնելու իմաստային, ոճական համարժեքներ *անգլերենի* դարձվածային համակարգի և դարձվածքների թարգմանության ժամանակ,
2. օգտվելու ոլորտին առնչվող համացանցային ռեսուրսներից (գիտական պարբերականներ, համալսարանական կայքեր և այլն),
3. վերլուծելու բառային միջոցները հաղորդակցության ոլորտում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1. մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա5. ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ1. վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2. պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Գ4. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացը նախատեսում է 2 գրավոր ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրը 5 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 1,1,1.5,1.5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Ամփոփիչ քննությունը գնահատվում է 10 միավոր: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ համապատասխանաբար 2,2,3,3 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բառագիտությունը լեզվաբանական գիտակարգերի համակարգում: **Թեմա 2**. Բառիմաստ՝ տեսական մոտեցումներ, տեսակներ: **Թեմա 3**. Բառի ներքին ձև՝ պատճառաբանվածության տեսակներ: **Թեմա 4.** Իմաստափոխություն; բազմիմաստություն, համանունություն, համատեքստ: **Թեմա 5.** Թեմատիկ խմբեր, իմաստային դաշտեր, սեռանիշություն, հոմանիշություն, հականիշություն; բառի ձևաբանական կառուցվածք: **Թեմա 6.** Բառակազմություն: Բառակապակցությունների իմաստային և կառուց-վածքային առանձնահատկությունները: **Թեմա 7.** Դարձվածաբանության հիմնահարցեր: **Թեմա 8.** Բառապաշարի շերտերի ուսումնասիրություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գիրունյան,Գ. Անգլերենի բառագիտության հիմունքներ: Երևան: ԳԱՍՊՐԻՆՏ, 2009:
2. Minaeva, L. English Lexicology and Lexicography. Moscow: ASTREL, 2007.
3. Cruse, D. A. Lexical Semantics. NY: CUP, 2001.
4. Gvishiani, N. B. Modern English Lexicology: Vocabulary in Use. M.: MGU, 2000.
5. Arnold I. The English Word. M.: Progress, 1973.
6. Akhmanova, O. S., Idzelis, R. F. What is the English we Use? M.: MGU, 1978.

0305/B28	Երկրագիտություն /Անգլերեն/	2 կրեդիտ
2 ժամ/ շաբ.	30/0/0	
6-րդ կիսամյակ	*Առանց ընթացիկ* գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել ուսանողներին երկրագրական գիտելիքի ծավալն ու շրջանակները անգլախոս երկրների վերաբերյալ և հաղորդել լեզվամշակութային, պատմագիտական, ժողովրդագրական ու ծիսաարարողական բնույթի տեղեկություններ:

Դասընթացի խնդիրները.

1. պարզաբանել երկրագրական առանձնահատկությունը երկիր-լեզու-ժողովուրդ-մշակույթ համատեքստում,
2. պարզաբանել տարածաշրջանային գիտատեսական ուսումնասիրություններն ու եզրույթները գիտական հաղորդակցության իրավիճակներում:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու պատմաշխարհագրական և վարչատարածական բաժանումներ և ինստիտուցիոնալ կառույցներ, մշակութային, գրական հնչեղություն ունեցող տեղանուններ ու վայրեր երկու անգլախոս երկրներում (ԱՄՆ) և (ՄԹ),
2. նկարագրելու Նոր աշխարհի (ԱՄՆ) և կղզիաբնակների (ՄԹ) ազգային խորհրդանիշների, արժեհամակարգի, ինքնապատկե-րացումների ու ազգային դիմանկարի խնդիրները սեփական մշակույթի նույնատիպ հարցերի առնչությամբ,
3. քննարկելու երկու անգլախոս երկրների պատմությանն ու քաղաքական կառույցներին առնչվող հիմնահարցերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գնահատելու երկրագրական նյութերը մասնագիտական համակարգում ըստ առաջադրված հարցադրումների,
2. լուսաբանելու և վերարտադրելու երկրագրական/տարածաշր-ջանային մասնագիտական տեքստեր՝ գիտական լեզվի ձևաչափերին համապատասխան,
3. վերլուծելու երկրագրական տեղեկատվական նյութեր,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից ոչ միայն փաստացի նյութի ընտրության (ինտերնետային ռեսուրսներ, գիտական հոդվածներ ու ամսագրեր և այլն), այլև ժամանակակից այլ մեթոդական մոտեցումների կիրառության առումով,
2. վերլուծելու ձեռք բերված գիտելիքները՝ առաջադրելով նոր գաղափարներ և մտքեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա2.ցուցաբերելու հիմնարար գիտելիքներ կենցաղային, գործնական և մասնագիտական անգլերենից (առնվազն B2) անգլո-ամերիկյան և արտասահմանյան գրականության տարբեր ուղղություններից, ինչպես նաև անգլո-ամերիկյան պատմության, տնտեսագիտության և բնական գիտությունների ուսումնասիրության արդի հիմնահարցերից,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա6.մեկնաբանելու անգլերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավո-րող լեզվական և արտալեզվական գործոնները, թվարկելու երկրագրական տեղեկություններ Մեծ Բրիտա-նիայի և ԱՄՆ-ի մասին:

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծելու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքներ տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Գ1.օգտագործելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Առանց ընթացիկ գնահատման՝ Քննությունը բանավոր է 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը 1 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական, բնակլիմայական տեղեկություններ (ՄԹ և ԱՄՆ): **Թեմա 2.** Վարչատարածական բաժանումներ, պետական կառուցվածք, միապետություն: Ազգային դիմանկար, լեզվական հատկաբանություններ ու իրակություններ: **Թեմա 3.** Թագավորական դինաստիաներ, պրեզիդենտական ինստիտուտ, հանրապետության: **Թեմա 4.** Պետական, ազգային ու կրոնական տոնացույցի արարողակարգի բնույթն ու տարբերությունները ինչպես նաև տոնակատարությունների բաղադրիչների (ուտեստ, հագուստ, խնջույք, մասնակիցներ) առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Cohen R., The Incredible vagueness of being British/ English. /International Affairs 76(1), 2000.
2. Fox K., Watching the English: The Hidden Rules of English Behaviour. London: Hodder & Stoughton, 2005.
3. Morgan K.O., The Oxford Illustrated History of Britain. Oxford: OUP, 2000.
4. Brubaker R. and Cooper F., Beyond Identity.//Theory and Society 29(1-47), 2000.
5. Canadine D., The Context, Performance and Meaning of Ritual: The British Monarchy and the Invention of Tradition, c. 1820-1977. Cambridge: CUP, 2000.
6. Rappaport R.A., Ritual and Religion in the Making of Humanity. Cambridge: Cambridge: CUP, 1999.
7. Yernjakyan N., Mkrtchyan H., Gulyan S., The World of the English Language (part I).Yerevan, Lusakn, 2017.

0305/B30	Ոճագիտություն	2 կրեդիտ
2 ժամ/ շաբ.	30/0/0	
7-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ լուսաբանել լեզվաոճագիտությանը վերաբերող տեսական և գործնական մասնագիտական մոտեցումները, ներկայացնել ոճաբանությունը, որպես սկզբունքների համընդհանուր համակարգ և նրա զբաղեցրած տեղը լեզվաբանության մեջ, ամբողջական պատկերացում տալ անգլերենի ոճաբանական առանձնահատկությունների և արդի հիմնախնդիրների մասին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>
1. ներկայացնել ոճ հասկացությունը,
2. պարզաբանել անգլերենի ոճական համակարգին բնորոշ հնարներն ու գրական արտահայտչամիջոցները: Ուսանողներին ծանոթացնել արդի անգլերենի ոճաբանական հնարքների և արտահայտչամիջոցների հետ
3. ապահովել տեսական գիտելիքների գործնական կիրառություն՝ տարբեր ոճային տեքստեր վերլուծելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. ցուցաբերելու մասնագիտական խորքային գիտելիքներ ոճաբանությունից՝ նրա առանձնահատկությունների, ոճական հնարքների և արտահայտչամիջոցների վերաբերյալ՝ հնչյունային, բառային և շարահյուսական մակարդակներում,
2. տարբերակելու լեզվի բառային կազմի գործածության սկզբունքները,
3. առանձնացնելու խոսքի արտահայտչական նրբերանգները արտահայտող կառուցվածքները և ձևերի քերականական միջոցները, լեզվի ճիշտ գործածության նորմերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. տարբերակելու և մեկնաբանելու անգլերենի հիմնական ոճաբանական հնարքները և արտահայտչամիջոցները,
2. որոշելու տարբեր ոճերի և ժանրերի տեքստերի գործառական և ոճական առանձնահատկությունները,
3. թարգմանության ժամանակ հաշվի առնելու խոսքային միավորների շարահյուսականոճաբանական գործառնությունը, որոշելու հաղորդակցական ակտի առանձնահատկությունը՝ ելնելով կոնկրետ իրավիճակից,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. մեկնաբանելու և վերլուծելու տարբեր ֆունկցիոնալ-ոճաբանական ուղղվածություն ունեցող տեքստեր,

2. համապատասխան իրավիճակներում կիրառելու անգլերեն լեզվի ոճական, ոճաբանական և դիսկուրսիվ նորմերը, գրական լեզվի գրքային-գրավոր և խոսակցական-բանավոր տարատեսակները, խոսակցական արտահայտչամիջոցները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Ա5.ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Գ3.զուգադրելու անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. անհատական և խմբային աշխատանք, անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
3. ինքնուրույն աշխատանք, բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում), գրավոր և բանավոր ստուգում/հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացը նախատեսում է 2 ընթացիկ ստուգում՝ յուրաքանչյուրը 10 միավոր առավելագույն արժեքով: Քննատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար՝ 3, 3, 2, 2 միավոր,

1. տեսական հարց 1,
2. տեսական հարց 2,
3. գործնական առաջադրանք:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ոճ, ոճագիտություն, լեզու, խոսք: **Թեմա 2.** Լեզվաոճագիտության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները: **Թեմա 3.** Անգլերենի ոճական դասակարգումը: Ոճական հնարներ և լեզվարտահայտամիջոցներ: **Թեմա 4.** Լեզվաոճական վերլուծության մեթոդ: **Թեմա 5.** Լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդ: **Թեմա 6.** Բազմաձայնությունը որպես լեզվաբանաստեղծական հնար: **Թեմա 7.** Գործառական ոճեր:

Հիմնական գրականության ցանկ.

1. Galperin, N. Stylistics of English Language. Moscow: Vishaya Shkola,1981.
2. Irvine, J. Style as Distinctiveness: The Culture and Ideology of Linguistic Differentiation.//Style and Sociolinguistic Variation. P. Eckert and J. Rickford (eds) Cambridge: CUP, pp. 21–43, 2001.
3. Jeffries, L., McIntyre D. Stylistics. Cambridge: CUP,2010.
4. Simpson, P. Stylistics. London: Routledge, 2004.

0305/B31	Երկրագիտություն /Ֆրասներեն/	2 կրեդիտ
2 ժամ/ շաբ.	30/0/0	
7-րդ կիսամյակ	*Առանց ընթացիկ* գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ամբողջական պատկերացում տալ ֆրանսիական քաղաքակրթության նվաճումների, և արդի աշխարհաքաղաքական պայմաններում Ֆրանսիայի ինչպես նաև ֆրանկոֆոնիայի դերի և նշանակության մասին:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. ձևավորել բավարար չափով գիտելիքներ Ֆրանսիայի քաղաքակրթության զարգացման փուլերի վերաբերյալ,
2. ձևավորել հմտություններ և կարողություններ Ֆրանսիայի պատմության, քաղաքակրթության, մշակույթի վերաբերյալ տեղեկություններ հայթայթելու ուղիների մասին,
3. ապահովել լեզվական հաղորդակցման հմտություններ և կարողություններ Ֆրանսիայի և ֆրանսախոս երկրների մասին:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու Ֆրանսիայի վարչատարածքային բաժանումը, տնտեսությունը:
2. Նկարագրելու Ֆրանսիայի քաղաքակրթության գլխավոր իրադարձությունները:
3. Ներկայացնելու դարերի ընթացքում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, նվաճումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գնահատելու երկրագրական նյութերը մասնագիտական համակարգում ըստ առաջադրված հարցադրումների:
2. Բացահայտելու Ֆրանսիայի և ֆրանսախոս երկրների դերը ժամանակակից բարդ աշխարհաքաղաքական պայմաններում:
3. Ներկայացնելու Ֆրանսիայի և ֆրանսախոս երկների մշակութային ժառանգությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տարբերակելու և գանահատելու ֆրանկոֆոնիայի պատմության բնորոշ առանձնահատկությունները՝ ապագայում քաղաքական կողմնորոշում ունենալու համար:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա6ներկայացնելու և մեկնաբանելու ֆրանսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ֆրանսիայի և ֆրանկոֆոն երկրների մասին:

Գ3.զուգադրելու ֆրանսերենի և անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. բանավեճ
3. ռեֆերատ
4. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատմամբ Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 5 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ֆրանսիայի բնական և ժողովրդագրական պայմանների բնութագիրը: **Թեմա 2.** Երկրի (տարածաշրջանի) վարչատարածքային և տնտեսաաշխարհագրական բաժանումը: **Թեմա 3.** Համառոտ պատմամշակութային ակնարկ: **Թեմա 4.** Ֆրանսիական դասական գրականությունը: **Թեմա 5.** Ֆրանսիական երաժշտությունը, թատրոնը և կինոն:

Հիմնական գրականության ցանկը.

1. Assia Gharibian, Mélania Djoulhakian, "France. Cours d'histoire et de civilisation", Ed. d'auteur, Erevan, 2009.
2. Ross Steele "Civilisation progressive du français" CLE Paris, 2004
3. Histoire, Géographie 5 e , Ed Blen, Paris 1995.
4. Mardanian A., Hovhannissian A., Aghbalian M., « Cours de civilisation française et Arménienne» Erevan, 2016

0305/B33	Ֆրանսերեն-1	8 կրեդիտ
8 ժամ/ շաբ.	0/120/0	
1-ին կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ:

Դասընթացի խնդիրները.

1. զարգացնել ֆրանսերենի հնչյունների ճիշտ արտաբերելու տեխնիկական, ընդհանուր պատկերացում տալ ֆրանսերենի ուղղախոսական նորմերի մասին,
2. զարգացնել ֆրանսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկական, ադապտացված տեքստեր ընթերցելու հմտությունը,
3. բացահայտել ուսանողների կարողությունները՝ կապված ֆրանսերենի բառապաշարի հարցտացման միջոցների և բառակազմության առանձնահատկությունների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ուսումնասիրելու և բացահայտելու ֆրանսերենի հնչյունական կազմը, ուղղագրական–ուղղախոսական կանոնները,
2. բացահայտելու քերականության ընդհանուր բաժինները,
3. օգտագործելու քերականական, բառապաշարային և միջմշակութային հմտությունները բանավոր և գրավոր խոսքում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. տարբերակելու քերականության հիմնական բաժինները, քերականորեն ճիշտ կազմելու նախադասություն,
2. ազատ հաղորդակցվելու ֆրանսերենով,
3. ընթերցելու ադապտացված տեքստեր,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. տարբերակելու և կիրառելու ֆրանսերեն լեզվի արտասանական առանձնահատկությունները,
2. ուսումնասիրելու և կիրառելու քերականական համակարգի առանձնահատկությունները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա3.կառուցելու տրամաբանորթն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ մեթոդ
2. բանավեճ
3. երկխոսություն
4. դերախաղի մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն Նախատեսված ընթացիկ քննությունը թեստային է, 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

2-րդ ընթացիկ քննություն. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով՝ ըստ նախապես տրված հարցաշարի: Հարցատոմսը պարունակում է 3 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ֆրանսերենի հնչյունական համակարգը: ՈՒղղախոսական–ուղղագրական առանձնահատկությունները: **Թեմա 2.** Ֆրանսերենի քերականության ընդհանուր բնութագիրը և հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 3.** Հոդ և հոդառություն: Հոդերի տեսակները և դրանց գործածության առանձնահատկությունները: **Թեմա 4.** Գոյականի քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: Սեռ, թիվ, հոդ: **Թեմա 5.** Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: **Թեմա 6.** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 7.** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: **Թեմա 8.** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: **Թեմա 9.** Մակբայների տեսակները և քերականական կարգերը: **Թեմա 10.** Նախադասություն: Նախադասության տեսակները և դրանց ընդհանուր բնութագիրը:

Հիմնական գրականության ցանկ.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français. E., 2005.
2. И.Попова, Ж.Казакова, Французский язык (II). М., 1977.
3. M.Djoulhakian, A.Gharibian, Plaisir de lire. E., 2003.
4. Grammaire progressive du français, (Niveau intermédiaire), P., 1995.
5. H.Augé, M.D.Canada Pujols, C.Marlhens, L.Martin, Tout va bien! 1, méthode de français, livre de l'élève, cahier d'exercices, CLE International, 2007. Cadre européen commun de référence, Niveaux A1-A2.

0305/B34	**Ֆրանսերեն-2**	**10 կրեդիտ**
9 ժամ	**0/135/0**	
2-րդ կիսամյակ	**Եզրափակիչ գնահատումով**	

Դասընթացի նպատակն է՝ խորացնել առաջին կիսամյակում ստացած գիտելիքները, հարստացնել ուսանողի բառապաշարը և զարգացնել նրա ուղղախոսական ունակությունները:

Դասընթացի խնդիրները.

1. զարգացնել ֆրանսերենի հնչյունաբանության, ուղղախոսական-ուղղագրական նորմերի, հիմնական

քերականական կառուցվածքի մասին գիտելիքները,
2. զարգացնել ֆրանսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկական, միջին բարդության տեքստեր ընթերցելու հմտություններն ու կարողությունները,
3. բացահայտել և զարգացնել ինքնուրույն կերպով տեքստի շարահյուսական վերլուծություն կատարելու հմտությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Կիրառելու գրավոր և բանավոր խոսքը կենցաղային և գործնական ֆրանսերենով:
2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ և փաստարկված բանավոր և գրավոր խոսք վերլուծությունների և վերարտադրության տեսքով:
3. Կիրառելու ֆրանսերենի նախդիրների գործածության կանոնները:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու դերանունների հիմնական տեսակները և դրանց գործածության հիմնական ոլորտները:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում և ինքնուրույն մոտեցում հանդես բերել:

գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Բանավիճելու:
2. Տարբերակելու և գնահատելու ֆրանսերենի և հայերենի քերականության բնորոշ առանձնահատկությունները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ մեթոդ
2. բանավեճ
3. երկխոսություն
4. դերախաղի մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն՝ Նախատեսված ընթացիկ քննությունը թեստային է, 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

2-րդ ընթացիկ քննություն. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով՝ ըստ նախապես տրված հարցաշարի: Հարցատոմսը պարունակում է 3 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ածականի տեսակները: Համեմատության աստիճանների կազմության առանձնահատկությունները: **Թեմա 2.** Դերանունների հիմնական տեսակները և դրանց քերականական կարգերի ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3.** Թվականներ: Թվականների քերականական կարգերը: **Թեմա 4.** Բայ: Ընդհանուր բնութագիրը և բայերի դասակարգման սկզբունքները: **Թեմա 5.** Մակբայների տեսակները և քերականական կարգերը:

Հիմնական գրականության ցանկ.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français. E., 2005.
2. И. Попова, Ж. Казакова. Французский язык (II). М., 1977.
3. M. Djoulhakian, A. Gharibian, Plaisir de lire. E., 2003.
4. Grammaire progressive du français, (Niveau intermédiaire), P., 1995.
5. H.Augé, M.D.Canada Pujols, C.Marlhens, L.Martin, Tout va bien! 1, méthode de français, livre de l'élève, cahier d'exercices, CLE International, 2007. Cadre européen commun de référence, Niveaux A1-A2.

0305/B37	Ֆրանսերեն–3	10 կրեդիտ
9 ժամ/ շաբ.	0/135/0	
3-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ, նպաստել հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանն ու գիտակցմանը:

Դասընթացի խնդիրները.

1. նպաստել անձի հաղորդակցվելու ունակությունների զարգացմանը,
2. ձևավորել գիտելիքներ միջմշակութային փոխըմբռնման, մշակութային այլ արժեքների ընկալման ու գնահատման ոլորտում,
3. նպաստել օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրմանը և միջառարկայական կապերի ստեղծմանը, ուսանողների կողմից աշխարհի և երևույթների միասնական, ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Տարբերակելու գրավոր և բանավոր խոսքի գործածության առանձնահատկությունները:
2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ և փաստարկված բանավոր և գրավոր խոսք վերլուծությունների և վերարտադրության տեսքով:
3. Կիրառելու ֆրանսերենի նախդիրների և շաղկապների գործածության կանոնները:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասությունների գործածության ոլորտները:
2. Կիրառելու գիտելիքները պրակտիկայում և ինքնուրույն մոտեցում հանդես բերել:

գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու միջառարկայական գիտելիքները գործնական բնույթի աշխատանքներում:
2. Բանավիճելու:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ մեթոդ
2. մտագրոհ
3. ձնագնդիկի մեթոդ
4. բանավեճ
7. երկխոսություն:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ՝ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն՝ Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ֆրանսերենի բառակազմությունը: Առավել գործածական նախածանցներն ու վերջածանցները: **Թեմա 2.** Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: **Թեմա 3.** Շաղկապների կարգերն ու տեսակները: **Թեմա 4.** Հաստատական և ժխտական մասնիկները և դրանց գործածության առանձնահատկությունները: **Թեմա 5.** Շարահյուսություն: Նախադասության դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

Հիմնական գրականության ցանկ.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français, Erévan, 2013
2. Claire Miquel, Grammaire en dialogues, Cle internatioanal, 2005
3. S.Haroutunian, R.Mirzoian, Cours pratique de grammaire francaise, Erevan, 2013
4. И.Н.Попова, Ж.А.Казакова, Cours pratique de grammaire francaise, Нестор Академик, Москва, 2006

0305/B39	Ֆրանսերեն-4	10 կրեդիտ
9 ժամ/ շաբ.	0/135/0	
4-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր և գրավոր խոսքի ունակություններ, ուղղախոսական-ուղղագրական հմտություններ, տեքստի հետ ինքնուրույն աշխատելու և ազատ հաղորդակցվելու կարողություններ, նպաստել հանրամշակութային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանն ու գիտակցմանը:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. նպաստել անձի հաղորդակցվելու ունակությունների զարգացմանը,
2. ձևավորել գիտելիքներ միջմշակութային փոխըմբռնման, մշակութային այլ արժեքների ընկալման ու գնահատման ոլորտում,
3. նպաստել օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրմանը և միջառարկայական կապերի ստեղծմանը, ուսանողների կողմից աշխարհի և երևույթների միասնական, ամբողջական ընկալմանը, տարբեր բնագավառներից գիտելիքների, փաստերի ու գաղափարների համադրմանը, իմաստավորմանն ու գնահատմանը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու ֆրանսերենի դերբայների կազմությունը:
2. Կիրառելու և զուգադրելու հարակատար դերբայի և բայական ածականի գործածությունը:
3. Ներկայացնելու ֆրանսերենի դարձվածքային միավորների գործածության ոլորտները:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու ֆրանսերենի դարձվածքային միավորների թարգմանությունը:
2. Կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով:
3. Վերլուծելու և եզրահանգումներ կատարելու անծանոթ տեքստի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական մոտեցում:

գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Զուգադրելու ֆրանսերենի, հայերենի և անգլերենի լեզվամշակութային համակարգը՝ ուսումնասիրելով դարձվածքային միավորները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու ֆրանսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ֆրանսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ մեթոդ
2. մտագրոհ
3. ձնագնդիկի մեթոդ
4. բանավեճ
7. երկխոսություն:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ընթացիկ քննություններ՝ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն՝ Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բայի անդեմ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքներն ու չափանիշները: **Թեմա 2.** Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: **Թեմա 3.** Դարձված և դարձվածաբանություն: **Թեմա 4.** Շեշտ և ինչերանգ: **Թեմա 5.** Հարցական նախադասությունների կազմության առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկը.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français, Erévan, 2013
2. Claire Miquel, Grammaire en dialogues, Cle internatioanal, 2005
3. S.Haroutunian, R.Mirzoian, Cours pratique de grammaire francaise, Erevan, 2013
4. И.Н.Попова, Ж.А.Казакова, Cours pratique de grammaire francaise, Нестор Академик, Москва, 2006

0305/B43	**Ֆրանսերեն–5**	**6 կրեդիտ**
6 ժամ/ շաբ.	**0/90/0**	
5-րդ կիսամյակ	**Եզրափակիչ գնահատումով**	

Դասընթացի նպատակն է՝ ամրապնդել և խորացնել ուսանողների նախորդ կիսամյակներում ստացած գիտելիքները: Այդ նպատակով ուշադրություն է դարձվում բառապաշարի ընդլայնմանը, արտասանական բազային և քերականական ճիշտ կառույցներով կազմված նախադասություններին: Զարգացնել նրանց բանավոր և գրավոր խոսքը, տեքստերի ընկալման և վերլուծության կարողությունները: Ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ: Հաղորդակցական հմտությունների զարգացմանը նպաստելու նպատակով յուրաքանչյուր դասի վերջում կազմակերպվում են բանավեճեր, հանձնարարվում են իրավիճակների խաղարկում, կատարվում են ձայներիզների ունկնդրում և նմանակում:

Դասընթացում տրվում են համակողմանի գիտելիքներ ֆրանսիական մշակույթի, կրթության, գիտության, քաղաքականության, պատմության և այլ ոլորտների վերաբերյալ, ուսումնասիրվում են ֆրանսիական գրականությունը, արվեստի տարբեր ճյուղերը, Ֆրանսիայի կառավարման համակարգերը, էկոնոմիկան, որոնք ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. զարգացնել և հարստացնել ուսանողների բառապաշարը, հատկապես լեզվաբանական թարգմանությունների համար,
2. զարգացնել ֆրանսերեն լեզվով ազատ վերարտադրելու հմտությունները,
3. բացահայտել ուսանողների կարողությունները լեզվաբանական տարբեր տեքստեր կարդալու և գիտական աշխատանք գրելու վերաբերյալ,
4. ակտիվացնել ստեղծագործական կարողությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ցուցաբերելու մասնագիտական խորքային գիտելիքներ բառակազմությունից, հնչյունաբանությունից, քերականությունից /ձևաբանություն և շարահյուսություն/,
2. վերարտադրելու հաղորդակցական և խոսքային գործառույթների ամենագործածական լեզվական միջոցները և խոսքային միավորները,
3. ներկայացնելու բառային և դարձվածաբանական երևույթներ, որոնք բնորոշ են սոցիալ-մշակութային ուղղվածությամբ տեքստերին՝ ներառյալ բառապաշարը, փոխառությունները, ամենագործածական բայական դարձվածքները և արտահայտությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ունկնդրելու տեքստը և հասկանալու ինֆորմացիան, կարծիք հայտնելու ծանոթ թեմաների և անձնական հետաքրքրությունների վերաբերյալ,
2. թարգմանելու բնագիր մասնագիտական և գեղարվեստական տեքստեր /ֆրանսերենից հայերեն և հայերենից ֆրանսերեն,
3. ձեռք բերած լեզվական գիտելիքները և ֆրանսերեն բանավոր ու գրավոր խոսքի հմտությունները գործածելու հաղորդակցական տարբեր ոլորտներում,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,
2. բանավիճելու,
3. պատրաստելու զեկուցումներ, կատարելու լեզվական նյութի բանասիրական վերլուծություն, գրելու կուրսային աշխատանք:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ֆրանսերենով (առնվազն B2) ու անգլերենով (առնվազն B2) և մեկնաբանելու նրանց առանձնահատկությունները, տարբերակելու ֆրանսիական և անգլոամերիկյան մշակույթները, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ֆրանսիայի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,
Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական-ինտերակտիվ մեթոդ
2. բանավոր և գրավոր հարցում
3. խմբային քննարկում
4. համացանցից օգտվելով անհատական հանձնարարությունների կատարում
5. օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում
6. բանավոր ներկայացումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է թեստավորում՝5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր

2-րդ ընթացիկ քննություն. Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է թեստավորում՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: **Թեմա 2.** Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները: Ներքին հնարավորություններ, փեխառություն և կաղապարում: **Թեմա 3.** Հոմանիշություն և հականիշություն: Հոմանիշության առանձնահատկությունները: **Թեմա 4.** Համանունության դրսևորման առանձնահատկությունները: **Թեմա 5.** Ֆրանսիական բառարանագրություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. J.Jirardet, J.-M.Cridlig,Ph.Dominique, “Nouveau sans frontières -3”, Clé International, Paris, 1990.
2. J.Jirardet, J.-M.Cridlig,Ph.Dominique, “Nouveau sans frontières -3, Cahier d’exercices”, Clé International, Paris, 1990.
3. Nikolskaia; Goldenberg, “Cours pratique du français”, Moscou 2006.
4. M.Grégoire, O.Thiévenaz, Grammaire progressive du français, avec 500 exercices.
5. Kaplanian, Ghambarian “Manuel de français”, Erévan, 2007.
6. S.Khatchatrian, A. Mouradian , “L’homme et son environnement”, Erévan, 2009.

0305/B46	Ֆրանսերեն-6	7 կրեդիտ
6 ժամ/ շաբ.	0/90/0	
6-րդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է՝ ամրապնդել և խորացնել ուսանողների նախորդ կիսամյակներում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով մասնագիտական տեքստերի վրա: Զարգացնել նրանց բանավոր և գրավոր խոսքը, տեքստերի ընկալման և վերլուծության կարողությունները: Ուսանողի մոտ ձևավորել ազատ հաղորդակցվելու, գեղարվեստական և մասնագիտական գրականությունից ազատորեն օգտվելու կարողություններ:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. զարգացնել և հարստացնել ուսանողների տերմինաբանական բառապաշարը, հատկապես լեզվաբանական թարգմանությունների համար,
2. զարգացնել ֆրանսերեն լեզվով ազատ վերարտադրելու հմտությունները,
3. բացահայտել ուսանողների կարողությունները լեզվաբանական տարբեր տեքստեր կարդալու և գիտական աշխատանք գրելու վերաբերյալ,
4. ակտիվացնել ստեղծագործական կարողությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ցուցաբերելու մասնագիտական խորքային գիտելիքներ լեզվաբանությունից,
2. արտահայտվելու որոշակի թեմատիկ բառապաշարի շրջանակներում,
3. ձերբազատվելու որոշակի բարդույթներից, որոնք հատուկ են օտար լեզու սովորողների հաղորդակցման ոլորտում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ունկնդրելու տեքստը և հասկանալու ինֆորմացիան,
2. վարելու զրույցներ հասարակական-քաղաքական թեմաներով,
3. տիրապետելու գեղարվեստական գրականության մեջ առկա լեզվառճական հնարներին,

4. ձեռք բերած լեզվական գիտելիքները և ֆրանսերեն բանավոր ու գրավոր խոսքի հմտությունները գործածելու հաղորդակցական տարբեր ոլորտներում,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,
2. կատարել վերլուծական հմտություններ տարբեր ոլորտներում,
3. պատրաստելու զեկուցումներ, կատարելու լեզվական նյութի բանասիրական վերլուծություն, գրելու կուրսային աշխատանք:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Ա5.ներկայացնելու ֆրանսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Բ7.կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

Գ3.զուգադրելու ֆրանսերենի և անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական-ինտերակտիվ մեթոդ
2. բանավոր և գրավոր հարցում
3. խմբային քննարկում
4. համացանցից օգտվելով անհատական հանձնարարությունների կատարում
5. օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում
6. բանավոր ներկայացումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն՝ Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է թեստավորում՝5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր

2-րդ ընթացիկ քննություն. Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է թեստավորում՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 5 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Ֆրանսերենի լեզվաբանական տերմինաբանության ընդհանուր բնութագիրը: Միայն ֆրանսերենին բնորոշ երևույթները նշանակող տերմիններ: ***Թեմա 2***՝ Լեզվաբանական տերմինների թարգմանության առանձնահատկությունները: ՈՒղղակի համարժեքներ և նկարագրական տարբերակներ: ***Թեմա 3***՝ Միայն հայերենին բնորոշ երևույթները նշանակող տերմինների ֆրանսերեն թարգմանության առանձնահատկությունները: ***Թեմա 4***՝ Լեզվաբանական տեքստի վերլուծություն և համառոտ վերաշարադրանք: ***Թեմա 5***՝ Լեզվաբանական տեքստի թարգմանության առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. J.Jirardet, J.-M.Cridlig,Ph.Dominique , “Nouveau sans frontières -3”, Clé International, Paris, 1990.
2. J.Jirardet, J.-M.Cridlig,Ph.Dominique, “Nouveau sans frontières -3, Cahier d’exercices”, Clé International, Paris, 1990.
3. Nikolskaia; Goldenberg, “Cours pratique du français”, Moscou 2006.
4. M.Grégoire, O.Thiévenaz, Grammaire progressive du français, avec 500 exercices.
5. Kaplanian, Ghambarian “Manuel de français”, Erévan, 2007.
6. S.Khatchatrian, A.Mouradian , “L’homme et son environnement”, Erévan, 2009.

0305/B51	Ֆրանսերեն-7	10 կրեդիտ
10 ժամ/ շաբ.	0/150/0	
U2.ցուցաբերելու հիմնարար գիտելիքներ կենցաղային, գործնական և մասնագիտական անգլերենից (առնվազն B2) և ֆրանսերենից (առնվազն B2), անգլո-ամերիկյան և ֆրանսիական մշակույթներից,

արտասահմանյան գրականության տարբեր ուղղություններից, ինչպես նաև անգլո-ամերիկյան պատմության, տնտեսագիտության և բնական գիտությունների ուսումնասիրության արդի հիմնահարցերից,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.թվարկելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,

Գ2.գնահատելու, վերլուծելու, զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը՝ ծառայեցնելով իր ազգի և պետության ինտեգրմանը համաշխարհային ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. գործնական պարապմունքներ դասախոսի ղեկավարությամբ,
3. անհատական և խմբային աշխատանքներ ,
4. թիմային գիտահետազոտական աշխատանքներ,
5. ինքնուրույն աշխատանք,
6. բանավոր ներկայացում/պրեզենտացիա:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման Դասընթացը գնահատվում է 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց 2 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 7 միավոր և 1 գործնական առաջադրանք՝ 6 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Համաշխարհային գրական քննադատության պատմությունը: **Թեմա 2.** Գրաքննադատության ավանդական և ժամանակակից մեթոդներն ու ձևաչափերը: **Թեմա 3.** Գրաքննադատության սերտ և ուղղակի կապն արդի գրականության և փիլիսոփայության հետ: **Թեմա 4.** Գրելու արվեստ և գրողի վարպետություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Johns Hopkins, Guide to Literary Theory and Criticism (2nd ed.). Baltimore: Johns HopkinsUniversity Press, 2005
2. Regan Shaun, Dawson Books, Reading 1759, Literary Culture in Mid-Eighteenth-Century Britain and France. Lewisburg [Pa.]: Bucknell University Press, 2013
3. Ussher, J. (1767). Clio Or, a Discourse on Taste: Addressed to a Young Lady A Bibliography of Literary Theory, Criticism, and Philology (University of Zaragoza)

0305/B48	Թարգմանության տեսություն և պրակտիկա /Անգլերեն/	2 կրեդիտ
2 ժամ/շաբ	8/22/0	
7-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել թարգմանաբանության ձևավորման պատմության ուղին, հիմնական միտումները, տալ գործնական գիտելիքներ:

Դասընթացի խնդիրները.

1. ծանոթացնել այն հասկացություններին ու մոտեցումներին, որոնք գերիշխել են տարբեր դարաշրջաններում,
2. հաղորդել գիտելիքներ գործնականում թարգմանություններ կատարելու ժամանակ կիրառելու նպատակով:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. լուսաբանելու տարբեր ծայրահեղ տեսակետներ,
2. մեկնաբանելու տարաբնույթ մոտեցումներ և ձևավորելու սեփական տեսակետը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ծրագրելու և իրականացնելու հետազոտություն,
2. կիրառելու ստացած տեսական գիտելիքները ըստ հետազոտության նպատակի:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1.մեկնաբանելու ժամանակակից անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա5.ներկայացնելու անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,

Գ3.զուգադրելու անգլերենի և ֆրանսերենի լեզվամշակութային արժեհամակարգերը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն/ հիմնականում ինտերակտիվ/,
2. տեսական նյութի մշակում՝ ըստ առաջադրված հարցերի,
3. նյութի քննարկում,
4. գրավոր և բանավոր թարգմանություններ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Առանց ընթացիկ գնահատման՝ Դասընթացը գնահատվում է 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 2 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 7 միավոր և 1 գործնական առաջադրանք՝ 6 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Թարգմանության պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը ապագա թարգմանիչների համար: **Թեմա 2.** Արևմտյան թարգմանաբանության պատմության պարբերականացումը: **Թեմա 3.** Թարգմանության վաղ շրջանը: **Թեմա 4.** Վերածննդի դարաշրջանը և թարգմանության տեսականացման առաջին փորձերը: **Թեմա 5.** Հայ թարգմանական ավանդույթները: **Թեմա 6.** Ռուսական թարգմանական ավանդույթները: **Թեմա 7**. Թարգմանության համարժեքության խնդիրները 20-րդ դարի առաջին կեսին:

Հիմնական գրականության ցանկ.

1. Bassnett S, Translation Studies, London and New York, 1991
2. Nida E., Toward a Science of Translating, Leiden, 1964
3. Steiner G., After Babel: aspects of language and translation, Oxford Univ. Press., 1975
4. Western Translation Theory (ed. by Douglas Robinson), Manchester, 1997
5. The Translation Studies Reader (ed. by Lawrence Venuti), London and N.Y., 2000
6. Kelly L., The True Interpreter: A History of Translation of Theory and Practice in the West, New York, 1979
7. Routledge Encyclopedia of Translation Studies (ed. by Mona Baker), London and New York, 2001
8. The Translation Studies Reader (ed. by Seda Gabrielyan), Yerevan, 2002
9. Chukovskii K., The Art of Translation, K. Chukovskii's The High Art, Knoxville, 1984
10. Սեֆերյան Ս., Խաչատրյան Ա., Գաբրիելյան Ս., Թարգմանաբանության համառոտ ակնարկ, Երևան, 2006
11. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984

ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՄՈԴՈՒԼՆԵՐ

0305/B52	Կուրսային աշխատանք - 1	2 կրեդիտ
6-րդ կիսամյակ	Առանց ընթացիկ գնահատման	

Կուրսային աշխատանք - 1-ի նպատակն է՝ նպաստել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտական ոլորտում ստացված լեզվաբանական տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը, զարգացնել մասնագիտական հետազոտություն կատարելու ունակություններ և ձեռք բերել նոր գիտելիքներ, բառագիտության, հնչյունաբանության և քերականության ոլորտում, զարգացնել հաղորդակցական հմտություններ, ստեղծագործական և քննադատական մտածողության ունակություններ, գրավոր և բանավոր խոսքի ներկայացման որակները:

Կուրսային աշխատանք - 1-ի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացահայտելու հետազոտական թեմային վերաբերվող նոր գիտելիքներ՝ տեսություններ, հայեցակարգեր, մոտեցումներ, սկզբունքներ,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

2. ընտրելու, վերլուծելու և համակարգելու մասնագիտական տեղեկույթը, լեզվաբանության և գրականագիտության ոլորտներում,
3. գնահատելու մասնագիտական երևույթները, օբյեկտները, պրոցեսները,
4. կազմելու հետազոտական նախագծեր,
5. ներկայացնելու մասնգիտական հաշվետվություններ՝ գրավոր և բանավոր կերպով:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու ինքնուրույն,
2. մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և մասնագիտորեն մտածելու:

Կուրսային աշխատանք –1-ը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Կուրսային աշխատանքի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա3.կառուցելու ֆրանսերեն տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու ֆրանսիական բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- խորհրդատվություններ/ուղղորդում ըստ կազմված ժամանակացույցի

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով (3+7+10).

- տեխնիկական չափանիշներ՝ 0-3 միավոր
- բովանդակային չափանիշներ՝ 0-7 միավոր
- ներկայացման/պաշտպանության չափանիշներ՝ 0-10 միավոր:

Կուրսային աշխատանք - 1-ի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. թեմայի որոշում և հաստատում
2. հետազոտություն
3. արդյունքների համակարգում
4. աշխատանքի կազմում
5. պաշտպանություն:

Հիմնական գրականության ցանկ.

ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և ովանդակությունը: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում

0305/B53	**Կուրսային աշխատանք – 2**	**2 կրեդիտ**
7-րդ կիսամյակ	**Առանց ընթացիկ գնահատման**	

Կուրսային աշխատանք - 1-ի նպատակն է՝ նպաստել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտական ոլորտում ստացված գրականագիտական տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների զարգացմանը, զարգացնել մասնագիտական հետազոտություն կատարելու ունակություններ և ձեռք բերել նոր գիտելիքներ, զարգացնել հաղորդակցական հմտություններ, ստեղծագործական և քննադատական մտածողության ունակություններ, գրավոր և բանավոր խոսքի ներկայացման որակները:

Կուրսային աշխատանք - 1-ի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացահայտելու հետազոտական թեմային վերաբերվող նոր գիտելիքներ՝ տեսություններ, հայեցակարգեր, մոտեցումներ, սկզբունքներ,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

2. ընտրելու, վերլուծելու և համակարգելու մասնագիտական տեղեկույթը,
1. գնահատելու մասնագիտական երևույթները, օբյեկտները, պրոցեսները,
2. կազմելու հետազոտական նախագծեր,
3. ներկայացնելու մասնգիտական հաշվետվություններ՝ գրավոր և բանավոր կերպով:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու ինքնուրույն,
2. մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և մասնագիտորեն մտածելու:

Կուրսային աշխատանք – 1-ը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Կուրսային աշխատանքի ավարտին ուսանողն ունակ կլինի

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունք-ներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ3.զուգադրելու ֆրանսերենի և անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- խորհրդատվություններ/ուղղորդում ըստ կազմված ժամանակացույցի

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով (3+7+10).

- տեխնիկական չափանիշներ՝ 0-3 միավոր
- բովանդակային չափանիշներ՝ 0-7 միավոր
- ներկայացման/պաշտպանության չափանիշներ՝ 0-10 միավոր:

Կուրսային աշխատանք - 1-ի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. թեմայի որոշում և հաստատում
2. հետազոտություն
3. արդյունքների համակարգում
4. աշխատանքի կազմում
5. պաշտպանություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում:

0305/B54	**Ավարտական աշխատանք**	**20 կրեդիտ**
8-րդ կիսամյակ	**Առանց ընթացիկ գնահատման**	
Ավարտական աշխատանքի նպատակն է՝ արտացոլել «Ֆրանսերեն լեզու և գրականություն»		

մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող նոր խնդիրներ բարձրացնելու ու լուծումներ առաջադրելու հմտությունները:

Ավարտական աշխատանքի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացահայտելու ավարտական թեմային վերաբերվող լեզվաբանական և գրականագիտական նոր գիտելիքներ՝ տեսություններ, հայեցակարգեր, նորություններ, սկզբունքներ,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ձևակերպելու գիտական, լեզվաբանական խնդիրներ,
2. կատարելու գիտագործնական առաջարկներ՝ մասնագիտական խնդիրները լուծելու համար,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու ինքնուրույն,
2. վերլուծելու մասնագիտորեն և քննադատաբար:

Ավարտական աշխատանքը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ավարտական աշխատանքի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու ֆրանսերեն տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ3.զուգադրելու ֆրանսերենի և անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն

Գ5.կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- Խորհրդատվություններ/ուղղորդում

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Տե՛ս «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ»-ը:

Ավարտական աշխատանքի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. թեմայի որոշում և հաստատում
2. հետազոտություն
3. արդյունքների համակարգում
4. նախապաշտպանություն
5. աշխատանքի կազմում
6. պաշտպանություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ: Հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017թ. հոկտեբեր 12-ի թիվ 1 նիստում (հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg-1-4.pdf 24.01.2018, ժամը 12:30 դրությամբ)

0305/B55	**Մասնագիտական պրակտիկա**	**6 կրեդիտ**
0 ժամ/շաբ.	**0/0/180**	
8-րդ գարնանային	**ստուգում**	
Մասնագիտական պրակտիկայի նպատակն է՝ արտացոլել «Ֆրանսերեն լեզու և գրականություն»		

մասնագիտության շրջանակներում ուսանողի տեսական գիտելիքների հիման վրա և դրանց կիրառմամբ ուսանողների մոտ ձևավոր գործնական հմտություններ և կարողություններ, զարգացնել ֆրանսերեն լեզվի մասնագիտական գործունեության նկատմամբ անձնային ուղղվածություն և դիրքորոշում, կիրառել ուսումնառության ընթացքում ֆրանսերեն լեզվի կատարելագործմանն ուղղված նոր հմտությունները:

Մասնագիտական պրակտիկայի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացահայտելու ֆրանսերենի կիրառությանը վերաբերվող նոր գիտելիքներ՝ տեսություններ, հայեցակարգեր, նորություններ, սկզբունքներ, հմտություններ

բ. գործնական մասնագիտական կարողություններ

2. ձևակերպելու գիտական, լեզվահաղորդակցության խնդիրներ,
3. կատարելու մասնագիտական թարգմանությունների գործընթացը հեշտացնելու առաջարկներ՝ առաջ եկած թարգմանչական խնդիրները լուծելու համար,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. աշխատելու ինքնուրույն,
2. մտածելու մասնագիտորեն և ունենալ քննադատական մտածողություն:

Մասնագիտական պրակտիկան ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3. կառուցելու ֆրանսերեն տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա5. ներկայացնելու ֆրանսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ2. պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ5. կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2. գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ4. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

- Դասախոսություններ, խորհրդատվություններ/ուղղորդում, մասնագիտական թարգմանությունների վերլուծություն
- Քննարկում /բանավեճ,
- համագործակցային աշխատանք,
- մտագրոհ,
- ինդուկտիվ մեթոդ,
- դեդուկտիվ մեթոդ,
- վերլուծական մեթոդ,
- խոսքային կամ բանավոր մեթոդ,
- գրավոր մեթոդ,
- բացատրական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Մասնագիտական պրակտիկայի կատարումը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից.

1. նախապատրաստում
2. ծանոթացում
3. ակտիվ պրակտիկա
4. պրակտիայի ամփոփում։

Հիմնական գրականության ցանկ.

1. S.Khatchatrian, A.Mouradian , “L’homme et son environnement”, Erévan, 2009.
2. J.Jirardet, J.-M.Cridlig,Ph.Dominique, “Nouveau sans frontières -3”, Clé International, Paris, 1990.
3. Sylvie Poisson-Quinton “Compréhension écrite ”, Clé International/SEJER 2004

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ռուսաց լեզու և գրականություն 011401.00.6
2. Բուհը	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Մանկավարժության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019/2020
6. Ուսումնառության լեզուն	Ռուսերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Ընդունելության քննությունների ցանկ՝

1. Ռուսաց լեզու (գրավոր)
2. Հայոց լեզու և գրականություն (գրավոր)

9. Ծրագրի նպատակները և խնդիրները

Ծրագրի նպատակն է ռուսաց լեզվի և գրականության ուսումնասիրության, գործնական կիրառման և դասավանդման տիրույթում հիմնարար գիտելիքներով, հոգեբանամանկավարժական հմտություններով և մեթոդաբանական կարողություններով օժտված ուսուցչի պատրաստումը՝ ապահովելով

- հոգեբանամանկավարժական հմտությունների ձևավորում՝ իրադրային, խմբային և միջանձնային ուղղորդման մոդելներով,
- համակարգված լեզվական գիտելիքներ և հաղորդակցական կարողություններ,
- ռուսալեզու միջավայրում և տարաբնույթ համատեքստերում կողմնորոշված շփման հմտություններ,
- ընդհանուր հետազոտական հմտությունների նպատակային մատուցումների ձևավորում՝ լեզվաբանական և մանկավարժամեթոդական ոլորտներում,
- ռուսաց լեզվի դասավանդման մեթոդաբանության վերաբերյալ արդի գիտելիքներ և գործնական հմտություններ,
- ազգային և օտար իրողությունների, իրույթների և արժեհամակարգերի նպատակային զուգադրում՝ լեզվի, մշակույթի, հասարակական կյանքի և գիտության ոլորտներում,
- օտարալեզու մշակույթի հետ նպատակային / շահագրգիռ հաղորդակցում,
- մանկավարժական գործունեության վերաբերյալ տեսական սկզբունքների և դասավանդման նախնական փորձի ձևավորում:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,
Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,
Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,
Ա5.ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,
Ա6.ներկայացնելու և մեկնաբանելու ռուսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ռուսաստանի մասին:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.
Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,
Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,
Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,
Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը,
Բ6.վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,
Բ7. կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.
Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,
Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,
Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,
Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,
Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:
Գ6. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- Հետազոտական աշխատանք
- Լուսապատկերաշար
- Բանավոր հարցում
- Գործնական աձշխատանք
- Թեմատիկ աշխատանք
- Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
- Թղթապանակ
- Հետազոտական աշխատանք/մասնագիտական գրականության վերաբերյալ
- Ինքնագնահատում, փոխգնահատում
- Ռեֆերատ
- Էսսե
- Խմբային ներկայացում
- Տարաբնույթ առաջադրանքներ
- Զեկուցումներ
- Ուսումնական նախագծեր
- Գրավոր կարճ հաղորդագրություններ
- Ստուգարքներ
- Քննություններ
- Ավարտական աշխատանքի պաշտպանություն

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Ռուսաց լեզու և գրականություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել

- միջին մասնագիտական կրթության հաստատություններում՝ որպես ռուսաց լեզվի և ռուս գրականության ուսուցիչ,
- աշխատանք տեղեկատվական գործակալություններում,
- հրատարակչություններում և խմբագրություններում,
- միջազգային կազմակերպություններում, որտեղ անհրաժեշտ է հայերենի և ռուսերենի իմացությունը,
- գովազդային գործակալություններում,
- թանգարաններում,
- պետական և մասնավոր ձեռնարկություններում և գրասենյակներում:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ

- տպագիր նյութեր,
- էլեկտրոնային ռեսուրներ,
- համացանցային կայքեր:

Ուսումնառության օժանդակության ձևեր

- պասիվ, ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ,
- տեսողական (շնորհանդեսային) և տեսալսողական մեթոդներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս .

- Պետական կրթական չափորոշիչ «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտությամբ:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ ԻՄ դասընթացների տեղեկագրքում:

«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		**Բ. Գործնական մասնագիտական կարողություններ**	
Ա1	Մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,	Բ1	վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Ա2	արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,	Բ2	պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,
Ա3	կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,	Բ3	կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,
Ա4	ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,	Բ4	ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,
Ա5	ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,	Բ5	կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը,
Ա6	ներկայացնելու և մեկնաբանելու ռուսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ռուսաստանի մասին:	Բ6	վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները,
		Բ7	կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ,
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,	Գ4	օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

Գ2	գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,	Գ5	կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:
Գ3	զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,	Գ6	Գ6. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																		
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	0302/B04																X	X		
Հայոց պատմության հիմնահարցեր-1	0304/B05															X		X		
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0105/B02										X							X		
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	0104/B03								X									X		
Ֆիզդաստիարակություն	0001/B01																		X	
Ֆիզդաստիարակություն	0001/B06																		X	
Ֆիզդաստիարակություն	0001/B10																		X	
Ֆիզդաստիարակություն	0001/B14																		X	
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	0302/B08							X									X			
Հայոց պատմության հիմնահարցեր-2	0304/B09															X		X		
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակնե-րում բնակչության առաջին բուժօգնություն	0001/B07											X								
Կիրառական վիճակագրության և տվյալների հետ աշխատանք	0104/B11								X	X										
Իրավունքի հիմունքներ	0304/B12										X									
Փիլիսոփայության հիմունքներ	0304/B13																	X		
Անգլերեն-1	0305/B15															X			X	
Ֆրանսերեն-1	0305/B15															X			X	
Անգլերեն-2	0305/B16															X			X	
Ֆրանսերեն-2	0305/B16															X			X	
Բարոյագիտության հիմունքներ	0303/B17							X		X										
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0105/B17										X									
Գործարարության հիմունքներ	0201/B17									X								X		
Կրոնագիտության հիմունքներ	0304/B17										X									
Մշակութաբանության հիմունքներ	0202/B17							X												
Սոցիոլոգիայի հիմունքներ	0201/B17								X											
Տնտեսագիտության հիմունքներ	0201/B17										X									
Քաղաքագիտության հիմունքներ	0304/B17									X	X									
Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 1	0305/B18	X		X										X						
Լեզվաբանության ներածություն	0305/B19	X	X	X																

Ժամանակակից ռուսաց լեզվի հնչունաբանություն	0305/B20	X				X							X							
Առաջին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ	0303/B21									X		X								
Գրականագիտության ներածություն	0305/B23	X	X	X	X															
Մանկավարժության գործունեության հիմունքներ	0303/B22								X			X			X					
Ռուս գրականության պատմություն /ռուս բանահյուսություն, 18-րդ դարի ռուս գրականություն/	0305/B27	X	X	X	X															
Ժամանակակից ռուսաց լեզվի բառագիտություն	0305/B25	X		X		X														
Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 2	0305/B24	X		X										X						
Մանկավարժության տեսություն	0303/B26											X			X					
Ընդհանուր հոգեբանություն	0303/B28											X			X					
Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 3	0305/B29	X		X								X								
19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 1	0305/B30	X	X	X	X															
Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն - 1	0305/B31	X		X	X	X							X							
Տարրական կրթության մանկավարժություն	0305/B32							X	X						X					
Տրամաբանություն	0304/B33				X			X												
Մանկավարժական հոգեբանություն	0303/B34							X	X						X					
Տարիքային հոգեբանություն	0303/B35							X	X						X					
Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 4	0305/B36	X		X										X						
19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 2	0305/B37	X	X	X	X															
Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն - 2	0305/B38	X	X		X					X										
Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա	0305/B41	X		X	X	X							X							
Ռուսաց լեզվի պատմություն	0305/B42	X					X													
19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 3	0305/B39	X	X	X	X															
Արտասահմանյան գրականության պատմություն -1	0305/B43		X		X			X	X											
Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն - 1	0305/B40	X		X	X	X							X							
Ռուս գրականության դասավանդման մեթոդիկա	0305/B44	X													X		X			
20-րդ դարի ռուս գրականության պատմություն - 1	0305/B45	X	X	X	X															
Արտասահմանյան գրականության պատմություն - 2	0305/B48				X			X	X											
Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն - 2	0305/B46	X		X	X	X							X							
Հայ գրականության պատմություն - 1	0302/B47				X			X								X	X			
Ներառական կրթություն	0303/B51							X	X						X					
Ռուսաստանի լեզվաերկրագրություն	0305/B52						X	X	X											
20-րդ դարի ռուս գրականության պատմություն -2	0305/B50	X	X	X	X															
Հայ գրականության պատմություն - 2	0302/B49				X			X								X	X			

Ժամանակակից ռուսաց լեզվի ոճաբանություն	0305/B53	X		X	X	X							X							
Անգլերեն-3	0305/B54															X			X	
Ֆրանսերեն-3	0305/B54															X			X	
Անգլերեն-4	0305/B55															X			X	
Ֆրանսերեն-4	0305/B55															X			X	
Հայ-ռուս գրական կապեր	0305/B56		X					X												
Ռուս հատկանունաբանություն	0305/B56			X				X										X		
Ռուս մանկական գրականություն	0305/B57				X			X								X	X			
Ռուս-հայերեն թարգմանության խնդիրներ	0305/B57			X		X		X												
Գրականագիտական վերլուծության հիմունքներ	0305/B58	X						X	X				X							
Խոսողական ստանդարտի տեսություն	0305/B58	X	X	X																
Ռուս գրական լեզվի պատմություն	0305/B59							X					X					X	X	
Համեմատական գրականագիտության հիմունքներ	0305/B59															X	X		X	
Կուրսային աշխատանք-1	0305/B60			X	X	X	X	X	X		X					X		X		
Կուրսային աշխատանք-2	0305/B63			X	X	X	X	X	X		X					X		X		
Մանկավարժական պրակտիկա-1	0305/B61			X	X	X	X	X	X			X			X	X	X	X	X	X
Մանկավարժական պրակտիկա-2	0305/B62			X	X	X	X	X	X			X			X	X	X	X	X	X
Մանկավարժական պրակտիկա-3	0305/B64			X	X	X	X	X	X			X			X	X	X	X	X	X
Մանկավարժական պրակտիկա-4	0305/B66			X	X	X	X	X	X			X			X	X	X	X	X	X
Ավարտական աշխատանք	0305/B65			X	X	X	X	X	X		X					X		X		

«ՌՈՒՍԱՑ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ՊԱՐՏԱԴԻՐ/

1.0302/B04	**2.Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1**	**3. 2 ECTS կրեդիտ**
4.2 ժամ/շաբ.	**5.0/30/0**	
6.1-ին կիսամյակ	**7.Ստուգարք**	

8.Դասընթացի նպատակն է ուսումնասիրել խոսքը, նրա դրսևորման ձևերը, ուղղախոսական ու արտասանական նորմերը, խոսքի բաղադրիչների կապակցման միջոցները, խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, գրագրության ձևերը և խոսքային էթիկան, կառուցել արտահայտիչ ու ներգործուն գրավոր ու բանավոր խոսք:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսուցանել խոսքի մշակույթի ընդհանուր օրինաչափությունները, լեզվական և գրական նորմերը, հնչյունական, բառային և քերականական մակարդակներն ու նրանց կիրառության յուրահատկությունները, ձևավորել ու մշակել գրական խոսքի բարձր ճաշակ ու մշակույթ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու խոսքի ընդհանուր հատկանիշները, դրսևորման ձևերը, սահմանելու և ճիշտ կիրառելուլեզվական և հնչյունական-արտասանական, ուղղախոսական նորմերը:
2. Ձևավորելու բանավոր խոսքի և գրավոր խոսքի բարձր մակարդակ՝ ճիշտ և տեղին կիրառելով լեզվական տարբեր իրողությունները (բառապաշարի շերտեր, ձևաիմաստային խմբեր, դարձվածքներ և այլն):
3. Սահմանելու, բացատրելու գրական, լեզվական, ոճական նորմաները, որոնք կիրառելի են ժամանակակից հայերենում:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կառուցելու հարուստ բառապաշարով, շարահյուսորեն ճշգրիտ կապակցված գրավոր և բանավոր խոսք:
2. Գործառելու գրագրության ձևերը, ուղղախոսության և արտասանվածքի նորմերը բանավոր խոսքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,
2. Աշխատելու թիմում:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. քննարկում /բանավեճ
2. համագործակցային աշխատանք
3. մտագրոհ
4. վերլուծական մեթոդ
5. խոսքային կամ բանավոր մեթոդ
6. գրավոր մեթոդ
7. բացատրական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Խոսքի մշակույթ առարկան, նպատակը և խնդիրները: Խոսքի դրսևորման ձևերը: Լեզվական նորմ: **Թեմա 2.** Հնչյունական /արտասանական/ մակարդակ: Գրագրության ձևեր: **Թեմա 3.** Բառային մակարդակ: **Թեմա 4.** Քերականական մակարդակ: Ձևաբանություն: **Թեմա 5.** Շարահյուսություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր., 2014:
2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր, 2015:
3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002:
4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանությունԵր., 2003:

5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003:
6. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

1. 0304/B05	2. Հայոց պատմության հիմնահարցեր-1	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.1-ին կիսամյակ	7. Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորողություն:
3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վե-րաբերող հիմնական փաստական նյութը:
2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադար-ձությունները:
3. Ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևան-քային կապերը:
2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխար-հային պատմության համատեքստում:
3. Արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում:
2. Բանավիճելու:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: **Թեմա 2**. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա.9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: **Թեմա 3**. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: **Թեմա 4.** Արշակունիների թագավորությունը: **Թեմա 5.**

Հայաստանը վաղ միջնադարում: **Թեմա 6.** Հայաստանը զարգացած միջնադարում: **Թեմա 7.** Հայաստանը ուշ միջնադարում:
Հիմնական գրականության ցանկ. 1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

0105/B02	**Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ**	**2 ECTS կրեդիտ**
2 ժամ/շաբ.	**30/0/0**	
1-ին կիսամյակ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդ-կենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնելու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարահայացքի ինքնուրույն ընտրության:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսանողների տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամերի, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին:
2. Ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները:
3. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները:
2. Նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները:
3. Բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին:
2. Նախազգուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից:
3. Անցկացնելու մոնիտորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն:
2. Հետազոտություններ անելու՝ ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով:
3. Կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու համար, թե այս կամ այն գործոնը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ էկոհամակարգի վրա:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու

նպատակով,
Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Պասիվ դասախոսություն
2. Ակտիվ դասախոսություն
   - ✓ *հարց ու պատասխան*
   - ✓ *զրույց*

3.Ինտերակտիվ դասախոսություն
   - ✓ *«Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում*
   - ✓ *հարց ու պատասխան*
   - ✓ *բանավեճ*
   - ✓ *զրույց*

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի զեկուցում:
2. Այն ուսանողները, որոնք ամբողջական դասընթացի մաս կազմող 5 և ավելի թեմաներից կամ ինքնուրույն աշխատանքների թեմաներից գնահատվել են «ստուգված», ապա ստանում են «Ստուգված»:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Էկոլոգիայի համառոտ պատմությունը: Էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիլյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: **Թեմա 2**. Էկոհամակարգի գործունեության սկզբունքները: Էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: **Թեմա 3**. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: **Թեմա 4**. Էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: Էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: Էներգիայի և նյութերի փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: **Թեմա 5**. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: **Թեմա 6**. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: **Թեմա 7**. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները; Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: **Թեմա 8.** Պոպուլյացիայի բնութագիրը, ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը, պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: **Թեմա 9.** Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, 2010:
2. Գրիգորյան Ա., Աղասյան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Երևան, 2008:
3. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ,Երևան, 2010:
4. Շահինյան Մ., Թամրազյան Ն., Էկոլոգիա, Երևան, 2002:
5. Валова В.Д. Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, 2005.

0104/B03	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական

հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

1. Ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին:
2. Մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ռճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները:
3. Բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ:
4. Կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար:
5. Ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:
2. Ընտրելու ռճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:
3. Վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:
4. Ուսանողը ունակ կլինի ընտրել և ներկայացնել Power Point համակարգի հնարավորությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:
2. Կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:
3. էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:
4. Կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով:

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական աշխատանք
2. փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,
3. լաբորատոր աշխատանքներ,
4. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը գնահատվում է «բավարար», եթե կատարել է 50% և ավելի:

1. Ուսանողը շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները:
2. Ուսանողը հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը;
3. Ուսանողը տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեսթերից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները.

Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք, պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր: ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները:

Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում.

Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը: WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ: Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ:

Աշխատանք Autoshapesերի հետ: Աղյուսակների տեղադրում::

Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ

Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյակների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները:

Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

Ներկայացումների ստեղծում: Անիմացիաների և ոճերի հաղորդում սահիկներին: Ձայնային, լուսային ոճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկների միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ա.Հովակիմյան., Ս.Սարգսյան, Լ.Խաչոյան., Ն.Իսպիրյան, Ա.Մանուկյան, Ն.Մկրտչյան. Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2012թ.:
2. Тихомиров А., Прокди А. К. Колосков П.В., Клендрова И.А. и др. Microsoft Office 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.
3. Բ. Ջանփոլադյան, Քոմփյութերային կիբառական տեխնոլոգիաների հիմունքները, ՀՊՃՀ, Երևան, 2000թ.:

0001/B01, B06	Ֆիզդաստիարակություն	0 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին, 2-րդ կիսամյակներ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները և ուսանողների ֆիզիկական զարգացման ու շարժողական ընդունակությունների առանձնահատկությունները՝ ուսանողների մոտ ձևավորել սոցիալապես անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը լիարժեք ֆիզիկական պատրաստություն ստանալու, ամենօրյա կյանքի ու կրթության պահանջները ապահովելու և շարունակելու վերաբերյալ: Կարևորելով ուսանողների գիտակցական մակարդակի բարձրացումը՝ դասընթացը նպատակ ունի.

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց,
- նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկութ-յունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. սահմանելու անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների

հիգիենիկ կանոնները,
2. թվարկելու կոփման կանոնները և բացատրել դրանց նշանակությունը,
3. ներկայացնելու ֆիզիկական դաստիարակության պարապմունքների ժամանակ անվտանգության պահպանման կանոնները,
4. ներկայացնելու առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքները,
5. առանձնացնելու վնասակար սովորությունները և բացատրել դրանց կործանարար ազդեցությունը անձի մտավոր և ֆիզիկական զարգացման վրա:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու նորմատիվներին համապատասխան ֆիզիկական վարժություններ (ակրոբատիկ վարժություններ, վազք, հեռացատկ),
2. ցուցաբերելու շարժողական ընդունակություններ ու ֆունկցիոնալ կարողություններ ուսուցանվող մարզաձևերում,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

1. աջակցելու կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս անցկացվող մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի ու սպորտային միջոցառումների կազմակերպմանը,
2. դասընթացի ժամանակ կազմակերպելու թիմային մրցախաղեր տարբեր սպորտաձևերից,
3. կազմելու իր և ընկերների առողջ կենսակերպի ապահովման ուսումնամարզական պարապմունքների պլան:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
   - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
   - մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
   - անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
   - ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),
2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացի թեմատիկ բովանդակությունը. /բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից./

<u>1-ին կիսամյակ</u>

Թեմա 1. Ֆիզիկական դաստիարակություն, նրա դերն ու նշանակությունը ընդհանուր կրթական համակարգում: Ֆիզկուլտուրայի և սպորտի հիգիենիկ հիմունքները: Անձնական հիգիենայի և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները: Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 2.*** Մարմնի կոփման կանոնները և դրանց նշանակությունը: Վազք: Վազքի տեխնիկայի ուսուցում: Վազք. փոփոխական արագությամբ, արգելքների հաղթահարումով, 60 մ /ցածր մեկնարկից/, 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Հեռացատկ: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում: Հեռացատկ տեղից: ***Թեմա 3.*** Սպորտային խաղերի դերն ու նշանակությունը ուսանողի մտավոր և ֆիզիկական դաստիարակության, ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման գործում: Սպորտային խաղ վոլեյբոլ. խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում, գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ուսուցում: Գնդակի վարում և փոխանցում 2 ձեռքով: Զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկայի ուսուցում: ***Թեմա 4.*** Ուսանողի առողջ կենցաղավարության հիմունքները, նրա արդյունավետության

չափանիշները, պայքարը բացասական երևույթների դեմ: Երկկողմանի խաղ (վոլեյբոլ, բասկետբոլ):

<u>2-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ընդհանուր ֆիզիկական և սպորտային պատրաստության դերը ֆիզիկական դաստիարակության գործում: Շարժողական ընդունակությունների կատարելագործման հիմունքները: Մարմնամարզություն: Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: ***Թեմա 2.*** Ֆիզիկական բեռնվածության ծավալը ուսանողական տարիքում, նրա միջոցով ֆիզիկական զարգացման և մարմնակազմության հնարավորություններն ու շտկման պայմանները: Մարմնամարզություն: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Ինքնուրույն պարապմունքների մեթոդական հիմունքները, նրանց ձևերը և տարիքային և սեռային առանձնահատկությունները: Սպորտային խաղ վոլեյբոլ. վերևից սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցում: Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս. տեխնիկական և տակտիկական տարրերի ուսուցում: Սպորտային խաղ բասկետբոլ. գնդակին տիրապետման տեխնիկայի ուսուցում, պաշտպանության տեխնիկայի ուսուցում, գնդակի նետում զամբյուղի մեջ: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Հարձակողական հարվածի տիրապետման տեխնիկայի ուսուցում: Խաղի պաշտպանության տեխնիկայի ուսուցում: Երկկողմանի խաղ: ***Թեմա 5.*** Ինքնուրույն պարապմունքների հիգիենան և ինքնահսկումը: Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական վազք: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Երկար վազքի տեխնիկայի առանձնահատկությունները: Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Հեռացատկ: Հեռացատկ տեղից՝ զույգ ոտքերի հրումով: ***Թեմա 6.*** Մասնակցությունը սպորտային մրցումների, դրանց ֆիզիկական և հոգևոր դաստիարակչական նշանակությունը: ***Թեմա 8.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է.Հ., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բաբասյան Մ.Ա., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ.Տ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս.Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

0001/B10, B14	**Ֆիզդաստիարակություն**	**0 ECTS կրեդիտ**
2 ժամ/շաբ.	**0/60/0**	
3-րդ, 4-րդ կիսամյակներ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է՝

- ապահովել երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործընթացը,
- նպաստել ուսումնառողների առողջական վիճակի բարելավմանը,
- բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը, պարապմունքները դարձնել ակտիվ հանգստի, մտավոր լարվածության վերացման և ուժերի վերականգնման միջոց, նպաստել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բարձրացնել նրանց մտավոր և ֆիզիկական աշխատունակությունը և պատրաստվածությունը,
- զարգացնել ուսանողների ֆունկցիոնալ և շարժողական ընդունակությունները, ձևավորել նրանց մոտ արագաշարժություն, ուժ, ճկունություն, դիմացկունություն, ճարպկություն, կոորդինացիա և այլն,
- կենսաձևում արմատավորել ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես առողջ ապրելակերպի միջոց:

<u>Դասընթացի խնդիրներն են.</u>

- հասնել նրան, որ ուսանողները կարևորեն ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում,
- ուսանողներին հաղորդել հիմնարար գիտելիքներ առողջ կենսաձևի գիտակենսաբանական և գործնական հիմունքների վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել համամարդկային գաղափարներ, բարոյական և կամային հատկանիշներ, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում,
- ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,
- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահատկություններ մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկել հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը,
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանել անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանել նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերելու նորմատիվներին համապատասխան արդյունքներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարարականի փոխադարձ վերահսկողություն,
2. աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնելու իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ,
3. վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները,
4. կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներկուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս,
5. կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերելու առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Վերահսկողական ուսումնական պարապմունքներ .
    - տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),

- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2. արտաուսումնական պարապմունքներ.
   - ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
   - վերականգնողական միջոցառումների իրականացում,
   - մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
   - ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
   - մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
   - մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

Գնահատման մեթոդները և չափանիշները.

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>3-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: ***Թեմա 2.*** Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: ***Թեմա 3.*** Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/:Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում:Վազք արգելքների հաղթահարումով:Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: ***Թեմա 4.*** Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: ***Թեմա 5.*** Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում:Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: ***Թեմա 6.*** Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: ***Թեմա 7.*** Կանոնավոր պարապմունքների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը:***Թեմա 8.*** Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: ***Թեմա 9.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: ***Թեմա 10.*** Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը զատած եղանակով:

<u>4-րդ կիսամյակ</u>

Թեմա 1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: ***Թեմա 2.*** Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնծի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնծի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: ***Թեմա 3.*** Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: ***Թեմա 4.*** Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերևից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում: ***Թեմա 5.*** Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: ***Թեմա 6.*** Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: ***Թեմա 7.*** Սպորտային խաղ բասկետբոլ,գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: ***Թեմա 8.*** Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: ***Թեմա 9.*** Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: ***Թեմա 10.*** Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ:Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ):Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): ***Թեմա 11.*** Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: ***Թեմա 12.*** Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: ***Թեմա 13.*** Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Սամվելյան Լ.Ա.,Պետրոսյան Գ.Ա., Թումանյան Հ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարա-

կության ծրագիր (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2007թ.
2. Ազիզյան Գ.Ն., Վանեսյան Հ.Մ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Բաբայան Հ.Ս., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
4. Բոյախչյան Գ.Ե., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
5. Թումանյան Հ.Գ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:

1. 0305/B15	2. Անգլերեն -1	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 1-ին կիսամյակ	7. Ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:

Դասընթացի խնդիրները.
1. Ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար:
2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը:
2. Թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացառությունները:
3. Թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները:
4. Տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:
2. Ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը:
3. Կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից:
2. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
3. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2. գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ /և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.
- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր

շարադրանքի վարժություններ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: **Բաժին 2.** Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: **Բաժին 3.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Համաշխարհային պատմության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

1. 0305/B16	2. Անգլերեն-2	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Ստուգարք	

8. Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը:
2. Հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները:
2. Կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը:
2. Շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան:
3. Կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Իրականացնելու համատեղ աշխատանք թիմում:
2. Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ:
3. Ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. հաղորդակցական մեթոդ
2. մտագրոհ
3. ուսանողական պորտֆոլիո
4. խմբային աշխատանք
5. գրավոր և բանավոր թարգմանություն
6. աշխատանք տեղեկագրով
7. ռեֆերատ
8. ինքնուրույն աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարքը համարվում է ստուգված ուսանողի՝մոդուլի շրջանակներում ցուցաբերած կամ/ և վերջում ներկայացրած աշխատանքների առկայության դեպքում.

- գրավոր և բանավոր թարգմանություններ,
- ռեֆերատ,
- պրեզենտացիա,
- խմբային աշխատանք,
- ուսանողական պորտֆոլիո (ընթերցանությունը և լսողական ընկալումը ստուգող, գրավոր շարադրանքի վարժություններ, CV, դիմում, մոտիվացիոն նամակ):

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Բաժին 1.Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում: **Բաժին 2.** Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Հայոց պատմությունը համաշխարհային համատեքստում: Թարգմանություններ հայերենից անգլերեն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Mkhitaryan, Ye., (2004) Basic English for University Students, YSU Press, Yerevan.
2. Cincotta, Howard (Ed.). (1994). An Outline of American History. United States Information Agency.
3. Kirn, Elaine. (1989). About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division.
4. Myers, Sondra (Ed.). (1997). Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College.
5. Short, Deborah J., Seufert-Bosco, Margaret, & Grognet, Allene Guss. (1995). By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc.

0305/B15	Ֆրանսերեն – 1	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
1-ին կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:

Դասընթացի խնդիրները.
1. Խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:
2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.
Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական

տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,
Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջանակում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. **Թեմա 2.** Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: **Թեմա 3.** Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: **Թեմա 4.** Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: **Թեմա 5.** Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: **Թեմա 6.** Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: **Թեմա 7.** Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
4. M. Djoulhakian, R. Meliksnتian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

0305/B16	Ֆրանսերեն – 2	4 ECTS կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
2-րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա:
2. Ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:
3. Հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները:
2. Ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները:
2. Ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները:
3. Լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անծանոթ բառ):
4. Առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն:

2. Ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները:
3. Ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր:
4. Բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք

Նախապես տրված հարցաշարի շրջանակում անց է կացվում բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: **Թեմա 2.** Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: **Թեմա 3.** Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 4.** Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ **Թեմա 5.** Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: **Թեմա 6.** Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում: **Թեմա 7.** Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Попова И. Н., Казакова Ж. А., «Французский язык», Москва, 2008
2. M. Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire).
3. Cl. Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
4. M. Djoulhakian, R. Meliksnتian, A. Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

0305/B54	Ֆրանսերեն-3	4 կրեդիտ
4 ժամ/շաբ.	0/60/0	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ գրավոր և բանավոր խոսքի ունակություններ, տեքստի վրա ինքնուրույն աշխատելու կարողություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել, հարստացնել ուսանողների մասնագիտական բառապաշարը:
2. Ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները:
3. Զարգացնել ֆրանսերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները:
4. Զարգացնել ֆրանսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան, ադապտացված տեքստեր ընթերցելու հմտությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ֆրանսերենի բառակազմության միջոցները:
2. Կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները կոնտեքստում:
3. Գործածելու անդեմ բայերը և դերբայները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:
2. Ընթերցելու և վերլուծելու տեքստը՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոնները:

3. Արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ունկընդրելու և վերարտադրելու ադապտացված տեքստեր:
2. Պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:
3. Բանավիճելու մասնագիտական թեմաներով:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ֆրանսերենի բառապաշարի ընդհանուր բնութագիրը: Հիմնաշերտ և փոխառություններ: **Թեմա 2.** Բառապաշարի հարստացման հիմնական միջոցները: **Թեմա 3.** Հոմանիշություն և հականիշություն: **Թեմա 4.** Հոմանունության դրսևորման առանձնահատկությունները: **Թեմա 5.** Բայի անդեմ ձևերը: Դերբայների դասակարգման սկզբունքներն ու չափանիշները:

Հիմնական գրականության ցանկ.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français. E., 2011.
2. E. Siréjols, “vocabulaire en dialogues”; (Niveau débutant) Paris 2007
3. E. Siréjols, “vocabulaire en dialogues”; (Niveau intermédiaire) Paris 2007
4. И.Н.Попова, Ж.А.Казакова, Cours pratique de grammaire francaise, Нестор Академик, Москва, 2006

0305/B55	Ֆրանսերեն-4	4 կրեդիտ
3 ժամ/շաբ.	0/45/0	
4-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է՝ հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացած գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի խնդիրները.

1. Մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր
2. Ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով
3. Զարգացնել տարբեր բարդությամբ մասնագիտական տեքստեր թարգմանելու կարողություններ

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Կազմելու ինքնուրույն խոսք՝ կիրառելով ժամանակների համաձայնության սկզբունքները:
2. Թվարկելու մասնագիտական տերմիններ, ցուցադրելու գիտելիքներ մասնագիտական-տեղեկատվական ոլորտում:
3. Կատարելու տեքստի վերարտադրում սեփական տեսանկյունից՝ նոր բառապաշարի օգնությամբ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Խոսելու իր մասնագիտությունից, ուսումից, աշխատավայրից, ծրագրերից:
2. Վարելու հեռախոսային զրույց, գրելու էլեկտրոնային նամակ, նշանակել հանդիպումներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ներկայացնելու բանավոր զեկուցում կամ նախագիծ:
2. Բանավիճելու մասնագիտական թեմանների շուրջ

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական

տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,
Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:
1-ին ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:
2-րդ ստուգում. Գրավոր հարցում: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մակբայների տեսակները և քերականական կարգերը: **Թեմա 2.** Ֆրանսերենի նախդիրների ընդհանուր բնութագիրը: Առավել գործածական նախդիրները: **Թեմա 3.** Ժամանակների համաձայնություն: **Թեմա 4.** Հարակատար դերբայի գործածության առանձնահատկությունները: **Թեմա 5.** Լեզվաբանական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները: **Թեմա 6.** Պաշտոնական գրագրություն, ինքնակենսագրություն, դիմում, մոտիվացիոն նամակ:

Հիմնական գրականության ցանկ.

1. M.Djoulhakian, R.Méliksétian, A.Mouradian, Manuel de français. E., 2011.
2. E. Siréjols, “vocabulaire en dialogues”; (Niveau débutant) Paris 2007
3. E. Siréjols, “vocabulaire en dialogues”; (Niveau intermédiaire) Paris 2007
4. И.Н.Попова, Ж.А.Казакова, Cours pratique de grammaire francaise, Нестор Академик, Москва, 2006

1.0302/B08	Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	0/30/0	
2-րդ կիսամյակ	ստուգարք	

Դասընթացինպատակն է՝ հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցների յուրացմամբ, գործառական բոլոր ոճերի առանձնահատկությունների իմացությամբ ու անսխալ, գրագետ գործառմամբ, ձևավորել կարողություններ՝ գեղարվեստական խոսքի հնչյունական, բառային ու քերականական առանձնահատկությունները ինքնուրույն մեկնաբանելու և արժևորելուհամար, ծանոթացնել հրապարակային խոսքի ընդհանուր կառուցվածքին և հիմնական հատկանիշներին և կիրառելի դարձնելու սումնական գործընթացներում:

Դասընթացի խնդիրները.

1.Բացահայտել արտահայտչական և պատկերավորման միջոցների դերը խոսքում, խոսքի գործառական տարբերակների համակարգը /գիտական, պաշտոնական, խոսակցական/, գեղարվեստական և հրապարակային խոսքի խնդիրները, կառուցվածքը, լեզվական առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու խոսքի արժանիքները:
2. Կիրառելու արտահայտչական և պատկերավորման միջոցները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Լուսաբանելու գործառական ոճերի դասակարգման հիմունքները և ոճերի առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կառուցելու պատկերավոր և գրագետ խոսքարվեստ, վերացնելու խոսքային անճշտությունները, դրսևորելու խոսքային բարձր էթիկետ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային

փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,
Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. Քննարկում /բանավեճ: 2. Համագործակցային աշխատանք: 3. Մտագրոհ: 4. Վերլուծականմեթոդ: 5. Խոսքային կամ բանավոր մեթոդ: **Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս, 6. 7. Գրավոր մեթոդ: 8. Բացատրական մեթոդ:
Գնահատման մեթոդները և չափանիշներն են. ***Ստուգարքն*** անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:
Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. **Թեմա1.** Խոսքի արժանիքները: **Թեմա 2.** Խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցներ: **Թեմա 3.** Խոսքի գործառական տարբերակներ /գիտական, պաշտոնական, խոսակցական/: **Թեմա 4.** Գեղարվեստական ոճ: Հրապարակային խոսք:
Հիմնական գրականության ցանկ. 1. Ավետիսյան Յուրի, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Ա, ԵՊՀ, Եր.,2014: 2. Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Հեղինակային խումբ), Գիրք Բ, ԵՊՀ,Եր., 2015: 3. Ասատրյան Մ. Ե. , Ժամանակակից հայոց լեզու/Ձևաբանություն/,Եր, 2002: 4. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն,Եր., 2003: 5. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճաբանություն, Եր, 2003: 6. Մարգարյան Ա., ժամանակակից հայոց լեզու /Բառագիտություն/, Երևան, 1997:

0304/B09	**Հայոց պատմության հիմնահարցեր-2**	**2 ECTS կրեդիտ**
2 ժամ/շաբ.	**30/0/0**	
2-րդ կիսամյակ	**Ստուգարք**	

Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել հայ ժողովրդի 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել հստակ պատկերացում հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին:
2. Ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կարողություն:
3. Ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը:
2. Նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:
2. Արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝

համաշխարհային պատմության համատեքստում

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. անհատական և խմբային առաջադրանքներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում**: Թեմա 2.** Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: **Թեմա 3.** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 4.**Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: **Թեմա 5.** Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: **Թեմա 6.** Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: **Թեմա 7.** Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: **Թեմա 8.** Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: **Թեմա 9**. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: **Թեմա 10**. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: **Թեմա 11.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հայոց պատմություն, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012:
2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ. Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975:
3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր. Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000:
4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.,), Երևան, 2009:

1. 0001/B07	2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3.4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5.30/30/0	
6. 2-րդ կիսամյակ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները:
2. Ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին:
3. Մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները:
4. Ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը:
5. Ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային զննում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն:
2. Դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում:
3. Ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում:
4. Օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում:
2. Աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ:
3. Վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ,
4. լաբորատոր աշխատանքներ,
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

12.Գնահատման մեթոդները և չափանիշները

Դասընթացն ավարտվում է **ստուգարքով:** Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման միջոցով: Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

<u>Բաժին 1.</u> Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: ***Թեմա 1.*** Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: ***Թեմա 2.*** Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: **<u>Բաժին 2.</u> Քաղաքացիական պաշտպանություն:** ***Թեմա 3.*** Բնակչության գործողությունները ահաբեկու-թյունների և նրանց սպառնալիքի ժամանակ: ***Թեմա 4.*** Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: ***Թեմա 5.*** Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: ***Թեմա 6.*** Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղութ-յունները: ***Թեմա 7.*** Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: **<u>Բաժին 3.</u> ԱԻ-ում բնակչության առաջին բուժօգնություն:** ***Թեմա 8.*** Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրա-վիճակներում: ***Թեմա 9.*** Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: ***Թեմա 10.*** Սուր հիվանդություններ և թունավորումներ: ***Թեմա 11.*** Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: ***Թեմա 12.*** Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Ց., Վարդանյան Ջ.Հ., «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:
2. Հեղինակների կոլլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարիկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:
3. Կ.Ա. Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:
4. Մ.Խ.Ադամյան, «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ:
5. Ս.Ա.Մանուկյան, Գ.Հ.Ճաղարյան, «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017

1. 0104/B11	**2.Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք**	**3. 2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 15/15/0**	
6. 3-րդ կիսամյակ	**7. Ստուգարք**	
8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:		
9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*** 1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:		

2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Համակարգելու և վերլուծելու ստացած տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծելու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. 3. ինքնուրույն խատանքներ

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անց է կացվում բանավոր:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 2.** Նմուշային եղանակ: **Թեմա 3.** Գնահատման տեսություն: **Թեմա 4.** Միջակայքային գնահատականներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.

1. 0304/B12	2. Իրավունքի հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Ստուգարք	

8. ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

<u>Դասընթացի խնդիրները.</u>

- Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
- Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

3. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
4. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
5. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

6. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ:
7. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
8. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

10. **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի

իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. 3. զեկուցում:

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**
Ստուգարք. Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**
Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4**. Քրեական իրավունք: **Թեմա 5**. Աշխատանքային իրավունք: **Թեմա 6**. Ընտանեկան իրավունք: **Թեմա 7**. Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8**. Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10**. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11**. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12**. Միջազգային իրավունք:

14. **Հիմնական գրականության ցանկ.**

1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:

1. 0304/B13	2. Փիլիսոփայության հիմունքներ	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 30/0/30	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	

8. ***Դասընթացի նպատակն է՝*** ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

Դասընթացի խնդիրները.
- Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
- Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
- Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:
2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:
3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

9. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**
1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7.** Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն:

14. **Հիմնական գրականության ցանկ.**

1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:
3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:
4. Գաբրիելյան Հ., Հայ փիլսոփայության պատմություն, Երևան, 1980:
5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:
6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՍԱՍ /ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ/

1. 0303/B17	2.Բարոյագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7. ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

Դասընթացի խնդիրները.
1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:
6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային

մեկնաբանությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. զեկուցումներ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. **Թեմա 1.** Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: **Թեմա 2.** Բարին և չարը: **Թեմա 3.** Պարտք և պատասխանատվություն: **Թեմա 4.** Պատիվ և արժանապատվություն: **Թեմա 5.** Խիղճ: Բարոյական իդեալ: **Թեմա 6.** Կյանքի իմաստն ու նպատակը: **Թեմա 7.** Երջանկություն. Սեր: **Բաժին 2. Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8.** Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: **Թեմա 9.** Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **Բաժին 3. Բարոյականություն և ազատություն: Թեմա 10.** Անձը և համակեցությունը: **Թեմա 11.** Բարոյականության հասարակական խնդիրները: **Բաժին 4. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12.** Անձի բարոյական գիտակցությունը: **Թեմա 13.** Անձի բարոյական գործունեությունը: **Թեմա 14.** Անձի բարոյական հարաբերությունները: **Թեմա 15.** Անձի բարոյական մշակույթը: **Բաժին 5. Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16.** Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: **Թեմա 17.** Ազգային-բարոյական նկարագիր: **Բաժին 6. Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18.** Կիրառական բարոյագիտություն:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. А. Разин, Этика, Москва, 2003.
2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.
3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.
4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.
5. Словарь по этике.

0105/B17	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	2 ECTS կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4–րդ կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:

Դասընթացի խնդիրներն են՝

1. Ձևավորել բնագիտական աշխարհայացք:
2. Ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը:
3. Բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները:

4. Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքները:
3. Բնութագրելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Թիմային աշխատանքի ընթացքում հստակ ներկայացնելու սեփական միտքը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:
3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադատական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Էրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Երևան, 2007:
2. Канке В.А., Концепции современного естествознания, Логос. Москва, 2002.
3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова).

1. 0201/B17	2.Գործարարության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:
2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:
3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:
2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:
3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:
4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը
2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:
3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:
4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)

1. Աշխատելու թիմում:
2. Մոտիվացնելու:
3. Առաջնորդելու:
4. Աշխատելու տեղեկատվության հետ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական խաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց,ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց կացվում գրավոր:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: **Թեմա 2.** Գործարարության միջավայրը և տեսակները: **Թեմա 3**. Գործարարության սուբյեկտները: **Թեմա 4**. Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: **Թեմա 5.** Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը,որպես գործարարության նախադրյալ: **Թեմա 6.** Մարքեթինգի պլան: **Թեմա 7**. Գործունեության կադրային ապահովումը: **Թեմա 8**. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: **Թեմա 9.** Արտադրական պլան **Թեմա 10.** Ինքնարժեքի կալկուլյացիա: **Թեմա 11.** Ձեռնարկատիրական ռիսկ: **Թեմա 12**. Ֆինանսական պլանավորում:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. М.Н. Кондратьева, Е. В. Баландина, Ю. С. Трефилова «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/
2. В.Ю. Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011.
3. В.А. Богомолова, Н. М. Белоусова, О.В. Кублашвили, Р.Ю. Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//
4. С.И. Башаримова, М.В. Дасько, «Основы предпринимательства» учебное пособие.
5. Е.К. Торосян, Л. П. Сажнева, Ж. Н. Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//.

1. 0304/B17	2. Կրոնագիտության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Ստուգարք	

8. ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:
2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:
2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

Բ4. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգարքը. Ստուգարքը անց է կացվում բանավոր, նախապես տրամադրված հարցաշարի շրջանակներում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5.** Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7.** Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8.** Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9.** Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10.** Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

14. **Հիմնական գրականության ցանկ.**

1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимиров Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.

0202/B17	Մշակութաբանության հիմունքներ	2 կրեդիտ
2 ժամ/շաբ.	30/0/0	
4-րդ կիսամյակ	ստուգարք	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և ‹‹մշակույթ›› հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: ‹‹Մշակույթ›› հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.**Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: **Թեմա 11.**Հայկական մշակույթ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս. Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս. Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С. А., Рыжакова С. И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В. М., Культурология, М., 1998.

1.0201/B17	2.Սոցիոլոգիայի հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	

6.4-րդ կիսամյակ	7.Ստուգարք

8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

Դասընթացի խնդիրները.

1. Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու գիտության մեջ ‹‹սոցիոլոգիա›› հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:
2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:
3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքը.

Ք2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. 5. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2**. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4**. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5**. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Бабосов Е.М. Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8
2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011.
3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.
4. Долгоруков А.М. От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.
5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)
6. Кравченко А.И. Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998.

1. 0201/B17	2.Տնտեսագիտության հիմունքներ	3.2 ECTS կրեդիտ
4.2 ժամ/շաբ.	5.30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.Ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:

Դասընթացի խնդիրները.

1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:
2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:
3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից:
4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:
2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:
2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Աշխատելու թիմում:
2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվել հանրության հետ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություններ
2. Սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր
3. Խմբային աշխատանքներ
4. Ռեֆերատներ

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ***ստուգարքն*** անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2**. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3.** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4**. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5**. Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7**. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8**. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10**. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11**. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12**. Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14**. Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15**. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Գորթնի Ջ. , Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:
2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:
3. Макконнелл К.Р., Брью С.Л. Экономика. 17-ое изд., Москва, 2009.
4. Экономическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998

1. 0304/B17	2.Քաղաքագիտության հիմունքներ	3.2 կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6.4-րդ կիսամյակ	7.ստուգարք	

8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության

առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
2. Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
3. Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4.ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարք. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.

Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական համակարգեր: **Թեմա 12.** Գաղափարախոսությունների տեսություն: **Թեմա 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: **Թեմա 14.** Քաղաքականությունը և կրոնը: ***Թեմա 15.*** Քաղաքական մշակույթ:

14.Հիմնական գրականության ցանկ.

1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)

1. 0305/B18	2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 1	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 0/90/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ստույգ գիտելիքներ ռուսաց լեզվի ուղղագրությունից և կետադրությունից, կատարելագործել նրանց ընդհանուր գրագիտության մակարդակը և բարձրացնել խոսակցական ռուսաց լեզվի հմտության մակարդակը:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնները,
2. բացատրելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական սկզբունքները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. ցույց տալու առաջացած խնդիրների լուծման եղանակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. կիրառելու ունեցած գիտելիքները, ընկալելու նոր գիտելիքները և տարածելու դրանք:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ7.կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք, 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք, 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական սկզբունքները: ***Թեմա 2.*** Ռուսաց լեզվի ձայնավոր և բաղաձայն հնչյունները: ***Թեմա 3.*** Ռուսաց լեզվի ձայնավորների ուղղագրությունը արմատներում: ***Թեմա 4.*** Ռուսաց լեզվի բաղաձայնների ուղղագրությունը արմատներում: ***Թեմա 5.*** Ь և Ъ նշանները: ***Թեմա 6.*** Ռուսերենի նախածանցների ուղղագրությունը: ***Թեմա 7.*** Կետադրական նշանները ռուսերենի պարզ նախադասությունում: ***Թեմա 8.*** Ռուսերենի բառերի բուն և փոխաբերական իմաստները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.
2. Григорьева Н.А., Русский язык. Тесты и упражнения для подготовки к Единому государственному экзамену. – М.: Айрис-пресс, 2006.
3. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.
4. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.
5. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. – М.: Рольф, 2001.

1. 0305/B19	2. Լեզվաբանության ներածություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/15/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է նախնական գիտելիքներ հաղորդել լեզվաբանական հիմնական հասկացությունների մասին, ինչպիսիք են, օրինակ, լեզվական և խոսքային հայեցակերպերը, լեզվի նշանային բնույթը, լեզվի կառուցվածքային և համակարգային բնութագրերը, լեզվի գոյության ձևերը, լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները և այլն, ներկայացնել լեզվաբանության բաժինների և ուղղությունների, լեզվաբանական գիտակարգերի և միջգիտակարգերի բնութագրերը, լեզվաբանական հետազոտության հիմնական մեթոդները և դրանց դերը լեզվաբանության՝ որպես գիտության զարգացման գործում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ըմբռնելու լեզվի նշանակությունը՝ որպես մարդկության հաղորդակցման կարևորագույն միջոցի,
2. ճանաչելու լեզվի դերը՝ որպես մարդկության հոգևոր և նյութական մշակույթի պատմության գանձարանի,
3. ներկայացնելու լեզվի հասարակական գործառույթները,
4. ներկայացնելու ժամանակակից ռուսաց լեզվի տեսությունները, նրա պատմությունը՝ իր առավել կարևոր գրավոր հուշարձաններով, արդի փուլում զարգացման միտումները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու լեզվական ճանաչողությունը ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ժամանակ,
2. գնահատելու արտաքին և ներքին գործոնների դերը լեզվական փոփոխությունների հարցում,
3. տարբերակելու լեզուների ծագումնաբանական և պատահական ընդհանրությունները,
4. օգտագործելու ձեռք բերված գիտելիքները դասավանդման գործընթացում,
5. կիրառելու լեզվաբանական վերլուծության հիմնական մեթոդները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1.Դասախոսություն
2.Սեմինար
3.հարցադրումներ և քննարկումներ,
4. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Լեզուն որպես լեզվաբանության առարկա (լեզվի բնութագրերը, լեզվի բնորոշումը, լեզվի գոյության ձևերը)։ **Թեմա 2.** Լեզվաբանության բաժինները, գիտաճյուղերը և լեզվաբանական մեթոդները։ **Թեմա 3.** Հնչյունաբանություն (հնչյունախոսություն, հնչույթաբանություն, պատմական հնչյունաբա-
նություն)։ **Թեմա 4.** Բառագիտություն (բառագիտության առարկան, իմաստաբանություն, իմաստափոխություն, տերմինագիտություն, բառարանագիտություն)։ **Թեմա 5.** Քերականություն (ձևաբանություն, շարահյուսություն)։ **Թեմա 6.** Լեզվի զարագացումը (լեզվի ներքին զարգացումը, լեզվական ազդեցությունների տեսակները)։ **Թեմա 7.** Լեզուների ծագումնաբանական և տիպաբանականդասակարգումները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987
2. Вендина Т.И., Введение в языкознание, М., 2003
3. Камчатнов А.М., Николина Н.А., Введение в языкознание, М., 2010
4. Реформатский А.А., Введение в языковедение, М., 1996
5. Широков О.С., Языковедение: введение в науку о языках, М., 2003

1. 0305/B20	**2. Ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանություն**	**3. 3 ECTS կրեդիտ**
4. 3 ժամ/շաբ.	**5. 30/15/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ռուսաց լեզվի հնչյունային և հնչույթային համակարգերին, ներկայացնել ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանության խնդիրները, կատարելագործել ռուսերենի արտասանությունը:

8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. տարբերակելու տառ, հնչյուն և հնչույթ հասկացողությունները,
2. տալ հնչյունների դասակարգումը և բնութագիրը,
3. բացատրելու հնչյունափոխության տեսակները,
4. տարբերակելու հատույթային և վերհատույթային միավորները,
5. բացատրելու վերհատույթային հնչյունական միջոցները,
6. թվարկելու վերհատույթային հնչյունական միջոցների գործառույթները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացատրելու ուղղախոսության՝ ճիշտ արտասանության, կանոնները,
2. կիրառելու վերհատույթային հնչյունական միջոցները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գրագետ շարադրելու մասնագիտական նյութը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա5. ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6. վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. ձայնագրությունների ունկնդրում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հնչյունաբանություն: Հնչյուն, հնչույթ, տառ: Հնչյունաբանության տեսակները: Հնչյունների դասակարգումը և բնութագիրը: Հնչյունային տառադարձություն: **Թեմա 2.** Ուղղախոսություն՝ ճիշտ արտասանություն: Ձայնավոր ու բաղաձայն հնչյունների ճիշտ արտասանության կանոնները: **Թեմա 3.** Վերհատույթային հնչյունաբանություն: Վերհատույթային հնչյունական միջոցները՝ շեշտ, հնչերանգ: Վերհատույթային միավորների տեսակները՝ վանկ, հնչաբառ, խոսքային տակտ, ֆրազ: **Թեմա 4.** Հնչերանգի տեսակները տարբեր բնույթի նախադասություններում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Касаткин Л.Л., Современный русский литературный язык. Фонетика. /Под ред. П.А.Леканта/. 5-е изд. М.: Изд-во Юрайт, 2017.
2. Панов М.В., Современный русский язык. Фонетика. М.: Высшая школа, 1979.

Լրացուցիչ գրականության ցանկ.

3. Аванесов Р.И., Фонетика современного русского литературного языка. М., 1956.
4. Брызгунова Е.А., Звуки и интонации русской речи. 5-е изд., М.: Русский язык, 1983.
5. Виноградов В.А., Консонантизм и вокализм русского языка. Практическая фонология. М.: МГУ, 1970.
6. Касаткин Л.Л., Современный русский язык. Фонетика. М.: Academia, 2006.

1. 0303/B21	2. Առաջին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 15/15/0	
6. 1-ին կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու վերաբերյալ, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների

նկատմամբ:

Դասընթացի խնդիրները.

1. զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններնաղետների տուժածներին առաջին օգնություն ցույց տալու,նվիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար,
2. պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակներին պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու բժշկա-հիգիենիկ դաստիրակության կանոնները:
2. Թվարկելու երեխայի առողջության պահպանման մեխանիզմները, բնութագրելու դրանց առանձնահատկությունները:
3. Թվարկելու տարբեր վտանգավոր իրավիճակներում տուժածի քննության և առաջին բուժօգնության ձևերը:
4. Թվարկելու երեխաների տարբեր տարիքային խմբերի համար ռիսակային հանդիսացող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները և ներկայացնելու դրանց դեմ պայքարելու ձևերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ցուցադրելու և կիրառելու հիգիենայի պահպանման կանոնները պրակտիկ աշխատանքում:
2. Ցուցադրել առաջին բուժօգնության հնարները (վիրակապում, բեկակալի տեղադրում, ջերմաչափում, պուլսի որոշում) գործնական ստեղծած իրավիճակներում:
3. Համապատասխան վայրերում իրականացնելու տուժածների առաջին բուժօգնություն (ստամոքսի լվացում, հոգնա, այրվածքի մակերեսի և խորության որոշում և այլն):
4. Կազմակերպելու և ցուցաբերելու առաջին օգնություն ցրտահարված տուժածներին:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Անհրաժեշտության դեպքում կիրառելու առաջին բուժօգնության հնարները հասարակական վայրերում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն
2. Սեմինար
3. հարցադրումներ և քննարկումներ,
4. լաբորատոր աշխատանքներ,
5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. Գրավոր /ստուգողական աշխատանք/:

2-րդ ստուգում. Բանավոր հարցում:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները: **Թեմա 2.** Վերակենդանացման միջոցառումներ: **Թեմա 3.** Թունավորումներ: **Թեմա 4.** Վնասվածքներ: **Թեմա 5.** Ջերմային խանգարումներ: **Թեմա 6.** Արյունահոսություններ: **Թեմա 7.** Վիրակապություններ: Վիրակապություններ: **Թեմա 8.** Առողջ ապրելակերպի կանոնները: **Թեմա 9.** Ինֆեկցիոն հիվանդություններ: **Թեմա 10.** Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Рожинский М.М, Катовский Г.Б., Оказание доврачебной помощи, Медицина, Москва, 1981.

1. 0305/B23	**2. Գրականագիտության ներածություն**	**3. 3 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 30/0/0**	
6. 1-ին կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է ներկայացնել գրականագիտական հիմնական հասկացությունները, գրականության կապը արվեստի մյուս տեսակների հետ, գրականության զարգացման օրինաչափությունները, լեզվաարտահայտչական միջոցները, տաղաչափական հիմնական հասկացությունները, գրական գործընթացի տարրերը (գրական ժանրեր, սեռեր, ուղղություններ):

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու գրականագիտության բաժինների փոխադարձ կապը, գրականության և արվեստի մյուս տեսակների առնչությունները,
2. բացատրելու գրական ժանրերի տարբերակման սկզբունքները,
3. նկարագրելու գրականության լեզվաարտահայտչական միջոցները, տաղաչափական համակարգերի առանձնահատկությունները,
4. բացատրելու գրականագիտական հիմնական հասկացությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. տարբերակելու գրական ստեղծագործությունների կառուցվածքային և ժանրային առանձնահատ-կությունները,
2. վերլուծելու գրական երկերը լեզվական, տաղաչափական սկզբունքների տեսանկյունից,
3. գործնականում իրականացնելու գրականագիտական ուսումնասիրություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. հավաքելու և համակարգելու գրականագիտական հասկացությունների վերաբերյալ տվյալները,
2. մեկնաբանելու գրական երկի տարբեր մակարդակների (կառուցվածքային, լեզվական, տաղաչափական, սյուժետային) վերլուծության սկզբունքները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունքներ և քննարկումներ.
3. գրական երկերի լեզվական, տաղաչափական և ժանրային վերլուծություններ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գրականագիտությունը և նրա բաժինները: **Թեմա 2.** Գրականությունն արվեստների համակարգում: **Թեմա 3.** Գեղարվեստական պատկեր, նրա տեսակները: **Թեմա 4.** Գրական երկի բովանդակության և ձևի միասնությունը: **Թեմա 5.** Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: Թեմա 5. Գրական երկի թեման և թեմատիկան: **Թեմա 6.** Գրական երկի կոմպոզիցիան, սյուժեն և ֆաբուլան: **Թեմա 7.** Չափածո երկի կառուցվածքը. տաղաչափական համակարգեր: **Թեմա 8.** Գրական սեռեր և ժանրեր: **Թեմա 9.** Գրական մեթոդներ, ուղղություններ, հոսանքներ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Էդ.Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, Երևան, 2011:
2. Զ.Ավետիսյան, Գրականության տեսություն, Երևան, 1998:
3. Ռ.Ուելլեք, Օ.Ուորրեն, Գրականության տեսություն, Երևան, 2008:
4. Գրականության տեսության արդի խնդիրներ, Երևան, 2016:
5. В.Е.Хализев, Теория литературы, Москва, 2005.

1. 0303/B22	2. Մանկավարժության գործունեության հիմունքներ	3. 2 ECTS կրեդիտ

4. 2 ժամ/շաբ.	5. 22/0/8
6. 1-ին կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման

Դասընթացի նպատակն է նպաստել ապագա մանկավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհայացքի ձևավորմանը, ապահովել մանկավարժի անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մանկավարժական գործունեության հիմնական բնութագրերը,
2. սահմանելու մանկավարժի առաքելությունը,
3. թվարկելու և բացատրելու ուսուցչի մասնագիտական որակները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու մանկավարժական նոր տեխնոլոգիաները,
2. ընտրելու առաջացած մանկավարժական կոնֆլիկտների լուծման եղանակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. վերլուծելու մանկավարժական առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ուսուցչի մասնագիտության ներածություն **Թեմա 2**. Մանկավարժական գործունեության ծագումն ու զարգացումը: **Թեմա 3.** Մանկավարժական գործունեության տեսակները: **Թեմա 4.** Մասնագիտական գործունեության բնութագրերը: **Թեմա 5.** Մանկավարժական հիմնական գործունեությունը մարդու կենսագործունեության համակարգում: **Թեմա 6.** Ուսուցչի մասնագիտական գործիմացություն, զարգացման էությունը, համակարգը, բովանդակությունը: **Թեմա 7.** Մանկավարժական մասնագիտությունների զարգացման հեռանկարները նոր հասարակական, տնտեսական տեղեկատվական պայմաններում: **Թեմա 8.** Մանկավարժական գաղափարների, մանկավարժական հաղորդակցման էությունը: **Թեմա 9.** Ուսուցչի մասնագիտական որակները, դրանց զարգացման և կատարելագործման ուղիները: **Թեմա 10.** Ընդհանուր և մանկավարժական մշակույթ: **Թեմա 11.** Մանկավարժական մշակույթի հիմնական տարրերը: **Թեմա 12.** Վարպետությունն ու տեխնիկան ուսուցչի մասնագիտության մեջ: **Թեմա 13.** Կրթությունը որպես հասարակության տնտեսական, սոցմշակութային, հոգևոր զարգացման արտացոլում: **Թեմա 14.** Մանկավարժական կրթօջախներ: **Թեմա 15.** Մանկավարժական կրթության իրականացման եղանակները: **Թեմա 16.** Ուսուցչի մասնագիտական կայացում: **Թեմա 17.** Մասնագիտական կայացման հակասություններն ու ճգնաժամերը: **Թեմա 18.** Մանկավարժի ինքնակրթության աղբյուրները: **Թեմա 19.** Հասկացություն անձնային մասնագիտական հեռանկարի մասին: **Թեմա 20.** Մանկավարժի մասնագիտական աճը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, դրանց շնորհման չափանիշները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (2013):
2. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում», Երևան, Ասողիկ,

2004.- 226էջ:
3. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց» - Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. - Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ:
4. Բուդաղյան Ա.Ս., Մանասյան Ն.Վ., Սանթուրջյան Մ.Գ., Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Զեկույց/ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, – Երևան , Փրինթինֆո, 2012, –222 էջ:
5. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011, 148 էջ:

1. 0305/B27	2. Ռուս գրականության պատմություն /ռուս բանահյուսություն, 18-րդ դարի ռուս գրականություն/	3. 5 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 60/0/15	
6. 2-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է նկարագրել ռուս բանահյուսության հիմնական ժանրերն ու դրանց յուրահատկությունները, ներկայացնել հին ռուս գրականության պատմական զարգացումը և գրական երկերի գեղարվեստական առանձնահատկությունները, լուսաբանել 18-րդ դարի ռուս գրականության հիմնական միտումները, գրական ուղղությունները և ակնառու ստեղծագործությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու ռուս բանահյուսության ժանրային համակարգը, ներկայացնելու և մեկնաբանելու հին ռուս գրականության և 18-րդ դարի ռուս գրականության կարևոր ստեղծագործությունները,
2. բացատրելու գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, բնութագրելու գրական երկերի պատմական-հասարակական դերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու տարբեր ժանրերի, ոճերի միջնադարյան տեքստեր,
2. բնութագրելու XVIII- րդ դարի հիմնական գրական ուղղությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

U2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

U3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

Եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս բանահյուսության ժանրային համակարգը: Ծիսական և օրացուցային բանահյուսություն: **Թեմա 2.** Էպիկական ժանրերն ու նրանց գեղարվեստական առանձնահատկությունները: **Թեմա 3.** Կիևյան Ռուսիայի գրականության ժանրային առանձնահատկությունները: **Թեմա 4.** Ռուս գրականության առանձնահատկությունները մոնղոլ-թաթարական արշավանքների շրջանում: **Թեմա 5.** 17-րդ դարի ռուս գրականությունը: Կլասիցիզմը ռուս գրականության մեջ (Տրեդիակովսկի, Լոմոնոսով, Սումարոկով): **Թեմա 6.** 18-րդ դարի դրամատուրգիան (Սումարոկով, Ֆոնվիզին): Դերժավինի պոեզիան: Կարամզինը՝ ռուս սենտիմենտալիզմի հիմնադիր:

Հիմնական գրականության ցանկ.

1. Аникин В.П., Русское устное народное творчество. М., 2004
2. Зуева Т.В., Кирдан Б.П., Русский фольклор. М., 2002
3. Коровин В.И., Древнерусская литература, М., 2003
4. Лебедева О.Б., История русской литературы XVIII века. М., 2000

1. 0305/B25	2. Ժամանակակից ռուսաց լեզվի բառագիտություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/15/0	
6. 2-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8.Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին արդի ռուսերենի բառահամակարգին, բառապաշարի ձևավորման աղբյուրներին և ուղիներին, բառապաշարի իմաստային և ոճային առանձնահատկություններին:

9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու բառույթի լեզվական հատկանիշները,
2. բացատրելու բառույթի իմաստային նրբերանգները,
3. մատնանշելու բառույթի և դարձվածքի իմաստային և ոճական առանձնահատկությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մեկնաբանելու և ճիշտ օգտագործելու ռուսերենի բառապաշարը,
2. խմբագրելու տեքստը ճիշտ բառօգտագործման տեսանկյունից,
3. մեկնաբանելու և ճիշտ օգտագործելու ռուսերենի դարձվածքները:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա5.ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. վերարտադրողական մեթոդ,
3. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
4. հետազոտական մեթոդ,
5. նախագծերի կազմում:

12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բառը որպես հիմնական լեզվամիավոր: Բառապաշարը որպես համակարգ: Բառիմաստը և նրա բաղադրիչները: Բառային և քերականական իմաստ: **Թեմա 2.** Ռուսերենի հիմնական բացատրական բառարանները: Բառարանի կազմության հիմնական սկզբունքները: **Թեմա 3.** Բազմիմաստ բառեր: Համանուն բառեր: Հարանուն բառեր: Հոմանիշներ: Հականիշներ: Հնացած բառեր: Նոր բառեր: Փոխառություններ: Բառբարային բառեր: Եզրույթներ: Ժարգոնային բառեր: **Թեմա 4.** Դարձվածքաբանության սկզբունքները: Դարձվածքը և բառը: Դարձվածքը և ազատ բառակապակցությունը: Դարձվածքների տեսակները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Солодуб Ю.П., Альбрехт Ф.Б., Современный русский язык. Лексика и фразеология современного русского языка (сопоставительный аспект). Учебник. М.: Флинта, Наука, 2002.
2. Суздальцева В.Н., Практикум по современному русскому языку. Лексика. Фразеология. М.: Аспект Пресс, 2004.
3. Сулименко Н.Е., Современный русский язык. Слово в курсе лексикологии. Учебное пос. М.: Флинта: Наука, 2006.
4. Фомина М.И., Современный русский язык. Лексикология. Учебник. Изд-е 4-е, испр. М.: Высшая школа, 2003.
5. Шанский Н.М., Лексикология современного русского языка. М.: Просвещение, 1972.
6. Шмелев Д.Н., Современный русский язык. Лексика. Изд-е 4-е, стереотипн. М.: URSS, КомКнига, 2006.

1. 0305/B24	**2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 2**	**3. 5 ECTS կրեդիտ**
4. 5 ժամ/շաբ.	**5. 0/75/0**	
6. 2-րդ կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է ամրապնդել և կատարելագործել առաջին կիսամյակում ստացած գիտելիքները ուղղագրությունից, կետադրությունից, բառապաշարից, գրագիտությունից ընդհանրապես, զարգացնել ռուսերենի հաղորդակցային հմտությունները:

9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնները,
2. բացատրելու ռուսերենի բառապաշարի, բառակազմության և ձևաբանության լայն հնարավորությունները խոսքի վերարտադրման ընթացքում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. նշելու առաջացած խնդիրների լուծման եղանակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները և տարածելու դրանք:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ7.կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուսաց լեզվի ինքնուրույն խոսքի մասերի՝ բայի, գոյականի, ածականի, թվականի, դերանունի ուղղագրությունը: **Թեմա 2.** Հոմանիշների, հականիշների, նույնանունների, հարանունների կիրառումը խոսքում: **Թեմա 3.** Ռուսերենի դարձվածաբանության գործնական ներուժը: **Թեմա 4.** Ռուսերենի բառակազմության հնարավորությունները խոսքում: **Թեմա 5.** Ռուսաց լեզվի ձևաբանության համակարգը. բայերի, գոյականների, ածականների, թվականների, դերանունների ձևավորման և կիրառման առանձնահատկությունները: **Թեմա 6.** Կետադրական նշանները ռուսերենի բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններում:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.
2. Кудинова А.В., Правописание Н и НН в различных частях речи. – М.: Экзамен, 2010.
3. Ласкарева Е.Р., Чистая грамматика. – СПб.: Златоуст, 2012.
4. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.
5. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.
6. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. – М.: Рольф, 2001.
7. Хавронина С.А., Широченская А.И., Русский язык в упражнениях. (Russian in exercises). – М.: Русский язык. Курсы, 2012.

1. 0303/B26	2. Մանկավարժության տեսություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 2-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է նպաստել ապագա մանկավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհացքի ձևավորմանը, ապահովել մանկավարժին անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը:

Դասընթացի խնդիրները.

1. ուսումնասիրել գործնական մանկավարժության հիմնական հասկացությունները,
2. բացահայտել ուսուցչի մասնագիտական գործունեության առանձնահատկությունները,
3. ուսումնասիրել մանկավարժական կրթության իրականացման եղանակները:

8. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու մանկավարժության ուսումնասիրության առարկան, բացահայտելու մանկավարժության ծագումն ու զարգացման փուլերը, սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները:
2. Նկարագրելու մանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում, բացահայտելու մանկավարժության կապը այլ գիտությունների հետ:
3. Մեկնաբանելու մանկավարժական գիտության մեթոդաբանությունը, մանկավարժական հետազոտությունների իրականացման գիտական մեթոդները, մանկավարժական գործընթացի բաղադրամասերը, փուլերը և օրինաչափությունները:
4. Ներկայացնելու ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, կրթության նպատակը և բովանդակությունը կրթական բարեփոխումների արդի փուլում:
5. Թվարկելու և բացատրելու անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները:
6. Սահմանելու ուսուցման և դաստիարակության կազմակերպման սկզբունքները, թվարկելու դրանց իրականացման մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, ներկայացնելու ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Կիրառելու տեսական գիտելիքները մանկավարժական տարբեր իրավիճակներում:
2. Կատարելու գիտաուսումնական հետազոտություն, վերլուծելու, համակարգելու, ամփոփելու և իմաստավորելու հետազոտության արդյունքները:
3. Օգտվելու ուսումնական տեղեկատվության տարբեր աղբյուրներից, հավաքագրելու, համակարգելու և նպատակային կիրառելու մասնագիտական տեղեկատվությունը:
4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում զուգակցելու ուսուցման և դաստիարակության ավանդական և նոր տեխնոլոգիաները, կիրառելու ուսումնադաստիարակչական արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից ձևերը:
5. Ըստ ուսուցման և դաստիարակության նպատակների ձևակերպելու ուսումնադաստիա-րակչական խնդիրներ և նախագծելու դրանց լուծման ուղիներ:
6. Ուսումնական բանավեճերի ընթացքում հիմնավորելու մանկավարժական հասկացությունները, սկզբունքները, օրինաչափությունները, արտահայտելու սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, դրսևորելու համագործակցային և հաղորդակցական կարողություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Մասնագիտական միջավայրում դրսևորելու իր մանկավարժական մեթոդաբանական գիտելիքները:
2. Կրթական համակարգում պահպանելու աշակերտ և ուսուցիչ ուսումնական փոխհամագործակցությունը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:

3. Մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում լուծելու ուսումնական խնդիրներ:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
Եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մանկավարժությունը որպես գիտություն: Մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները և գործառույթները: **Թեմա 2.** Մանկավարժության մեթոդաբանությունը և գիտահետազոտական մեթոդները: **Թեմա 3.** Անձի սոցիալականացման գործընթացը: **Թեմա 4**. Մանկավարժական գործընթացը որպես համակարգ և ամբողջական երևույթ: **Թեմա 5**. Կրթական համակարգը ՀՀ-ում: **Թեմա 6.** Դիդակտիկան որպես մանկավարժական տեսություն: **Թեմա 7.** Ուսուցման գործընթացը որպես ամբողջական համակարգ: **Թեմա 8**. Ուսուցման օրինաչափությունները, սկզբունքները և դրանց դասակարգումը: **Թեմա 9.** Ուսուցման մեթոդներն ու միջոցները: **Թեմա 10.** Ուսուցմանժամանակակից տեխնոլոգիաներ: **Թեմա 11.** Ուսուցման կազմակերպման ձևերը: **Թեմա 12**. Ուսուցման գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը: **Թեմա 13.** Դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը: **Թեմա 14.** Դաստիարակության սկզբունքները: **Թեմա 15.** Դաստիարակության մեթոդները միջոցները և ձևերը: **Թեմա 16.** Անձի դաստիարակությունը կոլեկտիվում և ընտանիքում: **Թեմա 17.** Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման հիմնական կողմերը: **Թեմա 18**. Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա 19.** Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն: **Թեմա 20.** Դասղեկի աշխատանքը հանրակրթական դպրոցում: **Թեմա 21.** Հանրակրթական դպրոցի կառավարումը և ղեկավարումը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Մանկավարժ. հրատ., Երևան, 2005
2. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,Զանգակ-97, Երևան, 2005
3. Пидкасистый П.И., Педагогика, Юраит, Москва, 2011
4. Подласый И.П., Педагогика, 2002
5. Учебник для бакалавров, Юраит, Москва, 2012
6. Сластенин В.А., Педагогика: Учебник, Академия, Москва, 2011
7. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник, Гардарики, Москва, 2007

1. 0303/B28	2. Ընդհանուր հոգեբանություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/15/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ծանոթանալ հոգեբանության հիմնական հասկացություններին, մեթոդներին, խնդիրներին և բնագավառներին, գիտելիքների ձեռք բերել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների, անձի զարգացման և ձևավորման մեխանիզմների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերել հոգեբանական և մանկավարժական գործունեությունն արդյունավետ իրականացնելու գործնական հմտություններ և կարողություններ:

Դասընթացի խնդիրները.

1. տալ ընդհանուր պատկերացում հոգեբանության առարկայի, մեթոդների և ժամանակակից բնագավառների մասին,
2. ուսումնասիրել հոգեկան գործընթացների հիմնական տեսակները, դրանց օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. ծանոթանալ ճանաչողական գործընթացների ուսումնասիրության հիմնական մեթոդներին, դրանց

կիրառությանն ու գործառույթներին,
4. իրականացնել ինքնուրույն տեսական և գործնական ուսումնասիրություններ՝ զարգացնելով հոգեբանության վերաբերյալ տեսական և կիրառական գիտելիքներ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու հոգեբանության գիտությունը, նրա զարգացման և ուսումնասիրության բնագավառները,
2. Ներկայացնելու հոգեկան գործընթացները, վիճակներն ու հատկությունները, դրանց օրինաչափությունները, անձի զարգացման և ձևավորման առանձնահատկությունները:
3. Ձևակերպելու մարդու հոգեկանի սահմանումը, բնութագրելու նրա հիմքերը և կառուցվածքը, թվարկելու նրա գործառույթները:
4. Հոգեկանի բովանդակության մեջ առանձնացնելու և քննարկելու հոգեկանի ճանաչողական գործընթացները, ներկայացնելու դրանց կառուցվածքը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Վերլուծելու և համադրելու հոգեկան գործընթացների, վիճակների ու հատկությունների վերաբերյալ ստացած գիտելիքները, դրանք կիրառելու գործնականում:
2. ինքնուրույն կատարելու ուսումնասիրություններ հոգեբանության գիտության, նրա ճանաչողական գործընթացների վերաբերյալ՝ կիրառելով ուսումնասիրած հոգեբանության մեթոդները:
3. Վերլուծելու մասնագիտական գրականությունից հավաքագրած տեղեկատվությունը:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Կատարելու միջառարկայական վերլուծություններ, համադրություններ և ընդհանրացումներ: Կառուցելու և տրամաբանորեն հիմնավորելու սեփական մտքերը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ5.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2.** Հոգեբանության կապը այլ գիտությունների հետ, հիմնական բնագավառները**: Թեմա 3.** Հոգեկանը և ուղեղը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Անձի հոգեբանական բնութագիրը**: Թեմա 6.** Անձի զարգացում և սոցիալականացում: Ես-կոնցեպցիա**: Թեմա 7.** Իմացական գործընթացներ: Զգայություններ**: Թեմա 8.** Ընկալում, առանձնահատկությունները, տեսակները: **Թեմա 9.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները: **Թեմա 10**. Հիշողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 11.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Խոսք և հաղորդակցում**: Թեմա 13.** Երևակայություն և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա** 14. Անձի հուզակամային ոլորտը: **Թեմա 15.** Անձի անհատական տիպաբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր /Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ.
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997.
3. Հայրապետյան Դ., Կոգնիտիվ գործընթացների պրակտիկում ԵՊՀ հրատ. Երևան.
4. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.

5. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.
6. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
7. Столяренко Л.Д., Психология.учебник для вузов.-СПб.: Питер,2010. 592.
8. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005.

1. 0305/B29	2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 3	3. 5 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 0/75/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ռուսաց լեզվի ուղղագրության (մասնավորապես մակբայների) վերաբերյալ, ռուսաց լեզվի բարդ անշաղկապ նախադասության կետադրության հիմնական կանոնների վերաբերյալ:

9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական կանոնները,
2. բացատրելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնների հիմնական սկզբունքները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. մատնանշելու առաջացած խնդիրների լուծման եղանակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները,

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ7. կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բարդ և բարդ ածանցավոր բառերի ուղղագրությունը: **Թեմա 2.** Մակբայները և նրանց ուղղագրությունը: **Թեմա 3.** Բարդ նախադասության հիմնական կարգերը: **Թեմա 4.** Բարդ անշաղկապ նախադասություն, նրա կետադրության հիմնական կանոնները և յուրահատկությունները:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.
2. Акопян К. С., Арзуманян Э.Р., Мартирян Н.И. и др., Практикум по современному русскому языку. – Ер.: Изд-во ЕГУ, 2008.
3. Бройде М., Русский язык в диктантах. Нетрадиционный подход. – М.: Рольф, 2000.
4. Ласкарева Е.Р., Чистая грамматика. – СПб.: Златоуст, 2012.
5. Новикова Л.И., Орфография, морфология, лексика, словообразование, фонетика, культура речи, стилистика: контрольные и проверочные работы по русскому языку: для поступающих в вузы. – М.: Экзамен, 2007.
6. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.
7. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.
8. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. М.: Рольф, 2001.

1. 0305/B30	2. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 1	3. 6 ECTS կրեդիտ

4. 6 ժամ/շաբ.	5. 60/0/30
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում 19-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության ընդհանուր զարգացման գործընթացի մասին, ներկայացնել տվյալ ժամանակաշրջանում գերիշխող գրական ուղղությունները, նրանց միջև տեղի ունեցող գաղափարական վեճերը, լուսաբանել առանձին գրողների ստեղծագործությունը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու 19-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության պատմամշակութային հենքը և գրական ուղղությունների հատկանիշները,
2. ներկայացնելու դարաշրջանի ռուս հեղինակների ստեղծագործական ուղին և երկերի առանձնահատկությունները,
3. բացահայտելու «ոսկե դարի» գրականության դերը ռուս գրականության հետագա զարգացման գործընթացում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. նկարագրելու նշված ժամանակաշրջանի գրականության հիմնական հեղինակներին և նրանց ստեղծագործությունները,
2. կատարելու գեղարվեստական տեքստի վերլուծություն սեմինար-պարապմունքների ընթացքում ձեռք բերված հմտությունների հիման վրա,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

Եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. 19-րդ դարի առաջին կեսի քաղաքական և գրական-հասարակական շարժումներն ու հիմնական գրական ուղղությունները: **Թեմա 2.** Ռուսական ռոմանտիզմի բազմազանությունն ու առանձնահատկությունները (Վ.Ժուկովսկի, Կ.Բատյուշկով, պուշկինյան ժամանակաշրջանի բանաստեղծները): **Թեմա 3.** Առակագիր Ի.Կռիլովի և թատերագիր Ա.Գրիբոյեդովի ստեղծագործությունների տեղը և դերը ռուս գրականության զարգացման մեջ: **Թեմա 4.** Ա.Պուշկինի ստեղծագործությունների ժանրային բազմազանությունը (պոեզիա, արձակ, դրամատուրգիա): **Թեմա 5.** Մ.Լերմոնտովի ստեղծագործության տարբեր ժանրերի գեղարվեստական առանձնահատկությունները, ռոմանտիզմի և ռեալիզմի հարաբերակցությունը: **Թեմա 6.** Ն.Գոգոլի ստեղծագործությունների ցիկլային կառուցվածքը և կրոնական ուղղվածությունը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Манн Ю.В., Литература в первой половине XIX века: [Русская литература] // История всемирной литературы: В 8 томах . Том 6. — М.: Наука, 1989 – с. 284–292.
2. Манн Ю.В., Русская литература XIX века: Эпоха романтизма. М.: РГГУ, 2007.
3. Минералов Ю.И., История русской литературы XIX века (1800–1830-ые годы). М.:Высшая школа, 2007.
4. Якушин Н.И., Русская литература XIX века (первая половина). – М.: Владос, 2001.

1. 0305/B31	2. Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն-1	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/30/0	
6. 3-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

8. Դասընթացի նպատակն է համակարգված ներկայացնել արդի ռուսերենի բառակազմության եզրերն ու ձևերը, ուսանողների մոտ ձևավորել գիտական հայեցակարգ ռուսերենի ձևաբանանության մասին, մանրամասնորեն նկարագրել երկու կարևորագույն անվանական խոսքի մասերը /գոյական և ածական/:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու արդի ռուսերենի բոլոր ձևույթներն ու կարևորագույն բառակազմական ձևերը,
2. հստակ ներկայացնելու իր գիտելիքները անվանական խոսքի մասերի ձևաբանական առանձնահատկությունների մասին,
3. ներկայացնելու տվյալ ոլորտի ժամանակակից հետազոտությունների ձեռքբերումները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

4. տարբերակելու ռուսերենի ձևույթները,
5. նշելու յուրաքանչյուր բառի բառակազմության ձևը,
6. բնութագրելու անվանական բառերն ըստ ձևաբանական հատկանիշների:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Ա5. ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6. վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. վերլուծողական մեթոդ, որոնողական մեթոդ:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
Եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Բառակազմություն. ձևույթներ, բառակազմության ձևեր: **Թեմա 2.** Ձևաբանություն ըստ խոսքի մասերի /9 խումբ/. գոյական, ածական:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Борисова Е.Г., Латышева А.Н., Лингвистические основы РКИ. – М.: Наука, 2003.
2. Земская Е.А., Современный русский язык. Словообразование. – М.: Наука, 2008.
3. Русская грамматика: В 2-х томах. Под ред. Н.Ю.Шведовой. Т. 2. – М.: Наука, 1982.
4. Современный русский язык. Под ред. Белошапковой В.А. – М,: Высшая школа, 1989.
5. Современный русский язык. Морфология. – М.: Русский язык, 2002.

1. 0305/B32	2. Տարրական կրթության մանկավարժություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 24/0/6	
6. 3-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մանկավարժության պատմության զարգացման պատմական փուլերին, առաջավոր փորձին:

Դասընթացի խնդիրները.

1. ձևավորել գիտելիքներ կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,
2. ձևավորել տարրական դպրոցի հոգեբանի պրակտիկ գործունեության հմտություններ և կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Բնութագրելու 20-րդ դարի մանկավարժական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը:
2. Բացատրելու մանկավարժական մտքի գիտատեսական հիմքերը, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, հետազոտության մեթոդները, հիմնական աղբյուրները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Օգտագործելու, տեղայնացնելու մանկավարժական առաջավոր փորձը ժամանակակից պայմաններում:
2. Ընբռնելու 20-րդ դարի մանկավարժական առաջավոր փորձը, մեթոդաբանությունը, աղբյուրները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. համագործակցային աշխատանք
3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/
4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում
5. մտագրոհ և այլն:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գ.Ի.Գյուրջյանի մանկավարժական տեսությունը, նրա գրույցներն ու ստեղծագործությունները: **Թեմա 2**. Ռ.Շտայների մանկավարժական հայացքները: **Թեմա 3**. Վալդորֆյան դպրոց, կազմակերպումը, առանձնահատկությունները: **Թեմա 4**. Լ.Ս.Վիգոտսկի: Վիգոտսկու մանկավարժական տեսությունը, հիմնական աշխատությունները: **Թեմա 5**. Պ.Բլոնսկու մանկավարժական հայացքները, մանկաբանությունը: **Թեմա 6**. Ս.Շացկու մանկավարժական հայացքների ձևավորումը, նրա հիմնական աշխատությունները: **Թեմա 7**. Մ.Մոնտեսսորիի ազատ դաստիարակության գաղափարները, մեթոդների պատմությունը: **Թեմա 8**. Ջ.Դյուիի տեսությունը, նրա մանկավարժական տեխնոլոգիաները: **Թեմա 9**. Ա.Մասլոուի մանկավարժական գաղափարները, հիմնական աշխատությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն, Երևան, 2005 թ, էջ 18.
2. Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն, գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ.
3. Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն, գիրք 1-ին, Երևան, 2005 թ, էջ 16.
4. Подласый И.П., “Педагогика”, кн. 1, М., “ВЛАДОС”, 2002, с.9.
5. Сластенин В.А., “Общая педагогика”, ч. 2, “ВЛАДОС”, М., 2002, с. 11.
6. Смирнов В.И., “Общая педагогика в тезисах, дефинициях, иллюстрациях”, Педагогическое общество России, М., 1999, с. 21.

1. 0304/B33	2. Տրամաբանություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

8. Դասընթացի նպատակն է ուսանողների համար ապահովել տրամաբանության դասընթացի հիմնական հասկացությունների և օրենքների ու սկզբունքների իմացություն, որն ունի ինչպես ընդհանուր կրթական, այնպես էլ իմացաբանական ու մեթոդաբանական նշանակություն: Աջակցել ուսանողին բացահայտելու և կատարելագործելու ոչ միայն իր տրամաբանական կարողությունները, այլև ձեռք բերելու գիտելիքներ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների ու կառուցվածքի յուրացմանը, հետազոտական հմտությունների ձևավորմանը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բացատրելու մտքի կառուցվածքը,
2. ներկայացնելու տրամաբանական կանոնները և օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունն ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
3. բացատրելու տրամաբանական գիտելիքի էությունը և գործառնական տեսանկյունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. մեկնաբանելու տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
2. ճիշտ կատարելու և գնահատելու հասկացությունների հետ կապված տրամաբանական գործողությունները,
3. կատարելու դատողությունների և անհրաժեշտ մտահանգումների տրամաբանական վերլուծություն և գնահատում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դրսևորելու տրամաբանական մտածողության անհրաժեշտ մշակույթ՝ պահպանելով կանոնավոր մտածողության որոշակիության, անհակասականության, հիմնավորվածության և հետևողականության հիմնարար սկզբունքների ու դրանցից բխող մասնավոր նորմերի պահանջները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. քննարկում,
3. անհատական աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2.** Բազմատրամաբանության սկզբունքը: Միտք և լեզու: **Թեմա 3.** Հասկացություն: Հասկացության ծավալն ու բովանդակությունը: Հասկացության տեսակները: Տրամաբանական գործողություններ հասկացությունների հետ: Հասկացության ծավալի բաժանման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 4.** Սահմանման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 5**. Դասակարգման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 6.** Դատողության էությունը և կազմը: Պարզ և բարդ դատողություններ, դրանց տեսակները: **Թեմա 7.** Տրամաբանական մտածողության հիմնական օրենքները. որոշակիության, անհակասականության, հետևողականության և հիմնավորվածության պահանջները: **Թեմա 8.** Անհրաժեշտ մտահանգումներ, դրանց տեսակները և կոնոնները. պայմանական, բաժանանարար, լեմատիկ և անմիջական մտահանգումներ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.,Տրամաբանություն: Եր. , 2015:
2. Кириллов В.И., Орлов Г.А.,Фокина Н.И., Упражнения по логике. Учебное пособие. М.,2005.
3. Ивлев Ю.В., Логика. Учебник. 3-е издание. М., 2005.
4. Ивин А.А., Практическая логика. Учебное пособие. М.,2002.
5. А.Гетманова, Логика. 9-ое изд., Москва, 2006.

1. 0303/B34	**2. Մանկավարժական հոգեբանություն**	**3. 2 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 24/6/0**	
6. 4-րդ կիսամյակ	**7. Առանց ընթացիկ գնահատման**	

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

Դասընթացի խնդիրները.

1. ներկայացնել ուսումնական գործընթացի կառուցվածքը,
2. վերլուծել մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները,
3. ծանոթացնել մանկավարժական հմտություններին և կարողություններին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու մանկավարժական գործունեության դերը ուսումնական գործընթացում,
2. մատնանշելու մանկավարաժական հոգեբանության մեջ կիրառվող մեդոնեչի ամբողջականությունը,
3. ներկայացնելու կրթության հոգեբանության դերը մանկավարժական հոգեբանության մեջ,
4. բացատրելու դաստիարակության հոգեբանության դերը մանկավարժական գործընթացում,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կարևորելու ուսուցչի դերը մանկավարժական գործընթացում,
2. մեկնաբանելու ոսուցման հոգեբանական առանձնահատկությունները,
3. որպես մանկավարժ գործնականում կիրառելու անձնային հոգեբանական մոտեցումներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կիրառելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. . 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3.** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4.** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5.** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6.** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7.** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8.** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9.** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10.** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11.** Ուսուցչի անձի հոգեբանություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան: Լույս, 1983.
2. Էլկոնին Դ.Բ., «Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն». Երևան: Լույս, 1975.
3. Էլոյան Տ.Ս., «Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները», Երևան: Լույս, 1980.
4. Айсмонтас Б.Б., Педагогическая психология: схемы и тесты. - М.: Владос, 2004. - 208.
5. Басова Н.В., Педагогика и практическая психология, Ростов н/Д.: Феникс, 2000. - 416.

1. 0303/B35	2. Տարիքային հոգեբանություն	3. 2 ECTS կրեդիտ

4. 2 ժամ/շաբ.	5. 24/6/0
6. 4-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել մարդու նկատմամբ անալիտիկ մոտեցում հոգեբանական տարիքի ըմբռնման տեսանկյունից, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը, ինչպես նաև տարիքային զարգացման շրջափուլերին, դրանց վերաբերող հոգեբանական տեսություններին:

Դասընթացի խնդիրները.

1. տալ ընդհանուր պատկերացում տարիքային հոգեբանություն առարկայի, խնդիրների, մեթոդների վերաբերյալ,
2. տալ գիտելիքներ հոգեկան զարգացման պայմանների, շարժիչ ուժերի, տարիքաքային պարբերացման հիմնախնդրիների վերաբերյալ,
3. սովորեցնել վերլուծել հոգեկան զարգացման առանձնահատկությունները.
   - ✓ մինչծննդյան, մանկիկության և վաղ մանկության տարիքում,
   - ✓ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում,
   - ✓ դեռահասության և պատանեկության շրջանում,
   - ✓ հասուն տարիքի և ծերության շրջանում,
4. սովորեցնել ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների շնորհիվ լուծել պրոբլեմային իրադրություններ՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու տարիքային հոգեբանության ընդհանուր հարցերը:
2. Սահմանելու հոգեկան զարգացում գաղափարը, նշելու նրա պայմաններն ու շարժիչ ուժերը, թվարկելու հոգեկան զարգացման պարբերացման հիմնախնդիրները:
3. Բացատրելու հոգեկան զարգացման առանձնահատկությունները մինչծննդյան /պրենատալ/, մանկիկության /նորածնություն, բուն մանկություն/ և վաղ տարիքի շրջաններում:
4. Պարզաբանելու անձնային ոլորտի զարգացում, նախադպրոցականի հոգեկան զարգացում ու անձնավորության ձևավորում գաղափարները:
5. Բնութագրելու անձնավորության ձևավորման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, դեռահասության և պատանեկան շրջաններում:
6. Բացատրելու դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ուսումնասիրելու և մատնանշելու տարիքային հոգեբանության հիմնախնդիրները, տարիքային շրջաբաժանման և տարիքային ճգնաժամերի հիմնահարցերը:
2. Ուսումնասիրելու և տարբերակելու հոգեկան զարգացման շարժիչ ուժերը:
3. Ինքնուրույն հետազոտելու տարբեր տարիքային փուլերում դրսևորվող հոգեկան գործընթացները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Գործնականում կիրառելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:
   Կատարելու տարիքային հոգեբանական վերլուծություն և խնդրահարույց իրադրություններում առաջարկելու լուծումներ:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ, հետազոտական սեմինարներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Տարիքային հոգեբանության տեսական հիմնահարցերը: Անձի տարիքային տեսությունները: **Թեմա 3.** Անձնավորության անհատական զարգացումը: **Թեմա 4.** Տարիքային հոգեբանության մեթոդները: **Թեմա 5.** Նորածնության տարիքի հոգեբանական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Վաղ մանկություն շրջանի վերլուծությունը: **Թեմա 7.** Հոգեկանի զարգացումը նախադպրոցական տարիքում: **Թեմա 8.** Կրտսեր դպրոցական տարիքի բնութագիրը: **Թեմա 9.** Դեռահասության տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 10.** Պատանեկության հոգեբանություն: **Թեմա 11.** Հասուն տարիքների հոգեբանություն: **Թեմա 12.** Ծերության հոգեբանության բնութագիրը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Տարիքային հոգեբանություն և մանկավարժական հոգեբանություն դասընթացների ուսումնական ծրագրեր Է.Ա.Զաքարյան: Դասընթացների ուս. ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2009թ., 41 էջ:
2. Խուդոյան Ս.Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները. - Եր.: Զանգակ-97, 2004.
3. Абрамова Г.С., Возрастная психология: Учеб. пособие для студентов вузов. – М.: Академия, 1997.
4. Абрамова Г.С., Психология человеческой жизни: Исследования геронтопсихологии: Учеб. пособие для студентов психол. фак. вузов. – М.: Изд. центр "Академия", 2002.
5. Глуханюк Н.С., Гершкович Т.Б., Поздний возраст и стратегии его освоения. – М., 2003.
6. Смирнова Е.О., Детская психология. – М., 2003.

1. 0305/B36	2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 4	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 0/60/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ ստույգ գիտելիքներ ռուսաց լեզվի ուղղագրության վերաբերյալ, ձևավորել որոշակի պատկերացում խոսքի գործառական ոճերի և նրանց կիրառման մասին:

Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. ներկայացնելու սպասարկու խոսքի մասերի ուղղագրությունը և կիրառությունը,
2. բնութագրելու ռուսաց լեզվում ուղիղ և անուղղակի խոսքերի առանձնահատկությունները,
3. նկարագրելու խոսքի գործառական ոճերը, ներկայացնելու նրանց տեսակները և մատնանշելու կիրառությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. առաջարկելու խնդիրների լուծման եղանակները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. ստեղծագործաբար կիրառելու ունեցած գիտելիքները,

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.
Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,
Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,
Բ7.կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. ինտերակտիվ գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Սպասարկու խոսքի մասերը, նրանց ուղղագրությունը և կիրառությունը: **Թեմա 2.** Խոսքի գործառական ոճերը, նրանց տեսակները և կիրառությունը: **Թեմա 3.** Ուղիղ և անուղղակի խոսք:

Հիմնական գրականության ցանկ.

1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.
2. Акопян К.С., Арзуманян Э.Р., Мартирян Н.И. и др., Практикум по современному русскому языку. – Ер.: Изд-во ЕГУ, 2008.
3. Бройде М., Русский язык в диктантах. Нетрадиционный подход. – М.: Рольф, 2000.
4. Новикова Л.И., Орфография, морфология, лексика, словообразование, фонетика, культура речи, стилистика: контрольные и проверочные работы по русскому языку: для поступающих в вузы. – М.: Экзамен, 2007.
5. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.
6. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.
7. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. М.: Рольф, 2001.

1. 0305/B37	2. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 2	3. 5 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է ներկայացնել 19-րդ դարի 40-60-ական թվականների ռուս գրականության պատմության զարգացման հիմնական միտումները և նշված ժամանակաշրջանի գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. լուսաբանելու 19-րդ դարի 40-60-ական թվականների ռուս գրականության պատմամշակութային հենքը,
2. ներկայացնելու տվյալ դարաշրջանի ռուս հեղինակների ստեղծագործական ուղին և երկերի առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու գրական գործերի վերլուծություն,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.ներկայացնել ռուսաց լեզվի բոլոր մակարդակների (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն) հիմնական սկզբունքները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնել ժամանակակից ռուսաց լեզվի տեսությունները, նրա պատմությունը՝ իր առավել կարևոր գրավոր հուշարձաններով, արդի փուլում զարգացման միտումները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

Եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Սլավոնաֆիլների, լիբերալ-արևմտամետների, հեղափոխական դեմոկրատների քաղաքական և գրական հիմքերը: **Թեմա 2.** Նատուրալ դպրոցի ձևավորումը, կազմը և զարգացման հիմնական շրջանները: **Թեմա 3.** Ա.Գերցենի «Ո՞վ է մեղավոր» վեպը: **Թեմա 4.** Անձի և հասարակության խնդիրը: Ա. Ֆետի քնարերգության հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 5.** Ի.Գոնչարովի «Օբլոմով» վեպը. Օբլոմովը որպես «ռուսական կյանքի տեսակ»: **Թեմա 6.** Ա. Օստրովսկու թատերագրական սկզբունքները: **Թեմա 7.** Ֆ.Տյուտչևի աշխարհայացքը և ստեղծագործական ուղին: **Թեմա 8.** Ի.Տուրգենևի ստեղծագործությունները: **Թեմա 9.** Ն.Նեկրասովի պոեզիայի հիմնական թեմաները:

Հիմնական գրականության ցանկ.

1. История русской литературы. В 4-х тт. Т.3. Л.,1982.
2. Кулешов В.И., История русской литературы XIX века. М.,2005.
3. Лебедев Ю.В., История русской литературы XIX века в трех частях. М.,2007.
4. Минералов Ю.И., История русской литературы XIX века (40-60-е годы).М.,2003.
5. Недзвецкий В.А., Полтавец Е.Ю., Русская литература XIX века.1840-1860-е годы. М.,2010.

1. 0305/B38	2. Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն-2	3. 5 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 45/30/0	
6. 4-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է համակարգված ներկայացնել արդի ռուսերենի բառակազմության եզրերն ու ձևերը, ձևավորել գիտական հայեցակարգ ռուսերենի ձևաբանանության մասին, մանրամասնորեն նկարագրել ռուսերենի բոլոր խոսքի մասերը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. տարբերակելու և նկարագրելու արդի ռուսերենի բոլոր տիպի բառերը,
2. հստակ ներկայացնելու իր գիտելիքները բոլոր խոսքի մասերի ձևաբանական առանձնահատկությունների մասին,
3. նշելու տվյալ ոլորտի ժամանակակից հետազոտությունների ձեռքբերումները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու ռուսերենի բոլոր տիպի բառերի ձևաբանական վերլուծություն,
2. բնութագրելու բառերը՝ օգտագործելով ժամանակակից եզրույթներ,
3. համեմատելու հիմնական և սպասարկու խոսքի մասերը ըստ ձևաբանական հատկանիշների:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.ներկայացնել ռուսաց լեզվի բոլոր մակարդակների (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն) հիմնական սկզբունքները,

Ա4.ներկայացնել ժամանակակից ռուսաց լեզվի տեսությունները, նրա պատմությունը՝ իր առավել կարևոր գրավոր հուշարձաններով, արդի փուլում զարգացման միտումները,

Բ3.կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. վերլուծական մեթոդ, որոնողական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. գրավոր աշխատանքի գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ քննություն. գրավոր աշխատանքի գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հիմնական խոսքի մասերի ձևաբանություն. բայ, մակբայ, դերանուն, թվական: **Թեմա 2.** Սպասարկու խոսքի մասեր. կապ, շաղկապ, մասնիկ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Борисова Е.Г., Латышева А.Н., Лингвистические основы РКИ. М., 2003.
2. Русская грамматика: В 2-х томах. Под ред. Н.Ю.Шведовой. Т. 2.М.: Наука, 1982.
3. Современный русский язык. Под ред. Белошапковой В.А., М,: Высшая школа, 1989.
4. Современный русский язык. Морфология. М.: Русский язык, 2002.

5. Тихонов А.Н., Шанский Н.М., Современный русский язык: В трех томах.М.: Высшая школа, 1981.

1. 0305/B41	**2. Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկա**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 45/15/0**	
6. 5-րդ կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է բանասեր ուսանողների մոտ ձևավորել ռուսաց լեզվի դասավանդման մասնագիտական հմտություններ, նրանց զինել դասավանդման արդի տեսական և գործնական մեթոդներով, ձևավորել ուսուցչի մասնագիտության հանդեպ ստեղծագործ վերաբերմունք, լեզվական ճաշակ, կարգապահություն և պատասխանատվություն, զարգացնել իր և աշակերտների աշխատանքը կազմակերպելու ունակություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի որպես գիտության պատմությունը,
2. բնութագրելու ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ներկայիս վիճակը և քննարկելու նրա առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնական աշխատանքում կիրառելու դասավանդման նոր մեթոդներ,
2. գոյություն ունեցող մեթոդիկաների հիման վրա պատրաստելու ուսումնա-մեթոդական նյութեր ուսումնական պարապունքներ և արտադասարանային միջոցառումներ անցկացնելու համար,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պլանավորելու և անցկացնելու ռուսաց լեզվի ուսումնական գործընթացներ,
2. վերլուծելու իր և ուրիշների դասերի կառուցվածքն ու բովանդակությունը,
3. կազմելու ռուսաց լեզվի դասի պլան և կոնսպեկտներ,
4. կատարելու սովորողների բանավոր և գրավոր աշխատանքների ստուգում:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

U3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

U5.ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապունքներ
3. քննարկումներ,
4. բանավեճ,
5. ռեֆերատ

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մեթոդիկայի ուսումնասիրության առարկան: Ռուսաց լեզվի դասավանդման նպատակները: **Թեմա 2.** Դասավանդման մեթոդներ: **Թեմա 3.** Քերականական հմտությունների զարգացումը: **Թեմա 4.** Բառապաշարի ուսուցումը: **Թեմա 5.** Վարժությունների տիպերը: **Թեմա 6.** Հաղորդակցական հմտությունների ուսուցումը: **Թեմա 7.** Ընթերցանությունը որպես տեսողական ընկալման միջոց: Ընթերցանության տիպերը: **Թեմա 8.** Գրավոր խոսքի զարգացումը: Գրության և ուղղագրության ուսուցումը: Գրավոր խոսքի ստուգումը: **Թեմա 9.** Գնահատում: **Թեմա 10.** Ուսումնական պլանավորում և դասի տիպերը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Нелина Г.А., Аспекты преподавания русского языка в современной школе. – Николаев: ОИППО, 2011. Основная литература
2. Алексеева И.А., Русский язык. Методика и практика преподавания. Ростов-на-Дону: «Феникс»,

2002. -320 с.
3. Антонова Е.С., Методика преподавания русского языка: коммуникативнодеятельностный подход: учеб. пособие для студентов вузов. М.: КноРУС, 2007. - 460 с.
4. Баранов М.Т., Ладыженская Т.А., Львов М.Р., Ипполитова Н.А., Ивченков П.М., Методика преподава-ния русского языка. М., 1990.
5. Баранов М.Т., Методика лексики и фразеологии на уроках русского языка. М., 1991.
6. Богданова Г.А., Виды и формы опроса на уроках русского языка. М., 1989.
7. Васильева В.В., Пищева Г.Н., Современные открытые уроки русского языка. 5 клас (Серия «Школа радости»). – Ростов-на-Дону: Изд-во «Феникс», 2002. 416 с.
8. Дейкина А.Д., Янченко В.Д., Тенденции в отечественной методикепреподавания русского языка // Русский язык в школе, 2011, № 6. – С. 3-7.
9. Донская Т.К., Учебник русского языка: традиции и современность //Русский язык в школе, 2011, № 9. – С. 3-6.
10. Киселева Н.В., Синотина Е.В., Проектирование и анализ современногоурока: методические рекомен-дации // Русский язык в школе, 2011, № 8. – С. 30-35.

1. 0305/B42	2. Ռուսաց լեզվի պատմություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ պատկերացում ռուսաց լեզվի զարգացման պատմական փուլերի մասին, բացատրել եկեղեցա-սլավոնական լեզվի նշանակությունը ռուսաց լեզվի ձևավորման և զարգացման գործընթացում, համեմատել ռուսաց լեզվի պատմական քերականական ձևերը ժամանակից ձևերի հետ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Կատարելու տարբեր ժամանակաշրջանների գրական տեքստերի լեզվաբանական և ոճաբանական վերլուծություն,
2. համեմատելու եկեղեցա-սլավոնական լեզվի և ռուսերենի հնչյունաբանական համակարգերը,
3. ընկալելու անմիջական կապը բառապաշարի և մշակութային զարգացման միջև,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ընկալելու պատմական տեքստերը և թարգմանելու ժամանակից ռուսերենի,
2. նկարագրելու եկեղեցա-սլավոնական լեզվի դերը հին ռուսերենի զարգացման գործում,
3. կարդալու, թարգմանելու և ընկալելու ռուսաց լեզվի տարբեր ժանրերի պատմական տեքստերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա6. ներկայացնելու և մեկնաբանելու ռուսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափություն-ները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ռուսաստանի մասին

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. տեքստերի մեկնաբանություն,
3. քերականական ձևերի վերլուծություն:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հին սլավոնական լեզվի բոլոր մակարդակները: Թեմա 2. Հին ռուսերենի բոլոր մակարդակները: Թեմա 3. Հին սլավոնական լեզվի ազդեցությունը հին ռուսերենի զարգացման վրա:

Հիմնական գրականության ցանկ.

1. Горшкова К.В., Хабургаев Г.А., Историческая грамматика русского языка. М.: Высшая школа,1981.
2. Иванов В.В., Историческая грамматика русского языка. 3-е изд., перераб. и доп. М.: Просвещение,1990.
3. Манучарян И.К., Введение в славянскую филологию. Ереван: Изд-во ЕГУ, 2011.
4. Ремнева М.Л., Старославянский язык. Учебное пособие. М.: Изд-во МГУ, 2004.
5. Ста рославянский язык: Учебник для высших учебных заведений РФ/ С.А.Аверина и др., СПб:

Факультет филологии и искусств СПбГУ, 2008.

1. 0305/B39	2. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 3	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 60/30/0	
6. 5-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է ներկայացնել 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս գրականության պատմության զարգացման հիմնական միտումները և նշված ժամանակաշրջանի գրողների ու բանաստեղծների ստեղծագործությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. լուսաբանելու 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս գրականության պատմամշակութային հենքը,
2. ներկայացնել 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս հեղինակների ստեղծագործական ուղին և երկերի առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու գեղարվեստական տեքստի վերլուծություն սեմինար պարապմունքների ընթացքում ձեռք բերված հմտությունների հիման վրա,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

U2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

U3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի բնութագիրը: **Թեմա 2.** Ֆ.Դոստոևսկու «Ոճիր և պատիժ» և «Կարամազով եղբայրներ» վեպերը: **Թեմա 3.** Լ.Տոլստոյի կրոնաբարոյական հայացքները, նրա «Պատերազմ և խաղաղություն» վեպի գեղարվեստական առանձնահատկությունները, համաշխարհային նշանակությունը: **Թեմա 4.** Մ.Սալտիկով-Շեդրինի ստեղծագործությունների առանձնահատկությունները՝ երգիծանք, գրոտեսկ: **Թեմա 5.** Այլախոսության դերը հեքիաթներում: **Թեմա 6.** Ա.Չեխովի ստեղծագործությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Бахтин М.М., Проблемы поэтики Достоевского. М.,1979.
2. История русской литературы. В 4-х тт. ТТ.3,4. Л., 1982.
3. Лебедев В.И., История русской литературы XIX века в трех частях М.,1991.
4. Сухих И.Н., Проблемы поэтики А.П.Чехова. Л.,1987.
5. Эйхенбаум Б.М., Л.Толстой. Семидесятые годы. Л., 1974.

1. 0305/B43	2. Արտասահմանյան գրականության պատմություն - 1	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ներկայացնել արտասահմանյան գրականության սկզբնավորումը, զարգացման հիմնական ուղղությունները, նշանավոր հեղինակներին՝ անտիկ շրջանից մինչև 18-րդ դարը՝ ներառյալ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու Անտիկ, Վերածննդի և 17-18-րդ դարերի եվրոպական գրականության պատմության հիմնական օրինաչափությունները,
2. մեկնաբանելու Անտիկ, Վերածննդի և 17-18-րդ դարերի եվրոպական գրականության կարևորագույն ստեղծագործությունները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու գրական ստեղծագործությունների վերլուծություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գործնականում կիրառելու տվյալ դարաշրջանների գրականության մասին տեսական գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություն,
2. Հանձնարարված գրականության ընթերցում, քննարկումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Անտիկ գրականության առարկան և նրա պարբերացումը: Հոմերոսի «Իլիականը» և «Ողիսականը»: Աստվածները և հերոսները, դիցաբանականը և պատմականը Հոմերոսի պոեմներում: **Թեմա 2.** Հունական քնարերգության ձևավորումն ու զարգացումը, թեմատիկան, ժանրերը և բանաստեղծները: Հին հունական դրաման և թատրոնը: Էսքիլես, Սոփոկլես, Էվրիպիդես, Արիստոփանես: **Թեմա 3.** Հռոմեական գրականությունն ու մշակույթը, հռոմեական գրականության Ոսկեդարը. Վերգիլիոս, Հորացիոս, Օվիդիոս: **Թեմա 4.** Վերածննդի գրականության պատմամշակութային առանձնահատկությունները: **Թեմա 5.** Իտալական Վերածնունդը. Դանթե, Պետրարկա, Բոկաչչո: **Թեմա 6.** Վերածնունդը Ֆրանսիայում, նրա առանձնահատկությունները: Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպը: **Թեմա 7.** Վերածնունդը Իսպանիայում և նրա առանձնահատկությունները: Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպը: **Թեմա 8.** Վերածննդի առանձնահատկությունները Անգլիայում: Անգլիական թատրոնը 16-րդ դարում: Վ. Շեքսպիրի վաղ շրջանի ստեղծագործությունները (սոնետներ, քրոնիկներ, կատակերգություններ): Վ. Շեքսպիրի ողբերգությունները («Համլետ», «Օթելլո», «Լիր Արքա», «Մակբեթ» և այլն): Շեքսպիրը և անտիկ դրամայի ավանդույթները: Շեքսպիրի պիեսների փիլիսոփայական-հումանիստական բովանդակությունը: **Թեմա 9.** 17-րդ դարի եվրոպական գրականության ընդհանուր բնութագիրը: Կլասիցիզմի գեղագիտությունը: Պիեռ Կոռնելի գրական ժառանգությունը: Ռասինի գրական ժառանգությունը: Մոլիեր: **Թեմա 10.** 18-րդ դարի գրականության ընդհանուր բնութագիրը /Դ.Դեֆո, Ջ.Սվիֆթ, Վոլտեր, Դ.Դիդրո, Ժ.Ժ. Ռուսո, Շիլլեր, Գյոթե/:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ի.Մ.Տրոնսկի, Անտիկ գրականության պատմություն, Երևան 1951:
2. Մամիկոնյան Հ., Արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, 1954:
3. Արտամոնով Դ., 17-18-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, 1987:
4. Алексеев М.П., Жирмунский В.М.и др., История зарубежной литературы Средних веков и Возрождения. Любое издание.
5. Гаспаров М., Занимательная Греция, Москва, 1995.
6. Лосев А.Ф., Античная литература, Москва, 1997.

1. 0305/B40	Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն-1	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/30/0	
6. 5-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բառակապակցության շարահյուսության հիմնահարցերին, ներկայացնել պարզ նախադասության շարահյուսության հիմնահարցերը, ավանդական հիմնահարցերից բացի՝ ծանոթացնել շարահյուսության նոր ուղղություններին և միտումներին, ձևավորել ուսանողների մոտ նախադասության շարահյուսական վերլուծության հմտությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Տարբերակելու բառակապակցության տեսակներն ըստ ստորադաս կապի և իմաստային հարաբերությունների,
2. բնորոշելու նախադասության հիմնական հատկանիշները,
3. տարբերակելու նախադասության գլխավոր և երկրորդական անդամների շարահյուսական գործառությունը,
4. ներկայացնելու երկկազմ նախադասությունների կառուցվածքային կաղապարները, նախադասության ձևական և իմաստային կառուցվածքը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու բառակապակցությունների շարահյուսական վերլուծություն,
2. կատարելու նախադասության վերլուծություն ըստ գլխավոր և երկրորդական անդամների,
3. կառուցելու նախադասության հարացույց,
4. կազմելու (երկկազմ) նախադասության կառուցվածքային կաղապարներ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կիրառելու ձեռք բերած գիտելիքները հետազոտական աշխատանքներ կատարելիս:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Ա5.ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ինքնուրույն աշխատանք,
4. գրավոր և բանավոր հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. գրավոր աշխատանքի գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ քննություն. գրավոր աշխատանքի գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,

եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Շարահյուսության հիմնական միավորները. բառակապակցություն և նախադասություն: Բառակապակցության ստորադաս կապի տեսակները և իմաստային հարաբերությունները: **Թեմա 2.** Նախադասության ձևական և իմաստային կառուցվածքը, նրանց հարաբերակցությունը: Ստորոգման

հասկացությունը: **Թեմա 3.** Երկկազմ և միակազմ նախադասություններ: **Թեմա 4.** Նախադասության գլխավոր անդամները. ենթակա և ստորոգյալ: Ստորոգյալ. բայական և անվանական, պարզ և բաղադրյալ: **Թեմա 5.** Նախադասության երկրորդական անդամները: Երկրորդական անդամների տեսությունը ժամանակակից շարահյուսությունում: **Թեմա 6.** Դետերմինանտների տեսությունը: Դետերմինանտների տեսակներն ըստ նրանց շարահյուսական գործառույթների: **Թեմա 7.** Երկկազմ նախադասության կառուցվածքային կաղապարները: **Թեմա 8.** Նախադասության հարացույցը: Հարացույցի և նախադասության ձևափոխումների տարբերակումը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Акимова Г.Н., Вяткина С.В., Казаков В.П., Руднев Д.В., Синтаксис современного русского языка, СПб, Русский мир: учебники для высшей школы, 2008.
2. Белошапкова В.А., Современный русский язык.Синтаксис, М., 1977.
3. Г.А.Золотова, Н.К.Ониенко, М.Ю.Сидорова, Коммуникативная грамматика русского языка. Изд. 2-е, М., 2003.
4. Грамматика современного русского литературного языка. Под ред. Н.Ю. Шведовой, М., 1970.
5. Пешковский А.М., Русский синтаксис в научном освещении, 7-е изд., М., 2001.
6. Русская грамматика под ред. Н.Ю. Шведовой, М., Наука, 1980.

1. 0305/B44	2. Ռուս գրականության դասավանդման մեթոդիկա	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է պատրաստել ռուս գրականության դասավանդման ոլորտում տեսական և գործնական գիտելիքներով և հմտություններով զինված ապագա բանասեր ուսուցիչ՝ ձևավորելով բանասեր ուսանողների մոտ ռուս գրականության դասավանդման մասնագիտական հմտություններ, նրանց զինել դասավանդման արդի տեսական և գործնական մեթոդներով, ձևավորել ուսուցչի մասնագիտության հանդեպ ստեղծագործ վերաբերմունք, լեզվական ճաշակ, կարգապահություն և պատասխանատվություն, զարգացնել իր և աշակերտների աշխատանքը կազմակերպելու ունակություն:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու գրական ստեղծագործության վերլուծություն՝տվյալ գրական ուղղության համատեքստում,
2. գործնական աշխատանքում կիրառելու դասավանդման նոր մեթոդներ,
3. պատրաստելու ուսումնա-մեթոդական նյութեր ուսումնական պարապմունքներ և արտադասարանային միջոցառումներ անցկացնելու համար,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ինքնուրույն աշխատանք,
4. գրավոր և բանավոր հարցում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս գրականության դասավանդման մեթոդիկան որպես գիտություն: **Թեմա 2.** Ռուս գրականության դասավանդման մեթոդիկայի զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 3.** Ռուս

գրականությունը որպես ուսումնական առարկա ժամանակակից հայկական դպրոցում: **Թեմա 4.** Ընթերցանությունը որպես հոգեբանա-մանկավարժական խնդիր, ընթերցանության կազմակերպումը և տեսակները: **Թեմա 5.** Գեղարվեստական ստեղծագործության դպրոցական վերլուծության առանձնահատկությունները: **Թեմա 6.** Գրողի կենսագրության ուսումնասիրումը միջին և բարձր դասարաններում: **Թեմա 7.** Գրական ստեղծագործության վերլուծության մեթոդները դպրոցում: **Թեմա 8.** Սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացումը: **Թեմա 9.** Բառային աշխատանքը ռուս գրականության ժամերին:

Հիմնական գրականության ցանկ.

1. Романичева Е.С., Введение в методику обучения литературе: учебное пособие /Е.С.Романичева, И.В.Сосновская. - М. : [б. и.], 2012. - 205 с. http://biblioclub.ru/index.php?page=book_view&book_id=115123

Օժանդակ գրականություն

1. В.Г.Зинченко, В.Г.Зусман, З.И.Кирнозе, Литература и методы ее изучения. Системный и синергетический подход: учебное пособие. - М. : Флинта, 2011. - 278 с. URL: http://biblioclub.ru/index.php?page=book_view&book_id=103518
2. Методика обучения русскому языку и литературному чтению: учебник и практикум для академического бакалавриата /под ред. Т. И. Зиновьевой. - М. : Юрайт, 2017. - 468 с. URL: https://www.biblio-online.ru/book/23B45998-2B7F-4CC7-BCD9-CB1BCF3D9ACA

1. 0305/B45	2. 20-րդ դարի ռուս գրականության պատմություն - 1	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 60/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ մասնագիտական պատկերացում ձևավորել 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության պատմության հիմնական միտումների և նշված ժամանակաշրջանի ռուս գրողների ու բանաստեղծների ստեղծագործության մասին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության պատմամշակութային հենքը,
2. ներկայացնելու ռուս գրականության մեջ մոդերնիզմի զարգացումը և նրա հիմնական ուղղությունները,
3. բնութագրելու 1920-1940–ական թվականների խորհրդային շրջանի ռուս գրականության հիմնական միտումները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու գրական ստեղծագործության վերլուծություն՝ տվյալ գրական ուղղության համատեքստում,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունքներ և քննարկումներ
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի պատմամշակութային հենքը: **Թեմա 2.** Ռեալիզմը և մոդերնիզմը որպես դարաշրջանի երկու հիմնական միտում: **Թեմա 3.** Մոդերնիզմը ռուս գրականության մեջ, նրա հիմնական ուղղությունները: **Թեմա 4.** Սիմվոլիզմի էությունը և նրա գեղագիտական սկզբունքները: Ավագ սերնդի սիմվոլիստների ստեղծագործությունը: Կրտսեր սիմվոլիստները: **Թեմա 5.** Ակմեիզմը՝ որպես գրական ուղղություն և նրա ներկայացուցիչները: **Թեմա 6.** Ռուսական ֆուտուրիզմը և նրա ներկայացուցիչները: **Թեմա 7.** 1920-ական գրական խմբավորումները: **Թեմա 8.** Ռեալիզմը և նրա փոխակերպումները դարաշրջանի գրականության մեջ: **Թեմա 9.** Նախապատերազմյան շրջանի ռուս գրականությունը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Баевский В.С., История русской литературы XX века. Компендиум. М., 2003.
2. История русской литературы. XX век. В 2 ч. Ч. 1. Под ред. В.В. Агеносова. М., 2007.
3. Мусатов В.В., История русской литературы первой половины XX века (советский период). М., 2001.
4. Русская литература рубежа веков (1890 – начало 1920-х годов). В 2 томах. М., 2001

1. 0305/B48	2. Արտասահմանյան գրականության պատմություն - 2	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 45/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ներկայացնել արտասահմանյան գրականության պատմությունը 19-20-րդ դարերում:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. վերլուծելու 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության կարևորագույն գրական ուղղությունները և գրական ստեղծագործությունները,
2. նկարագրելու 19-20-րդ դարերի արտասահմանյան գրականության պատմության զարգացման հիմնական միտումները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. ճանաչելու և համադրելու գրական տեքստերը, կատարելու վերլուծություններ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. գործնականում կիրառելու տվյալ դարաշրջանների գրականության մասին տեսական գիտելիքները:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,
Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. Դասախոսություն,
2. Հանձնարարված գրականության ընթերցում, քննարկումներ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
1-ին ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
2-րդ ընթացիկ ստուգում. Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռոմանտիզմի գեղագիտությունը և գրականությունը /Բայրոն, Հյուգո, Հոֆման, Պո/: **Թեմա 2.** Դասական ռեալիզմի գեղագիտությունը և գրականությունը: Բալզակի ռեալիստական վեպերը /«Շագրենի կաշին»/: Ֆլոբերի «Տիկին Բովարի» վեպը: Շառլ Բոդլերի բանաստեղծական ռեալիզմը: Մարդու պրոբլեմը Չարլզ Դիկենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպում: **Թեմա 3.** Ուշ ռոմանտիզմը ԱՄՆ-ում /Հ.Մելվիլի «Մոբի Դիկ» վեպը/: **Թեմա 4.** Սիմվոլիզմի առաջացումը Ֆրանսիայում: **Թեմա 5.** Մոդեռնիզմի գեղագիտությունը և գրականությունը: Ջ.Ջոյսի «Դուբլինցիներ» ժողովածուն: Ֆ.Կաֆկայի «Դատավարություն» վեպը: **Թեմա 6.** 20-րդ դարի փիլիսոփայական պոեզիան /Թ.Էլիոթի «Մեռյալ երկիրը» պոեմը/: Ուիլ. Ֆոլքների հոգեբանական ռեալիզմը: **Թեմա 7.** Կորուսյալ սերնդի գրականությունը ԱՄՆ-ում. Հեմիգուեյի «Ֆիեստա» վեպը: **Թեմա 8.** Էկզիստենցիալիզմի գեղագիտությունը և գրականությունը. Ժ.Պոլ Սարտրի «Ճանճերը» պիեսը, Ա. Կամյուի «Ժանտախտը» վեպը: **Թեմա 9.** Ուիլյամ Սարոյանի և Ջ.Դ.Սելինջերի Ամերիկան: **Թեմա 10.** Լատինամերիկյան արձակը 20-րդ դարում:

Հիմնական գրականության ցանկ.

1. 19-րդ դարի արտասահմանյան գրականության պատմություն, խմբ. Ս.Վ.Տուրանի, Երևան, 1986:
2. Зарубежная литература 20-го века, под. ред., Л.Г.Андреева, Москва, 2011.

1. 0305/B46	2. Ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսություն-2	3. 6 ECTS կրեդիտ
4. 6 ժամ/շաբ.	5. 60/30/0	
6. 6-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	

Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել պարզ միակազմ և բարդ նախադասությունների տարրական տեսական գիտելիքներով, ծանոթացնել ռուսաց լեզվի պարզ միակազմ նախադասությունների տեսակներին, ծանոթացնել ռուսաց լեզվի բարդ նախադասությունների տեսակներին, ներկայացնել ժամանակակից ռուսաց լեզվի շարահյուսության խնդիրները և մոտեցումները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Սահմանելու միակազմ պարզ և երկկազմ պարզ նախադասություն, ներկայացնելու նրանց կառուցվածքը,
2. ներկայացնելու միակազմ պարզ նախադասության տեսակները,
3. բացատրելու նախադասության ձևական և իմաստային կառուցվածքի միջև եղած տարբերությունը,
4. ներկայացնելու բարդ համադասական և ստորադասական նախադասությունների տեսակները,
5. բացատրելու բարդ համադասական և ստորադասական նախադասությունների մասերի իմաստային հարաբերությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. տարբերակելու միակազմ պարզ նախադասությունները երկկազմ պարզ նախադասություններից,
2. դասակարգելու միակազմ պարզ նախադասություններն ըստ տեսակների,
3. դասակարգելու բարդ համադասական և ստորադասական նախադասություններն ըստ տեսակների,
4. որոշելու իմաստային հարաբերությունները բարդ համադասական և ստորադասական նախադասությունների մասերի միջև,
5. շարադրելու միտքն ըստ նպատակի՝ պարզ միակազմ և բարդ համադասական ու ստորադասական նախադասություններով,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գրագետ և արհեստավարժ շարադրելու մասնագիտական նյութը:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U1. մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

U3. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

U5. ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6. վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.
1. ինտերակտիվ դասախոսություն,
2. ձայնագրությունների ունկնդում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.
1-ին ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ քննություն. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
եզրափակիչ բանավոր քննություն. 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
Թեմա 1. Պարզ միակազմ նախադասություն: Պարզ միակազմ նախադասության տեսակները: **Թեմա 2.** Թերի նախադասություններ: **Թեմա 3.** Նախադասության իմաստային կառուցվածքը: **Թեմա 4.** Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն. ավանդական և ժամանակակից դասակարգում: **Թեմա 5.** Բարդ ստորադասական նախադասության դասակարգման պատմություն: Բարդ ստորադասական նախադասություն. ժամանակակից դասակարգում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Белошапкова В.А., Современный русский язык. Синтаксис. – М.: Высшая школа, 1977.
2. Русская грамматика / Под ред. Н.Ю. Шведовой и В.В.Лопатина. – Изд. 2-е, испр. М.: Русский язык, 1990. Современный русский литературный язык / Под ред. П. А. Леканта. 5-е изд. М.: Изд-во Юрайт, 2017.

Լրացուցիչ գրականության ցանկ.

3. Золотова Г.А., Онипенко Н.К., Сидорова М.Ю., Коммуникативная грамматика русского языка. Изд. 2-е. М.: Ин-т русского языка РАН, Филологический фак-т МГУ, 2003.
4. Русская грамматика. Т. 2. М.: Наука, 1980.

1. 0302/B47	2. Հայ գրականության պատմություն - 1	3. 4 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ բանահյուսությունը, հայ հին և միջնադարյան գրականությունը՝ բացահայտելով երկերի գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական արժեքը, ծանոթացնել հայ հին և միջնադարյան նմուշների թարգմանություններին օտար լեզուներով, ներկայացնել հայ հին և միջնադարյան գրականության մասին օտարալեզու քննադատների կարծիքները և գնահատականները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
1. ներկայացնելու հայ հին և միջնադարյան գրականության զարգացման ընթացքը, ըմբռնել ու նրա համաշխարհային նշանակությունը.
2. ներկայացնելու տվյալ շրջանի նմուշների օտար լեզուներով կատարած թարգմանություններին,
3. ներկայացնելու և մեկնաբանելու հայ գրականության տվյալ շրջանի վերաբերյալ օտարազգի քննադատությունը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ
1. ինքնուրույն վերլուծելու և գնահատելու գեղարվեստական երկերը և քննադատական նյութը, մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ
1. համակարգելու գրականագիտական վերլուծությունների վերաբերյալ տվյալները,
2. օգտագործելու ստացած գիտելիքները ինքնուրույն գիտական աշխատանքում /ռեֆերատներ, զեկուցումներ/:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.
Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,
Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,
Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,
Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություններ,
2. Գործնական պարապմունքներ և քննարկումներ,
3. Ռեֆերատ աշխատանքներ,
4. զեկուցումներ

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ ժողովրդական բանահյուսություն. հնագույն էպիկական նմուշները, հիմնական մոտիվները, գեղարվեստական առանձնահատկությունները: «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը, նրա հատկանշական առնձնահատկությունները: Էպոսը ռուս գրաքննադատության գնահատմամբ: **Թեմա 2.** Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ստեղծումը: Հայ այբուբենի առանձնահատկությունները և նշանակությունը: Հայ թարգմանական գրականությունը և նրա նշանակությունը: **Թեմա 3.** 5-րդ դարի հայ պատմիչ-գրողները՝ Աղաթանգեղոս, Փ.Բյուզանդ, Եղիշե, Մ.Խորենացի: **Թեմա 4.** Դավթակ Քերթողի «Ողբը…»: **Թեմա 5.** 10-րդ դարի հայ գրականությունը: Վերածնության սկզբնավորումը: Գրիգոր Նարեկացի: Նարեկացու ստեղծագործության համաշխարհային նշանակությունը: Նարեկացին ռուս գրաքննադատության գնահատմամբ: Ներսես Շնորհալու ստեղծագործությունը և նշանակությունը: Հայ միջնադարյան առակագրությունը. Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի: **Թեմա 6.** Հայ միջնադարյան պոեզիան 13-16-րդ դ.դ.՝ Ֆրիկ, Կ.Երզնկացի, Հովհ.Թլկուրանցի, Մ.Նաղաշ, Ն.Քուչակ: Քուչակը ռուսերեն, անգլերեն, լեհերեն և այլ լեզուներով: Օտարազգի ընթերցողները Քուչակի մասին: **Թեմա 7.** 17-18–րդ դարերի հայ պոեզիան. Նաղաշ Հավնաթան, Սայաթ-Նովա: Վ. Բրյուսովը Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան գրականության համաշխարհային նշանակության մասին:

Հիմնական գրականության ցանկ.

1. Видные деятели армянской культуры V-XVIII веков. Ереван, изд ЕГУ, 1982.
2. Джанполадян М., «Давид Сасунский» в русских переводах и критике». Ереван, 2012.
3. Мкрян М., Мовсес Хоренаци. Ереван, 1969.
4. Налбандян В., Саринян С., Агабабян С., Армянская литература. Учебник для вузов. М., 1976.
5. Читая Нарекаци. Сост. и предисловие Л. Мкртчяна. Ереван, 1997.

1. 0303/B51	2. Ներառական կրթություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 18/0/9	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ դաստիարակել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, դաստիարակության ռազմավարական ուղղությունների գիտակցում, աջակցել ներառման սկզբունքների և քաղաքականության մասին գիտելիքների յուրացմանը:

Դասընթացի խնդիրները.

1. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հավասար իրավունքներին,
2. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից օգտվելու հիմնախնդիրներին՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
3. ծանոթացնել երեխայի համակողմանի բնականոն զարգացմանը, նրա կրթության կազմակերպմանը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացմանը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու ներառական կրթության կազմակերպման սկզբունքները, քաղաքականության հիմնական ուղղությունները:
2. Բացատրելու դպրոցի առաքելությունը և բոլոր երեխաներին կրթության մեջ ներառելու քաղաքականության իրագործման հոգեբանամանկավարժական սկզբունքները, մեկնաբանելու դրա իրավական և բարոյաէթիկական հիմնավորումը:
3. Ներկայացնելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, հնարները և միջոցները:
4. Բացատրելու և հիմնավորելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման գործում դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության

կարևորությունը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ուսումնասիրելու և վեր հանելու կրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում առկա խնդիրները, դժվարությունները և շեղումները, իրականացնելու նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացները:
2. Կոնկրետ իրավիճակներում առանձնացնելու երեխաների բարոյական, գեղագիտական և գաղափարական դաստիակության խնդիրները և առաջարկելու դրանց լուծման ճանապարհներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Գ1.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. գործնական աշխատանքներ
3. քարտեզագրում
4. քառաբաժան
5. մտագրոհ
6. պրիզմա
7. խորանարդում
8. շրջագայություն պատկերասրահում
9. հնգյակ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ներառման քաղաքականությունը և սկզբունքները: **Թեմա 2.** Երեխաների ներառումը կրթության մեջ: **Թեմա 3.** ՀՀ օրենսդրությունը ներառման քաղաքականության մասին: **Թեմա 4.** Ներառման քաղաքականության իրագործումը Հայաստանում: **Թեմա 5.** Ներառման քաղաքականության շարունակականության ապահովումը ՀՀ կրթական համակարգում: **Թեմա 6.** Ներառական կրթության ազգային ռազմավարական ծրագրի մշակումը որպես հատուկ և հանրակրթական համակարգի միասնական գործառության ապահովման իրավական հիմք: **Թեմա 7.** Ներառման քաղաքականության իրականացման մշտադիտարկումը: **Թեմա 8.** Ներառական կրթության կազմակերպումը: **Թեմա 9.** Ներառական կրթությունը որպես մանկավարժական հիմնախնդիր: **Թեմա 10.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման սկզբունքները: **Թեմա 11.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման մեթոդներն ու կազմակերպման ձևերը: **Թեմա 12.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաները: **Թեմա 13.** Դաստիարակության գործընթացի կազմակերպումը ներառական կրթության պայմաններում: **Թեմա 14.** Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում: **Թեմա 15.** Ուսուցչի շարունակական մանկավարժական կատարելագործումը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման միջոց, ներառական կրթության որակի կառավարումը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծությունևե, Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, 2012 թ.
2. Հանրային կարծիքի հետազոտության վերլուծություն հաշմանդամություն ունեցող անձանց

զբաղվածության վերաբերյալ: Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, Երևան, 2012թ.
3. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և խոչընդոտներ.Ջեկույց որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր և «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրման ծրագիր», Երևան, 2013թ.
4. «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում» հետազոտությունը: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ.
5. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ձեռնարկ: Նախնական/արհեստա-գործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր, Երևան, 2013թ. համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում:

1. 0305/B52	2. Ռուսաստանի լեզվաերկրագիտություն	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 12/6/0	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել լեզվաաշխարհագրական տեսության ընդհանուր և մասնավոր հարցերի հետ, բառապաշարի և ֆոնային գիտելիքների ընդլայնում, զարգացնել պրոֆեսիոնալ հմտությունը՝ազգային և մշակութային բաղադրիչներով օգտագործվելիք լեզվական միավորները տարբերելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. կիրառելու ռուսաց լեզվի պասիվ բառապաշարի միավորները,
2. կիրառելու ռուսալեզու դիախրոնիկ բառարանները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ներկայացնելու լեզվաերկրագիտական նյութեր,

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա6.ներկայացնելու և մեկնաբանելու ռուսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափություն-ները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ռուսաստանի մասին:

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2.պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. ինտերակտիվ դասեր,
3. վերարտադրողական մեթոդ,
4. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
5. հետազոտական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս Ուղղափառ Եկեղեցի՝ պատմական ակնարկ, ՌՈՒԵ-ի տոները, խորհուրդները, դավանաբանական և ժամասացության գրքեր: ՌՈՒԵ-ի վանքերը, որպես հոգևոր մշակույթի կենտրոններ: **Թեմա 2.** ՌԴ-ի աշխարհագրական դիրքը, տարածքը և ազգաբնակչությունը: **Թեմա 3**. Ռուսաստանի կայսրության, ՌԽՖՍՀ-ի և ՌԴ-ի ադմինիստրատիվ բաժանումը: **Թեմա 4.** Ռուսաց լեզու՝ ռուսերեն բառերի, (անձնանունների, աշխարհագրական անունների), բառակապակցությունների, դարձվածքների ազգամշակութային իմաստները: **Թեմա 5.** Ռուսաստանի պետական կառույցը, արտաքին քաղաքականությունը, կրթությունը: **Թեմա 6.** Ռուսական գեղարվեստ, քանդակագործություն, ճարտարապետություն, երաժշտություն, թատրոն (պատմական ակնարկ, հայտնի գործիչներ):

Հիմնական գրականության ցանկ.

1. Булгаков С.В., Православие: Праздники и посты. Богослужение. Требы. Расколы, ереси, секты. Западные христианские вероисповедания. Соборы Восточной, Русской и Западной Церквей. М.: Современник, 1994.
2. Верещагин Е.М., Костомаров В.Г., Язык и культура: Лингвострановедение в преподавании русского языка как иностранного 4-е изд. М.: Рус. яз., 1990.
3. Кондаков И.В., Введение в историю русской культуры. Учебник для вузов. М., 1997.
4. Макаров В.И., Матвеева Н.П., Словарь лексических трудностей художественной литературы. Киев: Рад. шк., 1989.
5. Мир русской культуры. Энциклопедический справочник. М.: Вече, 2000.
6. Христианство: Энциклопедический словарь. В 3-х т. Гл. ред. С.С. Аверинцев. - М.: Большая Российская Энциклопедия. 1993-1995.

1. 0305/B50	2. 20-րդ դարի ռուս գրականության պատմություն-2	3. 5 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/շաբ.	5. 36/0/9	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ներկայացնել 20-րդ դարի եկրորդ կեսի ռուս գրականության հիմնական առանձնահատկությունները, տալ հստակ պատկերացում դարաշրջանի կարևորագույն հեղինակների ստեղծագործական ուղու մասին, ծանոթացնել ժամանակաշրջանի ռուս արձակի և քնարերգության լավագույն ստեղծագործություններին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Նկարագրելու ժամանակաշրջանի ռուս գրականության զարգացման հիմնական փուլերը,
2. բնութագրելու հիմնական գրական ուղղությունները և ներկայացնելու նրանց առաջացման գործոնները,
3. ներկայացնելու ժամանակաշրջանի նշանակալից գրողների երկերը:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարելու տարբեր ժանրերի ստեղծագործությունների թեմատիկ, գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծություն,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. վարելու մասնագիտական բանավեճեր,
2. պատրաստելու ռեֆերատներ,
3. գրելու կուրսային աշխատանքներ:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հետպատերազմյան ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական կյանքի մթնոլորտը և գրական գործընթացը: Պատերազմական թեման նշված ժամանակաշրջանի արձակում (Վ.Բիկովի, Վ.Աստաֆևի վիպակները): **Թեմա 2.** Ազգային կյանքի և բնավորության արտացոլումը արձակում (Ֆ.Աբրամովի, Վ.Ռասպուտինի, Վ.Աստաֆևի, Վ.Շուկշինի ստեղծագործությունները): **Թեմա 3.** Բարոյափիլիսոփայական խնդիրները Յու.Տրիֆոնովի, Յու.Նագիբինի, Վ.Մականինի, Ա.Բիտովի ստեղծագործություններում: **Թեմա 4.** Ճամբարային թեման Ա.Սոլժենիցինի երկերում: **Թեմա 5.** Ժամանակաշրջանի պոեզիայի թեմատիկ և գեղարվեստական բազմազանությունը (Ա.Տվարդովսկի, Մ.Դուդին, Ե.Եվտուշենկո, Բ.Օկուջավա, Վ.Վիսոցկի):

Հիմնական գրականության ցանկ.

1. Баевский В.С., История русской литературы XX века. Компендиум., М., 2003
2. Зайцев В.А., Лекции по истории поэзии XX века (1940-2000), М., 2009
3. Лейдерман Н.П., Липовецкий М.Н., Современная русская литература. 1980-1990-ые годы. В 2-х томах., М., 2003
4. Русская литература XX века. В 2-х томах (под редакцией Л.П.Кремнецова), М., 2003
5. Серафимова В.Д., История русской литературы XX века.М., 2013

1. 0302/B49	2. Հայ գրականության պատմություն - 2	3. 2 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 12/0/6	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է.

- ներկայացնել հայ նոր և նորագույն գրականության պատմությունը,
- քննել գրականության զարգացման ընթացքը հայ ժողովրդի քաղաքական, հասարակական և մշակութային կյանքի սերտ կապի մեջ,
- անդրադառնալ նշված շրջանների գրական նմուշների օտար լեզուներով թարգմանություններին.
- ծանոթացնել XIX-XX դ.դ. հայ գրողների և բանաստեղծների մասին օտարազգի քննադատության
- կարծիքներին։

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. բնութագրելու հայ նոր և նորագույն գրականության զարգացման ընթացքը, ներկայացնելու նրա ձեռքբերումները.
2. դիտարկելու նշված շրջանների գրական նմուշների օտար լեզուներով կատարած թարգմանությունները.
3. մեկնաբանելու նշված շրջանների որոշ հայ գրողների և բանաստեղծների մասին օտարազգի քննադատության կարծիքները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ինքնուրույն վերլուծելու և գնահատելու գեղարվեստական երկերը և քննադատական նյութը,
2. օգտագործելու ստացած գիտելիքները ինքնուրույն գիտական աշխատանքում /ռեֆերատներ, զեկուցումներ/,
3. մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. համակարգելու գրականագիտական վերլուծությունների վերաբերյալ տվյալները։

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասախոսություններ,
2. գործնական պարապմունքներ և քննարկումներ,
3. ռեֆերատ աշխատանքներ,
4. զեկուցումներ։

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով։

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հայ նոր գրականության սկզբնավորում. Խ.Աբովյանը՝ հայ նոր գրականության հիմնադիր։ Ս.Շերվինսկին՝ «Վերք Հայաստանի» վեպի թարգմանիչ, նրա հոդվածները Աբովյանի մասին։ **Թեմա 2.** 50-60-ական թթ. արևելահայ և արևմտահայ գրականության զարգացման հիմնական գծերը /Մ.Նալբանդյան, Ռ.Պատկանյան, Մ.Պեշիկթաշլյան, Պ.Դուրյան/։ **Թեմա 3.** 70-80-ական թթ. Ռոմանտիզմի /Րաֆֆի/ և ռեալիզմի /Սունդուկյան, Պարոնյան/ խոշոր ներկայացուցիչները։ **Թեմա 4.** 90-ական թթ. հայ արձակը. Ռեալիզմի առաջատար դիրքը /Ալ.Շիրվանզադե/, հոգեբանական արձակը /Նար-Դոս/։ **Թեմա 5.** Հովհ.Թումանյանը և նրա ստեղծագործությունը։ Թումանյանը և ռուս գրականությունը։ Ավ.Իսահակիանի պոեզիան և արձակը։ Ռուս գրողները Իսահակյանի մասին։ **Թեմա 6.** 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականությունը /Զոհրաբ,Վարուժան, Սիամանթո,Մեծարենց/։ **Թեմա 7.** Վ.Տերյանի պոեզիայի առանձնահատկությունները։ **Թեմա 8.** Հայ նորագույն պոեզիայի սկզբնավորումը և զարգացումը։ Ե.Չարենցի ստեղծագործությունը։ **Թեմա 9.** Ա.Բակունցի արձակի առանձնահատկու-թյունները։ Թեմա 10. 20-րդ 40-50-ական թթ. հայ արձակը և պոեզիան։ **Թեմա 11.** 20-րդ 60-80-ական թթ. Հայ գրականության զարգացման հիմնական միտումները։ Ռուս թարգմանիչները և քննադատները հայ բանաստեղծների և գրողների մասին։

Հիմնական գրականության ցանկ.

1. Габриэлян В., Даниэл Варужан. Ереван, 1991
2. Джанполадян М., «Когда строку диктует чувство...». Ереван, 2006 (статьи о П. Дуряне, Ов.Туманяне, Ав.Исаакяне, Е.Чаренце).
3. Джрбашян Эд., Четыре вершины. М., 1982.
4. Налбандян В., Саринян С., Агабабян С., Армянская литература. Учебник для вузов. М., 1976.

Тамразян Г., На литературных путях. М., 1973.

1. 0305/B53	2. Ժամանակակից ռուսաց լեզվի ոճաբանություն	3. 4 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. 27/9/0	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արդի ռուսերենի բառապաշարի ոճային առանձնահատկություններին և լեզվաարտահայտչական միջոցներին, քերականական ձևերի ոճային առանձնահատկություններին և լեզվաարտահայտչական միջոցներին։

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու ռուսերենի տարբեր ոճերի առանձնահատկությունները,
2. որոշելու ռուսերենի լեզվամիջոցների ոճային պատկանելիությունը,
3. բացատրելու տվյալ լեզվարտահայտչական միջոցի օգտագործման նպատակները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ճիշտ կողմնորոշվելու տվյալ լեզվամիջոցի օգտագործման հարցում՝ ոճային առումով և ընտրելու ճիշտ տարբերակը,
2. խմբագրելու տարբեր ոճերի տեքստեր,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

կիրառելու գործնական գիտելիքները և իմացությունը մասնագիտական քննարկումների ժամանակ։

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U1.մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

U3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

U5.ներկայացնելու ռուսերենի ինչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

Բ6.վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի ինչյունաբանական, ձևաբանական, քերականական և

ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. վերարտադրողական մեթոդ,
3. հետազոտական մեթոդ,
4. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
5. նախագծերի կազմում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,
2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Գործառական ոճերը՝ գիտական, պաշտոնական, լրագրային-հրապարակախոսական, գեղարվեստական, խոսակցական: **Թեմա 2.** Լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները՝ գեղարվեստական մակադրություններ, համեմատություն, փոխաբերություն, հակադրություն, ճարտասանական հարց, դիմում, բացականչություն: **Թեմա 3.** Հնչյունաբանական ոճագիտություն: **Թեմա 4.** Բառագիտական ոճագիտություն: **Թեմա 5.** Ձևաբանական ոճագիտություն: **Թեմա 6.** Շարահյուսական ոճագիտություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Голуб И.Б., Стилистика русского языка. – 4-е изд. – М.: Айрис-пресс, 2002.
2. Голуб И.Б., Упражнения по стилистике русского языка: Учебное пособие. 3-е изд., испр.М.: Рольф, 2001.
3. Лыткина О.И., Селезнева Л.В., Скороходова Е.Ю., Практическая стилистика русского языка: учебное пособие. Флинта. 2009.
4. Мартирян Н.И., Сборник заданий по стилистике и культуре речи современного русского языка. Ереван, ЕГУ, 2015.
5. Розенталь Д.Э., Лексика и стилистика: Правила и упражнения / Д. Э. Розенталь. М.: Мир и Образование, 2016.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ)

1. 0305/B54	**2. Անգլերեն - 3**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 4 ժամ/շաբ.	**5. 0/60/0**	
6. 3-րդ կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ գրավոր և բանավոր խոսքի ունակություններ, տեքստի վրա ինքնուրույն աշխատելու կարողություններ:

Դասընթացի խնդիրները.

1. Խորացնել, հարստացնել ուսանողների մասնագիտական բառապաշարը:
2. Ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները:
3. Զարգացնել անգլերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները:
4. Զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան, ադապտացված տեքստեր ընթերցելու հմտությունը:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները:
2. Կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում:
3. Գործածելու անգլերենի անդեմ բայերը և դերբայները:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:
2. Ընթերցելու և վերլուծելու տեքստը՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոնները:

3. Արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ունկընդրելու և վերարտադրելու ադապտացված տեքստեր:
2. Պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:
3. Բանավիճելու մասնագիտական թեմաներով:

10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ընթացիկ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա1. Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը **Թեմա 2.** Քերականություն՝ բայի անդեմ ձևեր: **Թեմա 3.** Գրավոր խոսք՝ ուղղված ուսանողների անհատական ստեղծագործական մտքի ու վերլուծական ունակությունների խթանմանը: **Թեմա 4.** Ընթերցանության հմտություններ՝ ուղղված ընթերցանության տարբեր տիպերի ուսումնասիրությանն ու դրանց գործնականում կիրառմանը:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015.
2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017.
3. Paterson K., Oxford Living Grammar: Upper Intermediate. Oxford: OUP, 2016
4. Mkhitaryan Y., A Basic English Grammar (exercises). Yerevan: Zangak, 2011.
5. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010.

1. 0305/B55	**2. Անգլերեն - 4**	**3. 4 ECTS կրեդիտ**
4. 3 ժամ/շաբ.	**5. 0/45/0**	
6. 4-րդ կիսամյակ	**7. Առանց եզրափակիչ գնահատման**	

Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացած գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:

Դասընթացի խնդիրները.

1. Մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր:
2. Զարգացնել մասնագիտական թեմայով ինքնուրույն կապակցված տեքստ կազմելու կարողությունները:
3. Զարգացնել տարբեր բարդությամբ մասնագիտական տեքստեր թարգմանելու կարողություններ:

10.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Կազմելու ինքնուրույն խոսք՝ կիրառելով ժամանակների համաձայնության սկզբունքները:
2. Թվարկելու մասնագիտական տերմիններ, ցուցադրելու գիտելիքներ մասնագիտական-տեղեկատվական ոլորտում:
3. Կատարելու տեքստի վերարտադրում սեփական տեսանկյունից՝ նոր բառապաշարի օգնությամբ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. Խոսելու իր մասնագիտությունից, ուսումից, աշխատավայրից, ծրագրերից:
2. Վարելու հեռախոսային զրույց, գրելու էլեկտրոնային նամակ, նշանակել հանդիպումներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. Ներկայացնելու բանավոր զեկուցում կամ նախագիծ:
2. Բանավիճելու մասնագիտական թեմանների շուրջ:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

13. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

1-ին ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում, 10 միավոր առավելագույն արժեքով,

2-րդ ստուգում. գրավոր աշխատանքի գնահատում, 10 միավոր առավելագույն արժեքով:

14. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ընդհանուր անգլերեն՝ ուղղված ուսանողների անգլերենի բառապաշարը հարստացնելուն և տարբեր հարցերի շուրջ անգլերենով հաղորդակցվելուն: **Թեմա 2.** Քերականություն՝ շարահյուսություն: **Թեմա 3**. Լեզվաբանական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները: **Թեմա 4**. Պաշտոնական գրագրություն, ինքնակենսագրություն, դիմում, մոտիվացիոն նամակ:

15. Հիմնական գրականության ցանկ.

1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015.
2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017.
3. Paterson K., Oxford Living Grammar: Upper Intermediate. Oxford: OUP, 2016.
4. Mkhitaryan Y., A Basic English Grammar (exercises). Yerevan: Zangak, 2011.
5. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010.
6. Zemach, D. E. Academic Writing from Paragraph to Essay. USA: Macmillan, 2011.

1. 0305/B56	**2. Հայ-ռուս գրական կապեր**	**3. 3 ECTS կրեդիտ**
4. 2 ժամ/շաբ.	**5. 30/0/0**	
6. 5-րդ կիսամյակ	**7. Առանց ընթացիկ գնահատման**	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել պատկերացում ռուս-հայկական գրական և մշակութային կապերի և ազգային գրականության առանձնահատկությունների ու զարգացման ընդհանուր ուղիների մասին, ինչպես նաև նրանց մոտ զարգացնել պատմամշակութային ու գրականագիտական վերլուծության հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ճանաչելու ռուս գրողների ստեղծագործությունները Հայաստանի մասին,
2. ներկայացնելու գրողների կենսագրությունը,
3. ներկայացնելու տեսական և մշակութային հիմնադրույթները, որոնք նպաստել են հայ-ռուսական գրական կապերի զարգացմանը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գնահատելու և բնութագրելու նշված գրողների ստեղծագործական ուղին,
2. վերլուծելու և մեկնաբանելու գեղարվեստական բնագրերը,
3. մեկնաբանելու հայ-ռուսական գրական կապերի զարգացման օրինաչափությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. կատարելու ինքնուրույն աշխատանք առաջարկվող գրականության հետ, վերլուծելու նշված գեղարվեստական բնագրերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2.արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. քննարկում
3. հարցում
4. բանավեճ
5. խմբային աշխատանք
6. բառային աշխատանք

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ . բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս-հայկական մշակութային և գրական կապերի ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2.** Գրական հարաբերությունների զարգացման հիմնական փուլերը **Թեմա 3**. Կապերը Կիևյան դարաշրջանում: Ռուս-հայկական մշակութային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները Պետրոս 1-ի օրոք: **Թեմա 4**. Ռուս-թուրքական պատերազմների ազդեցությունը գրական հարաբերությունների վրա: **Թեմա 5.** Հայագիտության ծագումն ու զարգացումը Ռուսաստանում: Կապերը 19-րդ դարում: Գրիբոեդովի դերը գրական և մշակույթային կապերի պատմության մեջ: Պուշկինը և Հայաստանը: **Թեմա 6.** Կապերը 20-րդ դարում: **Թեմա 7**. Վ.Բրյուսովի դերը կապերի զարգացման հարցում: **Թեմա 8.** Հայաստանի «բացահայտումը» Ի.Մանդելշտամի ստեղծագործություններում: **Թեմա 9.** Հայաստանի կերպարը ռուս գրողների ստեղծագործություններում /Ա.Բելիյ, Ն.Տիխոնով/: **Թեմա 10.** Գրական կապերի զարգացումը 20-րդ դարի 2-րդ կեսում: **Թեմա 12.** Մ.Մատուսովսկու, Վ.Զվյագինցեվայի, Մ.Դուդինի, Բ.Չիչիբաբինի հայկական պոեզիան:

Հիմնական գրականության ցանկ.

1. Алексанян Е., Движение литературы, -Ер., 1985
2. Алексанян Е., Путь к дому, -Ер., 1996
3. Веселовский А., Об Армении и армянской культуре. –Ер.,1970
4. Веселовский Ю.А., Очерки армянской литературы, истории и культуры. –Ер., 1972
5. Гачев Г., Национальные образы мира. –М76 1988
6. Григорьян К.Н., Из истории русско-армянских литерурных и культурных отношений. –Ер., 1974
7. Мкртчян Л., Армиянская поэзия и русские поэты 19-20 веков. Вопросы перевода и литературных отношений. –Ер.,1968
8. Мкртчян Л,. Добро вам. –Ер., 1974
9. Мкртчян Л., Черты родства. –Ер., 1973
10. Пушкин и литература народов советского союза. Сост. К.Айвазян –Ер., 1975

Художественная литература

5. Белый А., Армения.очерки, письма, воспоминания.
6. Битов А., Уроки Армении
7. Брюсов В., Об Армении и армянской культуре.
8. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа
6. Грибоедов А., Путевые записки.
7. Гроссман В., Добро вам!
8. Дудин М., Земля обетованная.
9. Звягинцева В., Моя Армения.
10. Мандельштам О., Армения. Путешествие в Армению.
11. Матусовский М., Строки из горячего тонира.
12. Пушкин А., Путешествие в Арзрум.
13. Чичибабин А., Псалмы Армении.

1. 0305/B56	2. Ռուս հատկանունաբանություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 30/0/0	
6. 5-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն ծանոթացնել ուսանողներին ռուս հատկանունաբանության հիմնական հասկացություններին, հիմնական տեսություններին, իմաստային և ոճային առանձնահատկություններին, լեզվամշակութաբանական առանձնահատկություններին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրելու հատուկ անունների կիրառությունը,
2. բացատրելու հատուկ անունների ծագումնաբանությունը,
3. մատնանշելու տեղանունները և անձնանունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. ներկայացնելու և մեկնաբանելու ռուս հատկանունաբանությունը,
2. գտնելու համապատասխան հայերեն զուգահեռները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. ստեղծագործաբար և արդյունավետ կիրառելու ստացած գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Գ4.օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն,
2. վերարտադրողական մեթոդ,
3. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
4. հետազոտական մեթոդ:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս հատկանունաբանության հիմնական հասկացությունները: **Թեմա 2.** Ռուս հատկանունաբանության հիմնական տեսությունները: **Թեմա 3.** Ռուսական անձնանունների առանձնահատկությունները: Ռուսական անձնանունների համեմատությունը հայկական անձնանունների հետ. դրանց նմանությունն ու տարբերությունները: **Թեմա 4.** Ռուսական տեղանունների առանձնահատկությունները: Ռուսական տեղանունների համեմատությունը հայկական տեղանունների հետ. դրանց նմանությունն ու տարբերությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Беленькая В.Д., Топонимы в составе лексической системы языка. М., 1969.
2. Никонов В.А., Имя и общество. М., 1974.
3. Общая теория имени собственного. М., 1973.
4. Рылов Ю.А., Антропонимы в языковой картине мира. Тула, 2002.
5. Суперанская А.В., Современные русские фамилии. М., 1981.
6. Суперанская А.В., Общая теория имени собственного. М., 1973.

1. 0305/B57	2. Ռուս մանկական գրականություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 3 ժամ/շաբ.	5. 30/0/15	
6. 6-րդ կիսամյակ	7. Առանց ընթացիկ գնահատման	

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ռուս մանկական գրականության հետ, ուսումնասիրել մանկական գրականության կայացման և զարգացման պատմությունը, բացահայտել մանկական գրականության թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները, ծանոթացնել ռուս մանկական գրականության լավագույն երկերի հետ, ձևավորել տեքստի գրականագիտական վերլուծության հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մանկական գրականության առանձնահատկությունները և նրա կապերը մշակույթի այլ ճյուղերի հետ,
2. ներկայացնելու և բնութագրելու ռուս մանկական գրականության զարգացման հիմնական փուլերը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. որոշելու մանկական ստեղծագործությունների և բանահյուսության ժանրային պատկանելիությունը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. գնահատելու մանկական ստեղծագործությունների կրթական և դաստիարակչական ներուժը,
2. վերլուծելու մանկական ստեղծագործությունները:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

Ա4.ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Գ2.գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

Գ3.զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Տեքստի ընդհանուր և քերականական վերլուծություն
2. Հարցում
3. Բանավեճ
4. Խմբային աշխատանք
5. Բառային աշխատանք
6. Երկխոսություն

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուս մանկական գրականության ծագման և զարգացման փուլերը X-XVIIդդ.: **Թեմա 2.** XIXդ. ռուս մանկական գրականություն: **Թեմա 3.** XXդ. առաջին կեսի ռուս մանկական գրականություն: **Թեմա 4.** XXդ. երկրորդ կեսի ռուս մանկական գրականություն: **Թեմա 5.** Արտասահմանյան մանկական գրականություն: **Թեմա 6.** Ռուսերեն թարմանված հայ մանկական գրականություն:

Հիմնական գրականության ցանկ.

1. Минералова И.Г., Детская литература. – М.: Юрайт, 2016. – 624 с.
2. Путилова Е.О., Детская литература. – М.: Академия, 2016. – 582 с.
3. Арзамасцева И.Н., Николаева С.А., Детская литература.– М.: Высшая школа, 2009. – 472 с.
4. Кудрявцева Л.С., Художники детской книги. - М.: Просвещение, 1998. – 347 с.
5. Мельников М.Н., Русский детский фольклор. -М.: Прогресс, 1987. – 386 с.
6. Рассказы об авторах ваших книг. XX век. /Под ред. М.И.Мещеряковой. — М.: Просвещение, 1997. – 473 с.
7. Русская литература для детей. /Под ред. Т.Д.Полозовой. — М.: Просвещение, 1997. – 462 с.
8. Русские детские писатели XX века: биобиблиографический словарь. /Под ред. А.В.Терновского. — М.: Прогресс, 1997. – 534 с.
9. Сетин Ф.И. История русской детской литературы, конец X - первая половина XIX в. - М.: Высшая школа, 1990. – 468 с.

1. 0305/B57	**2. Ռուս-հայերեն թարգմանության խնդիրներ**	**3. 3 ECTS կրեդիտ**
4. 3 ժամ/շաբ.	**5. 30/15/0**	
6. 6-րդ կիսամյակ	**7. Առանց ընթացիկ գնահատման**	

Դասընթացի նպատակն է՝

- ներկայացնել ռուսերենից հայերեն թարգմանությունների տեսական և գործնական սկզբունքներն ու մեթոդները,
- համակարգել գործնական հմտություններ և կարողություններ կիրառելու հիմնական ուղղությունները,
- դասընթացի ընթացքում զարգացնել սովորողների գրավոր և բանավոր թարգմանչական գործնական ունակությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. մեկնաբանելու ռուս-հայերեն թարգմանության գործնական առանձնահատկությունները,
2. ներկայացնելու մասնագիտական բնագրերի ընթերցման և թարգմանության սկզբունքները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. նախաընթերցելու և արագ թարգմանելու մասնագիտական բնագրեր,
2. կատարելու մասնագիտական բնագրերի գործնական թարգմանություններ, համադրական-զուգադրական վերլուծություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ երկլեզվյան թարգմանության գործնական խնդիրների վերաբերյալ:

Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.

U3.կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U5.ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

Բ1.վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. մասնագիտական բնագրերի համադրական-զուգադրական վերլուծություններ և քննարկումներ
3. մասնագիտական բառարանների կիրառում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Եզրափակիչ բանավոր քննություն. 20 միավոր առավելագույն արժեքով:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ռուսերենից հայերեն թարգմանությունների լեզվաոճական առանձնահատկություններն ու թարգմանական սկզբունքները: **Թեմա 2.** Մասնագիտական թարգմանության տարբեր տեքստերի նախաընթերցում և վերլուծություն: **Թեմա 3.** Մասնագիտական բնագրերի գործնական թարգմանություններ, համադրական-զուգադրական վերլուծություններ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Алексеева И.С., Профессиональный тренинг переводчика.Спб.-2001.
2. Брандес М.П., Провоторов В.И., Предпереводческий анализ текста. Курск.-1999.
3. Комиссаров В.Н., Теория перевода. М., 1990.
4. Латышев Л.К., Технология перевода. Учебное пособие по подготовке переводчиков.2000.
5. Федоров А.В., Основы общей теории перевода. М., 1983.
6. Пумпянский А.Л., Введение в практику перевода научной и технической литературы.М., 1981.

1. 0305/B58	2. Գրականագիտական վերլուծության հիմունքներ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. 18/0/0	
6. 7-րդ կիսամյակ	7. Առանց եզրափակիչ գնահատման	

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին գրական տեքստի վերլուծության հիմնական մեթոդներին, ձևավորել ուսանողների մոտ տեքստի վերլուծության և մեկնաբանման կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. մեկնաբանելու գեղարվեստական տեքստի վերլուծության նպատակները,
2. ներկայացնելու գեղարվեստական տեքստի վերլուծության արդի մեթոդները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. վերլուծելու գրական ստեղծագործությունը որպես ամբողջականություն,

2. մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները,
3. տարբերակելու գրական ստեղծագործության առանձնահատկությունները,
4. վերլուծելու գրական տարբեր ստեղծագործություններ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր,

